

Հ. ՍՏԵՓԱՆ Խ. ԻԹԻԻՃԵԱՆ

22

**ԾԱԳՈՒՄՆ ԵՒ ԸՆԹԱՑՔ
ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ
Ի ՀԱՅՍ**



Վեր. Ա. ՇՄԱԻՈՆԵԱՆԻ ֆառազաբանով

A II
31606



Ե. Պոլիս, 1914

Յպարան Արաբս

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Վեր. Հ. Ստեփան Խ. Իւրիւնեան Հայոց մէջ Աւետարանական շարժման առաջին յարողներէն եւ Հայոց Աւետարանական Եկեղեցւոյ հիմնադիրներէն մին. իր Երկար եւ ժրաշան կեանքին վերջին տարիները նուիրեց՝ խանդակաբ աշխոյժով մը որ սրտառուչ էր՝ գրելու պատմութիւնը այդ Շարժման որուն ականատեսը դերակատարներէն մին եղած էր :

Այդ պատմութիւնը այսօր ի յոյս կ'ընծայուի գրեթէ առանց փոփոխութեան այն վիճակին մէջ որուն մէջ ձգած էր գայն ալեգարգ հեղինակը Երբ իր հանգիստը մտաւ 1911 Նոյեմբեր 11ին :

Այս գործը մասնաւոր ուրախութեամբ պիտի ընդունուի Հայ հասարակութեան կողմանէ նախ այն պատճառաւ որ ականատեսի մը վկայութիւնն է եւ Երկրորդ որովհետեւ ցարդ որեւէ Հայ հեղինակ մը հայերէն գիրք մը հրատարակած չէր այս նիւթին վրայ : Մինչեւ հիմա Հայոց մէջ Աւետարանական գործին պատմութիւնը ուսումնասիրելու համար ստիպուած էինք դիմել օտար աղբիւրներու, Ամերիկեան Պորտի տեղեկագիրներուն կամ ամերիկացի միսիօնարաց հրատարակած գրքերուն :

Այսօր այս գործով Հայ Աւետարանական Շարժման հիմնադիրներէն ան որ Երկար ապրեցաւ մեր մէջ եւ արտօնուեցաւ տեսնել իր սիրած գործին գրեթէ եօթանասուն տարուան կեանքը կը բացատրէ այդ Շարժման ոգին եւ կը կտակէ գայն ներկայ սերուդին :

Տասնրիցներորդ դարը Հայոց ազգին տարեգրութեանց մեջ պիտի յիշատակուի իբր ազատական շարժումներու դարը։ Այս ազգը որուն մինչեւ հիմա իր գոյութիւնը պահելը ինքնին հիանալի պարագայ մըն է, Ասիական ցեղերու մեջ առաջինը կը հանդիսանայ Արեւմտեան ֆաղափարներէն կարելոր սկզբունքներ ընդունելու եւ իւրացնելու գործին մեջ։ Նախորդ դարը վկան պիտի ըլլայ Հայ ազգին այս կենսունակութեանը։ Դարուն սկիզբներն կը սկսին աչքի զարնել մտաւորական նոր կեանքի մը յայտարար նշանները։ Աւանդական Նարեկի եւ Սաղմոսի ուսուցման վրայ կ'աւելնայ նոր եւ լուրջ ուսումնական գործունեութիւն մը։ դրպրոցները կը սկսին սքափիլ դարաւոր բունք մը։ Հոս հոն ուսուցիչներ, կամ պատուելիներ այն ժամանակի ոնով, նշանաւոր կը հանդիսանան իրենց հմտութեամբ ոչ միայն աստուածաբանական եւ գրական՝ այլ նաեւ նոյն իսկ բնական գիտութեանց նիւղերուն մեջ զնահատելի յառաջդիմութեամբ։ Տպարաններ կը հաստատուին։ Եւրոպական լեզուներու հետեւողներու թիւը երթալով կը ստուարանայ։ Վենետիկի եւ յետոյ Վիեննայի Մխիթարեան ուխտերուն հաստատումը քեւ ըստ երեւոյթին կրօնական այլ իրականին մեջ մտաւորական շարժման մը նշանը եւ սատարը եղած է։ Երկրին մեջ հաստատուած դպրոցները եւ նեմարանները անբաւական ըլլալով ուսման պէտքը լիովի գոհացնելու, կարելոր թիւով երիտասարդներ Եւրոպա կ'երթան մասնաւոր ուսմանց հետեւելու նպատակաւ։ Լրագրութիւնը քիչ ժամանակի մեջ ըստ բաւականին կը ծաղկի։

Տնտեսական կեանքին մեջ դարձեալ նշանաւոր փոփոխութիւններ իրարու կը յաջորդեն զարմանալի արագութեամբ։ Հայ սեղանաւորը որ երկրին տնտեսական կեանքին մեջ ամենէն կարելոր դերը կը կատարէր դա-

րերէ ի վեր, կը ստիպուի տեղի տալ նախ արեւմտեան դրութեամբ կրթուած Հայ նարտարապետին, վառօդապետին եւ արհեստաւորին եւ վերջապէս նոր դպրոցի պատկանող վաճառականին կը թողու ասպարէզը : Հայը այս շարժման մէջ իր ունեցած բացառիկ դիրքին մէկ մասը վրայ կուտայ, դժբաղտաբար, օտար մրցակիցներու : Ասով հանդերձ երէ երկրին անտեսական կեանքին մէջ բարւոճման յոյս մը կայ, այդ գործին մէջ Հայը պատրաստուած է կարեւոր դեր մը կատարելու :

Նոյն ժամանակ ազգային, ընկերային-ֆաղափական կեանքին մէջ եւս արեւմուտի ազդեցութեան ներքեւ խիստ կարեւոր շարժում մը տեղի կ'ունենայ ազատական ուղղութեամբ : Իշխանութիւնը, որ մինչեւ նախորդ դարու սկիզբը կեդրոնացած էր Պատրիարքին ձեռքը, ափ մը երեւելի մեծամեծներու, մեծ աղաներու խնամակալութեան ներքեւ, կը խլուի տակաւ այդ մենաշնորհեալ խումբին ձեռքէն : Պայքար մը կը սկսի մենծ աղաներու եւ «եանաՖ» դասակարգերուն միջեւ, եւ ժողովուրդը քայլ առ քայլ յառաջանալով աւելի եւ աւելի չափով միջամտել կը սկսի ազգային գործերու, մինչեւ որ այս երէք շարժումներու միացումովը, մտաւորականներու, վաճառականներու եւ ժողովրդեան միահալոյն ջանքերովը, ձեռք կը ձգուի Ազգ. Սահմանադրութիւնը՝ որ իր բոլոր թերութիւններովը եւ էճնադատելի կէտերովը հանդերձ ազգային կենսունակութեան եւ զգալի յառաջադիմութեան փառաւոր ապացոյցն է արդարեւ :

Արդ այս շարժումներուն հետ ժամանակակից եւ զուգընթաց կ'ընթանայ ուրիշ շարժում մըն ալ, որու կարեւորութիւնը գուցէ, լիուրի ըմբռնուած չէ տակաւին ամբողջ ազգին կողմանէ : Այդ շարժումը Աւետարանական շարժումն է : Հայոց մէջ Աւետարանականութեան

ծագումը եւ ընթացքը անշատ, ընդհանուր ազգային կեանքին օտար, դիպուած մը եւ կամ գէթ այն ժամանակին երեւան եկած զուգադիպութիւն մը համարուած է շատ անգամ։ Այդ չէ իրականութիւնը։

Աւետարանական շարժումը միւս ազատական շարժումներուն հետ սերտ եւ կենսական առնչութիւն ունի, յաւետ լրացուցիչ մասն է անոնց, եւ իբր այդ պէտք է նկատի առնուի։ Ազգին կրօնական կեանքը նոյնքան պէտք ունէր յառաջացման, սզատական ուղղութեամբ, որքան մտաւորական, տնտեսական կամ ընկերային կեանքը։ Արդէն այդ միւս շարժումները առանց կրօնական բարեկարգութեան՝ մեծ չափով պիտի կորսնցէին իրենց ուժը եւ օգտակարութիւնը։ Զարգացուր ազգի մը մտաւորական կեանքը, փոխէ անոր տնտեսական վիճակը, տուր անոր ժողովրդական վարչութիւն եւ արգիլէ եկեղեցական կրօնական զարգացումը, ի՞նչ պիտի ըլլայ արդիւնքը. երկու արդիւնքներ կարելի է ենթադրել. կա՛մ կրօնական յետադիմութիւն մը պիտի կաշկանդէ եւ ապարդիւն ընէ զարգացման ջանքերը ամէն ուրիշ ուղղութեամբ, եւ կա՛մ մտաւորական, ընկերային եւ տնտեսական կեանքը անշատուած կրօնականէն պիտի փորձէ գլուխ հանել «անկրօն» յառաջդիմութիւն մը։ Այս արդիւնքներուն երկուքն ալ հաւասարապէս մահացու են։ Եթէ այս կետը ըմբռնած ըլլային ժամանակին ազատականները եւ ձեռք ձեռքի տուած ըլլային Աւետ. Հայոց հետ, ի՞նչ հզօր դաշնակից մը գտած պիտի ըլլային իրենց վարած պայքարին մէջ։

Անօգուտ է սակայն պատմութիւնը ծանրաբեռնել «երէ»ներով։ Խնդիրը այն է որ երբ վայրկեանը հնչեց Հայոց ազգին մէջ ընդհանուր զարգացման մը զանազան շաւիղներով, գտնուեցան նաեւ քանի մը անվեհեր Հայեր որսնի քաջութիւնը ունեցան ելլելու յայտարարելու

քէ իրենն Աստուծոյ շնորհովը իրենց վրայ կ'առնեն Հայ ազգին մէջ կրօնական բարեկարգութիան յառաջապահ գունդը ըլլալու վտանգաւոր պարտականութիւնը: Քառասուն հոգի էին անոնք. պարզ, համեստ, խոնարհ, աղօթող Հայեր, իրենց տուներէն եւ եկեղեցիներէն վրտարուած, թիւով դիրքով աննշան: Քիչեր լսեցին անոնց ձայնը, քիչեր ըմբռնեցին այն ատեն կամ կ'ըմբռնեն այսօր անոնց սկսած գործին եւ որդեգրած սկզբունքին անհրաժեշտ կարելորութիւնը: Ոմանք կարծեցին քէ քանի մը սպառնալից խօսքեր, մէկ երկու խիստ կոնդակ եւ վերջապէս հանդիսաւոր բանադրանք մը պիտի պապանձեցնեն զանոնք եւ խափանեն ամբողջ շարժումը: Յայց Քառասունը անդրդուելի կը մնան. անոնց ձայնը՝ խեղդուած գրեթէ օրուան աղմուկներուն մէջ՝ պիտի արձագանգէ տակաւին որոտալից՝ սերունդէ սերունդ եւ պիտի բռնադատէ Հայութիւնը նկատի առնել զայն: — «Մենք» կ'ըսեն անոնք, «կը յարգենք եկեղեցական իշխանութիւնները, կ'ընդունինք պատկառանքով հայրենի աւանդութիւնները նահատակաց արիւնովը սրբագործուած, կ'ընդունինք ընդհանրական եկեղեցւոյ հաւատոյ դաւանանքը, կը սիրենք Հայ ազգը բոլոր սրտով եւ բոլոր հոգիով, «բայց» խղճի ազատութիւնը ամեն բանէ աւելի թանկագին կը համարինք եւ թոյլ պիտի չըտանք որ, որեւիցէ իշխանութիւն կամ աւանդութիւն կամ հրաման խլէ մեր ձեռքէն Քրիստոսի Աւետարանը, կամ արգելք ըլլայ մեզի եւ մեր զաւակներուն երբ կուգանք, առանց միջնորդի եւ առանց բարեխօսի, մեր հոգեւոր պաշտամունքը մատուցանել Փրկիչ Աստուծոյ մեր խղճին համեմատ:»

Նքէ անշատու՛մ մը տեղի ունեցաւ, այդ անշատու՛մը առերեւոյթ եւ ժամանակաւոր կրնայ սեպուիլ: Ազգին լաւագոյն տարրերը վերջապէս այդ ձայնին իմաստը պիտի հասկնան եւ ոգին պիտի որդեգրեն:

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն



Գործը՝ որ կը ներկայանայ սիրեցեալ Ազգիս, ծնունդ առած է պարզ տկարութենէ մը որ Նախախնամական օրհնեալ կամքով պատահեցաւ հեղինակիս աջ սաքին, յորմէ կը տառապէր յանկողնի, գործելու անկերպ, աւելի քան երեք ամիս յամի տետան 1885:

Այդ տառապանաց աւարցը մէջ անգամ մը երբ կը խորհէր իր անցուցած աւարջութեան օրերուն վրայ յորս կրնար տեհնայն աշխոյժիւ քայլել, աշխատիլ, գրել ու գործել՝ շնորհակալ եղաւ Աստուծոյ որ այնքան մեծ պարգև մը ըրած էր իրեն: Եւ խորհուրդ մը ծագեցաւ մտքին թէ ի՞նչ բն կայ որ նոյն երանական օրերուն մէջ կրնար կատարել ի փառս Աստուծոյ և յօգուտ Ազգին որ կատարուած չէ՝ այս խորհրդածութիւնով յօգնած ի քուն կկենայ:

Յետոյ սթափելով վերտին կուեննայ նոյն խորհրդածութիւնը, թէպէտ շատ բան կուգայ մտքը, բայց չկրնար դո՛ւ ըլլալ մինչև որ գործոյս խորհուրդն յանկարծ ծնունդ կաանու իր մէջ և իրօք կը տեսնէ նոյն գործ իրեն սպասելը: Ասիկա կրտն ոչ այնպէս մտածելով որ ինք միայն ունի պէտք եղած կարողութիւնն ու ձիրքը այսպիսի ձեռնարկութիւն մը ի գլուխ հանելու, այլ մտածելով որ միայն ինքը մնացեր է դէպքերու ժամանակակից եղողներէն, որոնք այժմ՝ դացած խառնաւած են իրենց հայրերուն ինքը պահուած է, և եթէ նոյն անկողին յորում կը տառապի իրեն համար մահուան անկողին ըլլայ գործը չկատարուած պիտի մնայ: Ուստի առաջադրութիւն մը կ'ուխտէ, որ եթէ օրհնեալ Նախախնամութիւն շնորհէ իրեն ապաքինում, իր առաջին կարևոր և յաւէտ օգտակար աշխատութիւնն ըլլայ այս գործ:

Կ'ապաքինի ողորմութեամբն Աստուծոյ, և ուղեւով իր փափաքանաց առաջադրեալ նոյն նպատակին համար, և նախապէս չունենալով քաջադէպ պատահութիւն զբաղձացեալն յարմար կամ պատշաճ ձևով հրատարակելու, և արդէն ունենալով ի ձեռին օգիւրտին Հանդէս՝ կսկսի նախապատրաստական քոյլեր տանուլ

յօդուած առ յօդուած մինչև ֆետրուարի 1896: Իսկ երբ յսկումս պարտաւորեալ կը դադարեցնէ զԲիւրակն հանդէս, կը շարունակէ նոյն տաճն իմաստասիրել տաջագրեալ ձեւերուն, թէև յոյժ գժուարին պարագաներու մէջ, և կը յաջողի:

Սակայն աշխատասիրեալ սոյն հոյակապ գործ ապագութեամբ իւրոյ տծուելուն մասին անյայտելի գժուարութիւն կը կենար, մինչ մամուլը Թուրքիոյ մէջ կաշկանդեալ կը գտնուէր ամենայն խտուածեամբ: Իայց երբ ողորմութեամբն Աստուծոյ և շտորհիւ ստճմանագրութեան մամուլոյ ազատութիւն հուշակուեցաւ, արուար մեծաւ ուրախութեամբ կը մտաուցանէ իւր սիրեցեալ Աղգին և անոր ազագայ սերունդներուն գոյս աշխատասիրութիւն՝ որ իր ներգութեան օրերուն մէջ ծնաւ, և շրթունքը խօսեցան Աստուծոյ:

Կան գրեանք որ կատարելով գործերնին ընդ փոյթ կը թաղուին անգործ մտացութեան մէջ: Կան ուրիշներ ալ որ շինութիւն կուտան մէկ սերունդի և օգտակար կըլլան և յաջորդէն ևս կուտուճնասիրուն օգտակարութեամբ: Իսկ կոյ երրորդ գտաստարգ մը գերագուն քան գերկոսին. գրեանք՝ որ երբեք չեն կորանցներ իրենց օգտակարութիւնը կազաւին գրէթէ տարինին չլրացած, գրքեր՝ որոց վերատպումն ու վերահրատարակումը ծառայութիւն մի է աշխարհին և մարդկութեան:

Ծագումն և բնրացք Աւետարանականութեան ի Հայս իր արժանաւոր տեղը ունենալ կը յուսայ յիշեալ երրորդ կամ վերջին գտաստարգի գրեանց մէջ:

ՍՏԵՓԱՆ Խ. ԻԻԹԻՃԵԱՆ



ԾԱԳՈՒՄՆ ԵՒ ԸՆԹԱՅՔ
ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ Ի ՀԱՅՍ

Գ Լ Ո Խ Ա .

Թէպէտ ըստ Ազգային պատմութեան, Քրիստոնէութեան սկզբնաւորութիւն ի Հայս՝ Արդարու ժամանակին կր վերագրուի, Արգար ինքն լինելով ժամանակակից Քրիստոսի, սակայն ստոյգ է որ պարսկական հեթանոսութեան թանձր խաւարը կը ծածկէր Հայոց աշխարհը մինչև չորրորդ դարուն սկիզբները, բայց ո՛չ թէ Քրիստոնէութիւն բոլորովին անհետ ըլլալով: Քանզի նախքան ղլուսաւորիչ կը դանենք հետքեր ի Հայս Քրիստոնէութեան, ինչպէս են երկրորդ ու երրորդ դարերու Յոյն մատենագիրներու գրութեանց մէջ եղածները:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ՝ կերեւի թէ մէկն է այն նախնի դարու մազմաշարչար և մարտիրոսացեալ Քրիստոնեաներէն, որոնք հալածուած ու չարչարուած են աղգին հեթանոսութեան մէջ մնացած մեծամասնութիւնէն: Իսկ Ս. Լուսաւորիչ շատ չարչարանքներ կրելով հանդերձ վկայեց ճշմարտութեան համար, քարոզեց արքայութեան Աւետարանը Տրդատին օրերը և Աստուծոյ շնորհքովը յաջողեցաւ ամբողջ Ազգն կանգնել Քրիստոնէութեան:

Սրդ, կ'արժէ որ զիանանք այն նախալուսաւորչեան նախկին դարերու նահատակուած հայրերնուս հոգեկան կամ կրօնային ներքին հանգամանքն ու սովորութիւն-

ները, որոնք թիրեւս օրինակիկի բլլան : Եւ ս'րքան ու-
րախ բլլարու ենք, որ Հայաստանեայց եկեղեցւոյ արդի
հարազատ մասնագիր Տէր Մէլքիսեղէկ Եղիակոսոս
Մուրատեանց, ըստ իւր բանի, Երուսաղէմի Ս. Յակով-
բայ վանքի թանգարանին մէջ եղած Ասորերէն ՚ին ձե-
ռագիրներ աչքէ անցուցած և անոնցմէ քաղած է հե-
տեւալ տեղեկութիւնները, որոնք իւր իսկ հեղինակած
պատմութեան գրքէն ընդօրինակած ենք ի ստորև :

«Եթէ մտածենք, որ Քրիստոնէութեան առաջին
երեք դարերուն մէջ ս'չ թէ սաճարներն, այլ առները,
գեանափորները, մնաւոր անապատները և այլերն էին
ապաստանարան հաւատացելոց, որով իւրաքանչիւր ոք
յանձն իւր եկեղեցի էր, նոյն ինքն քահանայ, մարմինք
իւրաքանչիւր սուրբ սեղան և հոգիք նոցուն պատարագ
ընդունելի : Եթէ մտածենք որ նոյն ժամանակ դպրու-
թիւնը ծաղկած չէր Հայաստանի մէջ, և եղած մեհեանի
մատաններն ու քաղաքային յիշատակարանայ գիւան-
ները առ հատարակ հալածիչներու ձեռքն էին, որոնք
Քրիստոնեաներու յիշատակը ջնջել կը ջանային քան թէ
գիւաններու մէջ մուծանել և անմահայնել : Եթէ այս
ամէն պատմական պարագաները մտարերենք այն ժամու-
նակ աւելի կը համոզուինք, որ Քրիստոնէութիւնը ան-
ընդհատ տեւականութիւն ունեցած է Հայաստանի մէջ,
մանաւանդ երբոր այն նահատակութեան և հալածանայ
դէպքերը յառաջ բերենք որոնք կը յիշուին պատմու-
թեան մէջ մինչև Տրդատայ ժամանակը, և որոնք . . .
աւելի մեծ ապացոյցներ են Քրիստոնէութեան յարատե-
ւութեանը առաջին շրջանին մէջ :

«Թողունք Ռսկեանց և Սուքիասանց նահատակու-
թիւնը . . . Սորենային առնելով Կեսարիոյ Փիրմիլիանոս
Եղիակոսոսի հալածանայ պատմութենէն, կըսէ որ Քրիս-

տոնեակոյք այնչափ բաղձալոյսով էին Հայաստանի մէջ կոտորու (Նոր Տրդատայ) թագաւորութեան ժամանակ, որ նոյն արքայն ստիպուեցաւ սաստիկ հալածանք յարուցանել: Կր վկայէ նոյնպէս Տերտուղիանոս Յոյն հայրապետ երկրորդ զարու թէ՛ հարիւր քառասուն թուականին բաղձաթիւ քրիստոնեակոյք կային հայոց աշխարհին մէջ . . . : Կր մնայ մեզ ուրեմն մի քանի խօսք եւ նոյն ժամանակի Քրիստոնէական ներքին սովորութեանց վրայ խօսիլ . . .

«Մնկաւկած պարտինք ընդունիլ, որ Հայաստանեայց մեր եկեղեցին առաջին չրջանին մէջ կը վարուէր առաքելական սովորութեամբ. այն է կը կազմէր որպէս մի քրիստոնէական գերդաստան, որոյ անդամները կապուած էին իրարու հետ հայրական, որդիական եւ կրթարական կապով. հոյստակելով միմիայն աստուածային կամոց եւ Աւետարանական ստուարանաց: Ամենէն ընդունակները եւ վարքով ու բարքով անարտաները կը նարուէին Տեսուչ եւ սպասաւոր, միւսներուն ուսուցանելու եւ սպասաւորելու համար: Այս ընտրութիւնը կը լինէր վկայութեամբ հաւատացելոյ, ձեռնադրութեամբ Առաքելոց կամ Եպիսկոպոսոց եւ ազօթիւք ամենեցուն, հանգոյն ընտրութեան Մատաթիայի, Խօթն սարկաւաղայ եւ այլոց, ինչպէս կ'աւանդէ մեզ Գործք Առաքելոցն (1):

«Նայելով Տեսչութեան եւ սպասաւորութեան պաշտօններուն, ընտրուածները կը կոչուէին եպիսկոպոս, երէց, սարկաւաղ, եւ շատ անգամ եպիսկոպոսութիւնն ու երէցութիւնը անխտարարար իրարու տեղ կը գործադրուէին, ինչպէս եւ առաքելոք անգամ երբեմն երէց կ'անուանին: Ընտրելոց անպայման պարտքն էր ուսուցանել եւ առաջնորդել Աւետարանական լուսով եւ կատա-

(1) Գործք. Ա. 21—26; Զ. 2—7

ընդ հոգևոր պիտոյքներ, իսկ հաւատացելոց պարագն էր խաղաս հրաժարիլ հեթանոսական պաշտօնմունքներէ և Քրիստոնէական փրկարար վարդապետութեանը հպատակիլ, որ կը պատուիրէ ազատութիւն ի մեզաց, սէր, արդարութիւն, ճշմարտութիւն, ողորմութիւն, ևն. ևն.:

«Քրիստոնէութեան մէջ նոր բնդունուողներէն ըստ պատուիրանին Քրիստոսի կը պահանջուէր կատարեալ հաւատ, յոյս, սէր, և որդեգրութեան ջերմեանց բաղձանք և ապա երեք անգամ ընկրմամբ ի ջուրս կը մկրտուէր յանուն Հօր և Որդւոյ և Հոգոյն սրբոյ՝ ի նշան լուսայման և ազատութեան ի մեզաց և որդեգրութեան ամենասուրբ Երրորդութեան: Երբոր ամբողջ գերդաստաններ Քրիստոնէութեան ծոցը կը դիմէին, նորածններն ու նորահասակները ևս կը մկրտէին այն պայմանաւ, որ ընդ զարգացման հասակին անպատճառ կրթութիւն Աւետարանական պատուիրանաց մէջ, որոց մասին և կը պարտաւորէին ծնողք, կնքահարք և մկրտողք:

«Լնտանեկան կեանքը, որ հիմն է մարդկային բնկերականութեան և վաւարան քրիստոնէական բարեպաշտութեան, կը սրբուէր սմումնական խորհրդով, որ որչափ եղծուած էր հեթանոսութեան ժամանակ ընդ հաւատակիր այնչափ մեծութիւն ստացաւ Քրիստոնէութեան շնորհիւ, որ կոչեցաւ նշանակ սիրոյն Քրիստոսի սուկեղեցին (1):


«Կեդրոն ժողովման հաւատացելոց էր խորհուրդն հաղորդութեան, բեկանել հոյսին զոր միասին կը կատարէին ի նշան միութեան ընդ Քրիստոսի և ընդ միմեանս: Եւ որովհետեւ անհնար է հաղորդութիւն ընդ Քրիստոսի սուանց սրբութեան, որպէս և անհնար է միութիւն ընդ եզրարց սուանց կատարեալ սիրոյ, ուստի

(1) Եփես. Ե. 23—27:

պարտաւորեալ էին նախ զզջալ, ապաշխարել, սրբիլ, հաշտուիլ եղբարց հետ, և ապա գոհութեան հացը բեկանել. և ի նշան կատարեալ սիրոյ և հաշտութեան ողջունելով կը ապին միմեանց համբոյր սիրոյ:

«Վերոյդրեալ բոլոր Քրիստոնէական խորհրդաւոր սովորութեանց հետ միասին վառուած էին հաւատացեալքն անմահութեան սիրովն. ներկայ կեանքը կը հարէին միայն բարեգործութեան և առաքինութեան միջոց, սուտի աշխարհասիրութեան և ընչասիրութեան ցանկութիւնը մեռուցած էին իրենց մէջ: Այս երկնային սիրոյ գոյութիւնը էր, որ կը վառէր հաւատացեալները զոհել իրենց ստացուածքը կարօտեալ եղբայրներու համար, և սրբախութեամբ նահատակուիլն համարել կատարեալ ցնծութիւն:

«Այսպէս ուրեմն ինչպէս Քրիստոսի Աւետարանը, նոյնպէս և հաւատացելոց կեանքը նոր էր հեթանոսներու համար, վասն որոյ և անդադար հալածանաց մէջ էին, մանաւանդ թաղաւորաց և իշխանաց կողմէ որոց առաւել ընդդէմ էր Քրիստոնէական հաւատարութեան սկրզբունքը, վասնզի վարժած էին նոքա ոչ միայն իշխել, այլև ի շարս աստուածոց զասիլ և ժողովրդէն պաշտօն առնուիլ: Սակայն Քրիստոնէութեան առջև կայսերք և թագաւորք ևս նուաճեցան (1):



(1) «Պատմութիւն Հայաստանաց Առաքելական սուրբ Եկեղեցոյ», ի Մեղիթեղեղ վարդապետէ: Մուրաշեանց, Առաքելական աւիսէ: սրբոյ Յակովբեանց: (Ի Տպարանի սրբոյ Յակովբեանց):

Գ Լ Ո Խ Խ Բ .

ՍՈՒՐԲ ԳՐԵՍՆՔ, ԼՈՒՍԱԽՈՐՉԵԱՆ ԳՆԻՍՆՈՒԹԻԻՆ
Ե Ի ՅՈՐԳՈՐ

Յայտնի է արդէն որ նախ քան զԼուսաւորիչ և նախ քան զգլխա Մեարտիպեան հայ տառերու, մեր նախնիք կարող չէին հայերէն գպրութիւններ ունենալ : Եւ որովհետեւ այն նախկին դարերու մէջ Քրիստոսնէական ազգային եկեղեցիներու բաժանումներ չկային, բնականաբար սուրբ գրոց ընթերցմունք Յունարէն և Ասորերէն լեզուներով կրկային արեւելքի մէջ : Բայց Տրդատայ ժամանակը կրք Լուսաւորչի ձեռք ուղջոյն սղգը բնութենց զՔրիստոսնէութիւն՝ իր առաջին բողձանքն եղաւ Սուրբ Գրոց խօսքերը իր մօշրենի լեզուին հեշտին հնչումներովը կարգալ, որպէսզի Աւետարանական վարդապետութիւնը ազգիս մէջ խորարմատ հաստատութիւն և անւականութիւն ունենայ : Ուրեմն սրջայի կրախտադարսութիւն ունինք սրբոցն Սահակայ և Մեարտպայ, որ այս ամենակարեւոր պէտքը լրացուցին Վրամշապուհի ժամանակ անոր իսկ օժանդակութիւնովը : Վրամշապուհ այն ժամանակ Հայոց թագաւոր կարգուած էր իր եղբօր ինսրովի տեղ, ի ձեռն Արտաշիր անուն Պարսից թագաւորին : (1)

(1) Պատմ. Հայոց. Հ. Եփրեմ Զագրեւեանի, Մխիթ. Ռախէն-գլ. ԻԶ :

Մանրաքննին ղխողութիւններ՝ կատարուած սոյն աշխատութեան վրայ, բացորոշարար կը դուչնեն որ անոնք առջեկնին ունեցած են ո՛չ թէ միայն եօթմանամանից Յունարէն օրինակներ, որուն հետեւած են զլիսաւորարար, այլև ունեցած են ասորերէն և ուրիշ հնագոյն օրինակներ, մտնաւանդ Հին Կտակարանին երբայական բնագիրը: Մեծագոյն ճիգը ունեցած են տալու Հայագնեայց ձևաքը սուրբ գրոց այնպիսի հարազատ և բնտիր թարգմանութիւն մը, որ իրաւամբ արժանի եղած է արդի բանասէրներու դասլմանը:

Մտնաւոր ուշադրութեան արժանի է, որ մեր նախնի սուրբ հարք՝ որպէս խղճի մտօք և զգուշութիւնով թարգմաներ են սուրբ գիրքերը, նոյնպէս ամենայնիւ աշխատեր են սոյն թանկագին գանձու խնոստին ինքեանք թափանցել և իրենց բանաւոր հօտին ևս այնպէս բնելուն ձգնել և աշխատիլ: Ականջ դնենք սրբոյ հօրն մերոյ Լուսաւորչի դաւանութեանն ու յորդորին.

«Պիտայ է մեզ միշտ դաստիարակութիւն Աւետարանին ի հրահանգել զմեզ ի լուսաւորութեան կարգս, զյանձանձեալք ի շնորհաց Սուրբ Հոգւոյն ճշմարտութեան, աճեցուք զվաստակս արգարութեան սուրբ սրտիւ և ուղղափառ հաւատով յԱստուած:

«Վասն այսորիկ գաղարեցուք ի դատարկ և ի վայրապար քննութենէ, և զհետ երթիցուք զխրատուց գրոց սրբոց հնոյն և նորոյս, զի ես եմ ասէ Աստուած և չիք այցոք որ պատմէ զիրաւունս զինովսու կեամք և շարժիւք և եմք, նմա լուիցուք որ փրկէ զմեզ յամենայն վտանգից և փոխէ յարքայութիւնն երկնից» (1):

Այսպէս են ահա Հայաստանեայց եկեղեցւոյ իր սրբոց ի սուրբ Լուսաւորչէ աւանդեալ դաւանութիւն և

(1) Յանախա . երես 23:

բանք խրատուց և յորդորք, նման Առաքելոյն Պօղոսի առ Տիմոթէաս գրուածոյն որ կըսէ : «Այլ դուն հաստատուն կրոց՝ յոր ուսարդ և հաւատարիմ եղեր, գիտն'ս ուստի ուսար, զի ի մանկութենէ, զգիրս սուրբ գիտես, որ կարող են իմաստուն ասնկ զքեզ ի վրկութիւն՝ ի ձեռն հաւատոցն որ ի Քրիստոս Յիսուս, Ամենայն գիրք Աստուածաշունչք և օգտակարք ի վարդապետութիւն են և յանդիմանութիւն՝ և ի խրատ արդարութեան, զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ յամենայն գործս բարութեան հաստատեալ»(1) :

Տաղապրութիւնը հայոց մէջ վեչաստաներորդ դարուն սկսեց, մինչ անկէ առաջ հայերէն գրեանք ձեռագիր էին, որեմն կը հասկցուի թէ այդ ժամանակներ սուրբ գրքեանք ո՛րքան հազուագիւտ միամեղամայն թանկագին լլլալու են, և որոց միայն վանքերու և եկեղեցիներու մէջ իսկ հաղիւ հազ գանուիր բաւական չէր կրնար լլլալ ընդհանրութեան հոգևոր պէտքին, հետեաքար մեծամանութիւնը դուրկ կը մնար Աստուածային կենտրար բանին հրահանգը ամէն մարդու անձամբ ընդունելէ, Արդ, ազխատութիւնը որ ծնող է ամէն շարիքներու, կրնար հանապարհ ապ օտարոտի սովորութիւններու և մտայածին վարդապետութիւններու «որք բաւ մարդկան աւանդութեանց և բաւ տարերց աշխարհիս և ոչ բաւ Յիսուսի Քրիստոսի են» որոցմէ շատ զգուշանալ պատուիրուած է հաւատացեալներու (2) :

Նախկին դարերու հոգեշունչ և Աստուծոյ հօտին հագածու և իրենց պարտաւորութեանց մասին արթուն ու հաւատարիմ հայերը՝ ինչպէս ակնուկեցաւ ի վերեւ, գիտէին շատանալ սուրբ Աւետարանով, և սովոր էին անով հրահանգել և պահպանել հաւատացեալներն թշնամիրն

(1) Տիմոթ. Գ. 14—17:

(2) Պօղոս. Բ. 8:

յարձակումներէն որ «անօրէնութեան խորհուրդը» ըսուած է (1) :

Յաւալի իրողութիւն մըն է, որ սրատալիւնը ախարող Եկեղեցիին նախադասութեան դարու կոչութիւնը նախանձելի չներկայացնէր, ինչու որ զուշակուած անօրէնութեան խորհուրդն արդէն մտած էր անոր մէջ : Եւ այն իսկ պատճառաւ Նովադիանեան ըսուած առաջին հերձուածը ախարող Եկեղեցիիէն տեղի ունեցաւ երրորդ դարուն մէջ : Ըսուած է թէ յետ առաքելական դարուն, մինչ Քրիստոնէութիւնը մէկ կայսեր կողմէ գգուանք կունենար և ուրիշ մը կողմէ հպածանք ու նախաախնք կը կրէր, յաջողութեան ստեղծ մարդիկ մեծ բողոքութիւնով կը խուժէին Քրիստոնէութեան մէջ աշխարհ ստորին նպատակներով : Իսկ ձախորդութեան և հալածանքի ստեղծութեանով կը վերադասնային հեթանոսութեան, և երբ փոթորիկը կանցնէր վերստին կը խուժէին Քրիստոնէութեան մէջ հետեւին ընկերով ամէն հեթանոսական մտլութիւն և իրենց օրինակովը ուրիշներ ալ կը պղծէին :

Աւելի գէշը այն է, որ առաջնակարգ եկեղեցականներ ըստ մեծի մասին ի յագեցումն իրենց փառասիրութեան և աշխարհային կիրքերու կը քաջալերէին այդ անպիտաններու մտլութիւնները, նոյն ատեն հաւատացեալներուն ուշադրութիւնն ալ առաքինութեան համար ունեցած նախկին սերերնէն կը փոխադրէին ունայն ցոյցերու պատեղի և այլ հրէական ծէսերու և արարողութիւններու հեթանոսական մտլութիւններու հետ խառն : Սոյն անհարկին աւերկութեանէն զգուանքով խուսափելու համար տեղի ունեցած է վերոյշխալ հերձուածն կամ առաջին բա-

(1) Բ. Թեապ Բ. 7 :

ժանուճը, որոյ համար շատ բան ունինք ըսելու հարցա (1):
 Քրիստոնէական ազգային եկեղեցիներու բաժանուճ-
 ներ չկային Լուսաւորչի ժամանակէն առաջ. ի վերեւ ա-
 սաջին գլխոյ մէջ նկարագրուած մօր այն նախնի Քրիս-
 տոնեայ հարք՝ որոնք հալածանքներու պատճառով ծեր-
 պերու և փաղարներու մէջ կանցունէին կեանքերնին,
 բնաւ մաս ու բաժին ունեցած չեն յիշուած աւերկու-
 թիւններու հետ, և ո՛չ ս.ք կարող եղած է ցոյց ապ թէ
 անոնք պարզ Աւետարանական Քրիստոնէական ըլլալէ
 ստորեր բան մըն էին:




(1) Տես, Պրֆ Բողղևանի, Էկեղ. ներստոսմ քիւնի, Լեւո. 126.

ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՐԱՍԿԱՆ ԺՈՂՈՎՐ ԵՒ ԱՆՈՐ ԳՈՐԾՐ

Պատմութիւնք կաւանդեն մեզի երեք ժողովներ իրր ընդհանրական, առաջինը գումարուեցաւ Նիկիոյ մէջ, Մեծն Կոստանդիանոսի հրամանաւ յամի Տեառն երեք հարիւր քսան և հինգին, Արիոսի հերետիկոսութեան դատին համար: Ժողովը կը բաղկանար 316 և ըստ ոմանոյ 306 Եպիսկոպոսներէ:

Ի՞նչ էր այդ հերետիկոսութիւն և ի՞նչպէս ծագումն ունեցաւ: Պատմուած է թէ, Արիոս անուն գիանական և հուշակաւոր բեմբասաց, Ազեքսանդրիոյ մէկ եկեղեցականը, մեծ ճիգ ունէր նոյն քաղաքի եպիսկոպոսական գահը կլկելու, երբոր այն դասարկ մնար Ազիլլէոսի մահովն: Սակայն իր դէմ Ազեքսանդր անուն եկեղեցական մը մրցակից ունէր և միշտ անուանարկել կը ջանար զայն, խօսած քարոզները խորձելով և բամբասակով զանիկա: Այդ մրցումներու մէջ Արիոս ինքը Քրիստոսի Աստուածութեան վրայ մոլոր կարծիքներու մէջ կը սայթաքի, նոյն ատեն իրեն շատ հեռեւորներ ալ կունենայ, յորմէ Արեւելեան եկեղեցին յոյժ կը վրդովուի ու կը սարսի և վերջապէս յիշեալ ժողովին դատաւարութիւնովն ինքը և իր հեռեւորներ նզովքի տակ կիյնան: Ապա ժողովը կը չարագրէ Նիկիական հանգանակ կոչուած հաւատամքը, որ Արիոսի յարուցած հերետիկոսութեան դէմ շատ կա-

A 31606



կիկ և լաւ իմաստասիրութիւնով ամփոփուած հեղինակաւոր դասնութիւն մը ճանչցուած է զարդ :

Հայ պատմագիրներու առեւած անգեկոթ թիւններունայլով՝ Լուսաւորչի անդրանիկ որդին Արխատակէս միայն գտնուէր է այդ ժողովին , և բերեր է իր հօրը յիշեալ հանդանակը , և Լուսաւորիչ կցած է անոր տակ , « իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանքս , երկիրագագանելով սրբոյ երրորդութեան և միոյ Աստուածութեանն՝ Հօր և Որդւոյ և Հոգոյն Արբոյ , այժմ և միշտ և յաւիտեանս » :

Ընդհանրական բռուած երկրորդ ժողովը Կոստանդնուպօլսոյ մէջ Թէոդոս թագաւորին հրամանաւն գումարուեցաւ Մակեդոնեան հերետիկոսութեան դէմ , որ կուրսնար Հոգւոյն Արբոյ Երրորդութեան անձերու մէկն ըլլալը : Մակեդոն և իր հետեւողներ թէև դրսուանց կը դատապարտէին Արխաի կարծիքը , բայց ներսուանց իրօք կը պահէին անոր սկզբունքը , միայն թէ կը սքօզէին անիկա առաւել մեզմ աւշափաւոր բառերու տակ , որպէսզի չգիտցուի գաղտնիքնին , ինչպէս բրած են արդի չարաթմապահները :

Ընդհանրական բռուած երրորդ ժողովը՝ հինգերորդ դարուն սկիզբները 437 ին գումարուած է փոքր Թէոդոս թագաւորի հրամանաւ Եփեսոսի մէջ 200 Եպիսկոպոսներով ի քննութիւն նեատորի կարծիքին Քրիստոսի բնութեանը մասին :

Հայաստանեայց եկեղեցին՝ յիշեալ ժողովներուն մէջ անցած դարձածներուն և տեղի ունեցած հակաճառութիւններուն և ո՛չ մէկին հետ գործ և առնչութիւն ունեցած չէ . բոլորը արեւելեան և արեւմտեան եկեղեցիներու կղերներէն յուզուած փառասիրական կիրքերու , մարմաւոր միտքերու և առաջնութեան հակաւեաարա-

նական խորհուրդներու արդիւնք ըլլալով՝ մի միայն այդ ժողովներու առաջինին մէջ շարագրուած Հաստատաբք ընդգրկած է Հայաստանեայց եկեղեցին իբրև Աւետարանական ուղղափառ դաւանութիւն :

Ընդ այս Հայաստանեայց եկեղեցին իբր ուրոյն մարմին սկիզբէն սուրբ գիրքերու վրայ հիմնուած սկզբունքներով բոլորովին անջատ կեցած է արեւելեան և արեւմտեան եկեղեցիներէն, և զարմանալի չէ որ անոնք իբրև իրենցմէ՛ ճերձուած մը համարելով անիկայ՝ հակառակ ազգիս յատուկ գործածութեան Գրիգորեան անուանած և քանիցս թանադրած իսկ են (1) :

Բաց ի յիշեալ երեք ժողովներէն թէ արեւելքի և թէ արեւմուտքի մէջ յիսունի չափ մեծ և յոքք ժողովներ կան գումարուած, որոց մէջ շատ վէճեր, կրօնիւններ և անէժքներ տեղի ունեցած են և շատ բաներ միոյն մէջ ընդունուեր և միւսին մէջ մերժուեր աւ զարձեալ ուրիշին մէջ ընդգրկուած են : Ատոնցմէ են Հաղորութեան Ա. խորհուրդին վրայ, պատկերաց իբրև կրօնական աւարկայ եկեղեցիներու մէջ ընդունելու և ջընդունելու վրայ եւն. և ն. տարրեր տարրեր գաղափարներ ու կարծիքներ, մինչ ըստ Տէրունական բանի եթէ Սուրբգրոց դիմելն իրենց սխալական կարծիքներն յառաջ տանելու փառասիրութենէն նախամեծար և պարտք համարելին առաւել կարող պիտի ըլլային աստուածահաճոց և ուղիղ գործեր կատարել : «Քննեցէք զգիրս, զի դուք համարիք նոքօք անել զկեանսն յարիտենականս» ըսաւ Փրկիչն մեր :

Այդ ժողովներու մէջ յուզուած խնդիրներ ս'ըչալի տարրեր էին Առաքելոց օրով եղած ժողովներու մէջ

(1) Տփսիսնդ, Ժող. գիւտ. ԻԱ. գլ. Գ. կամունն 4 :

յուզումներէն որ էին հրահանգիչ, շինիչ և հաստատող
 հաւասարեակներն հաւասարի, յոյսի և սիրոյ մէջ (2) ։ Իսկ
 այդ վերջինները՝ որպէս զուշակուած է, մահկանացու
 միաքերու հասողութենէ վեր անվերջանալի նրվերու
 վրայ թիւրբարանութիւններով յուզուած են, մի միայն
 հաւասարեակները իրենց կանէն քաշելու համար ։



(2) Գործ, Ի. 29:

ՆՈՎԱԴԵԱՆՔ ԵՒ ԼԷՕՆԵԱՆՔ , ՊԱՒՂԻԿԵԱՆՔ
ԵՒ ԹՕՆԴՐԱԿԵՑԻՔ

Շատ հետաքրքրական խնդիր մը եղած է միշտ աւետարանական պարզ ճշմարտութիւններուն հետեւող այն ժողովուրդը , որ իր գոյութիւնը պահած է յառաջ քան զվեշաասաներորդ դարու գերմանական բարեկարգութիւնը որ զզրչեց գրեթէ բովանդակ քրիստոնեայ աշխարհը : Յետագոյն հայ մատենագիրք ասոնց նկատմամբ անկատար և անճիշդ տեղեկութիւններ աւանդած են ներկայացնելով իբրև «Ներետիկոս և «մուսար մտայ տէր չարարարոյ մարդիկ» . իսկ ուրիշներ ներկայացուցած են իբրև միայն աւետարանական ու առաքելական վարդապետութեան և խրատուց հետեւող ժուժկալ , բարեպաշտ և հալածեալ քրիստոնեաներ :

Մենք , սակայն , ջանացինք ի սէր ճշմարտութեան կարելի եղածին չափ հետազօտել այս խնդիրը , որպէսզի կարենանք որոշ և ստոյգ ծանօթութիւն ինչ ձեռք բերել : Նպատակ ունենալով հաւատարիմ ծառայութիւն մատուցանել սիրելի ազգիս ներկայ և ապագայ սերունդին :

Չորրորդ դարու սկիզբն երբոր Մեծն Կոստանդիանոս քրիստոնէութիւնը ընդունեց , այն ատեն հեթանոսները աներկիւղ և համարձակ սկսան զխմել եկեղեցիին

գիրկը, որովհետեւ քրիստոնէութիւնը կայսրութեան մէջ հաստատուած ընդհանուր կրօնքը եղաւ և հալածանք, հակառակութիւն դադրեցաւ: Բայց նոյն ատեն եկեղեցիին կրած վնասն ալ մեծ եղաւ: Կոստանդիանոս ընդունեց քրիստոնէութիւնը ոչ թէ հոգեւոր և փրկութեան տեսակէտիւ, այլ աշխարհային, և այս իշխանութիւն եկեղեցիին վրայ անանկ ազդեցութիւն մը ունեցաւ որ Քրիստոսէ և առաքեալներէն հաստատուած եկեղեցիին պարզ, հոգեւոր և եզրայրական իշխանութիւնը աշխարհային իշխանութեան հետ դաշնակցեցաւ: Աւետարանական մաքուր և անապակ սկզբունքներ որ արդէն եկեղեցականներէ ոմանց շահասիրութեանը զոհ ըլլալ սկսած էին, բոլորովին խանդարեցան և անոնց տեղ, մեծաշուք արարողութիւններ, ծանրագին զգեստաւորութիւններ, առ երեւոյթ պաշտամունքներ եկեղեցիին մէջ մուծուեցան անտախ թափօրներ ևն, ևն, որոնք օտար և անծանօթ էին նախորդ դարերու հաւատացեալներուն: Սկսան աշխարհային պատիւներ և ո՛չ աւետարանական աստիճանաւորութիւններ և ասոնց հետ կապուած շահեր և տիրոջոյններ չուայլուիլ եկեղեցականներու, ասանկով Քրիստոսի հոգեւոր թագաւորութիւնը ըստ մեծի մասին աշխարհային թագաւորութեան վերածեցաւ: Սեղփեսորոս եպիսկոպոս Հոսմի ճիշդ սոյն միջոցին պապ անուանեցաւ, և եկեղեցիին պարզութիւնն ու մաքրութիւնը բոլորովին կերպարանափոխ եղաւ անոնց տեղ անցնող անտախորածեւութիւններով: Ոմանք այնպէս համարեցան թէ եկեղեցին յաղթանակ կանգնեց Կոստանդիանոս կայսրին քրիստոնէայ ըսուելէն ետք հարստանալով և զօրանալով և իր հարստութիւնը ձէսերու և սրարողութիւններու փառաւորութեան ստուգիւն մէջ երեւցաւ: Եւ նո-

բահաւատներէն շատեր ալ կուսարաշտութեան աջողակութիւնը եղող կրօնքի մէջ արտաքուստ տեսնուած շքեղութիւններ ու թափօրներու, հանդէսներու և ոսկեթել զգեստներու փառասիրութիւննին հետերնին բերին: Եւ շատեր՝ թէ եկեղեցական թէ աշխարհական՝ հեթանոսները առաւել գիւրութիւնով քրիստոնէութեան ընտելացնելուն պատակաւ կամ իրենք սխալի և ուղիղի մասին դատում չունենալով, իրրեւ բարեպաշտութեան միջոց այս օրինակ շատ բաներ ընդունեցին եկեղեցիին մէջ (1):

Ով կրնայ խորհիլ կամ բսել թէ այն նախկին ճշմարիտ և ուղղափառ հաւատացեալները՝ որոնց յիշատակութիւնը բրինձ արդէն, ամէնքն ալ յանկարծ իրենց սուրբ կրօնքին, քրիստոնէութեան, մասնաւոր սկըզբունքներուն, նպատակին և հանգամանքներուն այնքան տգիտացած ու այնքան անտարբեր դանուած ըլլան, որ զիջանին յիշեալ մոլորութիւններու, նորաձեւութիւններու և զեղծումներու հաւանութիւն տուած ըլլալ: Ոչ, ո՛չ, այդ զեղծումներու դէմ ամէն ժամանակ բողոքողներ եղած են: Պատմութիւնը կը ներկայացնէ առջեւնիս, երրորդ դարու կէսէն սկսելով արեւելեան ու արեւմտեան եկեղեցիներէն բաժնուած բողոքողներու ահագին թուով ժողովուրդներ Նովաղեան, Տօնատեան և այլ բազում անուններով և տիտղոսներով սր տրուած են անոնց տարբեր ժամանակներ տիրող եկեղեցիներէն. քանզի երբոր զանոնք հալածանքի, տանջանքներու, սուրի և կրակի ենթարկելով ընկճուած և ջնջուած կ'ենթադրէին, ուրիշ տեղէ մը յանկարծ կը յայտնուէին թշնամիներու կողմէ անոնց տրուած նոր անունով մը:

(1) Մօզիսյւլ. եկեղ. պատ. հատ. Բ. եր. 363:

Ութերորդ դարուն մէջ, այն է 750 թուականին, ասոնք վերստին կ'երեւին Փոքուն Ասիոյ խորերէն, բնիկ Հայաստանցի Պօղոս անուն անձի մը առաջնութիւնով, և իրենց հակառակորդներէն Պաւլիկեան կը կոչուին: Ասոնք իրենց վերերեւման ժամանակէն մինչեւ իններորդ դար հաւատարմութիւնով կը պահեն կրօնական համոզումին. և երբ դարձեալ հալածանքի, տանջանքներու և այրումի փորձերով սպառուած կը կարծուէին, վերջապէս առաւել զօրացած և առաւել եռանդով լեցուած կը յայանուին Փոքուն Ասիոյ Ծաղկոսն գաւառէն: Ծարեհաւանցի Սմբատ անուն անձի մը առաջնութիւնով և կը կոչուին Սմբատեան և ստուգապէս Թոնդրակեցիք էին:

Վեցերորդ և հօթներորդ դարերու մէջ չունինք գրեթէ հայ պատմագիր հակառակ անկէ առաջ իրարու յաջորդող Կորիւնի, Խորենացոյ, Եղիշէի և Ղազար Փարպեցոյ, որոց թուականը հինգերորդ դարէն սաղին չանցնիր. ժանաւանդ ասոնց համար ալ կ'ըսուի թէ յետսագոյն ժամանակներու մէջ փոփոխութիւններ կրած են: Հետեւաբար չունինք խօսող Սմբատեան կամ Թոնդրակեցի անունով Փոքուն Ասիոյ խորերէն Եւրոպայի կողմերը Մակեդոնիա, Պուլկարիա են. ևն. տարածուող հայերու վրայ, որոնք Պուլկարիոյ մէջ քրիստոնէութիւնը մեծաւ յաջողութիւնով քարոզած ու յառաջ բերած են՝ և մետասաներորդդարու մէջ գացած մտած են հարաւային Ֆրանսա, ուր Օսլեանի մէջ 1017 թուականին Պետրոս Վալան հռչակաւոր ուսուցիչ մը լուսաւորուած ասոնց քարոզութիւնով կը հետեւի ասոնց շատ ուրիշներու հետ՝ որոնք ալ իրենց հակառակորդներէն Վալտենք կամ Վալտենեանք կոչուած են: Բայց ճշմարտութիւնն այն է, որ Նովադ-կեանք բուռածներէն սկսած երրորդ դարու կէսէն մինչեւ երկուսասաներորդ դար՝ ամենքն ալ ինչ

անուններով և ախաղոսներով որ յորջորջուած են իրենց հակառակորդներէն մի և նոյն են դաւանութիւնով , վարքով ու բարքով թէ և ոչ միեւնոյն ազգի կամ ցեղի վերարերող :

Արդ , հետաքրքրական և յոյժ շահեկան պէտք է համարուի այդ մարդերու կամ ժողովուրդներու վրայ ճիշդ , որոշ և անկողմնակալ վկայութիւնով տեղեկութիւն ունենալ : Ահաւասիկ այդպիսի անձնաւորութիւն մըն է Բէյներոս Սաքքօ , Հոռմադաւան հուշակաւոր աստուածարան սրբաքննիչը , որ երեքասաներրորդ դարուն մէջ , այն է Թոնդրակեցոց ժամանակ դրած իր ժամանակակից պատմութեանը մէջ , զանոնք հերետիկոս համարելով հանդերձ՝ տուած տեղեկութիւնները մեծահատոր գիրքերու տուած տեղեկութիւններէ նախապատիւ համարուելու արժանաւորութիւնն ունի . կ'ըսէ՝

«Այն ամէն ազանդներու մէջ որ մինչև ցարդ ելած են ու տակաւին կը մնան , ախրոյ եկեղեցիին ամէնէն վնասակար Լեւոնեան բտուածներն են , և այս երեք պատճառներով : Առաջինը այն է , որ այս ազանդը շատ հին է , քանզի ոմանք կ'ըսեն թէ Սեղրեսարոսի ժամանակէն է ասոր սկիզբը , ոմանք ալ առաքեալներու օրով ելած է կ'ըսեն : Երկրորդն այն է , որ շատ լնդհանրացած է , քանզի երկրի վրայ տեղ չկայ որ այս ազանդը չզանուի : Երրորդ պատճառն այս է , որ ամէն ուրիշ ազանդներ սոսկալի հայհոյութիւններ կ'ընեն սրով լսողները կը զարհուրեցնեն . իսկ առոնք՝ շատ բարեպաշտ կ'երեւին , քանզի մարդոց առջև արդար վարք և Աստուծոյ վրայ ողջամիտ գողափարներ ունին :

«Ճշմարիտ կ'ըսեմ որ անոնց մէկը ձմեռուան մէջ գիշերանց Իպսա գետէն լողալով անցաւ , մեր կրօնակիցներէն մէկը իր հաւատքին դարձնելու համար : Այս բանին մէջ մեղադրանքի արժանի են ուղղափառ հաւատքի վարդապետները , որ ծոյլ են ու այնքան նա-

խանձաւոր չին ուղղափառ հաւատքի ճշմարտութեանը համար, որչափ որ այս անիրաւները նախանձաւոր են իրենց անհաւատութեան մոլորութեանը համար :

«Ասոնք հին և նոր կտակարանները աշխարհաբար լեզուով թարգմանուած ունին : Մէկ ազէա զեզացի մը տեսայ՝ որ Յովրին պատմութիւնը բառ առ բառ բերան սորված կ'ըսէր, և շատերը կան՝ որ բոլոր նոր կտակարանը բերան սորված գիտեն :

«Ասոնք լատիներէն կամ գրաբառ լեզուով աղօթք չեն ըներ, շար և գէշ մարդիկը եկեղեցի անգամ չեն ընդունիր, Սուրբ Գրոց վկայութիւններովը չհաստատուած քարոզները առասպել բաներ կը սեպեն, և կ'ըսեն թէ Սուրբ Գիրքը աշխարհաբառ լեզուով նոյնչափ ազէկ է՝ որչափ գրաբառ, եկեղեցիին խորհուրդները աշխարհաբառ լեզուաւ կը կատարեն, սուրբերը բարեխօս չեն բռներ, և անոնց երկրպագութիւն չեն ըներ, այլ միայն Աստուծոյ երկրպագութիւն կ'ընեն : Կը դաւանին թէ քաւարան չկայ, հապա միայն երկու տեղ կայ, այսինքն արքայութիւն արդարներուն համար, և դժօխք՝ մեղաւորներուն համար :

«Այս հերետիկոսները իրենց վարքէն և խօսքերէն կը ճանչցունին, քանզի համեստ վարք մը ունին, իրենց հագուստը պարկեշտ է և չափաւոր : Հարստութիւն դիզելու չեն աշխատիր, այլ հարկաւոր եղածովը կը բաւականանան : Նմանապէս ողջախոհ են, և ուտելիքի և խմելիքի կողմանէ բարեխառն . ո՛չ գինետուն կ'երթան, և ո՛չ կաքաւի և կամ ուրիշ անոտի զուարճութեանց տեղեր . ինքզինքնին կը զսպեն որ չբարկանան, ամէն ատեն կը սորվին կամ կը ոտրվեցնեն . խեղկատակութենէ, մարդ բամբասելէ և ունայն խօսակցութիւններէ

կը փակելն, սուտ չին խօսիր և երգում չեն շներ»(1)։
 Նոյնպէս Բուզնասն (Բօպըրդ) անգղիացի հուշակա-
 ւոր մատենագիրը իր Եկեղեցական Հետազօտութիւնք
 անունով հրատարակած գրքին մէջ Նովադեանց վրայ
 խօսելով գրեթէ Բեյնէրոսի գրածներուն նոյնիմաստ խօս-
 քերով կը գովէ մանաւանդ ատոնց համանուն առաջնորդ
 Նովադեան երէցը, նրորդ դարուն մէջ, այն է 251
 թուականին, Հոռոմ քաղաքի եկեղեցիի մը երէցն էր։
 Տեղւոյն Փապեան անուն եպիսկոպոսին մահէն ետք՝
 երբոր Կուռնելիոս անուն եպիսկոպոս մը կը ջանար յա-
 ջորդել որ հակառակ կը գանուէր բարեկարգութեան,
 Նովադեան դէմ կեցաւ անոր, բայց ան կողմնակիցներ
 շատ ունենալով, յաջողեցաւ յաջորդել, և որով մուս-
 րութեան ու անբարոյականութեան հոսանքը սկսեց վա-
 զել եկեղեցիին մէջ։ Հետեւապէս Նովադեան տեղի
 սուտաւ, և բաժնուելով իրեն հետեւող բազմութեան մը
 հետ զատ եկեղեցի մը կազմեց ու այսպէսով Նովադ-
 եանք կոչուեցան։ Իսկ յետոյ մեծ հալածանքներ կրեցին
 տիրող եկեղեցիէն. բայց ատոնցմէ յաջորդող կարգ մը
 ժողովուրդ մինչև և գերմանական բարեկարգութիւն շա-
 րունակուեցաւ, կ'ըսէ յիշեալ մատենագիրը։

Լիօնեանք կամ Լեւոնեանք ըսուածները, որոնց հա-
 մար Բէյնէրոս ըսած է թէ, «Տիրող եկեղեցիին ամէնէն
 վնասակարր եղած են», ասոնք իրենց ծագումը չորրորդ
 դարու սկիզբին կ'ընծայեն, երբ Լէօ անուն նշանաւոր
 եկեղեցական մը Կոստանդիանոս կայսեր օրով, եկեղեցւոյ
 և կրօնի այն մեծ յեղափոխութեան ժամանակ, Սեղրես-

(1) Գիրք. Բէյնէրոս Սաֆօն, հռովմէադաւան սրբաբնիչի, հը-
 բասուրակեալ ի քիսն 1234: Հանգէս ամսօրեայ, Վիեննական Մը-
 խիթ. 1894, ապրիլ 4, երես, 102:

Կանոն հաւատոյ, սպեալ 1857, գլ. Գ. յօդ. Բ. երես 179—183:

տրոսի պատկերներն և անոր միջոցով եկեղեցւոյ մէջ մուծուած զեզմանց և նորաձեւութեանց դէմ բողոքելով բաժնուեցաւ ասորոց եկեղեցիէն իրեն հետեւող ու գաղափարակից եզոց բազմութեան մը հետ : (Տե՛ս Քրտանց, Պատմ. Միացեալ Եզրարց. Էնտիք. կրօն. գիտութեան, Երև 1147 :

Հայաստանեայց եկեղեցին՝ թէև արեւելեան և արեւմտեան եկեղեցիներու մէջ ասորոց հերեփոխական վիճարանութիւններու, խռովութիւններու և անմիաբանութիւններու երբեք չունեցաւ մասնակցութիւն իրրև ուրոյն աւետարանի հետեւող եկեղեցի, սակայն Կոստանդիանոսի ժամանակ ու անկէ ետք այդ ասորոց եկեղեցիներու մէջ հոսանքի պէս մուտք գաած մոլորութիւններուն և մոլորութիւններուն տակաւ, ժամանակէ ժամանակ կերպարանակից բլլալու դժբաղդութիւնը ունեյաւ : Պատկանութիւն և Յունականութիւն, ո՛չ մէկը ո՛չ միւսը ընդունելու դէմ մահու չափ ճիգն ունեցաւ և չընդունեց. բայց շնոնց արտաքին ու ներքին կերպարանքով միանգամայն մերժելու արիութիւնը ցաւալի է որ չունեցաւ, որ ակներև կը կենայ :

Ուրեմն խնդիր մըն է թէ մերազեայք չունեցան մէջերնին այդ օտար և ցաւալի կերպարանակցութեան դէմ կեցողներ կամ բողոքողներ : Այո, ունեցան, և ունին միշտ : Ի մօտոյ Ս. Էջմիածնի Արարատ անուն ամսագիրին մէջ Նորագիւտ Չեռագիր ըսուած հրատարակութիւն մը տեսնուեցաւ, որ Նաեւ իբր առանձին տետրակ ալ կազմուած է, «Երանելի հայր Անանիայի գիր

խոստովանութեան յաղագս սուս կարծեաց որ վասն նորայ» վերնագիրով : Մենք պատշաճ սեպեցինք առանց անոր վրայ բառ մը կամ կէտ մը աւելցնելու , նոյնութիւնովը ընդօրինակել մեր այս աշխատասիրութեան մէջ , ինչ որ հրատարակուած տեսանք Արևելք օրաթերթին մէջ « Հին քայց նոր » մակագրով :

«Երաւունք ունինք» կ'ըսէ խմբագիրը «այս վերնագրին տակ հրատարակել կրօնական պատմութեան քանի մը տեղեկութիւններ ուրք շատ հին բլլարով հանդերձ , կրնան նորութիւն համարուիլ մեր ընթերցողներէն շատերուն : Մեր պատմութեան ուսուցիչները մեծ խնամքով կը զգուշանան բան մը բսել իրենց աշակերաններուն ի մասին կրօնական շարժումի մը , որ սոցալին մտքի ուղղութեանը գլխաւոր յայտարարներէն մէկն է , շարժում , որ մեծ փոփոխութիւն առաջ պիտի բերէր մեր եկեղեցական կեանքի կազմակերպութեան մէջ և մեծ ազդեցութիւն պիտի ունենար մեր հոգեկան կրթութեան վրայ , եթէ սարսափելի դէպքեր չմտնէին այդ շարժումը . . . :

«Արևելքի մէջ ծագած ազանդներէն (շարժում) մասնաւորապէս ուշադրութեան արժանի է Պաւլոսիկեան ազանդէն յետոյ՝ որ գոյութիւն ունէր Եօթներորդ դարուն , անոր յաջորդող Թոնդրակեցիներու ազանդը (շարժում) , որուն ծագման ճիշդ ժամանակը յայտնի չէ , քայց կ'երևի թէ Յովհաննէս Օվայեցի կաթողիկոսին օրովն է իններորդ դարու առաջին կէսէն , այսինքն 800 թուականէն և տեւած է մինչև մետասաներորդ դարու երկրորդ կէսն , այսինքն ամբողջ երկու դար : Այդ ազանդը օտարամուտ չէր , այլ բուն իսկ Հայոց ապրած հողին վրայ ծագած ու ծնած էր , ուշադրութեան արժանի է կ'ըսէ միաբանը , որ հայկական մտքի ու եւ է արտադրու-

թիւն երբեք չունեցաւ քիչ թէ շատ ազդեցութիւն հայոց շրջանէն դուրս, այդ շրջանակին մէջ հաշուելով Անդրկովկասը, Վրաստանը ու Աղուանք, ուրիշ քանի մը մանր ցեղերու հետ: Միակ բացառութիւնը որ կայ Թոնդրակեցոց ազանդն է: Այդ ազանդ թէպէտ հակուղղափառական մտածութիւն, սակայն Հայկական մտածութեան միակ արտադրութիւնն է որ դուրս ելլելով Հայոց բնական սահմաններէն, տարածուեցաւ հեռուն. Փոքր Ասիա, Միջագետք, Պալքանեան թերակղզիք, մասնաւորաբար Պուլկարիա (1), Միջին Եւրոպա, Հիւսիսային Իտալիա և Հարաւային Ֆրանսա: Թոնդրակեցիներու այդ շարժումը ահագին նշանակութիւն ստացաւ մարդկային ընդհանուր պատմութեան մէջ:

«Թոնդրակեցիներու ազանդը՝ բողոքականութեան նախահայրն է, այդ ազանդ չէր ընդուներ արտաքին ձեւակերպութիւններ, կը մերժէր պատկեր, մասունք ևն. ևն.: Ազանդն իր անունը կ'առնու Թոնդրակ աւանէն ուր եղած է իր ծագումը, և անկէ կը տարածուի Թուրայի, Խնուս, Դերջան և ուրիշ տեղեր, ամէն կողմ այն անունը կ'առնու ուր կը գտնուի: Կը կոչուին Թուրայեցիք, Խնուսցիք, Դերջանցիք և այլք կ'առնուն իրենց գլխաւորներու անունները, ինչպէս Սմբատեանք, Վահանեանք, ևն. ևն.:

«Այդ ազանդի տարածիչ երեւցող առաջին անձն է Սմբատ Չարեհաւանցի որ ահագին բանակ մը կ'ունենայ իր հետեւէն: Երկու դար շարունակ ամբողջ Հայ ազգը կը բաժնուի երկու մասերու, միաքերը վրդովուած են: Մէկ կողմէն կը պաշտպանուէր ուղղափառութիւնը ո՛չ

(1) Պուլկար՝ երախսագիտութեամբ խոսովանած են ընդունած լուսաւորութիւննից անոնցմէ:

միայն խօսքով, քարոզութեամբ՝ այլ և բռնի ուժով : Գահիճ, կախաղան, խարան, հուր, ջուր, ամենայն ըստ պանիչ զօրութիւն ի գործ կը դրուէր, ոսկայն էրօնական հաւատք մըն էր Թոնդրակեցիներու գաղափարը : Ասոնք առաջին դարու քրիստոնէից յատուկ անվեհերութիւնով կը գիմանային՝ ուղղափառութեան այսինքն լուսաւորչական եկեղեցւոյ պատկանող հայերու կողմէ յարուցուած այս բարբարոսական հալածանքներու : Ազանդաւորներու գունդին մէջ եկեղեցական և աշխարհական, այր, կին ամէնքն ալ կը գտնուէին : Գաղափարի այդ հալածեալներու անուններէն պատմութիւնը մեզ պահած է բազմաթիւ անուններ, որոց մէջ են տիկին Հրանուշ, տիկնայք Ախնի և Կամարայ, առասպելախառն տիկին Մարէ, մի այլ տիկին Շէթի : Յակովբոս եպիսկոպոս, Կունծիկ արեղայ, Պօղ Այրարատցի, Սարգիս, Ամբատ, Ղազար, Թօրոս, Կիւրիզ Վրավառ :

«Մաքսիարոս կը կարծէր, որ տմարդի հալածանքներ վերջ դրին այդ ողանդին. սակայն ո՛չ հալածանք ոչ ալ աստուածարանական վիճարանութիւնք կրցան քանդել, ջնջել Թոնդրակեցիներու աղանդը : Թաթարական արշաւանքներն իրենց հեղեղներու ներքեւ ծածկեցին նաև այդ աղանդն ալ : Հայերը ժամանակ չունեցան այլևս աստուածարանական կրօնական խնդիրներով զբաղիլ, սակայն, այդ աղանդին հետեւողք իրենց պաշտպան իշխաններուն հետ տեղափոխեցան դէպի Արեւմուտք, Ասորեստան և մասնաւորապէս Պուլկարիս : Այս վերջինը եղաւ երկրորդ հայրենիք այդ աղանդին որ հոն կոչուեցաւ Փոքոմիլեան աղանդ, Փոքոմիլ անուն քահանայի մը առաջնութեամբ :

Միջին Եւրոպայի մէջ Կաթարացիք շարունակեցին

այդ աղանդը, իսկ հարաւային Ֆրանսայի մէջ Ալպի-
 ժուայք (Վալաենք կամ Վալտենցիք)՝ որոց պատմութիւ-
 նը հանրածանօթ է և ուսումնասիրուած (1) : Այսպէս ու-
 րեմն կրտէ միաբան, բարեկարգութեան այսինքն բողո-
 քական Աւետարանական Եկեղեցիներու բուն նախահայրն
 ու հիմնադիրը՝ Հայոց բնակած գաւառներէն ելաւ : Պէտք
 է ուրեմն անաչառութեամբ, առանց մոլեռանդութեան
 ուսումնասիրել ատոնց պատմութիւնը, ո՛չ միայն իբրև
 լրացուցիչ մաս Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութեան,
 այլ և իբրև Հայ հոգեւոր—մտաւոր կեանքի ինքնուրոյն
 արտայայտութիւն, նշանաւոր իր հետեւութիւններով : »

Կը յաւելունք վերոգրեալին վրայ, մտասաներորդ
 դարու հայ մատենագիր Լաստիվերտօի Արխատակէս հօր
 տուած տեղեկութիւնները, որ սա ևս ժամանակակից
 ըլլալով խնդրոյն՝ յաւ է լսել :

Լաստիվերտօյի՝ միաբանին յիշած անունները հաստա-
 տել է և անոնց ամենուն բարեպաշտութիւնը իբրև գերա-
 զանց բարեպաշտութիւն գովելէ հտք՝ կը գովէ նաև Յա-
 կովբոս Եպիսկոպոսի ճարտարախօսութիւնն ու Տիկին
 Հրանուշի եռանդը իրենց գաղափարները տարածելու
 մասին :

Թոնդրակեցւոց կրօնական համոզումներն ու գաղա-
 փարները յայտնեք, միայն յիշեալ Եպիսկոպոսին ինչ ինչ
 արարքները կը պատմէ, թէ ի՛նչպէս պաշտօննուն անար-
 ժան գտնուող եկեղեցականները կարգադուրկ բրած, ա-
 կանջալուր խոստովանութիւնը արգիլած, և ձեռագործ-
 ներու առջև կրօնական սրաշտամունք կատարելը մեղք
 համարած և մերժած է : Նաև կը պատմէ թէ մեծ Պեն-
 տակոստէի նախորդ գիշերը անձամբ բազմազբիւր լիւան
 գագաթը ելեր և հոն հաստատուած կրօնային առարկայ

(1) Անգղ. Համայնուս. կրօնա. գիտութեանց. երես 1147 էջ. 2

մը՝ որուն ժողովուրդը Պենտեկոստէի առաւել
գունդագունդ ուխտի . կերթար նախապաշարումով ,
վար առած ու կտոր կտոր բրած է : (Յիշեալ Նպխ-
կոպոսին այս արարքը մեզի յիշել կուտայ Դ . Թագ . ԺԷ . 4 .
Իսրայելի բարեպաշտ թագաւորին Նզելիիայի կատարած
աստուածահաճոյ արարքը , որ ինչպէս գրուած է : «Նա
եբարց զբարձունսն և խորտակեաց զարձանսն և կտոր-
եաց զանտառսն , և զօձն պղնձի զոր արար Մովսէս , զի
մինչև ցայն աւուրս խունկս արկանէին նմա որդիքն Իս-
րայէլի , և կոչեաց զնա Նէխթան» այսինքն պղինձի կտոր :

Լասախիւերացին կաւարտէ իր խօսքը , շատ խժգժա-
կան արարք մը պատմելով . կրսէ թէ Սամուէլ կաթողի-
կոս , թշնամի Թանդրակեցիներու , անոնցմէ վեց վարդա-
պեաներու երեսացը վրայ ջեռուցած երկաթով ազիւսու
պատկերներ կը դրօշմէ , որպէսպի ժողովուրդը այդ նը-
շաններէն ճանչնայ և զգուշանայ անոնցմէ : (1)

Արեւելեան և Արեւմտեան ո՛չ բողոքական Եկեղեցի-
ներու պատմութիւններու մէջ՝ իրրեւ մոյորաժիա , չարա-
բարոյ , ազանդաւոր են . են . ներկայացուած վերո-
գրեալ Քրիստոնեաներու նկատմամբ այսքան տեղեկու-
թիւն բուական համարելով՝ ներուի մեզ հարցնել թէ
սուրբ Սարգիս շնորհալիի , որ ժամանակից է Թանդրա-
կեցիներու , կաթողիկեաց մեկնութեան կցած յորդորակը
որո՞ց կը պատկանի , որ արդարեւ հոգեւունչ յորդորակ
մըն է զոր ընդօրինակեցինք ստորեւ :

«Իսկ մեք ամենեւին հրաժարեցաք յընթերցմանէ Առ-
տուածային գրոց ուր մեր ամենայն կեանսն պարտ էր
յայն ծախսել , և կերակուր և բմպելի և քաղցրութիւն
զայն վարկանել , և համարձակութեամբ ասել ընդ Դաւ-
թայ , քաղցր են ի քիմս իմ բանք քո՝ քան զմեզր բե-

(1) Երկասխուրթիւն Լասախիւերաց , գլ . ԻԳ , ԻԳ .

բանոյ իմոյ: Այլ և մեր ճառք և արթնութիւն և հանգիստ և աշխատութիւն և երգք հոգեւորք՝ ընթերցուածք գրոց արժանի էր յինել: Իսկ մեր անձամբ զսպառնալիսն Աստուծոյ ձգեմք ի մեզ՝ զորս և սպառնացաւ Իսրայէլի, տաց ձեզ ասէ ո՛չ սով հացի, և ո՛չ ծարաւ չրոյ, այլ՝ սով լսելոյ զբանն առ ի չգոյէ բանին, այլ ի կամակոր մտաց, և զայն ո՛չ միայն տուգանս ո՛չ վարկանեմք, այլ զայս բամբասեմք՝ որք ընթեռնուեն»: (1)

Մեր ի վերեւ լրաց հարցումին պատասխանը՝ Շընորձալուոյն յորդորակի խօսքերէն թէ և առինք, բայց առաւել ազգու պատասխան մը ևս կառնուէք, ու թերորդ դարու մէջ ապրող հայրապետի մը խօսքերէն որ կ'ըսէ, «Առաջնորդք ըստ մեծի մասին մարմնաւոր իշխանութեամբ առաջնորդ գրուելովն ին, միայն մարմնաւորին վրայ կը խորհին, նոյնպէս քահանայք ալ հաղիւթէ կը կատարեն իրենց քահանայական պաշտօնը: Իսկ իշխանաւորք և ժողովուրդք՝ մարմնաւոր կամ աշխարհային բաներով զբաղած ըլլալովն թոյրովն անհոգ են հոգեւորին: Ահա այսպէս գրեթէ ամենայնիւ վերցած է մեր ազգէն Սուրբ գրոց ամենացանկալի գիտութիւնը, և անպիտան ու ոչինչ բանի մը պէս համարուած ըլլալուն համար՝ ոչ ոք զայն կը սիրէ և անոր վրայ կը մտածէ: Վասն որոյ ահա ողորմելի ենք, և ասանկով առաւել ողորմելի և թշուառ պիտի ըլլանք, և երբէք չենք խորհիր մեր այս թշուառութեան վրայ, և թերութիւն չենք համարեր ոչ ալ վտանգ մեզի այս բանը: Ուստի հարկ է ինձ ծանուցանել օրհնեալ ազգիս այս վիճակ որպէս վտանգաւոր լինելն: » (2)

(1) Մէկնու. Կարօլիկ. Սարգիս Շնորհալոյ, յորդորակ. երես 75:

(2) Քարոզ, 4.

Արդ՝ ազգի մը առաջնորդներուն, քահանաներուն իշխանաւորներուն և առհասարակը՝ ժողովուրդին վիճակը եթէ ութերորդ դարուն մէջ այսպէս էր ըստ վրկայութեան Սիմէոնի ժամանակակից կաթողիկոսի, ինչ կրնանք երեւակայել այն եկեղեցիին համար որ այդ ուղորմելի անդամներէ կը բաղկանայ. ոչ թէ միայն տուգանք չեն վարկաներ ըստ բանի Շնորհալուոյն իրենց արգիտութիւնը՝ այլ կը բամբասեն իսկ ուրիշներ որ կ'ընթեռնուն և կ'ուսանին: Տարակոյս կը մնայ՝ գիտնալու թէ բամբասողները որոնք են: Թոնդրակեցիք չեն կրնար ըլլալ, քանի որ անոնք Սուրբ գիրքը սիրելնուն և կարդանուն համար հալածուած, պարզ, պարկեշտ, անվնաս և ժրաջան Քրիստոնեաներ կը ճանչցուին: Եւ իրենց դուանած վարդապետութիւնով ու վարքով կը դատապարտեն տիրող մոլորութեան և սնապաշտութեան բովանդակ կազմուածքը դնելով ճշմարիտ կրօնքը Քրիստոսի սիրոյն ու հաւատքին մէջ, և ունենալով գերազանց նկատութիւն Աստուածային Բանին:»

Սուրբ Յովհան Ոսկեբերան չորրորդ դարուն մէջ ասանկ կ'աղաղակէր և կը գոռացնէր Այս Սօֆիա տաճարին գմբէթները. «Համայն քրիստոնեայք զիմել պարտին Սուրբ Գրոց, քանզի այս ժամանակիս մէջ եկեղեցիները մոլորութիւններով ապականուած ըլլալնուն համար, աստուածային մատեաններ միայն կրնան ճշմարիտ դաւանութիւնը գիտնալ և ունենալ փափաքողներու ապաստանարան կրնան ըլլալ:» (1)

Ահա այսպէս էր նախնի Սուրբ Հայրերու հաւատքը, և այսպէս պարտի ըլլալ հիմա ալ և միշտ:



(1) Պարսավնար, Սիմէոն Հայրապետի, Բարոց, 4.

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՁԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՔ

Այս բնկերութիւններ մեծ օրհնութիւն եղած են ընդհանուր մարդկութեան սուրբ զրոյց բնթերցումը ամէն ազգերու և ամէն դասակարգի մարդոց հնարաւոր ընելով . պատշաճ է ուրեմն տեղեկանալ անոնց ծայմանն ու գործողութիւններուն :

Յամի տեառն 1800 Յունուարի սկիզբը այս տեսակ ընկերութիւն մը ծնունդ առաւ Ռուսաստանի մէջ որ առաջինն էր , և որուն նպատակը այնքան հաճելի երևցաւ այն ժամանակի Ազեքսանդր կայսեր որ զգալի մը զուժ մը առաւ անոր յաջողութեանը իր ակրութեան բոլոր սահմանին մէջ :

Չորս տարի ետքը նոյն տեսակ ընկերութիւն մըն ալ հաստատուեցաւ Անդգիայի մէջ , Բրիտանական և Օտտոմանական Վաթիկանի ընկերութիւն անունով : Այս երկու ընկերութիւններ 1813 թուականին մէկ տեղ նկատուելութեան առին Հայոց վիճակը , և որուն գործնական նպատակ մը մատուցանելու առաջադրութիւնով որոշեցին գրարաւաստուածնչունչը նոր ապագրութիւնով ի լոյս բերել ընդհանուրին զիրամատչելի գնով : Այս նպատակով ուսական ընկերութիւնը ձեռք զարկաւ գործին , և 1815 թուականին հինգ հազար օրինակ սուրբ գիրք տպագրեց Հայոց համար : Ապա բրիտանական ընկերութիւնը ևս իր կազմակերպի գործակալներուն խնամքովը ձեռք զարկաւ գործին , և 1817 թուականին նոյնպէս երկու հազար օ-

րինակ գրաբառ Աստուածաշունչ տպագրեց, որով եզաւ
ընդ ամէնը եօթն հազար օրինակ, Յետոյ ռուսական ըն-
կերութիւնը երկու հազար օրինակ միայն Նոր Կտակա-
րան ի լոյս բերաւ: Այս տեղեկութիւններու մեր ազ-
բիւրներն են՝ այդ ընկերութիւններու ժամանակին հրա-
տարակամ տեղեկագիրները:

Սուրբ գրոց Հայոց մէջ այս կերպով ասարածուելուն
վրայ հետեւեալ արձանագրութիւնը կայ յիշեալ տեղեկա-
գիրներէն միոյն մէջ: «Հայերէն Ս. Գրոց տարագրուիլը
մեծ ուշադրութիւն արթնցուց այս ազգին մէջ, մանա-
ւանդ ի Ռուսաստան, ուր սրտեռանդ փափաք կը տես-
նուի ստանալու համար այս բաղձարժէք գանձը: Պատ-
ճառ ունինք յուսալու որ այս ի սիխուս աշխարհի ցըր-
ուած ժողովուրդին մէջ սուրբ գրոց այսպէս տարածուիլը
շատ օգտակար ու մեծ արդիւնք պիտի ունենայ:»

Տարակոյս չկայ որ կոյսերց կողմէ պաշտպանուած
ու սիրուած գործողութիւններ երթալով ժողովրդակա-
նութեան երեւոյթ կ'առնուն, ահա ասանկ եզած է Ռու-
սիոյ մէջ Աստուածաշունչի ընկերութեան գործողութիւ-
նը: Այն ժամանակի Հայոց Յփրեմ կաթողիկոսը նամակով
մը գոված է ընկերութեան ձեռնարկած գործը, և իր
ազգը Աստուծոյ կենարար բանիւր յագեցնելու համար
կատարած ջանքն ու աշխատութիւնները կ'օրհնէ: Յփ-
րեմի յաջորդող Ներսէս կաթողիկոս ևւս վեց հարիւր ուերլ
նուէր բրած է ընկերութեան: Թէ Յփրեմի օրհնութեան
գիրը թէ յաջորդին նուէրը կը տեսնուին ռուսական ըն-
կերութեան տեղեկագրին մէջ արձանագրուած:

Բրիտանական ընկերութիւնը՝ 1811 թուականին վե-
նետիկեան Սուրբ Ղազարու վանքէն՝ 1500 օրինակ գրա-
բառ Նոր Կտակարան գնած է և թէ զեզչեալ գնով և թէ
ճրիարար ցրուած է ազգիս մէջ, և հետզհետէ առաւել

քանակութիւններով քանիցս գնած և ցրուած է թուր-
քիարնակ Հայոց մէջ :

Գանք որ հայոց մտաւորական և քաղաքական վի-
ճակը այն ժամանակներ ընդհանրապէս այնպէս էր, որ
հասարակ ժողովուրդը ո՛չ միայն գրաբառ չէր հասկնար,
այլ գործածած աշխարհաբառն ալ շատ ուամկական և
թրքերէնով խառն էր, և ասկէ զատ շատ տեղեր բոլոր-
ովին թրքախօս էին, ինչպէս որ մինչև հիմա կան Պրու-
սայի, Փաղատիայի, Կեսարիոյ, Այնթապի պէս շատ տե-
ղեր: Ուստի մեր ազգին այս ողորմելի կացութիւնը
նորէն ուշադրութեան առարկայ կը դառնայ յիշեալ եր-
կու ընկերութիւններուն. որովհետև կը տեսնեն որ ի-
րենց կասարած ծախքով և աշխատութիւններով թէպէտ
բարձր կարգի կղերականներ, ուսուցիչներ և ուրիշ կարգ
մը մարդիկ կօգտուին՝ սակայն ազգին ընդհանրութիւն
չէր կրնար համահաւասար օգտուիլ:

Արդ, Ռուսական ընկերութիւնը սոյն ատեն ձեռնար-
կեց հայատառ թրքերէն նոր կտակարանի թարգմանոն-
թեան, և բրիտանականն ալ անկէ տարի մը ետք յաջո-
ղեցաւ հայ աշխարհաբառ թարգմանութիւն մը հրատա-
րակել: Թէպէտ երկու թարգմանութիւններն ալ լեզուի
մասին ունէին շատ թերութիւններ. սակայն անով մէկ-
տեղ ճշմարտասէր և ճշմարտախնդիր ազգայինք յուսով
լափեցին երկուքն ալ: Բայց Ռուսիոյ Ազեքսանդր կայսեր
մեռնելէն ետք, որ ժամանակակից էր Հայոց Եփրեմ կա-
թողիկոսին, ոուս կղերական զասը հակառակեցաւ
Աստուածաշունչի ընկերութեան, որ վերջապէս լքաւ:
Թէպէտ վերջերը նորէն կազմուած ըլլալ կըսուի նոյն տե-
սակ ընկերութիւն մը, բայց երբեք ձեռնարկած չէ հայե-
րէն Ս. գրքի տպել:

Այդ ժամանակներ հայ կղերին կողմէ ընաւ ընդիմութիւն եղած չէ Աստուածաշունչ Ս. գրոց տարածումին, որչափ որ կարելի է գտնել. մանաւանդ քաջալեւորութիւն և նպաստ իսկ մատուցուած է որպէս տեսանք: Սակայն Բրիտանական ընկերութեան 1823 թուականի տեղեկագրին մէջ արձանագրուած տեսանք որ, ընկերութեան գործակալն Ղիմում ըրած լլալով այն ժամանակի Կոստանդնուպոլսոյ Կարապետ պատրիարքին, որպէսզի աշխարհաբառ նոր կտակարանի տպագրութիւնը իր հրամանովը կատարուի ըստ այն ժամանակի սովորութեան, նորին սրբազանութիւն զլացած է:

Ամերիկայի Աստուածաշունչի ընկերութիւնը, որ 1816 Մայիսի մէջ կազմուած է, սկիզբէն իր գործողութիւնը զլխաւորաբար լոկ Միացեալ Նահանգներու յատկացուցած է մինչև 1833 թուական: Իսկ նոյն վերջին թուականի Մայիս 17 ի իր տարեկան ժողովը կարգ մը որոշումներ կրնէ գործողութեան ասպարէզը ընդարձակելու, որպէսզի կարենայ զրկել Ասոյ կենաց խօսքը աշխարհի այն ամէն ազգի ժողովուրդներու, որ մինչև այն ժամանակ զուրկ կը գտնուէին Անոր օրհնութիւններէն: Յիշեալ որոշումներու երեքը միայն հետևեալներն են.

1. Ընկերութիւնը իրեն իբրև ամենակարևոր պարտաւորութիւն նկատողութեան առնու ջանալ մատուցանել Սուրբ գիրքերը երկրի այն ամեն ազգերուն, որոնք զուրկ են անոնցմէ, և անոնց օրհնութիւններէն. ապաւինելով Աստուծոյ նախախնամութեանն ու իրեն նպաստող Քրիստոսեաններու աջակցութեան:

2. Կորոչէ, որ այս ընդարձակ գործին հետամուտ լլալու համար Աստուածաշունչի ամէն ընկերութիւններու հետ խորհրդակցութիւնով գործէ ամենալաւ միջոցներու վրայ, որպէսզի առաւել արագաբար յառաջ տարուի սոյն մեծ գործը որ յանձնարարուած է իրենց:

Յ. Կորուչէ որ այս ընկերութեան գործակալները և և մանաւանդ գործադիր մարմինը արտօնութիւն ունենան և անոնցմէ պահանջուի՝ որ անմիջապէս մասնաւոր թղթակցութեան սկսին Բրիտանական և օտարաց Աստուածաշունչի ընկերութեան և ուրիշ նոյն տեսակ ընկերութիւններու հետ, որպէսզի ամէնքն ալ խորհին այս օգտակար խնդրին վրայ:

Սոյն Ամերիկեան ընկերութեան 1833 Մայիս 17ի տարնկան ժողովին տեղեկագրութեանը մէջ կը տեսնենք որ գործադիր մարմինը կարեւոր պէտք մը համարեր է, ընթացիկ տարւոյն տպագրական ծախքին գումարը 30,000 տալէրի բարձրացնել, մեծագոյն մասը օտարալեզու Ս. գիրքերու տպագրութեան յատկացնելու համար: Աւասիկ այս կերպով կը ձեռնարկուի ընկերութեան յոյժ օգտակար և գովելի ծառայութեանը Հայոց համար:

Հայոց Կ. Պօլսոյ Պատրիարք, Տէր Ներսէս Եպիսկոպոս Վարժապետեան, շատ լաւ հասկցած և զնահատած էր այն ընկերութեան ազգիս մատուցած մարդասիրական ծառայութիւնները աշխարհաբառ և հայաստառ թրքերէն Աստուածաշունչներ և նոր կտակարաններ հրատարակած ըլլալովը: Ուստի մասնաւոր խնդիրք ըրաւ նոյն ընկերութեան անոր Կ. Պօլսոյ գործակալին միջոցով, որպէսզի գրաբառ Աստուածաշունչ եւս տպագրել և հրատարակել բարեհաճի:

Ընկերութիւնը ամենայն հաճութեամբ և սիրով յանձն առաւ, պայմանաւ որ կանոնականէ դուրս եղած գրքերը դուրս ձգուին: Համահաճութիւն գոյացաւ ու այսպէս տպուեցաւ և հրատարակուեցաւ սկսեալ 1897 թուականէն, և զարդիւս կը գործածուի ամենայն երախտագիտութիւնով:



ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԻՍԻՈՆԱՐԻ ԹՈՒՐԲԻՈՅ ՄԷՉ

ԵՒ

ՆԱԽԿԻՆ ԼՈՒՍԱՄԻՏ ՀԱՅԵՐ

Պորտ լնկերութեան Թուրքիայի մէջ գործի ձեռնարկելը 1819 թուականէն սկսուած է, և անոր առաջին միսիոնարները Պաղտատ զրկուած ըլլալով՝ հոն Սիւրիական առաքելութիւն մը հաստատած են իբրեւ պաշտօն միայն Ասորիներու համար, առանց գաղափար իսկ ունենալու Հայոց վրայ: Սակայն այդ առաքելութեան գործողութիւններու միջոցին այնպիսի դէպքեր տեղի ունեցեր են որ ճամբայ բացեր են քիչ ատենէ մը ետք Հայոց համար ևս առաքելութիւններ հաստատելու,

Սիւրիոյ առաքելութենէն երկու Միսիոնար, Լէվի Փարսընս և Փլինի Յիսք անուն, միսիոնարական պտոյտի կ'ելլեն, առաջինը դէպի Երուսաղէմ, միւսը կ'երկարէ իր պտոյտը մինչև Զմիւռնիա, այս երկուքն ալ գացած հանդիպած տեղերնին մարդասէր Հայերու հետ տեսնուելու և խօսակցելու պատեհութիւններ կ'ունենան և Եւ երկուքն ալ շատ կ'ազդուին Հայոց կրօնասէր բնաւորութենէն. ապա պտոյտի տեղեկագիրներուն մէջ կը գովեն Հայոց մարդասէր ու կրօնասէր բնաւորութիւններն և ընդ նմին ունեցած նախապաշարումին ու աւելորդապաշտութիւններնին ալ:

Պորտ ընկերութիւն՝ այդ տեղեկագիրն ստանալէն

ետքը գաղափար և խորհուրդ կունենայ Հայ ազգի վրայ և կորոշէ նոյն առաքելութեան Մխիթնարներուն վերայ աւելցնել հատ մը յատուկ Հայոց համար: Այսպէս Մր. Ուիլըերմ Կուտէլ կը ժամանէ Պէրուդ 1823 թուականին Նոյեմբերի մէջ, իբրև առաջին Մխիթնար յատուկ Հայոց համար:

Սրդ., Մր. Ո. Կուտէլ իր առաջին տեղեկագրին մէջ հետեւեալը արձանագրած է Պորտին. «Քարի նախախնամութիւնը առաջնորդեց մեզի Հայ Եպիսկոպոս մը և Հայ Վարդապետ մը, երկուքն ալ Երուսաղեմի Ս. Յակովբեանց ուխէն, կեանքերնուն մեծադոյն մասը հոն անցուցած ու լաւապէս դաստիարակուած և լուսաւորուած անձեր, որոնք մեզի օգնական հզան իբրև լեզուի ուսուցիչ և թարգման: Ասոնց անուններն են, Դիոնեսիոս Եպիսկոպոս և Կարապետ Վարդապետ» (1)

Մեր ազգայինք յիշեալ Եպիսկոպոսին կը պարտին «Համարարբառ նորոյ կտակարանի» օգտաշատ և յոյժ կարևոր գրքին աշխատասիրութիւնը որ կատարած է այն ատեն, նաև հայատառ թրքերէն Աստուածաշունչի առաջին թարգմանութեան մէկ մասն, ինչպէս քանի մը տետրակներ ալ թարգմանուած է նոյն լեզուի անգղիերէնէ, որոց մէկն է «Ուանարածին աղջիկը Եղիսաբեթին մահը» որ ապա աշխարհարառի ևս թարգմանուեցաւ: Այս տետրակին վերջարանը որ յիշեալ եպիսկոպոսն իր կողմէն դրած է, աւասիկ. «Սիրելի ընթերցողս, աղքատ թէ հարուստ, արդեօք դուք ալ ու ես ալ հոն երկինքին մէջ պիտի տեսնուի՞նք. արդեօք հագո՞ւած ենք խոնարհութիւնով, ու մեր սիրելի փրկչին արդարութեանը հարսնիքին հանդերձներովը զարդարո՞ւած՝ ենք, արդեօք աշխարհս սիրելէ դադրած՝ կենդանի Աստծոյն կը ծառայ-

(1) Յիւ. վեր. Ո. Կուտէլի. գլ. Ե. երես 83:

յե՛նք, արդեօք մենք մեր ունայնութիւնը գիտենք ու փրկչին մերոյ լիութեանը կը դի՛մենք անկէ շնորհք ու զօրութիւն առնելու համար» :

Արեւմտեան Ասիոյ Հայ եկեղեցականներէ ոմանց մտքին մէջ արթնցած այս կրօնական շարժումը շատ պարզ միջոցով մը Արեւելեան Եւրոպայի և փոքուն Ասիոյ Հայերու ևս կը հաղորդուի : Պերութի մէջ աշխատող Սիւրբիայի առաքելութեան մէկ Միսիոնարը, Մր. Քինկ, իր հայրենիքը վերադառնալ հարկադրուած ըլլալով՝ Սիւրբիոյ առաքախօս բարեկամներուն հրաժեշտի նամակ մը կը գրէ, մասնաւորապէս կը ծանրանայ պապական եկեղեցին բարեկարգութեան անհրաժեշտ պէտք ունենալուն մասին : Նամակը Անգղիարէն գրուած ըլլալով Գիոնէսիոս Եպիսկոպոսին կը յանձնարարուի արաբերէնի թարգմանել : Սա՛ նոյն նամակը հայերէնի ալ կը թարգմանէ և Կ. Պօլսոյ իր բարեկամներուն կը զրկէ որոնք կը ճանշնար և գիտէր թէ անոնք ալ բարեկարգութեան փափաքող էին, ինչպէս Փէշտիմալճեան, Մինէճեան, Ոսկան Գրիգորեան ևն : Այդ նամակը շատ խոր տպաւորութիւն կունենայ Հայ միտքերէ ոմանց վրայ : Եւ քիչ օր անցնելով անանկ կը պատշաճի, որ պատրիարքարանին մէջ կարապետ Պատրիարքին նախագահութեան տակ նամակը կը կարգացուի և մանրամասնօրէն դիտողութիւններ կըլլան սուրբ գրքերէն առաջ բերուած վկայութիւններուն ի հաստատութիւն եկեղեցւոյ բարեկարգութեան պէտքին : Եւ յետ երկար խորհրդածութեանց, ժողովը սա եզրակացութեան կը յանգի միասնարար, թէ բոլոր գրբուածները շիտակ են, և թէ Հայաստանեայց եկեղեցին ալ Հռոմայականին հաւասար պէտք ունի բարեկարգութեան : Այդ տեղ առիթը առաջ կուգայ խորհելու որ, բարեկարգութեան համար պէտք է լաւ դաստիարակուած

միանգամայն բարեկիրթ եկեղեցականութիւն ունենալ և այս շատոնց ճանչցուած բլլալով նոյն նպատակին յարմարութիւն ունեցող ուսումնարանի մը հաստատութեան խորհուրդը կը յղացուի, և կը հիմնուի Մայր Եկեղեցւոյ շրջափակին մէջ բացուած Փէշտիմալձեան Գրիգոր Պատուելիի ծանօթ ուսումնարանը:

Փէշտիմալձեան՝ շատ նկատումներով առաջադրուած պաշտօնին յարմարագոյն անձն էր: Նա ոչ միայն քաջ և առաջնակարգ հայկարան մըն էր այլև իր ժամանակի Յոյն և Լատին բարձր կարգի գրագէտներու չափ տեղեկութիւն ունէր արևելեան և արևմտեան եկեղեցիներու պատմութեան ու աստուածաբանութիւններուն: Եւ ի վեր քան դամնայն եռանդուն ուսանող և նախանձախնդիր ջատագով մէն էր Աստուածային Մ. Գրոց Հին և Նոր Կտակարաններու որոցմէ հիանալի ղլւրութիւնով գոց յառաջ կը բերեր ամբողջ ու երկայն հատուածներ հարկ եղած ատենը: Իր կերպարանքովն ալ պատկառանք կազդէր ամենուն, ալեգարդ, գիրուկ, միջահասակ և թաւ յօնքերն գրեթէ աչքերուն կիջնային: Օժտուած էր կորովի շրջահայեցութիւնով, սուր հաստ ձայնով, գործն ու հետաքննին մխտքով և զօրաւոր յիշողութիւնով, որով իրեն մատչելի եղած ամէն աղբիւրէ շարունակ հրմտութիւն քաղելու հետամուտ կերեւէր:

Առաւօտները կանուխ ուսումնարանը իր խցիկը գործի էր, անոնք որ քովն երթալու առիթ ունեցեր են, կրնան յիշել միշտ զինքը զբաղ գտած բլլալնին կարդալով կամ գրելով: Խցիկը կը թողուր միայն դասախօսութեան սահմանուած ատեններ դասարան երթալուն առթիւ: Ամէն օր կէս օրէն ետքը սուրբ գրոց մեկնութեան կանոնաւոր դասախօսութիւն ունէր Ծննդոց գիրքէն սկսուած որ ընդհանրապէս ժամ մը կը տեւէր: Այս

Ս. Գրական դասերն այնքան շինիչ ու հետաքրքրական կրկայլն որ սաներէն ոմանց մտքին վրայ անչնջելի տպաւորութիւն ունեցած են :

Փէշտիմալճեան ուսումնարանի առաջին սաներէն են՝ Խասգիւղի հոշակաւոր աւագերէց Արծրունի Տէր Գէորգ , Գէորգ Դ . Կաթողիկոս , Վեր . Արիսողոմ Խ . Իւթիւճեան առաջին Երեց Աւետ . Եկեղեցւոյ , Վեր . Յովհաննէս Տէր Սահակեան, Տօքթ . Սէնեքերիմ Տէր Մինասեան, ևն . ևն : Այդ ուսումնարանի մեծ ու պատուական ուսուցչին ազգիս մատուցած ծառայութիւնովն ու երախտիքովը Հայաստանեայց եկեղեցւոյ մտավարժ մանուկներուն իմացական կարողութիւնը հոգեկան և բարոյական ինչ փրկաւէտ փոփոխութիւններ կրած ըլլալը միայն ամենագէտ Աստուծոյ յայանի է :

Տէր Սահակ քահանայ , երբեմն կոչկալաճառ տիրացու Գրիգոր , մտերիմ բարեկամ Փէշտիմալճեանի , հեղահամբոյր բնութիւնով օժտուած սրղարակորով անձ , իր տան համար ստացած լլլալով զբարառ Աստուածաշունչ մը մինչ հազուագիւտ ու շատ թանկագին կրկար այն , կը սիրէր , կը կարգար և կը կարգացնէր իր դաւակներուն : Համեստութիւն , աստուածային երկիւղ և ջերմեռանդութիւն կը փայլէր այդ անձին վարքին ու բարքին վրայ նախ քան քահանայութիւնն իսկ , և գիտէր կրթել իր դաւակները անձամբ անոնց բարի օրինակ ըլլալով : Իր անդրանիկը Յովհաննէս , որ ապա Վեր . Յ . Տէր Սահակեան կոչուեցաւ , մանկութենէն գիտէր և կը սիրէր Ս . գիրքերը ու երբ 1892 թուականին կաշակերտի Փէշտիմալճեան ուսումնարանի՝ նոյն միջոցին հոն աւանդուած Աստուածաշունչի դասերէն շատ կօգտուի . և ըստ բանին թէ , «ուր որ բարեպաշտութեան սերմունք կայ հոն ընկերին բարիք ընելու եռանդ ալ կայ» Յով-


հաննէս պարտք կրղգայ իր մտերիմ ընկեր Սենեքերիմ Տէր Մինասեանի հաղորդել ինչ օգուտ որ քաղած էր այն մեկնութեան դասերէն, և այսպէս կ'ըլլան երկու ընկեր որոնք դրացնութիւն ալ ունենալով դիւրութիւն կ'ունենան ձմրան երկար գիշերներ յաճախ միանալ Ս. գրոց ընթերցմամբ զբաղիլ, և չհասկցածնին հարցնելու համար յաճախ կը դիմեն Փեշտիմալճեան պատուելիին, որ բարեացակամ յօժարութիամբ պատրաստ կը գտնուի կատարել անոնց բաղձանքը:

Այդ ժամանակներ դեռ չկային Միսիոնարներ, և տարակոյս չկայ թէ Հայազնեայց մէջ ոմանց միտքը պատրաստ էր լսելու Աստուծոյ կենաց բանին քարոզութիւնը:

Դիոնէսիոս եպիսկոպոս Պէրութի մէջ վկայեր է թէ, Հայ ժողովուրդին միտքը ընդհանրապէս ունի պատրաստականութիւն լսելու Աւետարանի ողջամիտ քարոզութիւնը, ճշմարիտ է: Յետ ժամանակի երբ եկած էին առաջին երկու Միսիոնարք՝ անոնց մէկը Հ. Ծ. Օ. Տուայթ իր զրքին մէջ հետեւեալ խօսքերը արձանագրած է:

«Մինչեւ հիմա Աւետարան կը քարոզուի Թուրքիոյ թէ Հրեաներուն թէ Յոյներուն, ինչպէս որ Հայերուն: Բայց առաջիններուն մէջ բնաւ մտքի պատրաստութիւն չտեսնուեցաւ. Հրեաներուն գայթակղութիւն և Յոյներուն յիմարութիւն է, իսկ Հայերուն Աստուծոյ զօրութիւն և Աստուծոյ իմաստութիւն եղաւ»:

Ահաւասիկ այսպէս էր իրերուն վիճակը Հայ ազգիս մէջ, Ամերիկայի Պօրտ ընկերութեան Միսիոնարներու մեր մէջ գալերնէն առաջ, որպէս իրենք իսկ խոստովաներ են(1):



(1) Տես, Դիւք Տուարի. զլուխ, Ա. երես 28:

ՍԿԻԶԲԵ ՄԻՍԻՈՆԱՐԱՅ ՄՈՒՏՔԻՆ ԿՈՍՏԱՆԳԻՆՈՒՊՈԼԻՍ

Ամերիկայի Պորտ ընկերութեան առաքելութիւնը հաստատուեցաւ Կոստանդնուպոլիս 1831 Յունիս ամսոյն մէջ, Բերայի մեծ հրդեհին ժամանակը, առաջին միսիոնարը ըլլալով Մր. Ուիլիւմ Կուտէլ, Սա իր բնակութիւնը նախ հաստատեց Բերայի մէջ Աշա ճամբի փողոցը. և հրդեհը որ պատահած է նոյն թուականի Օգոստոս ամսոյն մէջ լաիելով նորեկ միսիոնարին բնակարանն եւս, նա ժամանակ մը կը հիւրնկալուի ի վերին Վասիօր Պէօյիւք Տէրէ գիւղ բարեկամի մը տուն:

Յաջորդ տարին, Յուլիսի մէջ մայրաքաղաքս կը ժամանէ ուրիշ միսիոնար մը, Մր. Հ. Ճ. Օ. Տոայթ, ընկերանալու առաջինին: Ասոնք միատեղ կ'որոշեն Միջագիւղի մէջ հաստատել ընտանեկան բնակութիւննին ժամանակ մը, որովհետեւ Բերայի կողմը գրեթէ աւերակ դարձած էր մեծ հրդեհէն:

Միջագիւղի հայոց եկեղեցիին քարոզիչը այն ժամանակ Մատթէոս վարդապետ Զուհաճեանը ըլլալով որ ապա եպիսկոպոս, Կ. Պօլսոյ պատրիարք, հուսկ յետոյ կաթողիկոս, Միսիոնարներն իրենց նախնական տեղեկութիւննին այդ վարդապետին կը պարտին հայկական սովորութիւններու, կրօնի, եպլնի մասին, որովհետեւ այն կ'ըլլայ առաջին մտերմացողն Կ. Պօլսոյ մէջ այդ օտարականներուն:

Մր. Ո. Կուտէլ իր առած տպաւորութիւնը Հայ եկեղեցւոյ մասին ինչ որ է, կը հաղորդէ Պօրտին այսպէս. «Հայերը ստուգապէս ընդգրկած են պապական զեղծումներէն շատը: Տարւոյ մը օրերուն գրեթէ կէսը պահքի սահմանած են, և տօնախմբութեանց օրեր տէրունական կամ կիրակի օրերէն աւելի սուրբ կը համարեն: Ծէսերու և արարողութիւններու զգուշաւոր պահպանութիւնը՝ խիստ ծիսականացած ազգերու պէս նախամեծար և պաշտելի կը համարեն քան օրէնքին և աւետարանին հոգեկեցոյց ծանր պատուէրները պահելու պարտաւորութիւնը»:

«Կղերականութեան մասին ունին զանազան կարգեր, որոնց գլխաւորը կաթողիկոսութիւնն է. յետոյ պատրիարքութիւն, եպիսկոպոսութիւն, վարդապետութիւն, քահանայութիւն, ասոնք ամուսնացած կ'ըլլան բայց կ'ինքնին մուսնելէն ետքը այլ չեն կրնար ամուսնանալ, սակայն կրնան վարդապետանալ: Բացի քահանայական կարգէն միւսներուն բոլորովին արգիլուած է ամուսնութիւնը հակառակ առաքելական պատուէրին» (1):

Այդ առաջին երկու միտինարները՝ որ իմաստութիւնով, տաղանդով և կորովով աներկբայ յոյժ գերազանց էին իրենցմէ ետքը եկողներէն քիչ բացառութիւնով, երանի՛ թէ առաւել ընդարձակէին իրենց տեղեկութիւնները, գոհ չըլլալով Մատթէոսի պէս մէկու մը հաղորդածէն, զի յայնժամ առաւել օգտակարութիւն պիտի ունենային ազգիս քան որչափ ունեցեր են: Գոյափոխութիւն, պատկերասպաշտութիւն, կղերական կարգերու շատութիւն ևն. ևն. ատոնցմէ ոչ մէկը Հայկական ողջմտութեան ծնունդ կրնայ համարուիլ: Եւ ո՛չ ոք

(1) Ա. Տիմոք. Գ. 2.:

կրնայ հաստատել այդ տեսակ զեղծումներու գէթ հնգն-տասաններորդ դարէն առաջ Հայաստանեաց եկեղեցիին մէջ ընդհանուր կերպով մուտ գտած ըլլալը, և երբեմնակի ծածկարար մուծուածներն ալ ընդգիմութեան և բողոքներու հանդիպած են: Շուանչիր իշխանի որդի Վահան կաթողիկոսի Յունաց հետ գաղտնի միաբանած և սասաներորդ դարուն մէջ Հայոց եկեղեցիին մէջ պատկեր մուծած ըլլալը առանց ազգիս հաւանութեանն ու գիտութեանը, ի՞նչ ընդգիմութիւններու և բողոքներու հանդիպիլը՝ կը թողունք որ լոկ Հայաստանեայց եկեղեցւոյ պատմութիւնը խօսի, ինչպէս և ուրիշ յետամուտներու մասին (1): Սակայն այն ալ ճշմարիտ է, որ եկեղեցին լոկ գիտնալով ասոնք չարդարանար, հապապէտք է որ դուրս հանէ իրմէ այն բաները որ իրը չեն, և բռնէ իր նախկին հայրերուն աւետարանական մաքուր դաւանութիւնը և ամուր բռնէ. քանզի տէրն մեր ըսաւ. «Եթէ զայս գիտէք, երանելի ևս էք՝ և թէ սուսիցէք զայս» (2):

Միախոնարները առաջին անգամն ըլլալով կ'այցելէին Հայոց պատրիարքարան 1832 թուականին: Կարապետ պատրիարք շատ պատուով կ'նդունի այդ օտական հիւրերը և տեսակցութեան մէջ առիթ կ'ունենայ անոնց հարցնելու թէ Հինդերու մէջ կամ Չինաստանի մէջ եղած առաքելութիւնրին ի՞նչ կերպով կը գործէ: Կը պատասխանեն թէ իրենց ամենուն պաշտօնը միևնոյն է, քարոսել աւետարան և ուսուցանել քրիստոնէութեան փրկարար վարդապետութիւնները որպէս նկարագրուած են առաքելոց գործքերուն և թուղթերուն

(1) Եկեղ. Պատ. Մ. Մ. Վար. Շրջ. Գ Գլ. 2. Երես 355:

(2) Յովն. ԺԳ. 17:

մէջ այն նոյն պարզութիւնով ու մտքութիւնով, և հաւատացողները կը մկրտեն յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ: Հաւատացեալները եկեղեցւոյ կազմաւորութիւն կ'ունենան և կը դաստիարակուին Աստուծոյ բանական և անխարդախ խօսքովը ի ձեռն սուաքելութեան: Յայնժամ պատրիարքն ու իր փոխանորդը գլուանին կը խոնարհեն ի նշան հաւանութեան: Ապա միախոնարհելը Հայ ազգներու համար իրերաւարժութեան գրութիւնով դարոց մը բանալու դիտաւորութիւն ունենալին կը յայտնեն և պատրիարքին աջակցութիւնը կը խնդրեն, նա կը խոստանայ թէ, բոլոր նոյն միջոցին ժամատարի ահռելի կտորածն ու այլ ազէտալի դէպքեր ամէն խորհուրդ և դիտաւորութիւն կը խտրանան:

Միախոնարհելը նոյն թուականին Մայիս ամսուն մէջ պատյաի կ'ըլլեն Բիւթանիոյ կողմերը Նիկիոմիդիայէն ցամաքի ճամբով մինչև Պլուսաս, Նիկիոմիդիա, ուրկէ հանեց իր հրովարտակը Ղիսկղեախանոս կայսր՝ հալածելու և բնաջինջ ընելու համար Վրիստոնէութիւնը չորսորդ դարուն մէջ. միախոնարհելն հողկէ կ'սկսին իրենց առաջին պատյար: Եւ անկէ դէպի Նիկիա երթալու վերայ եղած ասեննին ձիւրնին բանող աղքատ Հայ աղեկի մը սեարակ մը կը նուիրեն. այն է Վրացիարածին աղջկանը Եղիսաբեթին երջանիկ մահը՝ անուն աեաւրակը որ շատ սրատուչ կիրպով կը լուսարանէ շնորհքով վերկութեան հիմնական վարդապետութիւնը քրիստոնէկան կրօնի: Տղեկը կարգալ չգիտնալով կը ասնի եկեղեցի և կը յանձնէ իր ասնիւրէց քահանային, որոյ մասին շատ բան պիտի խօսինք սպա:

Նիկիա որ զարդիս Իզնիկ կը կոչուի, երկու ան-

գամ ժողով գումարուած է. առաջինը չորրորդ դարուն գումարուած է ինչպէս տեսանք, և երկրորդ գումարումը ութերորդ դարուն է Կաստանդիանոս վեցերորդի մայր թագուհիին պահանջելովը: Պատկերապաշտութեան խնդիրը որ շատ երկար վէճերու և խռովութիւններու առարկայ եղած է, Յոյն եկեղեցիին մէջ մուտ գտաւ այս ժողովին վճիռովը: Յետոյ լատինք ևս ընդունեցին, իսկ Հայիրը դեռ մերժած կը գտնուէին (1):

Միսիոնարները Նիկիայէն նոյնպէս պտոյտով կը ժամանեն Պրուսա, ուր կը մնան հինգ օր, կ'այցելեն Հայոց, Յունաց և Հրեաներու առաջնորդարաններ և տուներ: Տեղւոյն այլ և այլ հասարակութիւններուն հոգեկան պիտոյքներուն նկատմամբ տեղեկութիւն կըստանան և սիրով կընդունուին բոլորէն ու Կ. Պօլիս վերադառնալուն կը տեղեկագրեն Պորտեն: Աւասիկ.

«Հնոյն Բիւթանիոյ նահանգին կողմերը կատարած այս պտոյտնիս յիշել կու տայ մեզ Պօղոսի և իւր ընկեր Տիմոթէոսի երբեմն երթալու ջանալին, և Յիսուսի հոգւոյն զանոնք արգիլած ըլլալը (2): Սակայն և այնպէս յետոյ քարոզուեցաւ հոն Աւետարանը և տարածեցաւ քրիստոնէութիւնն օտարականներու մէջ, որոնք ջրուեալ էին ամէն կողմեր ո՛չ միայն Պոնտոսի, Գաղատիոյ, Կապաթովկիոյ, այլ նաև Բիւթանիոյ մէջ, ուսկից Պետրոս առաքեալ զրեց իր առաջին ընդհանրականը: Գրեթէ այդ սիրուն գաւառի որ կողմը որ այցելեցինք, շատ մարդասիրութիւն տեսանք ժողովուրդներէն, բայց բովանդակ գաւառին մէջ չտեսանք անանկներ որոց գանձեր ու սրտեր երկնքին մէջ ըլլար, որոնք զգային ու

(1) Fouhnyan. ճ. 2. 14:

(2) Գործ. ժ. 2. 7:

փափաքէին և գործէին յաւիտենական ժառանգութեան մը յոյսով իրրև երկինք դիմող անապատի ճամբորդներ : Ուստի կարօտ են որ երկնից ճամբան առաւել կատարելապէս իրենց ճանչցնելու և ուսուցանելու կարող անձինք զան հասկցնեն անոնց թէ ի՞նչ բաներ են Աստուծոյ պատգամներուն գլխաւոր և առաջին բաները , թէ Հայրն Աստուած ո՞րպիսի սէր շնորհած է մարդկային ազգին և տան ուշադրութիւննին անոր՝ որ երկինքէն կը խօսի» (1) :

Այս տեղեկագրութեան արդիւնքը կ'ըլլայ Պրուսայի մէջ միսիոնարական կայան մը հաստատուիլը որ զառաջին տեղի կ'ունենայ ի ձեռն Բենիամին Շնայտրր անուն միսիոնարին 1834 թուականին : Եւ իր չորս տարի անընդհատ միսիոնարական աշխատութիւն կատարուելով՝ աւետարանական փոքրաթիւ անձերէ բողկացեալ եկեղեցին կը կազմուի հոն 1548 Յուլիս 25 և որուն առժամանակեայ հովիւ կը կարգուի տեղւոյն միսիոնարներէն մին , Տանիէլ Լատտ : Աւետարանչական գործողութիւնք այս կերպով շարունակուելով մինչև 1851 և այդ թուականի միսիոնարական տարեկան ժողովին մէջ պատշաճութիւն կը տեսնուի Պրուսայի աւետարանական եկեղեցւոյն հողածութիւնը Հայ երիցու մը յանձնուելուն մէջ և եկեղեցւոյն իսկ միասնական կոչումովն օրինաւոր ձեռնադրութեամբ Հովիւ կը կարգուի Վեր . Հ . Ստեփանեան Խ . Իւթիւճեան և Մր . Տ . Լատտ միանգամայն Մայրաքաղաք կը փոխադրուի Յունաց քարոզելու պաշտօնով :

Սոյն միջոցին ճիզութիւթական աղբիւրէ յառաջ կուգայ մայրաքաղաքին մէջ տարածայնութիւն մը թէ Ամե-

(1) Գիրք Կոստէլի, երես 142:

րիկայէն մարդիկ եկած են միսիոնար անունով որ պիտի աշխատին անհաւատութիւն տարածելու մասնաւորապէս Հայոց մէջ, ըսելով որ դպրոցներ բանալու մտադիր են և նպատակինն այս կեղծիքով պիտի առաջ տանին: Այս կերպ խաբէութիւնով ճիգուիթք խրաչեցնել կուզէին Միսիոնարներէն Հայոց պատրիարքարանն ու հայ ազգը: Յովհաննէս Տէր Սահակեան զորմէ ակնարկուեցաւ ի վերեւ, ճշմարտութեան հետամուտ երիտասարդն եղած տարածաշուքութիւններէն զրգուռած կորոշէ երթալ անձամբ տեսնել այդ Միսիոնար ըսուած անձերն և հասկնալ անոնց նպատակին ինչ ըլլալը: Ուստի կերթայ կը գտնէ զանոնք Միջագիւղ իրենց բնակարանին մէջ: Ստորեւ կը ներկայացնենք լնթերցողներուն Մր. Կուտէլի իր ընկերութեան հաղորդած տեղեկագիրը յիշեալ անձին նկատումով:

«Յովհաննէս Տէր Սահակեան եռանդով մը եկաւ մեզի, առաւել կատարեալ կերպով սորվելու Աստուծոյ ճամբան որ բացուեր էր իր առջև Միսիոնարութեան Թուրքիա գալէն տարիներ առաջ: Այս անձ՝ Գրիգոր Փնշտմալճեան լուսաւոր մտաց տէր հայ ուսուցչի մը դաստիարակութիւնով Սուրբ հոգիէն սորուած ըլլալու յայանի ապացոյցներ ունէր: Այս երիտասարդը Նիկողիմոսի նման գիշեր ատեն եկաւ մեր բնակարան, և ետքը յաճախեց իր այցելութիւնները շաբթէ շաբաթ այսպէս համարձակ խօսակցելու Աստուծոյ կամ փրկութեան ճամբուն վրայ, և 1833 Յուլիս ամսոյն մէջ է որ իսկապէս մեզի յարեցաւ նոյն ատեն նուիրելով ինքզինքն մեծ վարդապետին Յիսուսի ծառայութեանը, և նոյն ատեն ընդունեց վերջապէս տնօրէնութեան պաշտօնը Բերայի մէջ մեր բացած այն բարձրագոյն վարժարանին, զոր հաստատեր էինք չափահաս պատանիներու համար: (1)

(1) Գիւրգ Կուտէլի, զլուխ Ժ. երես 161:

Իսկ միւս կողմէ այս անձ, Յ. Տէր Սահակեան և իր ընկերը Սենեքէրիմ Տէր Մինասեան, որ այն ժամանակ պատրիարքական եկեղեցւոյ մայր վարժարանի դասատուներէն մէկն էր, չէին դադրեր իրենց ուսած Աւետարանական գաղափարները այլոց ևս հաղորդելէ :

Փեշտիմալճեան Գրիգոր պատուելի լսելով իր նախկին սանուց այդ համարձակ ընթացքն, յանդգնութիւն և անխոհեմութիւն կը սեպէ խորհելով որ կրնայ այդ ընթացքը տգէտ ազգայնոց գայթակղութիւն պատճառել, և լռելիայն ժամանակէ մը յետէ ազգին մէջ սկսուած բարեկարգութեան գաղափարին ծաւալմանն արգելք լինել, մանաւանդ հակառակութիւն յարուցանել անոր դէմ : Ուստի այս խորհուրդներով զգուշանալ կը պատուիրէ անոնց, բայց յետ երկար խօսակցութեանց ինքն ևս կը համոզուի որ իր սանուց ընթացքը կասեցնելն զանոնք քանքարաթագոյց անհաւատարիմ ծառային պէս ընել պիտի ըլլայ, որ առաւել անհաշտ է Աւետարանական սկզբան, ապա կը սկսի զանոնք խրախուսել շարունակելու իրենց ուղիղ ընթացքը :

Ոսկերիչ Տեար Մելքիսեղեկ այն ժամանակի եկեղեցւոյ պաններէն մին, որ նաև Մայր Վարժարանի հոգաբարձուն ալ էր, Յ. Տէր Սահակեանի և իր ընկերին թաղակից կամ դրացի ևս լինելով՝ կրնար անոնց վրայ յարաբերական ազդեցութիւն մը ունենալ : Սա իմանալով անոնց նոր ընթացքը կը խղճայ վրանին իրենց հարց հոգեւոր շաւղէն մոլորած ու կրքսուած նկատելով : Իսկոյն Փէշտիմալճեան Գրիգոր Պատուելիին կը դիմէ և կը խնդրէ հրաւիրել զանոնք իր ներկայութեան, որպէսզի քննութիւն կատարելով կարենայ ստուգել անոնց հոգեկան վիճակն ու տեսնել թէ իր լսածները անոնց համար իրա՞ն ևն թէ սխալ : Յայնժամ՝ որ, ժամանակ և տեղ

կ'որոշին ուր մէկտեղ պիտի գան, և սահմանուած սահուն կ'երթան Մայր Վարժարանի հոգաբարձուաց սնեակեր կը միանան, ուր նաև միտքին կը գտնուի վարժարանին քերականութեան դասատուն, Սարգիս Վարժապետ Յովհաննէսեան:

Տեար Մելքիսեղեկ հարցում կ'ուղղէ երկու ընկերներուն իշխանարար ըսելով թէ ի՞նչ պատճառով իրենց հարց դաւանութեան շաւղին ժողորհր են և ուրիշներու ալ նորութիւններ կը քարոզեն ամենուրեք: Ընկերք լրջութիւնով կը պատասխանեն՝ ո՛չ իրենց հարցը ճշմարիտ դաւանութիւնէն ժողորհր են և ոչ ալ ուրիշներու նորութիւններ քարոզիր են, սյլ մ'իսյն Հայաստանեայց Առաքելական Ուղղափառ եկեղեցւոյն մէջ տեսնուած յետստուա մոլորութիւնները մերժեր ու մէկդի ձգեր են իբրև վտանգաւոր նորութիւններ, և կը փափաքին որ նախկին բազմադարչոր իրենց հարց աւետարանական ուղիղ և մաքուր շաւղին հետեւին, և ուրիշներու ալ այնպէս ընել սորվեցնել կ'ուզեն:

Յայնժամ Փէշտիմալճեան կ'ընդմիջէ իր սաներուն խօսքը, և կը սկսի Առաքելական Եկեղեցւոյ դրութեան և նախկին հարց դաւանութիւնէն հաստատել երկոքին ընկերաց սուած պատասխանին ուղիղ լլլալը, և նոր կրտակարանէն և օտար եկեղեցական պատմութիւններէ այնպիսի վկայութիւններ յառաջ կը բերէ, որ թէ՛ հարցաքննիչ թէ՛ ենթակայք միանգամայն ապշած կը մնան: Այսպիսեաւ քննութեան արդիւնքն այն կ'ըլլայ որ թէ՛ Տեար Մելքիսեղեկ ինք, թէ՛ Սարգիս Վարժապետ Յովհաննէսեան որ յանակնկալս ներկայ կը գտնուէր՝ նոյն վայրկեանէն սկսեալ մինչև իրենց վերջին շունչ, Աւետարանական կրօնի և Առաքելական ճշմարիտ Եկեղեցւոյ վարդապետութեան յոյժ ազդեցիկ ջատագովներն կը հան-

դիսանան Հայաստանեայց Եկեղեցւոյն մէջ, մինչդեռ չէր եղած շաժանում :

Տեար Մեկքիսեղեկ բարեկարգութեան գաղափարին մեծ ջատագովն եղած է, և անոր շնորհիւ Պատրիարքական Մայր՝ Եկեղեցւոյ ներքին որմերուն վրայ երբեմն խիտ առ խիտ կախուած պատկերներու տեղ՝ զարդիս անոնց ծուռ բեւեռք միայն կը նշմարուին, և աւագ խորանի կամարին ճակատը Փրկչին մերոյ Յիսուսի սա խօսքերը կը կարդացուին. «Եւ զոր ինչ խնդրեցէք ի Հօրէ իմմէ յանուն իմ ատցի ձեզ» :

Եւ Սարգիս Վարժապետ Յովհաննէսեան՝ իրրիւ գործոն և տաղանդաւոր աշխատաւոր բարեկարգութեան գաղափարին, նշանաւոր հանդիսացած է իր օգտաշատ ծառայութիւններով, մանաւանդ թարգմանած է վեշտասաներորդ դարու գերմանական բարեկարգութեան պատմութիւնը՝ որ երկու մեծահատոր գրքեր են, ուրիշ այլ և այլ թարգմանութիւններու հետ որոյմէ է «Շտեմարան Պիտանի՝ Գիտելիաց» անուն ամսօրեայ հանդէսը, հրատարակուած 1838 ևն. թուականներուն :



ՄԻՍԻՈՆԱՐՔԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՅԻՒՆ ՄԷՉ
ՔԱՀԱՆՈՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

1833 թուականի Սեպտեմբեր ամսոյն մէջ Ստեփան Պատրիարքի յատուկ հրաւերոյն Միսիոնարք Պատրիարքական Մայր եկեղեցին կ'երթան հանդիսատես ըլլալու նորընծաներու ձեռնադրութեան մը որ տեղի պիտի ունենար մեծաւ հանդիսիւ : Նորընծաները թուով 15 էին , որոց մէջ կը գտնուէին Արծրունի Տէր Գէորգ և Տէր Սահակ ևն : Ձեռնադրիչ ժամարարն կամ պատարագիչն պատրիարքն ինք էր : Միսիոնարք Մր. Ո. Կուտէլ և Մր. Հ. Ծ. Ս. Տուայդ կը մեծարուին եկեղեցւոյ դասին մէջ աւագերէց քահանային յատկացեալ տեղը կանգնիլ պատարագի ժամանակը , և ժամարարն երբ « Զի քո է կարողութիւն ևն » մաղթանքը արտասանելով կը մատուցանէ խորհուրդին սպասաւորող սարկաւազին՝ միանգամայն կը պատուիրէ նմա որպէս սովորութիւն է , տանել ի համբոյր հիւր կայնող միսիոնարաց : Իսկ նոքա օտար և անգիտակ լինելով այդ սովորութեան կ'առնեն Ս. Աւետարանը սարկաւազին ձեռքէն լաւ մը կը դիտեն մէջով ու դուրսով՝ որ Պէղճեան Յարութիւն Ամիրայի նուէրներէն մին է , մարգարտահիւս պատերազարդ կափարիչով՝ և միայն պատրիարքի պատարագելու ժամանակ կը գործածուի : Ապա իրենց լեզուով « արդարեւ շատ գեղեցիկ է » , կըսեն ու կը յանձնեն սարկաւազին ձեռքը : Վերջը խմանալով որ Աւետարանը մատուցուած

էր իրենց ոչ թէ դիտելու այլ համբուրելու համար, կը պատասխանեն թէ «Աւետարան շատ կը սիրեն և կը յարգեն անոր մէջ պարունակուած Աստուածային հոգեկեցոյց սուրբ խօսքերը, բայց անոր նիւթեղէն կափարիչն ու զարդերը չեն պաշտեր, զի «Հողին է կենդանի ընող, մարմինը շահ մը չընէր» : Իրաւ այս պատասխանին մէջ կայ մեծ ճշմարտութիւն, բայց անոնց ծիսականութենէ կամ աւելորդ ապաշտութենէ այս աստիճան խորշիւր բնականապէս կրնար ազէտ ու ծիսապաշտ հասարակութիւն մը և.ս խորշեցնել իրենցմէ, և ցաւալի է որ աննուած է, քանզի շատ աւելորդ խօսքեր եղած են յայնժամ անոնց հասցէին :

Գանձ որ ձեռնպարութեան կամ օժման պահուն նորընծայներէն մին, Արծրունի Տէր Գէորգ, իր կոչմանն ու ստանձնած պաշտօնին ահաւորութենէն այնքան զգածուած կերևի, որ Մր. Ո. Կուտէլ փտիաք կունենայ զայն մխիթարելու և քաջալերելու, և այս դիտաւորութիւնով անոնց քառասնօրեայ ժուժկալութեան միջոցին կայցելէ դարձեալ մայր եկեղեցին : Արծրունին երբ կը հասկնայ որ Մխիթնարն յատկապէս զինքը տեսնելու և քաջալերելու գացած է, շնորհակալութիւն և մեծ գոհունակութիւն կը յայտնէ իր անձանօթ այցելուին և անոր մխիթարական և քաջալերական իր կոչմանը մէջ խրախոյս տուող խօսքերէն այնքան զօրութիւն կ'ստանայ, որ արտասուալից աչքերով կը խնդրէ այցելուէն ազօթք ընել իրեն համար. նոյն ատեն Մր. Ո. Կուտէլ կարճ իսկ սրտաբուղիս բարեմաղթութիւններ կընէ ո՛չ միայն Արծրունոյն այլ անոր միւս ընկերներուն համար և.ս, ու կը մեկնի : Ահա այսպէս կը սխի ծանօթութիւն և մշտապէս բարեկամութիւնն ընդ մէջ Մր. Ո. Կուտէլի և Արծրունի Աւագերէց Տէր Գէորգ հօր, զորմէ ունիմք քաղում ինչ ատել ի կարգին սու հապա :

Միսիոնարութիւնն իր տպագրութեան վերաբերեալ գործերն սկիզբը Մայթայի և Պէյրութի մէջ սկսեր և յետոյ Ջմիւռնիա բերած էր, և ընականաբար գործին գրութաւոր վարիչն ևս հետը պիտի ըլլար, որ էր Դիոնէսիոս եպիսկոպոս: Բայց Ջմիւռնարնակ հայերու գայթակղութիւն կազդէ ամուսնացեալ եպիսկոպոսին ներկայութիւնը և գրգռութիւն յառաջ կու գայ յիշեալ քաղաքին մէջ, Հայ եկեղեցւոյ այն ժամանակի թեմական առաջնորդն իսկ խիստ պահպանողական Իագթակեան Պօղոս վարդապետն լինելով կը հակառակի ամուսնացեալ Եպիսկոպոսին, Դիոնէսիոսի, իսկ սա կարելի եղածին չափ լուծութիւն կը պահէ այդ խնդրոյ մասին, միայն թէ Ս. Գրոց հեղինակութիւնն ու Լուսաւորչի և այլ բազում նախնի հայրերու օրինակը ցուցնելով իր ամուսնութիւնն արդարացնելով հանդերձ, ամուրի կեանքը նախապատիւ համարողներու համար կ'ըսէ ըստ բանի տեառն. «Ար կարող է տանիլ, տարցի» (Մատթ. ԺԹ. 13): Նոյն ատեն եղած գրգռութիւններուն չկարենալով հանդուրժել քիչ ժամանակէն կը վերադառնայ ի Պէյրութ:

1834 թուականին է որ Միսիոնարք կը բանան իրենց բարձրագոյն վարժարանը Հայ և Յոյն պատանիներու դաստիարակութեան համար, և այս վարժարանն է որոյ տնօրէնութիւնն որպէս ըսուած է ի վերեւ Պ. Տէր Սահակեանի յանձնուեր է: Այդ վարժարանն թէեւ քիչ ժամանակ տեւած է, սակայն նոյն ատեն մեծ արդիւնք ունեցած է տալով ազգիս մասնաւորաբար քաջ անզղիագէտներ, որոնք շատ օգտակար և շահաւէտ դիրքեր գրաւած են թէ կառավարական պոչտօնատուներու մէջ թէ դասախօսութիւններ ընելով, որոցմէ են Սամուէլ Իւթիւճեան, Աւետիս Տէր Սահակեան, Թադէոս Մօլտալալաք, ևւն. ևւն.:

Նաև այդ նոյն թուականին Պրուսայի մէջ տեղւոյն Միսիոնար Բ. Շնայտըրը կը ջանայ իրարավարժական դրութեամբ վարժարան մը հաստատել և կը յաջողի Հայոց ազգային աջակցութիւնն ևս իր կողմն ունենալ և Մայրաքաղաքի կայարանին Միսիոնարացը հետ խորհրդակցութեամբ պատշաճ կը համարեն Յ. Տ. Սահակեանն այդ պաշտօնին վրայ կեցնել հոն փոխադրելով: Կը բացուի վարժարանը և տեղւոյն թեմական առաջնորդ Ուլֆացի Յարութիւն վարդապետն ևս մեծապէս կ'օգնէ գործին յաջողութեանը, մանաւանդ ազգային վարժարանի ուսուցիչներէ երկուքը, Սերսվէ Տիոնեանն ու Յովհաննէ Չլիէպեան կ'աշտօնէ երթալ պաշտօնավարել Միսիոնարական նոր դպրոցը: Ասոնց պաշտօնավարութիւնը շատ նկատումներով մեծ արդիւնաւորութիւն ունեցած է: Սերսվէ Տիոնեան միւսնոյն ատեն տեղւոյն ազգային վարժարանին հայկաբանութեան դասատուն ևս լինելով կը հակամիտի հոն եղող յառաջադէմ ուսանողաց նոր Կտակարանէն մասեր վերուծել տալ որով կը սկսի թափանցել Սուրբ գրոց իմաստին որպէս և ուշիմ ուսանողներէն ոմանք, և այնպիսեալ կը վարժին սրօշել ի կրօնս Աստուածայինն ու մարդկայինն իրարմէ: Իրարավարժութեան կրթարանը պրուսայաբնակ Հայոց կ'ըլլայ Նախախնամական օրհնութիւն մը արդարեւ. քանզի տեղւոյն Հայերը թրքախօս ըլլալով իրենց քահանաներն իսկ թերեւս քիչ բացառութիւնով չեն գիտեր հայերէն, մանաւանդ գրաբառ կարդացածնին չեն հասկնար, հետեւաբար ժողովուրդը տգիտութեան խաւարի մէջ է: Պէտք է գիտնալ և խոստովանիլ որ իրարավարժութեան դըպրոցն և հայասառ թրքերէն Սուրբ Գրոց և ուրիշ օգտակար գրեանց տարածուիլը շատ կարեւոր դեր ունեցած է այդ քաղաքին և անոր սահմանակից վայրերու մէջ:

Բայց դժբախտաբար առաջնորդութեան փոփոխութիւն տեղի ունենալով՝ յաջորդին վնասակար ազդեցութիւնը քիչ ատենէն փոխած է բաներուն բնութիւնը : (1)

Ստեփան Պատրիարքի պաշտօնաաարութեան ժամանակ Միսիոնարաց և Պատրիարքարանի միջև բարեկամական յարաբերութիւնք փոխադարձաբար շատ լաւ էին և Պատրիարքն բարեկարգութեան գաղափարին իսկ հաւանութիւն կը ցուցնէր : Սակայն փոխանորդը, Թաքթաքեան Պօղոս վարդապետ երբեմն Ջմիւռնիոյ թեմական առաջնորդն անգամ մը ի վերեւ յիշուած Տեար Մելքիսեդեկի հետ կը վիճարանի յսած ըլլալով անոր բարեկարգութեան գաղափարին կողմնակցութիւնը . Տեար Մելքիսեդեկ Նոր Կտակարանը ծոցէն հանելով վկայութիւն մը յառաջ բերելու միջոցին իր բրածը կամ խօսածը հաստատելու համար՝ Թաքթաքեան կը յանդգնի դանիկա այսպանել Սուրբ Գիրքը ծոցը կրելուն համար : Իսկ հակառակ փոխանորդին այդ ոգւոյն անոր մեծաւորն Ստեփանն պատրիարք հետեւեալ կիրակին քարոզին մէջ կը քաջալերէր Ս. Գրոց ընթերցումն ըսելով . «Քրիստոնեաներ կան որ Ս. Աւետարանը այնքան կը սիրեն , որ տարապայման ծախքերով թարգմանած են զայն շատ լեզուներու և կ'աշխատին տարածել երկրին ամէն կողմը , և հիմա հեթանոս և կռապաշտ ժողովուրդներ սկսեր են ընդունիլ , սիրել և կարդալ : Ուրեմն մենք քրիստոնեաներս պարտիմք ոչ թէ միայն կարդալ , հապա ջանք ունենալ վարքովնիս ու բարքովնիս համակերպելու այս Աստուածային բանին խրատներուն , ինչու սր միայն այսպէս լինելով պիտի ըլլանք ճշմարիտ քրիստոնեայ : »

(1) Յաջորդող առաջնորդն է ապագայ նալաժիչ Մասթոս Զուխանեան :

Արդ, կը տեսնեմք որ փոխանարդ վարդապետին յանդուգն խօսքերը Տեսար Միգրիսեղեկ Աւետարանը ծոցը կրելուն համար որքան անտեղի և ազխտական է, որ իր մեծաւորն ներքած է իրապարակաւ: Քակ մենք հոս կը յաւելումք ասաներորդ գարսւ Հայրապետ Անձեւացի Պոսրով եպիսկոպոսի խօսքերն: Աս, իր տղայ հասակէն ուսման և գիտութեան հետամուտ, երեք զաւկի հայր է որոց մէկն է հոգեշունչ Գրիգոր Նարեկացի. այս անձը գովուած ու մեծարուած է իր բարեպաշտութեանն ու իմաստութեանը մասին իբրև նշանաւոր եպիսկոպոս, որուն աստուածասէր հոգին լուսոյ պէս կը փայլի աւապիկ իր երկասիրութեանց մէջ: «Աստուածսիրութիւն ի գրոց ծնանի ի մարդ, և արդ՝ պատուեսցուք զԳիրս Սուրբս վերձանութեամբ, որք են պատճառք մեզ ամենայն բարելաութեան: Փափաքեսցուք սիրով ի վերձանութիւն գրոց սրբոց և յնթեռնուին կրկին հոգ յանձին բերցուք:— Մի, զի իմացուք զընթերցեալն և միւս ևս, զի անմոռաց ի մտի կալցուք. մանաւանդ թէ գործով կատարեսցուք և լիցուք առնողք օրինացն, մի զրկեսցուք ի մեծագոյն բարեացն թիթեւամտութեամբ: (1) Սոյն հայրապետի կենցաղն ու երկասիրութիւնները կրկին լոյս կը ցոլացնեն խաւարամիա Թաքթաքեանի ու իրեն գաղափարակից կղերներու խաւարային մտքերու վիճակն ի լոյս բերելու:

Ս. Գրիգոր Նարեկացի, Անձրեւացեայց Պոսրով եպիսկոպոսի երբեակ որդւոց կրտսերագոյնն, ծնեալ տասներորդ դարու առաջին կիսոյն սկիզբը, ծանօթ ամենուն իր իննսուն և չորս սրտարուղիտ աղօթքնիրով՝ որոց բոլորին առանձին վերտառութիւնք են «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ»: Յիշեալ աղօթքնրէն իբրև մա-

(1) Պատմ. Մ. Վ. գլ. Թ. եր. 401 և 406:

քուր հայելեաց մէջէ կ'երևի անոր մտքին ու սրտին վիճակը աւետարանական ոգւով որ աստիճան տոգորուած ըլլալը : Անոր աղօթքներէն միոյն պարբերութիւն մը հոս յառաջ բերել բաւական է ի հաստատութիւն ըսուածներուն . աւասիկ .

«Շնորհեա՛ և ինձ մեղաւորիս խօսիլ համարձակութեամբ գլինդանարար խորհուրդ աւետեաց Աւետարանիդ , հետեւիլ արագաթուիչ ընթացիւք մտաց ընդ անհուն ասպարէզս քոյինաչունչ կտակաբանաց : Եւ ի մտչել իմ ի գլուխ հանդէսի մեկնութեան բանի , նախաժամանակէ առ իս գթութիւն քո , խօսելով յիս զարժանն և զպիտանիս և զհաճոյս քո ի ժամանակի ի փառս և ի գոյիսս Աստուածութեանդ քո և ի լրութիւն շինութեան եկեղեցւոյ : (1)

Անա՛ բարեպաշտ , հանճարեղ , աստուածասէր և եռանդալից , պատուական և սուքք անձնաւորութիւն մը , և տեսնենք հիմա թէ Հայաստանեայց Եկեղեցւոյ պատմութեան մէջ ի՛նչ կը գտնենք որ տեսած ըլլայ իր ժամանակակիցներու կողմէ : Թողունք որ հոս խօսի Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատեանց . «Ինչպէս արեգական ջերմութիւնն երբեմն գարշահոտ գոլորչիներ կը յարուցանէ գետնէն , նոյնպէս և սրբասուն մարդկանց կեանքն ու բարեպաշտական ջերմութիւնն՝ կըքեր կը յուզէ աշխարհիս մէջ : Այսպէս պատահեցաւ և Գրիգոր Նարեկացիին , որոյ զէմ չարամիտներէ ոմանք յուզեցան ատելութեամբ և գնալով Դունայ կաթողիկոսարանը՝ ամբաստանեցին զԳրիգոր իբրև Թերամիտ ի հաւատոց : (2)

Որո՞նք կրնային ըլլալ այդ չարամիտներ , ոմանք , եթէ ոչ Նարեկացւոյն ժամանակակից Թոմարակեցւոց վրայ ևս նոյն անսակ աղտեր քսելով զանոնք չարաչար հալածողներն :

(1) Նաբել :

(2) Տես ի պատմութեանն եկեղեցւոյ , հրես 406 եւ 407 :

Պ Ա Տ Մ Ո Ի Թ Ի Ի Ն

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ա Կ Ա Ն Ե Կ Ե Ղ Ե Ց Ի Ո Յ

Ո Ր Ի Պ Ր Ո Ի Ս Ա



1845 թուականին թէպէտ դեռ եկեղեցւոյ կազմութիւն տեղի ունեցած չէր, բայց «Բարեպաշտութեան Միաբանութիւն» անունով մարմին մը գոյացած էր Կոստանդնուպոլսոյ մէջ. ասիկա սերտ յարաբերութիւն ունէր պատ. միսիոնարներու հետ, և մեծ եռանդով կ'աշխատէր աւետարանն ու անոր ճշմարտութիւնները տարածելու Ազգիս մէջ: Այս միաբանութիւնը հաւատարիմ անդամներ ունէր գաւառներու մէջ և որ թուով կ'աւելնար անիկա օր քան փօր:

Պրուսայի մէջ ալ ունէր իր անդամակիցները ինչպէս ուրիշ տեղեր որոնք թղթակցութեամբ միշտ յարաբերութեան մէջ էին և միաբան կ'աշխատէին միեւնոյն նրպատակաւ:

1846 յուլիս 1 թուականին երբ Կոստանդնուպոլսոյ մէջ առաջին Հայ աւետարանական եկեղեցին կազմուեցաւ, յայնժամ վերցաւ այն Բարեպաշտութեան Միաբանութիւն անունը, և անոր տեղ «Եկեղեցւոյ Անդամակցութիւն» յաջորդեց: Եւ որովհետեւ գաւառներու մէջ տակաւին չկային առանձին եկեղեցեաց կազմաւորութիւններ, հետեւապէս եկեղեցին մի՛ և անոր անդամակցու-

թիւնն ալ մի կը ճանչցուէր առ հասարակ մեր պոլսեցոցս մէջ, և այն գաւառներու բարեպաշտութեան միաբանութեան անդամ եղողներ ալ միօրինակ եկեղեցւոյ անդամ կը համարուէին կու դային կ'երթային այսպէս ճանաչուած. կը հրաւիրէին եկեղեցւոյ հովիւը, կը տատանէին իրրեւ իրենցը և մայրաքաղաքինը, հովիւն ևս ինքզինքն այսպէս կը ճանչնար:

1848 թուականի Յուլիս 16/28 Պրուսայի Հայ Աւետ. եկեղեցին կազմուած է, ի ձեռն Ամերիկեան Միսիոնարաց և անոնցմէ մին Պատ. Տ. Լատտ իրրեւ առ ժամանակեայ հովիւ կարգուած է նոյն եկեղեցւոյ և այսպէս շարունակուած է մինչեւ ցկէս 1851 թուականի:

Իսկ սոյն միջոցին Կոստանդնուպոլսոյ եկեղեցւոյ Հովիւին կրտսեր եղբայրը Հ. Ստեփան Խ. Իւթիճեան Պրուսայի Աւետ. եկեղեցւոյն միասնական Ընտրութիւնովն և Միսիոնարաց ալ համահաճութիւնով կոչումն կ'ունենայ Հովուութեան ամենամանր պաշտօնին: Բայց ինքը ամենայն ճշմարիտ երկիւղածութիւնով կը քաշուի և երբ եկեղեցւոյն և միսիոնարաց ստիպումներն կը ճնշեն խղճին վրայ, յայնժամ կ'առաջարկէ ծոմապահութեամբ աղօթքի օր մը սահմանել իրենց մէջ և երկարօրէն խորհիլ ուրիշներու վրայ եւս և ասպա գաղտնի քուէարկութիւն ընել աղօթքով, և եթէ այսպիսեալ միասնական քուէով դարձեալ ընտրուի, այն ատեն կոչումն Աստուծմէ ըլլալուն կը համոզուի և յօժար սրտիւ կ'ընդունի ամենայն սիրով: Առաջարկութիւնը կ'ընդունուի և կը կատարուի հետեւեալ օրն, և ասպա Եկեղեցական Ժողովոյ զրազրին, Վարժապետ Սերովբէ Տիոնեանի ստորագրութեամբ զրութիւն կըստանայ ծանոնցանող թէ ինքը ընտրուած է աղօթքով և միասնական քուէով Հովիւ Պրուսայի Հայ Աւետ. եկեղեցւոյն:

Այս կերպով կ'ընդունի կոչումն իրբեւ աստուածա-
յին, Հ. Ստեփան Խ. Իւթիւճեան:

Դիտել արժան է, որ այս կարգադրութիւնն ըլլա-
լէն իրր տաանեւեօթն տարիներ առաջ 1834 թուակա-
նին Պրուսան Միսիոնարական կայան մը եղած է ի ձեռն
Վեր. Բենիամին Շնայտրի, և 1848 Յուլիս 25 կտգիտած
է եկեղեցի, արու և էգ եօթն անդամով, և այս փոք-
րիկ Հօտը ի խնամո Միսիոնարութեան տաանեւեօթնի
բարձրացած, երբ իր նորուզակ առաջին հայ հովուին
կամ երէցին յանձնուեցաւ Յամի Տետուն 1851 Օգոստոս
1 (Ն. Տ.) օրինաւոր ձեռնադրութեամբ երեք պաշտօն-
եաներու, որք են Վերապատուելիք Սիմոն Խ. Իւթիւ-
ճեան, Հովիւ Կոստանդնուպոլսոյ և Վանլէննէք Միսիո-
նար Պօլսոյ կայանի, և Լատտ այն ժամանակի տեղւոյն
Միսիոնարը:

Այս ժամանակ Պրուսայի Ազգ. եկեղեցւոյ առաջ-
նորդն էր Գէորգ Լպիսկոպոս Սամաթիացի որ յետոյ ե-
զաւ Պատրիարք Կոստանդնուպոլսոյ և ապա Կաթողիկոս
Ս. Էջմիածնի: Այս պարագայ բարեբախտութիւն էր
նորագակ երէցին, քանզի յիշեալ առաջնորդին շատ ի
վաղուց ծանօթ ըլլալով այնպիսի հալածանաց ժամանակ
կրնար անոր հետ բարեկամական յարաբերութեամբ դիւ-
րութիւններ ձեռք բերել:

Երէցը սոսկական տան մը մէջ հաստատեց իր ըն-
տանեկան բնակութիւնը ուր որ իրմէ առաջ տեղւոյն
Միսիոնարը Մր. Լատտ կը բնակէր: Այս տան մէկ մասը
կը գործածուէր իրբեւ աղօթատեղի և մէկ մասը դըպ-
րատուն և մէկ մասն ալ իրբեւ երիցատուն: Եւ շատ
յարմարութիւն ունէր թաղային նկատմամբ ապագային
մէջ յաջողութեամբ տեառն Սրբարան կամ Տաճար կա-

ուսացանկու, և իր առաջին խորհուրդը եղաւ զայս ե-
կեղեցւոյ սեպհականութիւնն ընկ ջանալ :

Երէցին այս նոր կեանքի մասին ունեցած անխոր-
ձութիւնը, տեղւոյն և միջավայրին նորութիւնը, ընդ-
դէմ Աւետարանականաց հալածանքի ցնցումները որ դեռ
կը շարունակուէին, նորակազմ ընտանիքի մը կարասեաց
բացարձակ պոկոտութիւնը ևն. ևն. սակաւ նեղութեան
պատճառներ չէին հէգ երիցուն համար՝ սակայն այս ա-
մենուն մէջ երկնային մխիթարութիւնով կը գործէր ու
յառաջ կերթար :

Առաջին տարւոյն մէջ վարժապետ Ս. Տիոնեանի անդ-
րանիկ որդոյն մահը պատահեցաւ. և եղբարք մինչ կու-
րախանային ըսելով թէ «աղէկ որ գերեզմանատունիս
ծախու առեր պատրաստեր ենք» Երեցը ըսաւ անոնց թէ
ազգային գերեզմանատան մէջ կթէ թաղուի աւելի աղէկ
չէ՞. անոնք միաբերան պատասխանեցին. «Թէպէտ աղէկ
է, բայց անկարելի է որ թոյլտուութիւնն ընեն : Ասոր
վրայ երէցը համառօտ գիր մը գրեց առաջնորդ Գէորգ
Եպիսկոպոսին խնդրելով սր թոյլտուութիւնն ըլլայ, ևն,
ևն : Դորին սրբազանութեան գիրը կարգալէն յետոյ նոյն
ատէն ժողով կը կազմէ կը կարգայ գրութիւնը անոնց,
յետոյ կիմացունէ երէցին որ ժամկոչ պիտի զրկէ գերեզ-
մանը պատրաստելու, և մէկ երկու ժամէն ուրիշ ժամ-
կոչ մը պիտի զրկէ մեզի որ տանինք ննջեցեալնիս թա-
ղենք պարաստուած տեղը ու ասանկ եղաւ. նոյն ատեն
ցոյց տուաւ ժամկոչը գերեզմանատան կից շատ ընդար-
ձակ վայր մը ուր մշտնջենապէս պիտի թաղուին մեր նըն-
ջեցեալները : Աւտսիկ ճշմարիտ եղբայրսիրութեան գործ
մը Ազգիս և մանաւանդ սրբազան առաջնորդին կողմանէ :

Տանը մասին պարագայ մը կար յոյժ նեղացուցիչ նո-
րասպակ Երեցին՝ այն է տան տիրոջ թոյլտուութիւն առած

ըլլալը յառաջագոյն հոն բնակող Միսիոնար Մր. Լատտէն որ այգեկութի ժամանակ գինին և օղին պատրաստելու համար տան պարտէզն ու մառանը զայն պահելու գործածէ: Եւ ասանկ ըլլալով այդ չար ըմպելեաց զգուելի հոտով կը լեցուեր սուէնը յաճախ գինեատան պէս: Ուստի Երէցը կանուխէն հոն հաստատուելուն յաջորդ տարւոյն մէջ սկսաւ ճիգ թափել տունը ծախու առնել և գործածել իրրեւ սեպհականութիւն եկեղեցւոյ վայելուչ եղած կերպովը. և տարիի մը անխոնջ աշխատութեամբ և բազում դժուարութեամբ յաջողեցաւ գնել յիսուն հազար դահեկանի վճարմամբ:

1854 Յուլիս 3 կիրակէ օր երեկոյեան պաշտօնէն անմիջապէս ետքը հրդեհի ձայն մը լսուեցաւ, և քիչ ատենի մէջ բոցերն ահագին կերպով տարածուեցան և երիցուն բազում նեղութիւնով ձեռք բերած եկեղեցւոյ սեպհականութիւնն ալ հրոյ ճարակ եղաւ ու ինքն ալ լնտանեօք և անդրանիկ նորածին զաւակովը առանց տան և կարասեաց մնաց:

Հրդեհէն քանի մը օր ետք Պոլիսէն վեր. Մր. Տուայդ և Մր. Էվերէզ այցելեցին մեզ ի մխիթարութիւն և խոստացան այրած տան հողը կամ գետինը ըստ կարելոյն բնդարձակել և քարաշէն եկեղեցի մը կառուցանել հանգանակութեամբ օտար Քրիստոնեայ բարեսիրաց: Եւ այս ուրախառիթ գործը այն նոյն ամսոյ 22ին սկսուեցաւ ամենայն յաջողութեամբ Մութասարըֆ Ալի փաշայի ևս կարեկցական հրամանովը: Ալի փաշա որ ետքը Մեծ Եպարքոսութեան բարձր պաշտօնին բարձրացաւ մինչ իր մահը, մեծ բարերարութիւն ըրաւ ըսելով՝ «Եթէ արտօնութեան համար իրատէյի ևն. ի դիմէք, գործը կերկարի ուստի դուք սկսեցէք, պատասխանատուն ես եմ ևն.»: Սկսուեցաւ և հիմնարկութեան հանդէս մեծաւ ուրախութեամբ կատարեց Երէցը:

Հրդեհին հետևեալ կիրակին կրօնական պաշտամունքը և քարոզութիւնը կատարուեցաւ Էօմեր պէկ թաղը Տէր Աբրահամեան Մկրտիչ և Գրիգոր եղբարց տան մէջ ուր նաև երէցը հիւրընկալուած էր : Յետ պաշտաման մինչ եղարք կը խօսակցէին յանկարծ նամակ մը եկաւ Պիլէճիկէն երեք ծանօթ անձերու ստորագրութեամբ որք են Վրթանէս Գօճապաշեան, Գրիգոր Կիւմեղեան և Յարութիւն Բոյրազեան : Սոքա թախաձանօք կը խնդրէին որ Երթանք օգնինք Աւետարանէն իրենց չհասկցած քանի մը խնդիրներու լուսարանութեան համար : Այս երեք անձինք եղբայրներէն ոմանց ծանօթ լուսաւորչական բարեկամներ էին : Իսկոյն հանգանակութիւն ընելով ճամբու երթեակութեան ծախք հայթայթուեցաւ եղբարց մէջ և խնդիրք եղաւ երէցին անմէջապէս երթալ օգնել անոնց, նա ևս ամենայն յօժարութեամբ յանձն առաւ երթալ և Նշան ազա Յովսէփեան ևս խոստացաւ ընկերանալ երէցին իր անձնական ծախքով :

Ասկէ առաջ Պիլէճիկ բնաւ տեսած չէր Միսիոնար կամ հայ երէց, քարոզիչ, գրքածախ ևն : Առաջինը եղաւ Պրուսայի Հովիւին սյցելութիւնը որ երկու շաբաթէն աւելի տեսց, և և հետաքրքրական շատ ուրախալի պատմութիւններով վերադարձաւ ի Պրուսա : Հոն եկեղեցին կը կառուցուէր, և շէնքը ծածկուած էր ու միայն դրօշն ու ներսէն ծեփուած չէր դեռ :

1855 փետրուար 28 յետ կէս աւուր տարօրինակ որոտումով անձրևեց. երէցը այն պահուն շէնքին մէջ կը գտնուէր ճարտարապետին հետ և ծեփուելուն կարգադրութիւն կընէր, երբ ետինքի ատեն ուժգին երկրաշարժ տեղի ունեցաւ որով մեծամեծ կործանումներ տեղի ունեցան քաղաքին մէջ և եկեղեցւոյ շէնքն ալ ան-

գործածելի դարձաւ և երէցն ալ ճակատին վրայ վէրք մը առած մագապուր ազատեցաւ վտանգէ :

Ապրիլ 11 գիշերուան ժամը 1 $\frac{1}{2}$ ի ատեն ուժգնագոյն կրկնեցաւ աղէտալի դէպքը, որ ատեն կիսով չափ վնասուած շէնքերն մանաւանդ քարաչէն եղածները գրկից կործանեցան, և այս անգամ մեր անաւարտ եկեղեցիին կանգուն կեցած մասն ալ ինկաւ գրկից բոլորովին :

Այս վերջին անգամին ամէն կողմ հրէնչեցաւ, տեղատարափը կիջնար, և ո՛չ ոք կրնար կրակի վայրերը երթալ իր բարեկամին և սիրելւոյն օգնելու. դժուարութիւնք աննկարագրելի են : Այս ամէն դժուարութիւններէն և նեղութիւններէն վերջ՝ յաջողուեցաւ եկեղեցւոյ շէնքը վերականգնել հաստատագոյն քան զառաջինն սատարութեամբ, նպաստիւք և ձեռնակցութեամբ Վեր. Տօք. Կ. Համլինի և Մեծ. Սարգիս էֆ. Մինասեանի :

1856 Ապրիլի մէջ աւարտեցաւ շինութեան գործը, և նոյն տմտոյ 13ի կիրակէ օրն որ էր Ծաղկազարդ, նուիրման հանդէսը կատարուեցաւ մեծաւ ուրախութեամբ և խուռն բաղմութեամբ ի ձեռն Հովութի որ պարագային յարմար քարոզին ընտրան ընտրած էր մարգարէութիւն Անգեայ, գլուխ Բ. 6—9 : Ամէն դէմքի վրայ ուրախութեան արտասուք կ'երեւնար, քանզի նոյն օր վշտակիր և արկածեալ հասարակութեան համար ուրախութեան, մխիթարութեան և մանաւանդ քաջակերութեան մեծ ու նշանաւոր օր մըն էր :

Թէպէտ նուիրման պաշտամանն ու հանդէսին մասնակից և ներկայ բլլալու հրաւիրուած էին մեծ բարերար Տօք. Կ. Համլին և այլ բազում բարեկամք, բայց շոգեհաւի անկարգութեան մը պատճառաւ չէին կարողացած հասնիլ :

Եկեղեցիին կառուցուիլը արդարեւ մեծ օրհնութիւն

եղաւ քաղաքին, որովհետեւ շատեր կրնային հիմա համարձակ գալ և լսել կենաց բանին քաղութիւնը, քանի որ տան մէջ պաշտօն կատարուած ատեն չէին համարձակեր:

1856 Յունիս 4ին երէցը սնննակաւ գործով մը Պօլիո գնաց, և Մինասեան Սարգիս էֆ.ի վաճառատան մէջ անոր հետ տնտեսակցութեան մը միջոցին, յիշեալն երբ հարցութիւններ կ'ընէր, երկըր տան կամ քնակարանի անյարմարութեան մասին ունեցած նեղութիւնը պատմեց: Մեծանոգի անձը խոստացաւ Պրուսայի մէջ երկրաստան մը կառուցման համար տասնհինգ հազար դահեկան իրեն նուիրել, պայմանաւ որ նոյնչափ ալ Տօք. Համլին հաճի նուիրել: Ասոնք այս ժամանակ Խրիմի պատերազմին եկող Անգլիացի զօրքերուն վերաբերեալ գործեր կ'ընէին և վաստակ կ'ունենային: Երկըր անմիջապէս գնաց Տօք. Համլինին պատմեց Մինասեանի հետ ունեցած սեռակցութիւնը ու անկէ առած խոստումը ևն.: Տօք. Համլին մեծաւ յօժարութեամբ հաճեցաւ ինքն ալ նուիրել նոյնչափ գումար մը նոյն նպատակին համար: Երէցը Պրուսա վերադարձին խոնեմութիւն չսեպեց այս ուրախալի լուրը հաղորդել այլոց, այլ առանձին կը խորհէր և կը ծրագրէր թէ ի՞նչ է վայելուչն ու օգտակարը:

1857 Յունուար 10, Այս օր նոր Իսրայէլ Մեծ Յովհաննէս, որ ուրիշ եօթն բնկերներով մկրտուած էր Լուսաւորչական Հայոց Կոստանդնուպոլսոյ եկեղեցւոյն մէջ հրէութենէ դարձի եկած ըլլալով՝ և յետոյ միայն ինքը մահմէտականութեան դարձած և Պրուսա կը գտնուէր այս ժամանակ բժշկութեան գործով՝ գալով երէցին լուր տուաւ թէ եկեղեցւոյ շէնքին ճիշդ աջակողմը և անոր կից եղող Մէհմէտ անուն անձին տունը որ ընդարձակ

խոնախ մըն է, ծախու է և շատ վայելուչ է որ մենք առնենք: Այս լուրը բարեկամական ոգւով բերաւ և ոչ ուրիշ շարժառիթով, քանզի իրօք բարեկամ էր երէցին և կը տեսակցէր կրօնական ճշմարտութեանց վրայ ամենայն համարձակութեամբ:

Երէցը երկարօրէն տեսակցելով առաջարկեց որ իրբեւ իրեն համար սակարկութիւն ընէ և վերջին գինը գայ իմացունէ. ասանկով վերջապէս քառասուն երեք հազար դահեկանի այն տունը գնուեցաւ, ո՛չ թէ միայն երեսուն հազար, այլ երեսունեւհինգ դահեկան յիշեալ բարերարներէ առնելով ութն հազարն ալ պարագ ընելով, որ սարիէ մը վճարուեցաւ նոյն տան գօզայի հունտ հանելով, որ յաջողած է բարերախտարար:

Խնդիրն այս գործողութեանց մէջ արդէն յայտնուած էր եկեղեցւոյ հոգաբարձութեան և անոնց գործակցութեամբը կաարուեցաւ ամէն բան:

Գանք որ մահմէտականի տուն քրիստոնեայի չէր կրնար դառնալ, ասոր հնաքրն ալ գտան և Ելնի Շէհիրցի Հասանազա անուն պատուաւոր վաճառականի մը վրայ դարձուցին տունը, և նոյն անձէն օրինաւորապէս գրբուած և ստորագրուած գիր մը առաւ երէցը՝ թէ տունը և թէ տանը երկիրը իր ամէն պարագաներովը Հայ Աւետ. եկեղեցիինն է և ո՛չ թէ իրենը, այլ միայն ըստ քաղաքային օրինաց տաճկի տուն քրիստոնեայի վրայ չկրնալ դառնալուն համար դարձուած է իր վրայ, որ և է մէկ քարն կամ հողը իր'նն ըլլալու են, են, իրաւունք չունի:

Երեցը վերջնական պայման մը ևս եկեղեցւոյ հոգաբարձուացը հետ ըրած և արձանագրած և ստորագրել տուած է և ինքն ալ իրբեւ վրայ ստորագրած է, որ կը

կենայ եկեղեցւոյ մայր տոմարին մէջ, թէ ոչ մէկ ատեն
այն տունը կրնայ ծախուիլ և ոչ մէկ պարագայի բեր-
մամբ կրնայ խթիլլալի գրուիլ, այլ որչափ ատեն որ ե-
կեղեցին հոն կը կենայ, տունն ալ եկեղեցւոյն քով պի-
տի կենայ:

Սահագրութիւնք

1857 փետրուարի մէջ երէցը իր վարձու բռնած
տունէն փոխադրուեցաւ յերիցատուն: Այս նոյն ամսոյ
15ին Մր. Թրօպրիճ երիասարդ նորեկ միսիոնարն
Պրուսա եկաւ թրքերէն լեզուի ուսման համար, ինք ա-
մուրի ըլլալովը փափաքեցաւ երէցին հետ բնակիլ, նա
ալ ընդունեց ամենայն սիրով և Մուստաֆա էֆէնտի ա-
նուն հռչակաւոր հօճան դասատու կարգեց հիւրին:

1857 Ապրիլ 12. եկեղեցւոյ նուիրման օր-
ուն տարեդարձը և Ծաղկազարդ ըլլալով՝ Տօքթ. Կ.
Համլին յատկապէս հրաւիրուած էր ի յիշատակութիւն,
որ քարոզ խօսեցաւ բնաբան առնելով՝ Եսայեայ ԾՁ. 7
«Իմ տունս բոլոր ազգերուն համար՝ աղօթքի տուն պի-
տի կոչուի»: Յետոյ Տօքթ. Դրիթ, Ամերիկեան Պօրաի
ձերունի գրագիրը, որ ընկերացած էր Տօք. Կ. Համլինի
մկրտեց երէցին դուստրը Եփսիբան որ նորածին էր:

1858 Ապրիլ 22ին, Կ. Պօլսոյ կայանի Միսիո-
նարական ժողովէն հրաւէր ստացաւ երէցը որ Մայիսի
մէջ կատարուելու իրենց տարեկան ժողովին ներկայ
գտնուի և Մայիս 30 կիւրակէ օրն Ընդհանուր ժողովին
մէջ տարեկան քարոզը ինքը խօսի պարագային յարմար
նիւթ մը և բնաբան մը ընտրելով: Հրաւէրն ընդունեց
ամենայն սիրով՝ գնաց և յատկացեալ օր Ամերիկացի և
Հայ մեծ բազմութեան ներկայութեան քարոզեց երե-
ցը բնաբան առնելով, Դուկ. Ը. 16 համարը:

1858 Յուլիս 6 երէցը վերադարձաւ Պրուսա, և սոյն միջոցին Պիլէճիկէն հրաւէր ընդունեց երթալ մկրտել տեղւոյն քարոզչին մանուկը: Գնաց Սեպտեմբերի մէջ նոյն ստրւոյ նախ Եննի Շէհիր ուր կեցաւ քանի մը օր և անկէ անցաւ ի Պիլէճիկ և տասն օր հոն մնաց և անկէ գնաց Քիւփլի ուր Յունաց գիւղ մըն է, ուր Յոյն քահանայ մը ընտանեօք աչակերտած էր աւետարանին: Երկու օր կեցաւ քահանային տունը մխիթարելու և քաջալերելու զանոնք, և տեղւոյն կառավարութեան ամէն կերպով զանոնք պաշտպանել յանձնարարեց և Պրուսա վերադարձաւ սեպտեմբեր 20ին:

Սոյն ստրւոյ նոյեմբեր 20ին ուրիշ նորեկ Մխիթնար մը Պրուսա եկաւ նոյնպէս թրքերէն սորվելու համար, սա ևս առաջինին պէս ամուրի ըլլալով փափաքեցաւ նոյնպէս երէցին հետ բնակիլ: Առաջինը արդէն սորված ու գացած էր: Երէցն զայս ալ ընդունեց և ինչ օգնութիւն որ ըրած էր առաջինին ի մասին ուսման եւն, ստոր ալ նոյնը ըրաւ և շատ ուրախ է որ առաջինը սորվելէն ու դառնալէն հոք Այնթապի գողէճին հիմնադիր և տնօրէն եղած է, և վերջինը նոյնպէս Խարբերդի գողէճին, բայց այս ո՛չ հիմնադիր այլ միայն տնօրէն: Ասո՛ք չորսական կամ հինգական ամիս միայն կեցած են Պրուսայի մէջ և առանց որ և է գործի մասնակցութեան միայն ուսանելու զրազած են:

Ներկայ ստրւոյ վերջին ամսուան մէջ նախախնամութեան մասնաւոր այցելութեամբ օրհնութեան օրեր ունեցաւ եկեղեցին և օրէ օր փրկուածներ աւելցան Աւետ. ժողովրդեան վրայ. մասնաւոր աղօթքի ժողովներ կ'ըլլային ամէն գիշեր տունէ տուն: Այս ժողովներէն միոյն մէջ գինեմոլ հակառակորդ մը մտած էր ատրճանակ ի ձեռին, երէցը սպաննելու դիտաւորութիւնով:

բայց աղօթքէն ազդուած իր դիտաւորութենէն ետ կեցած էր: Այս ժողովը Գոճապաշեան Վրթանէս աղայի տան մէջ կ'ըլլար: Ուրիշ հակառակորդ մը եկած ըլլալով նոյն գիշերը վէճ հանելու դիտաւորութիւնով՝ իսկ աղօթքէն ետքը խոստացաւ նոյն օրինակ ժողովներ քիչ օրէն իր տան մէջ ալ ընել տալ. և իրօք այնպէս եղաւ բոլոր ընտանիքով Աւետարանին յարելովնին: Ասիկա է Սըմսարեան կոչուած ընտանիքը:

ԱՒԵՑԱՐԱՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

Պատշաճ է որ նախ և առաջ կատարեալ տեղեկութիւն ունենան ընթերցողք այս անուն ընկերութեան մը գինչութեանն ու նպատակին վրայ, և թէ անոր մեր եկեղեցւոյն կամ ժողովրդեան հետ յարաբերութիւնը երբ կամ ինչպէս սկսած է:

1859 Ապրիլ 2 թուականին Պրուսայի մէջ՝ նաժակ մը ստացանք Գոստանդնուպոլսոյ կայանի միսիոնարութեան կողմէ Հ. Ճ. Օ. Տուայթ ստորագրութեամբ որ կ'ըսէր. «Աւետարանական դաշնակցութեան թուրքիոյ ճիւղին կողմէ կարգեալ էք, որ Պրուսայի մէջ դաշնակցութեան տեղական հոգաբարձութիւններու ժողով մը յօրինէք, ու կարգադրէք, ևն. ևն.»:

Այս առաջարկութիւնը որ տեղւոյն Աւետարանական եկեղեցւոյ վեր. Երիցուն ուղղուած էր, ամենայն սիրով և հաճութեամբ կը կատարէ, կը ծանուցանէ յիշեալ ճիւղին:

Այս ընկերութիւնը ի սկզբան կազմուած է Լոնտոնի մէջ 1842 թուականին:

1860 Նոյեմբեր 30 ին, երեցը Ելէնի Շէհիր և Պիլէճիկ Հովուական պտոյտի գնաց, և այս առթիւ Պիլէճիկի վրայ հրէց ձեռնադրեց զՊրն. Յովհաննէր Տ. Ստեփանեանը:

1861 փետր. 13 ին երէցը Կ. Պօլիս գնաց Միսիոնարաց ձեռքով գոցուած գրքարանը նորէն բանալու զիտաւորութեամբ, քանզի շատ կարեւոր կը համարէր, և յաջողելով Պրն. Գրիգոր Տ. Արրահամեանը Պրուսայի գրքածախ կարգեց նոր խանութ մը բանալով:

Ներկայ տարւոյ Նոյեմբերի վերջերը Տօք. Կ. Համլին այցելեց Պրուսա, և տեսակցութեան մէջ յայտնեց երէցին թէ ինքը հրաժարած է միսիոնարութենէ, կամ դադրեցուցած է իր յարաբերութիւնը Պորտ ընկերութեանէն, և առանձին վարժարան մը հաստատելու ետեւէ է: Եւ վերջապէս իրօք Բոպէրդեան հոշակաւոր վարժարանը կարող եղաւ հաստատել և հիմնել այն քաջարի անձ:

1862 Մարտ 25. այսօր Մր. Այգաք Պլիս և Մր. Թրրոպճին Պրուսա եկան և հիւրնկալուեցան երէցին տունը: Սոյն այցելութեան ատեն Մր. Թրոպրիճ գաղտնաբար յայտնեց երէցին թէ միսիոնար մը որ Նիկոմիդիա կը բնակէր և Պարտիզակի միսիոնար Մր. Բարսընսի հետ կը գործէր, դժուարութիւն ունեցեր է այդ տեղին մէջ, հետեւապէս Նիկոմիդիայէն ելլել պարտաւորուեր է, և կ'ուզէ գալ Պրուսա բնակութիւն հաստատել: Իսկ Պոլսոյ կայանի միսիոնարք, մանաւանդ Տօք. Հ. Ճ. Օ. Տաւայդ ըսաւ կ'ընդդիմանայ անոր այդ խորհուրդին, առարկելով թէ, «Պրուսայի եկեղեցին առանձին իր երէցովը բարւոք յաւաջդիմող մէկ հատիկ եկեղեցին է, երկիւղալի է թէ, եթէ հոն Միսիոնար երթայ հաստատուի, հոն ալ ցաւալի դէպքեր կը սկսին տեղի ունենալ»: Երէցը պատասխան մը չտուաւ ասոր խորհելով թե Պոլսոյ կայանի միսիոնարք պէտք եղած կերպովը խորհած են արդէն:

Ապրիլ 12 ին շաբաթն եկեղեցւոյ հողաբարձուաց

մին, Գ. Պ., երիցատուն եկաւ և պատմեց թէ Մ. Շու-
ապ գերմանացի վաճառական, և միանգամայն Ամերիկ-
եան հիւպատոս, կ'ուզէ իրենց տունը առնել իրրև ա-
ւանդ իսթիլլալով, քանզի Պ. մեծ գումար մը պարտական
եղած է յիշեալ գերմանացիին: Բայց հայրը հաճութիւն
չունի. անոր համար կ'առաջարկէ որ երիցատունը առ-
ժամանակեայ կերպիւ իրրև աւանդ տրուի, մինչև որ
ինքը կարենայ պարտքը հատուցանել:

Երէցը ցաւ յայտնելով հանդերձ Գ. եանց ունեցած
դժուարին կացութեան համար առաջարկութեան անկա-
րելիութիւնը ցոյց տուաւ. բանալով եկեղեցւոյ Մայր
Տոմարին մէջ արձանագրեալ պայմանը. (տե՛ս այս գրք-
քին 72րդ. էջին մէջ): Պ. թէպէտ հասկցաւ բանին ան-
կարելիութիւնը զոր երէցը հեռատեսութեամբ վրած էր
այնպիսի պայման մը, բայց կը յուսար թէ անկարելին
կրնար կարելի ըլլալ որ և է շարժառիթով. բայց չըլլա-
լուն տրտմած գնաց:

Վարժապետ Սերովբէ Տիօնեան որ Նիկոմիդիոյ եկե-
ղեցիին վրայ երէց ձեռնադրուած էր, այս միջոցին նոյ-
նէն արձակուած ըլլալով՝ Պրուսա եկաւ, իր հայրենիքը,
և ոտքի վրայ լուծայափոխութեամբ կը զբաղէր, և եր-
բեմն ալ երէցին հրաւիրուելովը կը քարոզէր:

1862 Յունիս 12ին Նիկոմիդիոյ Միսիոնարը Պրուսա
եկեր և ուղղակի Պատ. Ս. Տիօնեանի բնակարանը իջե-
ւաներ էր: Հետևեալ օրը այցելեց եկեղեցւոյ երէցին որ
ամենայն սիրով ընդունեց. խօսակցեցան այլ և այլ նիւ-
թերու վրայ, բայց ինչ դիտաւորութեամբ Պրուսա եկած
ըլլալը չյայտնեց: Երէցն ալ բնաւ չխօսեցաւ Մր. Թրօպ-
րիճէն արդէն իմացածին մասին. անգամ մը ճաշի հրա-
ւիրեց, այսպէս մէկ շաբաթ մնալով Պրուսայի մէջ, մեկ-
նեցաւ: Սաէջայն մեկնելէն վերջը երէցը ուրիշներէ կը

տեղեկանայ, թէ նա՝ քաղաքը դիտելու, իր բնակելու թաղը ընտրելու, և հոն մինչեւ իսկ տուն մը ծախու առնելու որոշում ըրեր, և մնացածը Տիօնեանին յանձներ լմնացուցեր է :

Յուլիս 1 շաբաթ, այսօր յիշեալ Միսիօնարն դարձեալ կուգայ Պրուսա, և ուղղակի Պատ. Ս. Տիօնեանին բնակարանը կ'իջեւանի : Հետեւեալ օրն էր կիրակի, յետ կէս աւուր երեկոյիսն պաշտօնէն առաջ կ'այցելէ երկ-ցատուն : Ի տեսակցութեան երէցը ամենայն պարզութեամբ կ'ըսէ անոր թէ շատ ուրախ պիտի ըլլար անոր Պրուսա գալուն, եթէ օրինաւոր և վայելուչ եղած կերպովը գար. բայց կը ցաւի որ այնպէս եկած չէ :

«Եղբայր, ինչո՞ւ համար» կը պատասխանէ միսիօնարը :

Երէցը կը շարունակէ ու կ'ըսէ. «Եթէ ձեր միսիօնարք հոս նպարսովածառի խանութ մը բացած ըլլային և հոն գործակալ մը դրած ըլլային, ու այն գործակալը իր պարտաւորութիւնը ամենայն հաւատարմութեամբ կատարած ու գործը յաջողցուցած ըլլար՝ տարակոյս չի կայ թէ անոր գործակից ըլլալու ուրիշ մէկն տլ զրկելնէն առաջ պիտի գրէին, գոնէ տեղեկութիւն մը պիտի տային, ևն. ևն. : Բայց դուք եկաք ամիս մը առաջ պատրաստութիւններ տեսաք առանց բան մը իմացնելու և ահա յանկարծ բուսաք» :

Նա պատասխանեց. «Եղբայր, ես ամենեւին պիտի չխառնուիմ ձեր գործին, այլ միայն դուրսերուն պիտի նայիմ և անոնց համար պիտի աշխատիմ» : Երէցը ըսաւ թէ դուրսերը եղած գործերը որո՞ւն միջոցով յառաջ եկան, «Տէմիր Տաշ, Մահալլճ, Եէնի Շէհլը, Պիլէճիկ, Քիւրքի, Քէօթահիա, ևն. ևն. ո՞չ ապաքէն իր եկեղեցւոյն, և իր միջոցով բացուած դպրոցներ են, Ետն վայե-

լուչ պիտի չըլլա՞ր ասոնց նկատմամբ խօսք մը բնէիք կամ գոնէ բան մը հարցնէիք: Միսիոնարը դարձեալ իր բսածը կրկնեց, և սկսեց լալ, այսչափով վերջացաւ, քանզի պաշտօնի ժամանակը եկած էր և կոչնակը կը հնչէր:

Այս եղելութենէն առաջ դէպք մը տեղի ունեցած է ընդ մէջ երիցուն ու այդ միսիոնարին, և որուն միջոցաւ Պօլսոյ կայանի Միսիոնարութեան, որ արժան է հոս միջանկեալ կերպով յիշել, որ է հետեւեալն.

1861 Նոյեմբեր 16/29 Նիկոմիդիոյ մէջ կատարուած պաշտօնէական ժողովին, որ կը բաղկանար ութն պաշտօնեաներէ, որք էին Վերապատուելիք Սիմօն Իւթիւճեան Հովիւ Բերայի եկեղեցւոյն, Աղեքսանդր Ղէճիզեան Հովիւ Ատաբազարի եկեղեցւոյն, Արբասամ Պուղտանեան Հովիւ Ռօտոսթօյի եկեղեցւոյն, Յովհաննէս Տ. Ստեփանեան Հովիւ Պարտիզակի եկեղեցւոյն, Սերովբէ Տիօնեան Հովիւ Նիկոմիդիոյ եկեղեցւոյն, Կարապետ Գարրիէլեան, Մկրտիչ Քիրէչճեան և Տրուպս: Այս պաշտօնեայք այլ և այլ եղբարց տուներ հիւրընկալուած էին, իսկ Քիրէճեան հիւրընկալուած էր տեղւոյն այն ժամանակուան Միսիոնարին տունը:

Սոյն ժողովին իբրև կարևոր խնդիր բողոքագիր մը կը ներկայացուի Բերայի եկեղեցիին կողմէ՝ իր իրաւանց դէմ տեղի ունեցած ապօրէն արարքի մը մասին ի ձեռն ներկալ ժողովականաց միոյն, թիւադրութեամբ Պօլսոյ կայանի Միսիոնարութեան: Խնդիրն էր Լանկայի եկեղեցիին վերակազմութիւնը, Բերայի եկեղեցւոյն հետ միացած ըլլալէն ետքը:

Խնդրոյն վրայ բացի Պրուսայի եկեղեցւոյն Հովուէն Տրուպէս, ամէնքն ալ կատարեալ տեղեկութիւն ունէին, քանզի Քիրէճեան պատուելի Միսիոնարութեան կողմէ

բուն թելադրուողն էր և միւսները բացի Բերայի հովուէն մասնակցած էին յիշեալ ապօրէն արարքին :

Խնդրոյն ամէն պարագաները քննութեան առնուեցան և անոր գործադրութեան մասնակից եղող ժողովականք, բացի միոյն (Քիրէշճեանի) կը խօստովանէին թէ ակամայ մանաւանդ իրենց խղճէն յանդիմանուած, միմիայն Միսիոնարութեան ստիպումովը մասնակցած էին այդ գործողութեան կամ արարքին :

Տրուպիս բոլորովին նոր էր այս ժողովին մէջ բոլոր լսածներս, որովհետեւ միշտ առանձին կ'աշխատէի ու կը գործէի եկեղեցւոյս հետ և միսիոնարական միջամտութիւններէ զերծ ըլլալով անոնց հետ ունեցած յարաբերութիւնս լոկ բարեկամական էր մինչև ցայն վայր. և անփորձ լլալով օտար մարմնոյ հետ գործելու դժուարութիւններու, խօսք առի և ըսի թէ՝ ակամայ և խղճէ յանդիմանութիւն կրելով կատարուած ապօրինի գործողութիւն մը կամ արարք մը ինչպէ՞ս կրնայ արդարանալ կամ վաւերական համարուիլ ևն, ևն . :

Պատ. Մ. Քիրէշճեան որ ճիշտ քովս կը նստէր, ծռելով ըսաւ ականջս ի վար. «Ի՞նչն այդչափ համարձակ կը դատես ու կը խօսիս այս խնդրոյն վրայ, բայց վաղը Միսիոնարք կը կտրեն քու ամսականդ .»

Այս խօսքը ինձ շատ տգեղ եկաւ, խորհելով թէ ի՞նչ տարօրինակ մտքի տէր եղած ըլլալու է ինձ այնպէս խօսող անձը, քանզի խորհող մտքին ճշմարիտ և իրական գեղեցկութիւնը Աստուծոյ պատկերն պէտք է ըլլայ, որ արդարութեան և ճշմարտասիրութեան խորհուրդներ յորդէ ճշմարիտ սրբութեան փայլով, Բայց ընդհակառակը մտքի մը իրական տգեղութիւնը, որ անիրաւութեան և գձուձ ու եպիբեկի շահագիտութեան խորհուրդներ կը յորդէ ինչպէս բան համարելու է, ար-

դարև սոսկալի վիճակ, մանաւանդ հոգեւոր պաշտօն-
եայ կոչուածներու համար, Տրուպս ասանկ խորհուրդ-
ներով ամբողջ օրը նեղուեցաւ և անհանգիստ եղաւ :

Ժողովին երկրորդ ու երրորդ նիստերը շարունակ-
ուեցան ուրիշ օգտակար խնդիրներու կարգադրութեամբ
և որոշումներով, իսկ չորրորդ նիստին մէջ որ վերջինն
էր, բացի միօյն միասնաբար որոշում եղաւ անվաւեր
հռչակել առաջին նիստին մէջ քննութեան և խորհրդա-
ծութեան առնուած խնդիրը, և ընտրուեցան երեք պաշ-
տօնեաներ որ ժողովին կողմէ իբրև պատգամաւորներ
երթան Պօլսոյ կայանի միսիոնարութեան հաղորդին ժո-
ղովին այս վերջնական վճիռը :

Պատգամաւորք երբ կ'երթան, կը տեսնեն որ Մի-
սիոնարութիւնը արդէն տեղեկացած և գիտէ ամէն բան
ինչ որ խօսուած և եղած է ժողովին մէջ, քանզի իւրա-
քանչիւր նիստի մէջ ամէն խօսուածն ու որոշուածը
ոտուգուելով օրը օրին հաղորդուած է եղեր նամակով
Պօլսոյ կայանի միսիոնարութեան, և պատգամաւորք
միայն յանդիմանութիւն մը առնելով իբր վարձ՝ իրենց
արժանիքէն վեր բաներու ձեռք դարնող կը դառնան
տեղերնին :

Գանք մեր պատմութեան շարունակութեանը :

Սոյն եղելութեան Տրուպիս շատ ծանր գալով իր ա-
մէն պարագաներով՝ որոշեցի Պօլիս երթալ և Տօք. Համ-
վինին խորհուրդ հարցնել, քանզի նա արդէն Պորտի
միսիոնարութենէն հրաժարած ըլլալովը կրնար անկողմ-
նակալութեամբ ինձ գաղափար յայտնել, Ուստի երեք
օր ետքը Յուլիս 4, գացի Պօլիս և տեսայ Տօք. Համվի-
նը, և անոր հետ երկար տեսակցութիւններ ունենալէ
ետք՝ յաջորդ շաբթուն վերադարձայ Պրուսա :

Իսկ վիրադառնալուս իր ինչ ինչ դիտաւորութիւններուն և վարուելակերպերուն վերհասու ըլլալով՝ տեսայ որ մինչև այն ատեն հանդարտ խղճմտանքով իմ պաշտօնիս մէջ յառաջ երթալուս հակառակ՝ ինչ ինչ արգելքներու պիտի հանդիպիմ, որոշեցի հրաժարիլ :

Արդ, 1862 Յուլիս 22 տրտմազգեաց օր մըն էր ինձ համար երբ հրապարակաւ եկեղեցւոյ բեմէն յայտնեցի իմ վերջնական որոշումս թէ հրաժարեալ եմ : Թէպէտ եկեղեցին երբէք հրաժարականս չընդունեց և բաժանմանս հաճութիւն չտուաւ և չէ տուած : Այս մասին մանրամասնութիւնք կը պակսին :

1862 Օգոստոս 22 փոխադրուեցայ Կոստանդնուպոլիս :

Հ. ՄՏԵՓԱՆ Խ. ԻԻԹԻԻՃԵԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՅ ԵԿԵՂԵՅԻԻՆ ՅԵՏՍԱԳՈՅՆ ՎԻՃԱԿԸ

Հրապարակային պատճաճունք Միսիսեանաց ի Հայս.—

Փակում Միսիսեանաց Բարձրագոյն Վարժարանի:—

Ճէգայիրեան վարժարան Խապիւղի մէջ.— Հաս-
տատօրին բարեպաշտական միաբանութեան:

Հայաճանք.—

Հայաստանեայց եկեղեցւոյն նկատմամբ նախընթաց գլուխներուն մէջ ըսուածներէն ուշիմ ընթերցողը կրնայ տեսնել բացորոշապէս սա երկու իրողութիւն, անոր սկիզբը կամ ծագումը տարրեր այն վիճակէն որ հիմա ունի մաքուր աւետարանական ու առաքելական ըլլալը: Միւսը այն է, որ հիմա ընդգրկած յեասամուտ սովորութիւններ են . . . ինչ կերպիւրով և որոնց ձեռքով մուտ գաած ալ ըլլան, անոնցմէ մաքրուելու պէտքը անհրաժեշտ է: Ասիկա ի ստորեւ բացատրենք ծանօթ օրինակով: Բրիտանոնէական թուականը՝ որ կը գործածուի այսօր, հսովմայեցիներէն սխալ ըմբռնուած հաշիւով մը սկսուած ըլլալով յառաջ տարուեցաւ մինչև վեշտասաներորդ դար: Ապա առաւել ճիշդ ու մանրաքննին հաշիւներով և աստղաբաշխական հետազօտութիւններով ուղղեցին այդ սխալ թուականը որն ստանն օր առաջ թոցունելով և նոյն ատենն աղագոյ սխալն ալ արգիլելու համար հաշուական նոր կարգադրութիւն մը ի գործ դնելով: Կը տեսնենք որ հիմա, որ հին ու նոր կամ սրխալ և ուղիղ տոմարներու մէջ հզամ տարբերութիւնը չորս դար անցնելէ յետոյ 14 օր եղած է. և եթէ այսպէս

չարունակուի նոր կամ ուղիղ տոմարին հետևող արեւմուտցիներ Յունուար 1 ըսած ատենին, արեւելքցիքս դեռ Օգոստոս 15 պիտի ըսենք: Ընչդ այսպէս եղած է բանը կրօնականի և հաւատարկաց մասին ևս:

Ճշմարիտ է որ Քրիստոնէական Ս. Հաւատքի և կրօնի հիմը Յիսուս Քրիստոս է և Պօլոս առաքեալ ըսած է. «Զի հիմն այլ ոք ո՛չ կարէ դնել քան զեղեակն». և ուրախ ըլլալու ենք որ ճշմարիտ սուրբ առաքեալներն իրենց քարոզութիւնով ու գրութիւններով այս հիման վրայ շինեցին ոսկի, արծաթ և պատուական քարեր. բայց ո՛չ ապաքէն ուրիշներ ալ շինեցին առաքելական այն մաքուր, ուղղափառ շէնքին վրայ փայտ, խոտ, եղեգն, անպիտան ու անտախ բաներ ու անոնցմով նսեմացուցին շէնքին պայծառութիւնը:(1)

Հայաստանեայց եկեղեցիին մէջ ինչպէս և արեւմտական պապական եկեղեցիին մէջ սկիզբէն յետէ պակաս եղած չեն լուսամիտ և ողջախոս՝ անձեր թէ՛ կղերական և թէ՛ աշխարհական դասերու մէջ որոնք զգացեր ու ճանչցեր են եկեղեցական ընդհանուր բարեկարգութեան մը անհրաժեշտ պէտքը, և ջանացեր են այս բանին համար: Բայց խաւարամիտ մեծամասնութիւնը չարամիտ և զօշաքաղ առասպելաբաններու թելադրութիւնով միացեր է զանոնք այլ և այլ անհաճոյ վերանուանութիւններու ենթարկել, ինչպէս մոլորամիտ, թերամիտի հաւատոց, ազանդաւոր, նորազանդ, ևն, ևն. և միշտ հալածեր է: Բարեկարգութեան աջակից եղողներ ազադակեր և գոչեր են՝ և կ'ազադակեն և կը գոչեն՝ «Բարեկարգութիւն կրօնական՝ ըստ Աւետարանի և ըստ առաքելական և նախկին հայրերու ուղղափառ դաւանութեան. այն է

(1) Ա. Կոնք. 4, 12:

մաքրութիւն և հրաժարում տմէն տեսակ փայտէ, խոտէ . եղէգէ, որպէսզի երևան գայ, ոսկեղէն և արծաթեղէն և պատուական քարերէ շինուած բանական տաճարն Աստուծոյ :»(1)

Եւսիրիոս, հայր եկեղեցական պտմութեան, ծնեալ Պաղեստին ու Կեսարիոյ մէջ յամի տեսաւն 270 հետեւեալն ըսած է . «Երբ անցաւ գնաց այն ազգը որ արծանացած էր ականջովը լսել առաքեալներուն Աստուածային հոգւով ներշնչուած իմաստութեան բուն խօսքերը, այն ատեն շուտով տեսնուեցաւ ամբարիշտ մոլորութեան հերձուածը սուտ վարդապետութեանց խաբէութիւնովը»(2) : Եւ ո՛չ ապաքէն Պօղոս առաքեալ իսկ գուշակած է ըսելով . «Քանզի զիտեմ ես՝ եթէ յետ մեկնելոյ իմոյ՝ գայցին գայլք յախշտակողք ի ձեզ, որ ոչ ինայեսցեն հօտին : Եւ ի յինջ յարկցեն արք՝ որք խօսեցին թիւրս, ձգել զաշակերտսն զկնի իւրեանց»(3) : Տաւալի է որ առաքեալին դուշակածը անոր մեկնելէն ետք այնքան կանուխ կատարուած ըլլալ կը ցուցնէ Եւսերիոսի պէս հաւատարիմ մատենագիր մը : Ուրեմն չղարմանանք որ հաւատոյ համար դրուած ճշմարիտ հիման վրայ թիւր վարդապետութիւններ այնքան կանուխէն զիգուեր են : Այո՛ կ'եր են այնպիսիներ, որ իրենց ստորին և ժանտ շարժառիթներն յագեցնելու համար չինայելով հօտին՝ ճշմարտութիւն, արդարութիւն են. անտես, ոտնակոխ ըրած ստայօղ հաւատալիքներ կամ վարդապետութիւններ են հնարած : Ականջ զնենք ներշնչեալ առաքեալի մը այս մասին տուած խրատին . «Այլ թէ մեք՝ կամ հրեշտակ յերկնից աւետարանեցէ ձեզ աւելի քան զոր աւետարա-

(1) Ա. Կորնթ. 416, 17:

(2) Եւսեր. Պատմ. եկեղ. գիրք, Գ. գլ. 102:

(3) Գործք Ե. 29, 30:

նեցաքն ձեզ, նզովեալ լիցի: Որպէս յառաջագոյնն աւսացաք և արդ դարձեալ ասեմ, եթէ ոք աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր առիքն, նզովեալ լիցի» (1)

Մինչև 1836 թուականը՝ որ հինգ տարի կ'ըլլար Պորտի Միսիոնարներուն Հայոց մէջ մտնալը, տակաւին սկսած չէին յատկապէս Հայոց համար հրապարակային կրօնական պաշտամունքի և քարոզութեան, միայն թէ Մր. Ո. Կուտէլ իր բնակարանին մէջ լուր օրեր չարաթը երկու անգամ Սուրբ Գրոց մեկնութեան դոս մը ստիմանած էր որուն կը յաճախէին քանի մը Հայեր և Ճոյներ: Եւ այս նոյն թուականին Մր. Հ. Ճ. Օ. Տուայդ Բերտ, Անգլիացոց դեսպանատան քովի փողոցին մէջ իր բնակած տունին մէկ ընդարձակ սրահը մատուոյի կը վերածէ ու կը սկսի հրապարակային պաշտամունքի և քարոզութեան կիրակի և ուրբաթ օրեր, ուրբաթինը մասնաւորաբար կանանց համար ըլլալով, քանզի կանայք բաւական շատցած էին այդ ժամանակ:

Այս է այն թուականը ըստ Տուայդի սկսածութեան՝ որ մեր ազգայինք, մանաւանդ կղերներէ ոմանք որ հակառակ էին բարեկարգութեան գաղափարին, Ամիրա կոչուած սեղանաւորներուն ազդեցութիւնը քիչ բացառութիւնով կողմերնին սեննարով միաբանեցան այս գաղափարը խաբու ջնջելու. կը սկսին միսիոնարներու գործողութիւնները խափանելու ննարքներ խորհիլ: Ստեփան պատրիարք բարեկամ էր միսիոնարներու և բարեկարգութեան գաղափարին, իսկ փոխանորդը, Թագթագեան Պօղոս վարդապետ, իր մեծաւորէն գաղտուկ կը միանայ ամիրաներու հետ և կ'որոշին նախապէս խափանել այն բարձրագոյն վարժարանը որ Միսիոնարք բացեր էին Բերայի մէջ: Բայց որովհետև ուսման ճաշակն ու փա-

(1) Վաղ. Ա. 8, 9:

փաքը արթնցած էր ժողովուրդին մէջ՝ կը խորհին որ
 առանց իրենք ունենալու նոյն կարգի վարժարան չեն
 յաջողիր օտարինը խափանել. հետեւաբար կ'առաջադրեն
 ճեմարան ըսուած հաստատութիւնը բանալ որ ահա կա-
 ուեցուած է Իւսկիւտար, Ս. Կարապետ եկեղեցւոյ թա-
 ղը, Սէլամսըզ: Ուրախանալու բան է այդ առթիւ ճե-
 մարան բարձր անունով հաստատութիւն մը գոյանալը,
 բայց ցաւալի է որ իր կրած անունին և համբաւին եր-
 քեք չհամապատասխանեց: Քանզի նպատակին ծառա-
 յեցնելու մասին մեծամեծ դժուարութիւններու կը բազ-
 խէին: Յետոյ կը դիմեն այնպիսի անձնաւորութեան մը,
 որ իր հարստութիւնով, առատածեսութիւնով և բա-
 ցառիկ բնասորութիւնով ծանօթ էր ամենուն: Այն է
 Ճէզայիրեան Մկրտիչ Ամբասանորդ, որ յանձն կ'առնու իր
 բնակած Խասգիւղի Ս. Ներսէսեան վարժարանը իր խը-
 նամքին տակ և իր անհատական ծախքով նորոգել, վե-
 րածել պէտք եղած բարձրագոյն վարժարանի մը վիճա-
 կին, պայմանաւ որ ոչ ոք երբեք չի միջամտէ իր ձեռ-
 նարկութեան: Եւ իրօք վարժարանը կը պատրաստուի
 իր ամէն պէտքերովը: Եւ յայնժամ պատրիարքական
 փոխանորդ Թագթագեան վարդապետ կը հրաւիրէ Մի-
 սիոնարներու Բերայի վարժարանը յաճախող ուսանողնե-
 րու ծնողքը կրտսնամատարները, և վճռական կերպով
 կը հրամայէ սրղէսգի հանէն զաւակնին օտար վարժա-
 րանէն և տանին Խասգիւղ նորահաստաա բարձրագոյն
 վարժարանը զնեն, որ արդարեւ ամենայնիւ գովելի հան-
 դիսացած էր:

Ահա այսպիսեաւ կը խափանի նպատակուած միջո-
 նարական վարժարանը իրրեւ երկու տարուան մօտ չա-
 րունակուած ըլլալով: Բայց ո՛րքան մեծ կ'ըլլայ Թագ-
 թագեանի և իր համախոհներուն յուսախարութիւնը,

տեանելով որ խափսւնումի աշխատած վարժարաննուն տնօրէնը՝ Տէր Սահակեան, նոյն պաշտօնով և ձէզայիր- լեան Ամիրայի խնդրանքով Սասգիւղ բերուած է. փո- խանորդն ու իր համախոհներ ի զուր գը ջանաւ համոզել զձէզայիրլեան փոփոխութիւն մտցնելու, դի տնօրէնը իր պաշտօնին բաժարձակ աէլն էր՝ և Արժրունի Տէր Գէորգ որ հայկաբանութեան ուսուցիչն էր, երկու համամիտ և հա- մախոհ պաշտօնեաներ շատ լաւ և օգտակար կերպով կը վարէին իրենց ստանձնած պաշտօնը, և սիրալիր յարգանք վայելելէ դաս թէ սաներու և թէ անոնց ծնողքներու կողմէ, ձէզայիրլեան Ամիրայի գոհունակութիւնը եւս կը վայելէին: Ննօրէնն ինքը յատկապէս կրօնական դասա- խօսութիւն կ'ընէր ամէն օր, և սաներէն կարգ մը յա- ուաջողէմներ իրենց ծնողաց հետ կիրակի օրեր իսկ կէս օրէ երկու ժամ ետք Տնօրէնին տունը կը յաճախէին Ս. գրական մեկնութեան դասի: Արժրունի Տէր Գէորգ եւս սո որութիւն ունէր տունէ տուն այցելել յետ աւարտման վարժարանին Աւետարանի փրկարար վարդապետութիւն- ները քարոզելու և տարածելու և յաճախ գիւերները եւս:

Ձէզայիրլեան՝ եկեղեցւոյ ժամերգութիւններու բա- րեկարգութեանն ու կանոնաւորութեանն յոյժ նախան- ձաւորութիւն ունենալով՝ Սասգիւղի Ս. Ստեփանոս ե- կեղեցւոյ դպիրներու դասին բարեօքմանն ալ մեծ ու- շաղրութիւն ունեցաւ, և Պատրիարքական Մայր Եկե- ղեցւոյ երաժշտապետը զՏիրացու Արիստղոսմ Ի. թիւձեան իր պարագայիւքն հանդերձ Սասգիւղ կը փոխադրէ իր- բու ձայնողութեան դասատու իր վարժարանին, և դպրապետ եկեղեցւոյ: Տիրացու Արիստղոսմի պաշտօնա- վարութեան արդիւնաւորութիւնը առ հասարակ տես- նուած ու գիտյուած ըլլալով, ժամանակակից կողմներ կը խօսին մինչև ցարգ թէ ինչպէս այն տաճարը կը

չեցուէր ամէն կիրակի մայրաքաղաքին ամէն կողմերէն հոն դիմող խուռն բաղմութիւնով . երգեցողութիւնք և ընթերցմունք հիանալի, յատակ ու քաղցրալուր կ'ըլլային:

Իսկ բարեկարգութեան գաղափարին հակառակող կուսակցութիւնը տեսնելով որ վարժարանը իրենց յուսացածէն տարբեր ընթացքով յառաջ կ'երթայ, կսկսին Ամիրան նեղացնելու և վնասեցնելու կերպեր և միջոցներ ձեռք առնել յաճախ դպչելով անոր զգացումներուն և գանգատներ կը ներշնչեն աստ ու անդ վարժարանին նկատմամբ մինչեւ որ կը յաջողցնեն իրենց նպատակը: Ընկալիրեան խիստ դիւրազգած անձնաւորութիւն մըն էր և իր ձեռնարկած գործին դէմ եղած այնպիսի վարմուք համբերութիւնով տանելու խոհեմութիւնը կը պակսէր իր մէջ: Ուստի հրաժարեցաւ խնամակալութենէն և վարժարանը իր նախկին անչորք վիճակին դարձաւ ինչպէ՞ս որ է: Տնօրէնը կ'արձակուի, յառաջադէմ սաներ կը ցրուին, և ձայնագրութեան դասատուն ընկալիրեան տան դաստիարակ կ'առնուի:

Այս միջոցին Պօրտ ընկերութիւնը կ'որոշէ վերստին ունենալ մայրաքաղաքիս մէջ իր յատուկ վարժարանը ընդ տնօրէնութեամբ Տօք. Կ. Համլինի, բայց գործադրութիւնը ժամանակ մը կը յապաղի, թերևս Սասգիւղի վարժարանին կանոնաւորութիւնը տեսնելով և գոհ մընալով. բայց հիմա ի թուականին 1839, կը ժամանեն մայրաքաղաք Տօք. Կ. Համլին, որ նախ և առաջ հայերէն լեզուն ուսանիլ կսկսի ու կը պարապի դասատուութիւնով անգղիագէտ Աւետիս վարժապետին որ հարազատն է Յ. Տէր Սահակեանի: Եոյն ատեն Հ. Ծ. Օ. Տուայդ նօրեկ Համլինի ընկերակցութիւնով կարճ պտոյտի մը կ'ելլէ Նիկոմիդիոյ կողմը, և վերադարձնուն հետևեալ տեղեկագիրը կը կարդանք Մր. Տուայդի պատ-

մ. լ. թեան մէջ. «Նիկոմիդիոյ մէջ խումբ մը հայեր տեսանք որ լուսաւորեալ և շատ լաւ ըմբռնած էին ճրրիտատնէութեան այն հիմնական ու փրկարար վարդապետութիւնը որ, փրկութիւն՝ Ասատուծոյ ձրի շնորհքովն է: Լսեր էինք արդէն թէ հոն երկու քահանայ սկսէր էին քարոզել և տարածել այս փրկարար մեծ ճշմարտութիւն, ստանց մնզ երբեք տեսած ըլլալու:»

Արդարև ՏՅՑ թուականին մայրաքաղաքիս մէջ տեսնուած էին Նիկոմիդիացի երկու քահանայք արթուն և համարձակասոս, որ հոգեւոր և անձնական կրօնի և ձրի շնորհքով փրկութեան վրայ շատ եռանդով կը խօսէին որոնց մին էր Եղնակեան Տէր Վրթանէս և միւսը Տէր Յարութիւն Պաղտասարեան որք Ազաւնի Ստեփանն պատրիարքին ծանօթ մտերիմ ալ ըլլալնուն՝ ինքը փոխադրեց զանոնք Նիկոմիդիայէն վերին Վոսփոր, նոր գիւղ, նորահառոց եկեղեցին պաշտօնավարել, ուր չկար քահանայ: Եւ նոյն թուականի ամբանս եղանակին պատրիարքն ինքն եւս այդ գիւղը օգափոխութեան երթալով՝ երբեակ եկեղեցական հայրերու հանապազօրեայ խօսակցութեան նիւթը կ'ըլլայ եկեղեցիին բարեկարգութեան խնդիրը:

Բարեկարգութեան գաղափարը Կոստանդնուպոլսոյ մէջ այս թուականին այնքան եռանդով յառաջ կը տարուէր, որ խումբ մը գաղափարակիցներ («Բարեպաշտութեան Միաբանութիւն») ըսուած ընկերութիւն մը կը կազմեն և կեդրոնատեղի մը կ'ունենան ուր օրինաւորապէս ատեն ատեն հաւաքուելով այդ գաղափարին տարածման համար միջոցներ կը խորհին, զիրար կը քաջալերեն, կ'աղօթեն ևն. ևն.: Սոյն խումբը սկիզբը թէեւ փոքր, միայն տասներկու անձէ բաղկացած, բայց կանոնաւորութեամբ յառաջ երթալով կ'աճի ազգիս մէջ:

կունենայ վճարեալ մէկ հաստատուն քարտուղար, և իւրաքանչիւր հաւաքումի ատեն ժողովը վարելու և կառավարելու համար ընտրուած նախագահ մը: Քարտուղարին պաշտօնը կրկայ ժողովին արարքները արձանագրել և գաւառներու գաղտնիարակից ազգայիններու հետ ըստ օրինի թղթակցութիւններ կատարել:

Այս միաբանութեան առաջին գործն եղած է «Զգաստութեան Լնկերութիւն» անունով կազմաւորութիւն մը յառաջ բերել ազգիս մէջ որուն անդամակից եզոզներ կը պարտաւորէին խաղաւ հրաժարիլ ամէն տեսակ արբեցուցիչ կամ ոգելից անուէր ըմպելիքներէ, իրենք չգործածել ոչ ալ ուրիշներու տալ իրենց տունին մէջ. ասիկա թէ որ շարունակուէր, ազդեցութիւնը արդարեւ կրնար շատ մեծ լլալ ազգիս մէջ:

Միւս կողմէ բարեկարգութեան գաղտնիարին հակառակ կուսակցութիւնը Սասգիւղի վարժարանը խափանելու յաջողելէն յետոյ՝ կառաջադրէ յիշեալ բարեպաշտութեան միաբանութիւնը ևս ցրել և բոլորովին ջնջել, սակայն դժուարութեան կը բաղխի Ստեփան պատրիարքի ներկայութենէն. քանզի նորին սրբազանութիւն իր հեզանամայր և խոնարհ բնուորութիւնով շատ սիրելի ըլլալով ազգիս մեծամասնութեան, չէին կարծեր դիւրութիւնով զայն հրաժարեցնել: Արդ, կուսակցութեան ազդեցիկներն մանաւանդ ամիրաները որ աւերութեան մաս կարեոր դիրքեր ունէին՝ կը խորհին նպատակնուն հասնելու համար իրրեւ առաջին քայլ պատրիարքին ձերութիւնը պատրուակ ընելով անոր իշրն խորհրդական բերել Մարտուանու առա՛նորդ Սերովբեանց Յակոբոս և պիսկոպոսը և կը յաջողին. ձէզախրբեան Մկրտիչ ամիրա իրրեւ քինացեալ ու ետ կեցած ըլլալով ամէն ազգային և եկեղեցական դործերէ, ասպարէզը բոլորովին հակառակ կուսակցութեան ձեռքը անցած էր որոյ գլխաւորներն էին վաւօդապետ և ճարտարագետ ամիրաներն:

**Յակարոս իրեւ խորհրդական և ևն ա զործունէութիւնք .
Սեւիական պատերազմ կը երաժարի, խորհրդականը
կը պատերազմանայ :**

Այս երկու բարձրաստիճան եկեղեցականք՝ ընտ-
թեամբ և զազախարով իրարու հակադասակերներ էին .
վերջինը մանաւանդ մոկուանդ պահպանողական ու իր
առաջին զորձունէութիւնը ցոյց առաւ երկու ժիր և
վստատակաւ որ ուրիշ եկեղեցականներ լատինականութեան
թոյնել : Մին Վանայ աստջնորդ Սարայատրեան Յարու-
թիւն եպիսկոպոս , միսր Պատրիարքական Մար և կե-
ղեցուց լուսարարագիտար Չալքք Տէր Վրթանէս :

Յետոյ երկրորդ զործունէութիւն 1839 փետրուարի
մէջ պատրիարքարանի բարապանք յանկարծ կը ձերբա-
կալեն զՅովհաննէս Տէր Սահակեան և զՖիզիքա Պօղոս
վարժապետ և ուղղակի կը տանին կը բանտարկեն ա-
ռանց որ և է զատատանի ու հարչաքննութեան : Ա-
տոնք ամէն հազորդակցութենէ զուրկ չորս օր կը մնան
մինչև տարագրութեան հրամանագիր ստացուիլը , հասար
ոսարկաններու հակողութեամբ կը տարագրուին Կեսարիոյ
Ս . Կարապետի վանքը , Իւսկիտարէն ցամաքի ճամբով
զառն տառապանք կրելով ձմեռ ժամանակ : Նոյն ատեն
տարօրինակ զրոյցներ կը լսուի ազէտ հասարակութեան
մէջ իբր թէ տարագրուողք կախարդական ոսկիներ կու-
տան եղբ իրենց զազախարները ընդունողներու որ չեն
հասնիր որքան ալ ծախսուին . բայց այդ ոսկիներն ըն-
դունողներ երբ խոստմնագրուժ գանուին ու դառնան ,
այն ատեն ոսկիները թուղթի կը փոխուին իրենք ալ
չարաչար կը մնանին :

Այս օրինակ սուսեր ու եպերեկի զրպարաութիւններ իններորդ դարու Թոնդրակեցի քրիստոնեաներու համար ալ խօսուած ըլլալ կը պատմէ Կեղեցիք անուն գերման հայագէտ մասննագիրը : (1)

Յովհաննէս Տէր Սահակեան ձերբակալուած ժամանակը բարեպաշտութեան միարանութեան քարտուղարն ըլլալով նոյն միարանութեան գործոց վերաբերեալ արձանագրութիւններ և գաւառներէ եկած բազում նամակներ ունէր, և թէ ատոնք անցնէին Յակոբոսի ձեռքն ուրիշ շատ մարդիկ ալ պիտի մատնուէին : Սակայն բանտարկեալը խոհեմ կը գտնուէր բանալին պատուհանէն պատուրել եզրօրն շուտով հեռացնել տունէն ամէն գրութիւն և նամակ : Եղբայրն փութով կատարելու վրայ կրկնայ այդ հրամանը, սակայն նա ամէն բան ծրարած դեռ տունէն չմեկնած՝ կը հասնին պատրիարքարանի խուզարկուք, և Աւետիս հազիւ տան ետի կողմէն ծրարն ի ձեռին կը խուսափի և հասցնեալով Բերա Պատ. Ո. Կուտէլի տունը շունչ կառնէ ուր տակաւին կը գտնուէր Պատ. Կ. Համլին հիւր :

Արդ, կարդանք այս մասին Պատ. Կ. Համլինի գրածը իր պատմութեան մէջ : « Հայերէնի դասատուս աստու մը սովորական ատենին չերեցաւ, իսկ կէս օրէն ետք եկաւ հնչասպառ և ծրար մը ձգեց առջևս բսելով՝ Պատ. Համլին, ասիկայ Աստուծմէ և, եղբայրս բանտարկուած է իր աւետարանական ծանօթ գաղափարներուն համար » : Դասատուն չհամարձակիր այլևս շարունակել պաշտօնը, և հրաժեշտ տալով կը մեկնի :

Ստեփան պատրիարք պարտապ տեղը այս անողոք խստութիւնն ու հալածանքը զաղբեցնել կաշխատի և

(1) Հանդէս ամսօրեայ, 1897, ապրիլ 4. երես 102, սիւն. 2:

Թերևս իր անձին համար իսկ երկիւղ կրկնով կը հրածարի, և խորհրդականը իսկոյն կը բարձրանայ կրկայ պատրիարք: Եւ ինչպէս խորհրդականութեանն առաջին գործունէութիւնն էր երկու վաստակաւոր կղեր թուցնել լատինականութիւն՝ այնպէս և պատրիարքութեանն առաջին գործունէութիւնը կրկայ Արժրուէի աէր Գէորգ քահանան երկու վարդապետներու հետ Չորրու տարագրել իբրև ամիսի մը չափ բանտարկեալ պահելէ ետք մինչև պատրիարքութեան հրամանագիր ստացելը: Ասոնցմէ ետք կարգը կուգայ Երեւանցի Մեսրոպը Վարժապետ Թաղիանդեանցի որ 1838 թուականին Կոստանդնուպօլիս եկած և քիչ ժամանակ Գուսկունձուք արքունի ճարտարագետ Սէրվէրեան Յովհաննէս ամիրայի տան վարժապետութեան մտած էր:

Գիւղին քարոզիչ Յովհաննէս վարդապետ, Յակոբօսի մէկ ձեռնաստուն լինելով, կը նշմարէ Թաղիադեանցի բարեկարգութեանց գաղափարակից լլլալը, Մերվերեան որ խիստ մոլեռանդ հակառակորդ մըն էր այն դաղափարին, առկէ անոր մտքին մէջ անմահ գծտութիւն կը ծագի հէզ վարժապետին դէմ, որ կը ձգէ պաշտօնը ու կը հրածարի: Եւ որովհետև Պատ. Կ. Համին գրկուած էր իր դասատուէն և կարօտ էր ուրիշիմը, Թաղիադեանց բարեկամի մը միջոցով կառաջարկուի անոր և կընդունուի: Արդ քիչ ժամանակ ետքը՝ տեսնենք ինչ կըսէ Միսիոնարը: Մեսրոպը, Գ. Թաղիաթեանց հայերէնի ուսուցիչս մեր բնակարանի և մեր բնտանիքին մէջ բնդուներ էինք սիրով որ ճշմարտապէս բարեկիրթ և մշակուած մտքի աէր քրիստոնեայ մը լլլալուն համար համարումնիս օրքան զօր կաւելնար վրան: Ինքը շատ տարիներ բնակած էր Կալկաթայի մէջ անգղիացիներէն լատագոյն բնտանեայ հետ, և անգղիական պատմութեան և գրականութեան

քաջանմուտ լինելով հանդերձ իր հոգին բոցալառուած էր հայ սլառանիններ դաստիարակելու եռանդով, քանզի օգտակար և երջանիկ կեանք անցնելու համար այս էր իր գաղափարականը: Օր մըն ալ սահմանուած ժամանակին իզուր կոպասէի դասատուիս գալուն երբ ուս գեսպանատան պաշտօնեայ մը տուժալի մը բերաւ ինձ և ըսաւ. «Կարդո՛ւ տփկա և պահանջուածը շուտով կատարէ.» կարգացի որ դասատուս կը խնդրէր մեր տան մէջ իր ունեցածը տալ թղթաբերին, և աղօթք ընել իրեն համար որ անձանօթ ճամբորդութիւն մը ընելու վրայ էր: Այս անակնկալ դէպքը շատ զարմանալի էր, բայց շուտ իմացանք որ Պօնիթէլ, Ռուսիոյ դեսպանը, հէք դասատուս ձերբակալել տուած էր Ռուսաստան զրկելու համար արդէն Սիպեր զրկելու ամէն կարգադրութիւն եղած բլլալով: Մր. Ո. Կուտէլ դեսպանին ղիմեց թերևս կարենար ազատելու, բայց ի զուր ինչու որ արտէն դրուած էր Տրասպիզանի շոգենաւը: (1)

Արդ, տեսնենք թէ այս Սիպիրիոյ տաժանելի տարագրութեան տարուած ու շոգենաւ դրուած Թագիաթեանցը՝ նախախնամարար ինչ պատահամբ շոգենաւէն ազատ իրբև ազնուական ճամբորդ ցամաք ելած ու վոխանակ Ռուսիոյ ապահով Կալկաթա ժամանած ու հետեւեալ նամակը գրած է իր բարեկամներուն:

«Բարձրատիճան Աէթեան և Վարոն Անգրէաս, Պարոն Ուուպելով»

«Փայ առ ձեզ թուղթ իմ ի ծագաց Հոգևաստանի, ցուցանել ձեզ զփրկութիւն նախախնամութեանն, որ ի վտանգ, ընդ մահ և ընդ կորուստ, անլրդով պաշտպանեալ հասոյց աստանոր անլուսս յարուցանել վերստին զփառս: Ամաչեսցեն, որք ի նանիր հպածեսցեն զանձն իմ:

(1) Էմբել սնի բրբն Սայրս Համիլն. գրուի, Գ. երես, 32:

(Այդ ժամանակի Գուղկունճուքի քարոզիչն էր Յովհաննէս վարդապետ, ձեռնասուն կամ աշակերտ Յակովբոսի: Սա՛ որ մը Սերվերեան տան մէջ Թաղեաթեանցի վարժապետ եղած ատեն, չոն գտնուելով՝ իբր թէ վարժապետին դասատուութեան կերպէն բողոքականութեան հոտ կ'անէ, և կ'երթայ կը դըստորէ Սէրվերեանի միտքը անոր սիրած վարժապետին վրայ: Սերվերեան ամիրան որ յոյժ մոլեռանդ հակառակորդ մըն էր քարեկարգութեան գաղափարին, վարդապետին բանասարկութիւնովը կը գժտի վարժապետին, որմէ կը պատճառի Թաղիաթեանցի հրամարիլը:) Եթէ տեղեակ լինէիք դատազարտ հալածանաց իմոց ի Պօլիս, Յովհաննու ճարտարապետի անմահ գժտութեանն, երկու հարիւր քսակաց կաշառոյն և դաւաճանութեանն, զի լուկեայն կալեալ զիս առաքեսցեն ի Սիրիբ իբրև գժահապարտ . . . :

Բարեկամք իմ ի Պօլիս, տակաւին անտեղեակք են կենդանութեան իմոյ, տմանք համարեն ի մահ, և ոմանք ի Սիրիբիա վտարեալ զիս»:

Կալկարա, «Պիչօբս» գօլլէն
Փետր. 20, 1841

Ձերդ խոնարհ
Մ. Գ. ԹԱՂԻԱԹԵԱՆՆՅ

Կը գիտենք թէ այդ նամակին մէջ մութ ձգուած պարագայ մը կայ . . . կէտից տակ, թերեւս խոհեմութիւն համարած բլայ չյայանել զայն իր բարեկամներուն: Աւասիկ:

Ամերիկացի միտիոնար մը Մր. Էյքս անուն որ Պատ. Կ. Համլինի բարեկամն բլարով տեսնուած կ'ըլլայ մեր քաջ անգղիագէտ Թաղիաթեանցին հետ անոր բարեկամին տունը վարժապետութիւնը բրած մըջոցին: Մր. Էյքս նոյն շոգենաւին մէջ կ'ըլլայ բարեբախտաբար իբր ճամ-

բորդ , և տեսնելով զերևանցին տխուր նստած ճամբորդ-
 ներուն մէջ , կը հարցնէ անոր թէ ո՞ր կ'երթայ և ինչու
 ձգած է դասատուութիւնը , և տեղեկանալով տխուր
 մարդուն վիճակին և վտանգաւոր ճամբորդութեան՝ շատ
 կը ցաւի : Նոգենաւը թէպէտ օամանցի գրօշակ ունէր ,
 բայց Պէնճ—Փօրտ անուն անգղիացի նաւապետի մը
 յանձնուած էր : Մր . էյքս կը հարցնէ Թաղիաթեանցին
 թէ կա՞յ նաւին մէջ զինքը ճանչցող կամ ուր զրկուիլը
 գիացող . նա՛ «ոչ ոք» կը պատասխանէ , որովհետեւ նաւ
 դրուած էր այն կարգադրութիւնով որ շոգենաւը Տրա-
 պիլոն ժամանելուն անմիջապէս տեղւոյն հիւպատոսը
 պիտի առնէր զրկէր : Յայնժամ Մր . էյքս կը տանի զա-
 նիկա նաւապետին սենեակը , պատմել կուտայ բոլոր եղե-
 լութիւնը նաւապետին տկանջին ամէն պարագաներովը :
 Նաւապետը յոյժ կը զայրազայ իրրեւ ազատամիտ ան-
 գղիացի , և մէկէն ի մէկ կ'առաջարկէ որ Թաղիաթեանց
 սուստիան անձագիրն ու բոլոր ունեցածը որ կրնային
 անձը մասնել՝ ծրարելով ծով նետէ , ամիլուի մորուքովն
 ու պիտերով և բոլորովին անգղիացիի կերպարանք մը ա-
 նայ . փոխակերպութիւն մը սրով Երևանցին իսկ պիտի
 չճանչնար ինքզինք : Այսպէս ընել միաբանած և բրած
 չարունակ անգղիերէն խօսելու պայմանով նաւին մէջ
 վեր կ'ելլեն Մր . էյքսին հետ կը չըջին և կամրջակը կ'ել-
 լին կը խօսին իրարու եւ , բայց նաւը Տրապիլոն ժամա-
 նելուն հոն խնդիր կը ծագի միաքերնուն մէջ թէ առանց
 բասթորթի ինչպէս ցամաք պիտի ելլէ : Այս դժուարու-
 թեան առջեւն ալ այսպէս կ'առնեն . Մր . էյքսի բաս-
 րօրթով առաջ ամերիկացի ճէնթիմէնի մը պէս Թաղիաթ-
 եանց կ'ելլէ ցամաք ապահով , և ուղղակի կ'երթայ ան-
 գղիացոց հիւպատոսին և ըստ կարգադրութեան նաւա-
 պետին և Մր . էյքսի , կը հասկցնէ եղելութիւնը , և հիւ-

պատուը կառավարութեան թողաուութիւնով կ'առնէ շոգենաւէն զՄր. Էյքս՝ պատուով: (1)

Տէր Յովաննէս Մկրեան խաչակիր աւագ քահանայ, որ Խրիմեան Հայրիկի և Վարժապետեան ներսէս պատրիարքներու օրերով փոխանորդութեան պաշտօնով իսկ ծառայած է Աղզիս, իր յօրինած մէկ գրքոյկին մէջ րսած է.

«Յակովբոս սրբազան՝ դեռ նոր պատրիարք եղած, առաջին գործունէութիւն համարած էր իւրեան՝ Ամերիկացի միսիոնարաց բարեւ տուողներն իսկ՝ ի կրօնս կասկածելի դասելով՝ անմիջապէս աքսոր ուղարկել... Այս կասկածանքն հետզհետէ այն աստիճանի հասած էր ի Կոստանդնուպոլիս, որ աւետարանէն խօսք մը բերան առնողին, և կամ կարկի եղածին չափ մաքուր հայերէն խօսողին և մինչև իսկ «այո և ոչ» բառերը գործածողները կասկածելի էին համարում և իրրեւ բողոքական նկատում: Այս ընթացքը՝ կասկած, աքսոր և հալածանք մեծ միաս պատճառեց աղգին, մանաւանդ Մատթէոս առաջինի պատրիարքութեան ժամանակ, յորում խումբ մը Հայեր բաժնուհցան աղգէն և առանձին ժողովրդուպետութիւն կազմեցին:» (2)

1839 Մարտ ամսոյն մէջ Կիւրակէ որ մը մայրաքաղաքիս աղգային բովանդակ եկեղեցիներու բնմբէն Յակովբոսի սրտարիարքական կոնդակը կը կարդացուի, որով կարգիւր Չմիւսնիոյ Կուլիէլմոս Կրիֆիթի տպարանէն ելած ամէն գրքերու, տնարակներու և մինչև իսկ Աստուածաշունչի և Աւետարանի ընթերցեմը: Նաև կը պատուիրեր այդ կարգի գրքեր ունեցողներու որ կամ

(1) Պատմ. Կ. Համլին, գլ. 9. եր. 32 եւն.

(2) Յուելուած արձագանցի կենսալուրբեան Թաղիաբեանցի, երես 110:

իրենք այրին և կամ պատրիարքարանին յանձնեն այրելու համար: Նոյն օրը տիրացու Արխուդրմ Իւթիւճեան որ յետոյ առաջին Աւետարանական եկեցւոյ Հովիւ, տակաւն իր հայրենի աւանդութիւններու խիստ նախանձաւոր գոնուելով, հանգոյն Սողոսի, իր աան պարտէզը կրակ կը վառէ ու կայրէ իր բոլոր ունեցածը համարելով թէ Աստուծոյ պաշտօն կը մատուցանէ:

Բարեկարգութեան հակառակ կուսակցութիւնը այս ամէն եղելութիւնները տեսնելով կը կարծէր թէ շնորհիւ Ստեփան պատրիարքի վոխոխութեան ամէն ինչ իր նըպատակին նպատաւոր եղած էր: Անիրաւութիւն, դաւաճանութիւն, գրպարտութիւն, առ հասարակ ներկի և թերեւս ոմանց համար առաքինութիւն իսկ կը համարուէին, ոմանք ալ ծանր և սոսկալի յիշոցներ կարտասանէին իբրև եկեղեցւոյ հարազատ զաւակ ճանչցուելու համար: Ուստի բաւ բանին, «Յետս հատան իրաւունք, և արդարութիւն հեռացաւ ի մէնջ, զի դթեցաւ ի հրատարակի ճշմարտութիւն, և ուղութիւն ո՛չ կուրաց մասնել և արդարութիւն բարձաւ ի նոցանէ, և ճշմարտութիւն պակասեաց, և որ իրաց կայ ի շարութիւնէ կողոպտի: Ետև Տէր՝ և ո՛չ հաճեցաւ, զի ո՛չ գոյին իրաւունք: (1) Ուստի այդ ժամանակ նախախնամութիւնս զարմանալի կերպով յանկարծ փոխեց իրերու կացութիւնը քանի մը անակնկալ դէպքի պատահումով, յորմէ ճշմարտութեան հակառակող իշխաւոթութիւններ ծանր մտահոգութիւններու մասնուած, պարտաւորեցան իրենց համար առաւել ծանրակշիռ խնդիրներու դարձնել ուշադրութիւննին:

Այս դէպքերու առաջինն էր Եգիպտոսի մէջ պատահածը, այն է Մէհմէա Ալի փաշայի ապստամբութիւնը որով երկիրը ասպնապալից կացութեան մը փոխարկեցաւ:

(1) Եսայ. 41. ԺԹ. 14, 15:

Նաև Սուլթան Մտհումա մեռաւ 1839 Յուլիոսի առաջին օրն , և գահակալեց Սուլթան Ապալու Մէճրա : Յետոյ Բերայի մեծ հրդեհը տեղի ունեցաւ որ չորս հարիւրէ աւելի բնակարան այրեցաւ ու բազում կեանքեր կորան : Նոյն թուականի Նոյեմբերի մէջ Օսմանեան տէրութեան նոր օրէնսդրութիւնը , թանգիմաթ հաստատուեցաւ կիւլճանէ ըսուած հրատարակին վրայ ի ներկայութեան նոր գահակալին և իր ամբողջ աւագանւոյն , օտար դեսպաններու և հպատակ ազգերու պետերուն և խուան բաղմութեան : Աոյն նոր օրէնսդրութեան հրովարտակը անդ կարգացուեցաւ ի լուր ամենուն որ ստեն կայսրն ու բոլոր ժողովուրդը յսանկայս կունկնդրէին :

Ութ օր ետք՝ պատրիարքարանի մէջ ամիրաներու ժողով կը դումարի և երկար բննականութենէ վերջ որոշում կըլլայ տարագրեալներու վերադարձին , անտարակոյս նոր օրէնսդրութեան շնորհիւ : Եւ Յակովբոս պատրիարք սեանելով որ այլևս հնար չէ պահել իր զիրքը , և ամիրաներն նոր օրէնսդրութեան բերմամբ իրենց անձնական հաշիւներով կզբաղէին և կարող չէին իրենց թեթիկունք ըլլալ՝ վերջապէս կը պարտաւորին հրամարիլ : Հետեարար 1840 Նոյեմբերի մէջ նախորդն Ստեփաննոս վերստեն կընարուի ընդհանուր ամիրաներու համահաճութիւնով :

Այդ եղելութիւններու միջոցին երկու բան շատ որոշակի կը տեսնուի մէկը այն , որ Աստուած տգիտութեան թանցր մարախուղը որ կը տիրեր ազգերնուս վրայ , զայն փարատելու համար իւր սուրբ խօսքը կը տարածէր իբրև ճրագ լուսատու , միւսն ալ այն՝ որ իր բարի նախախնամութիւնով իր լոյսին հակառակողներուն խորհուրդները ի դերև կը հանէր պահպանելով լոյսը սիրող ու վայն տարածել ջանացող տկար արարածները :

Կրօնական համոզումներու դէմ եղած հալածանք այնքան
անիրաւ ու այնքան հակառակ է մարդկային սրտի բարձր
զգացումին, որ քիչեր կրնան համարձակ խոստովանիլ
թէ մասնակից եղած են անոր: Յակովբոս ինքն իսկ յետ
հրաժարելոյն ըսած է իր եղբօր, «Ես սրտով հակառակ
էի եղած հալածանքներուն, բայց ամիրաներուն ստիպու-
մովն ըրի»:

Կրօնական ցարժման վիճակը.— Նիկոմիդիացի երկու
 Բահանաներ.— Տիրացու Արխողոս և Իւրիւն-
 եան.— Եզրակ Տէր Վարանէս և Նիկոմիդիա

Գանձ որ տարագիրներու վերադարձի և Սանտիան-
 նոսի վերահաստատմանն ատեն կրօնական շարժումը ի՛նչ
 վիճակի մէջ էր, լքուած թէ զօրացած. լքուած չէր
 կրնար ըլլալ, զի Հայը միշտ ճշմարտախնդիր ըլլալու
 մասնաւոր միտումն ունի, մանաւանդ կրօնքի մէջ: Թէ-
 պէտ այլևայլ պատճառներով երբեմն լռին ու հանդարտ,
 բայց միշտ յառաջդիրական շարժման մէջ:

Արծրունի Տէր Գէորգ՝ իր հռամսեայ տարագրու-
 թենէն վերադարձին առաւել համարձակ կը խօսէր իր
 յոյսին պատճառը, և իր առջև բաց էր հարուստի ու
 աղքատի դռներ առ հասարակ, զի ամենուն սիրելի էր
 և չէր դադրեր քարոզելէ որ փրկութիւն Աստուծոյ ձրի
 պարգևն է մեղաւոր մարդուն ի ձեռն Յիսուսի Գրիս-
 տոսի: (1)

Եղնակ տէր Վրթանէս և տէր Յարութիւն Պաղտա-
 սարեան Նիկոմիդիացի երկու քահանայք որոնց նոր Գիւղ
 հաստատուելուն առթիւ խօսուեցաւ նախօրդ զլիսոյ մէջ,
 մայրաքաղաքի ժխորէն անջատ գտնուելովն զերծ էին
 հալածանաց հոսանքս իյնալէ: Նոյն ատեն իրենց կոչման
 պարտաւորութեան զանցառու չէին, քանզի միայն ծի-
 սականութեան հետևողութիւնով չէր ասոնց եկեղեցւոյ
 մէջ արտասանած մաղթանքը որ կըսէին. «Վասն ի գի-
 շերի և ի սունջկան և յամենայն ժամու խօսիլ մեզ զբան
 Տեառն զՏէր աղաչեցուք», այլ արտասանուած մաղթան-

(1) Հն.միլ. 4. 24:

քին դորութիւնը զգալով՝ կը ջանային ժողովուրդը առաջնորդել ճշմարտութեան գիտութեանը: Այս ըսածնուս իրրև ապացոյց հետեւեալ իրողութիւնը յառաջ բերել բաւական կը համարենք:

Տիրացու Արխտովոմ Խ. Իւթիւճեան երէց հարազատն մեր, որու մասին ակնարկութիւնն եղաւ նախորդ գլխոյ մէջ և այլուր, սովոր էր հինգ տաղաւարներու ալ անպատճառ խոստովանիլ և հաղորդիլ: Նաւակաաթի գիշերներ գրեթէ անքուն կաղօթէր: Անկողնին քով կունենար պատրաստ Սաղմոս, Նարեկ, Ժամագիրք և Շաքական. այդ գիրքերէն կարգաւ կը կարդար երբեմն լրիկ ու երբեմն մեղմ ձայնով ապաշխարութեան շարսկան կերգեր: Առաւօտուն ժամակոչի ձայն լսածին պէս կը պատրաստուէր երթալ եկեղեցի, իսկ նախ ծնողացն ու եզրայրներուն կերթար մեղմ կերպով կարթնցնէր ամենէն դատ դատ ներում կը խնդրէր ապա կերթար եկեղեցի, և քահանայէն «ողորմեցի» ի արարողութիւնն ևս առնելով կը հաղորդուէր այնպէս որ յետ ժամանակի կրնար ըսել ըստ առաքելոյն, «ծիսականութեան կողմէ անարատ էի»: (1)

Գանք որ ձէգախրիւան ամիրտ ամրան եղանակները սովորաբար նոր գիւղ կերթար, և տիրացու Արխտովոմ տան դաստիարակ ըլլալով պարտաւոր էր միատեղ ըլլալ, ուստի 1840 թուականի Վարդաւառի տօնին նոր գիւղ գտնուելով տեղւոյն քահանաներէն միոյն խոստովանիլ կորոչէ ի պատրաստութիւն հաղորդութեան: Արդ, նախախնամաբար այդ քահանայ Եղնակ տէր Վրթանէս կրլայ, յետ խոստովանութեանն մինչ կսպասէ տիրացու Արխտովոմ ապաշխարանքի գործքեր լսել խոստովանանքի մէջն որպէս սովորութիւն է, այսչափ Սաղմոս այսչափ

(1) Փիլիպ. Գ. 6

Նարեկ կարդալ, ևն. ևն. սակայն իրեն անծանօթ այս քահանան կսկսի քարոզել ըստ Աւետարանի ճշմարիտ ապաշխարութեան ի՛նչ ըլլալը և հաղորդութեան բնութիւնը և կը յաւելու. «Որդե՛ակ դու, եթէ կզգաս մեղքին ծանրութիւնը և կը դարչիս անկէ ինչպէս մարդ մը կը դարչի ամենապիղծ ու գարշահոտ իրերէ, և կը գոչես՝ ո՛վ պիտի աղատէ զիս, ա՛նա ես պաշտօն ունիմ առաջնորդի գլխի ի Քրիստոս՝ զի գրեալ է «Եւ արիւնն Յիսուսի որդւոյ նորա սրբէ զմեզ յամենայն մեղաց» (1)

Անա այն նոյն բողոքին փրկութիւն փնտռող տիրացու Արիստողոմ հաւատարիմ քարոզչին սոյն թանկագին խօսքերը լսելով յարտասուս կը փղձկի, և ճշմարտութեան վճիռ լսյսը կը թափանցէ անոր երիտասարդ սրտին ու հոգիին, որովհետև շնորհաց խօսք աւետարանուած էր, ու ինքը հաւատացեր և ընդուներ էր զայն: Եւ ալ այնուհետև կը մերժէ իւր իր արժանաւորութեանը փոխարէն փրկութիւն ստանալու սին խորհուրդը և վստահութիւնով կապաւինի շնորհաց Աստուծոյն ի Քրիստոս Յիսուս: Եւ հրը ամորանոցէն Խասգիւղ կը փրտողառնան, սա՛ առաջին անգամ իր ծնողաց բնակարանը գալուն ծրնողքն ու եզրայրները անոր խօսուածքին ու վարքին մէջ փոփոխութիւն մը կը նշմարեն, և ճաշէն հոք հրը ամէնքը իրենց սովորական խօսակցութիւններով ժամանակ կանչունէին, ախրայու Արիստողոմ բացաւ գրաբար նոր Կտակարանը և ինդրելով որ ամէնքը ուշադրութիւնով մտիկ ընեն, սկսաւ Գործք Առաքելոցի առաջին գլուխէն կարդալ տուն առ տուն, բացատրութիւններ տալով իր պերճաբան լեզուով, յետոյ ազօթք ընել ուղից և աշխարհաբար լեզուաւ շատ եռանդուն ու սրտաուռ ազօթք մը արտասանեց, որ բոլորովին նոր էր ընտանեաց ան-

(1) Ա. Յովն. Ա. 7:

դամներուն, քանզի իրենց մինչև այն ատեն մատուցած ընտանեկան աղօթքներէն տարրեր էր :

Տիրացու Արիստղոմի կեանքին մէջ եղած այս փոփոխութիւն՝ անոր սրտին մէջ բարեացակամութիւն յառաջ բերած էր դէպի իր ընկերներն, անանկ որ չէր կրնար անհաճոյ ընթացքի մէջ տեսնել զանոնք առանց կարեկցելու և տանջուելու սրտին մէջ թէ ինչպէս և ի՛նչ միջոցներով կարելի կրնար ըլլալ զանոնք ուղղութեան բերել : Նշան Յովսէփեան, շատերու ծանօթ խեղկատակը, թէև պատուաւոր ընտանիքի վերաբերեալ ոք՝ ձմրան գիշեր մը ձեզախրդեան ամիրայն տան մէջ խաղեր կը կատարէր ուրիշ հացկատակներու հետ, և տիրացու Արիստղոմ իր խուցը առանձնացած աղօթք կընէր անոր համար որպէս զի Աստուած զգաստութիւն տայ անոր և ողորմի այն բարեհամբաւ ծնողաց որոց կը վերաբերի նա, որ իր սիրելի բարեկամներն են : Նոյն պահուն Նշան կայցելէ իրեն համար աղօթողին խուցը, և դուռը փակ գտնելով կը լսէ անոր աղօթի մրմունջը որ զգաստութիւն և շնորհք կը խնդրէ իր բարեկամին համար, որոյ անունըն ալ յիշելով : Նշան կը կայնի հոն մինչև աղօթքը վերջանալը, ու այնքան կզգածուի որ նոյն տեղ կզգայ իր վիճակին վատթարութիւնը, և սղորմութեամբն Աստուծոյ կուխտէ իր ընթացքը փոխել : Այսպէս ըլլալ խոստովանած է Նշան ինքը իր դարձը յետ ժամանակի, որ իրօք ապրած է այնուհետև իրրև զգաստ, պարկեշտ և Քրիստոնեայ մարդ : միշտ երախտապարտ ճանչնալով ինքզինք իր ճշմարիտ բարեկամին որ աղօթք բրած էր իրեն համար :

Եզնուկ տէր Վրթանէս իրրև պարտաճանաչ, փութաջան և եռանդոտ քահանայ, նոյն ատեն և աշխատատէր, Նոր գիւղը շատ նեղ կը համարէ իրեն. մանաւանդ ձրմուսները ընդհանրապէս շատեր թողլով ամարանոցնին :

քաղաք կիջնան և գիւղը ամայի վայր կը դառնայ, մինչ շոգենաւի երթեւեկութիւն չկար այն տտեհներ Վաստորի վրայ: Քահանան կը հրատարի և բնակութիւնը Պոլսոյ մէկ բաղամամարդ և հայաբնակ թաղը կերթայ կը հաստատէ: Իսկ հոն որովհետև կը սկսուէր իրեն համար ապրուստի միջոց, բնակած տան մէջ նախակրթարան դրպրոց մը կը բանայ իր ամուսնացեալ գտտիր հետ, այնպէս գպրոցին եկամուտովն ու քարեկամներու նպաստով ընտանեկան աղքատիկ ապրուստը կը հայթայթէ սուանց Մայր եկեղեցւոյ հետ ապրուստի մասին կապակցութիւն ունենալու: Նոյն տտեն իրրեւ հիւր, ժամերգութիւններու միշտ կը մասնակցի՝ մանաւանդ կիրակի օրեր:

Նոյնպէս իր ընկերը, Տէր Յարութիւն Պաղտաստըհան գիւղի եկեղեցւոյն պաշտօնավարութիւնէն կը հրատարի կ'երթայ հարներիր և իր տան մէջ նախակրթական դպրոց կը հաստատէ որպէս ըրած էր իր ընկերը: Եւ երկու քահանայք, մին Պօլիս և միւսը Նիկոմիդիա, ևս սանդով կը քարոզեն արքայութեան շնորհաց Աւետարանը տունէ տուն:

Նախկին Զաքարիա պատրիարքի եղբորորդի Տէր Պօղոսեան Զաքարիա վարդապետ միաբան Արմաշու, ի վաղուց լատինականութեան գայած մէկը, յետոյ իրրեւ ապաշաւ կը վերադառնայ յԱրմաշ և կ'ընդունուի: Բայց դրսուանց ապաշաւ, իսկ ներսուանց կեղծ ոք և գաղտնի գործակատար լատին բրորականտայի: Սոյն նենգաւոր անձի որովմացանութիւնով խառնութիւն կը ծագի Նիկոմիդիոյ ազէա հասարակութեան մէջ, և տարածայնութիւն կ'ելլէ որ շատեր լատինականութեան դիմել կը պատրաստուին: Սոյն տարածայնութիւնէն շատ կը յուզուի Ստեփան պատրիարք, և Եզնակ Տէր Վրթանէսի խոհեմութեանն ու գործունէութեանը մօտէն գիտակ ըլ-

լալով՝ իբրև խաղաղութեան պատուիրակ կ'առաքէ զայն Նիկոմիդիա :

Եզնակ Տէր Վրթանէս կ'երթայ Նիկոմիդիա առանց իրեն յանձնուած գործին պաշտօնական երեւոյթ տալու իբրև միայն խաղաղութեան պաշտօնեայ, բնաւ չմիջամտեր խռովութեան մանրամասնութիւններու այլ ամենայն խոհեմութիւնով և զգուշաւորութիւնով կ'աշխատի պառակտուած ժողովուրդն ի սէր և ի միաբանութիւն ածել : Եւ զարմանալի չէ որ այս ընթացքով խաղաղութեան հաւատարիմ պաշտօնեան քիչ ժամանակի մէջ մեծ յաջողութիւն կ'ունենայ անանկ որ խռովութեան սերմնացան անօրէնն իսկ որ ծածուկ կը գործէր, յուսախար և սոթահար եղած կ'երթայ բուն իր տեղն ուստիք եկած էր : Քահանան այսպէս կտտարելով իրեն յանձնարարուած պաշտօնը կը գրէ Պատրիարքարանին և Նրաման կը խնդրէ Պօլիս վերադառնալու, սակայն պատասխան կըստանայ չաճապարել, աւասիկ պատասխանին պատճէնը

«Առ բարեշնոր՝ Տէր Վրթանէս քահանայ. սէր իմ».

Յօրէ անտի մեկնելոյ քո աստի, գրեթէ համարէաք և գուշակէաք զօր մտի քո և գրելոյ նամակ ծանուցարար : Այսօր ընկալաք զնամակ աւետարեր, գրեթէ խոզօղեցան սիրտք մեր և հանգեան ազմկացեալ խորհուրդք մտաց մերոց իսպառ փարատեալ : Քանզի մանաւանդ յետ գնալոյ քո աստի, այնչափ յաճախեցան այս բանք ի լսելիս մեր ի բերանոյ հակառակորդաց մինչև մտանալ զխռովութիւն ճեմարայի և զայս պատմեալ ընկեր շնկերի իւր թէ ի Նիկոմիդիա շրջեալք իցին ի կրօնս լատինաց իրր հօթմանասուն տունք : Օրհնեալ է Տէր ի պարգևս իւր, զի յայսմ կողմանէ զլիսովին մխրթարեաց զմեզ, և այն բաւական, չյիշեմք այլ վիշտս մեր զի թեթեւագոյն համարին առ նովաւ :

«Այլ ի վերայ այսր ամենայնի, հարկ է քեզ մնալ և չփութալ յայս կողմն և եթէ պէտք ինչ իցեն ձեզ ծանուցանել տան ձերում, գրեա՛յ մեզ և հոգացցուք խօսել կամ առնել, դու մնասցես անդէն այլևս գոնէ երկու կամ երեք շաբաթս: Քանզի որպէս ընդ երկար գրած եմ առ երանաշնորհն իմ Ստեփաննոս վարդապետ սիրելին, հսկեն թշնամիք և զինուորեսլ սպասեն որոյ, որպէս զգամ և գիշատողս, պէտք են սպասելոյ և զառաջս առնելոյ իրիդ այդորիկ: Եթէ դէպ լիցի գալստեան Գաղիացոյն, քանզի գրեթէ բոլոր Սիմամպուլ ընու թէ յղեսլ եմք մեք զքեզ ի յիզմիտ ի յորդոր գոյթակղեալ ժողովրդեան և զառաջն առնուլ, լուան զայս կաթովիկք անգամ և ունին յետոյ զմեզ ծաղրել, որպէս թէ փութով ի մէջ շաբաթու միոյ կարացեալ իցէք, և ի դատնալ քո շուտով՝ ազատութեամբ և աներկիւզ յղեն զԳաղիացին:

«Ինչոքեմ մնալ և մի աճապարել զայ այսր, և գրեսջիք մեզ գիրս, և Աստուծով յետ երկուց շաբաթուց կարէք դառնալ լի ուրախութեամբ ևն, ևն:»

Մայիս 4, 1841

Ողջ լիբուք ի տէր

Ի Պատրիարքարանի

ՊՕՂՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Ի Կոստանդնուպոլիս

Քահանան կը համակերպի պատրիարքարանի խորհուրդին և կը մնայ երկու շաբաթ ևս, նոյն ատեն իրեն յանձնարարուած պաշտօնին հսկելով հանդերձ, չզաղրիր իր էական պարտաւորութիւնը կատարելէ, այն է քարոզել Աւետարան՝ տարածել զգիտութիւն ճշմարտութեան և ինոյն հաստատել չհաւատացեալս: Սակայն զարմանալի իրողութիւնն այս պարագային մէջ այն է, որ Եզնակ տէր Վրդանէս յետ Պոլիս դառնալուն կիմանայ թէ թագթագեան Պօղոս գանգատած է իր մեծաւորին ըսե-

լով, մենք զանիկա Նիկոմիդիա ուղարկեցինք լատինականութեան շարժումը խափանելու համար. իսկ նա այդպաշտօնը լաւ կատարած ըլլալով հանդերձ բողոքականութեան ալ մեծ մղում տուեր է: Թագթագեան Պօղոս վարդապետ, երբեմն պատրիարքական փոխանորդ զորմէ քանիցս առիթ ունեցանք խօսիլ, Ստեփաննոսի վերջին վերահաստատումին եպիսկոպոսացած ըլլալով խորհրդական (միւշթէշար) կարգուած էր ծերունոյն. ցաւալի բան է որ Աւետարանական պարզ և ճշմարիտ դաւանութիւնն դեռ ցայս օր բողոքականութիւն կանուանեն ոմանք հայ եկեղեցականք:

Սոյն միջոցին Մր. Հ. Ծ. Օ. Տուայդ և Մր. Կիւրոս Համլին վերստին կայցելեն Նիկոմիդիա և կիրակին հոն կանցունեն տեղւոյն արթուն և լուսաւորեալ խմբակին հետ քարոզի ու ազօթքի ժամեր անցունելով պարտէզի մը հովանոյն տակ. և երեկոյին երբ իրենց օթեւանած պանգոկը կը դառնան, հոն իրենց սպասող մէկը կը տեսնեն որ կը հարցնէ արդեօք բժիշկ են և ունին հետերնին դեղեր: Որոնք կը պատասխանեն, հոգիներու հիւանդութիւններ բուժելու կգրազին բայց միայն դեղ մը ունին որ բուժիչ է հոգիի ամէն հիւանդութիւններու: Այս կերպով մարդուն ու Միսիոնարներուն միջև խիստ շահեկան խօսակցութիւն մը կը բայուի: Յայնժամ մարդը կը հասկնայ իր խօսակիցներուն որոնք և ինչ ըլլալնին. որովհետև արդէն լսած էր Յակովբոսի կոնդակէն այնինչ զիրքերը չկարդալու են. դրուած պատուէրները: Մարդը ինք կարգաւ չէր գիտեր, բայց հետաքրքիր և դած էր կոնդակը կարդացուած օրէ ի վեր արգիլուած գրքերուն պարունակութիւնը գիտնալ և հասկնալ ինչ սորվեցնելնին: Աւտաի կուրախանայ որ զիպուածը զինքը բերեր հանդիպուցեր էր բուն այն գրքերն հրատարա-

կողմերու, բոլորովին յանգէաս : Միտիոնարները մարդէն բաժնուած ասերը կուտան անոր իր սեղելովը աշխարհաբար Նոր Կտակարան մը և միքանի տետրակ որոց մին կրկայ «Ստչնարածին աղջկան Եղիաարիթին երջանիկ մահը» անուն հոգեչաճ տետրակը, որ երբևմն տէր Վրբթանէս ալ լուսաւորուած էր անով : Մարդը Ատարազարցի ըլլալով գոհութիւնով կասնէ զանոնք և կը տանի հոն իր բարեկամներուն որ կարդան, իրեն ալ հասկցնին անոնց պարունակութիւնը որովհետև ինքը կարդալ չէր գիտեր :

Բարեպաշտութեան Միաբանութիւն անուանեալ ընկերութիւնը այդ միջոցին բաւական ծաւալած էր, և ճիւղեր ունէր Նիկոմիդիա, Պրուսա, Զմիւռնիս և Տրապիզոն, և յաճախ թղթակցութիւն կը կատարուէր այդ տեղերու միջեւ, և վերոյիշեալ դէպքէն քիչ ժամանակ յետոյ առիթ կ'ունենայ Ատարազարի հետ ևս ունենալ թղթակցութիւն, քանզի հոն ալ կը գոյանայ ճշմարտախնդիր փոքրիկ խումր՝ մը բարեկարգութեան դալափարին նախանձաւոր : Այդ խմբակի կը բաղկանար տեղւոյն ընտրեալագոյն և եկեղեցական իրերու առաւել հմուտ և ժամանակին ուսեալ դասակարգին վերաբերեալ անձերէն ինչպէս Ս. Կարապետ եկեղեցւոյ Տէր Գէորգ Ռափայէլեան և Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ Տէր Աթանոս Աթանասեան երկու ժողովրդասէր բարեյիշատակ քահանաներն՝ որոնք աւետարանական գալափարներով տողորուած նուազ բարեկարգութեան գալափարին տարածմանն անձնուէր չէին հուշակուած : Նոյնպէս Ս. Խաչ եկեղեցւոյ դպրապետ Տիրացու Համբարձում Ճէգիլեան, Գրիգոր ազա Գալափաճեան, Մուրատ և Յովհաննէս վարժապետներ : Աոյն փոքրիկ խումր՝ Երիզեան Սանփան անուն անձի հոն տարած Նոր Կտակարանն ու տետրակները միաբան կարգալով օգտուած և ստացած օգուտնին

որ ընդհանրու ևս հաղորդելով այսպէս միջոց եղեր են տեղ-
ւոյն Աւետարանականութիւն անուանեալ լուսաւորութեան
ծաւալմանը : Մինչև ցայս վայր Ամերիկացի միսիոնար
ոտք չէր կոխած Ատարազարի մէջ , զի այն ժամանակներ
չողենաւի և երկաթուղւոյ դիւրութիւններ չկային , և
արդի կէս օրուան ուղեւորութիւններ այն ժամանակաց
մէջ շատ անգամ հազիւ կրնային կատարուիլ շարաթէ
մը , այն ալ թերևս ոչ անվտանգ : Այսու ամենայնիւ
1841 թուականի աշնան միջոցին Պրուսայի մեսիոնարն
Մր . Բենիամին Շնայտերը ընկերակցութեամբ Պոլսեցի Աւ-
րովրէկոսն Քրիստափոր անուն անձի՝ ցամաքի ճամբով
կ'ուղեւորին դէպի Ատարազար , ու հոն կ'օթեւանին
«Ինճէ Ահմէտ» ըսուած պանդոկը և վերադարձնուն սա-
պէս կը խօսին յիշեալ խմբին նկատմամբ . «Այդ մարդոց
փափաքը Աստուծոյ ծառայելու և անոր խօսքը լսելու և
սորվելու համար՝ լաւ կը համեմատի Սաղմոսերգուի ու-
նեցածին որ ըսեր է . «Ինչպէս որ եղջիրուն ջուրի վը-
տակներուն կը փափաքի , անանկ ալ իմ անձս քեզի կը
փափաքի՝ ո՛վ Աստուած» :

Այս տեղ քիչ մը ներուի մեզ նպատակնուս չեղելով
ծանօթութիւն մը տալ Քրիստափոր Սերովրէկեանի վրայ ,
որ հետաքրքրական է :

Սա՛ տասն և ութ կամ քսան տարեկան հասակին
մէջ միշտ կը տեսնուէր Մայր Եկեղեցւոյ Ս . Յարութեան
կողմը Պեղծեան Յարութիւն ամիրայի շիրիմին աւջե կայ-
նած եղաման ի ձեռին պատանի լուսարար մը , որ
ժողովուրդի սինակ ձգած լումային փոխարէն կան-
թեղը իւր լեցնելով Աստուած Լնդունելի ընէ կըսէր . այս
առաջին ծանօթութիւնն է նկատմամբ այդ պատանոյն :
Իսկ ժամանակ անցնելով երբ առաջին անգամ Բերա Պատ-
Հ . Ը . Օ . Տուաղի տունը գացի հոն տեսայ զՔրիստա-

փոր Սերովրէեան իբրև նոյն տան սպասաւոր: Յետոյ քիչ ժամանակ անցնելով ճամբու վրայ Ունդափան ըսուած թաղը դիմացս ելաւ, այս անգամ իր հետ բաւական ծանօթացած ըլլալով զաւ յասնեց թէ իր հայրը շատ կը նեղէ զինքը, քանի որ կը փափաքի Ամերիկա երթալ և ուսման հետեիլ ապագային ազգին ծուայելու յարմար վիճակ մը ձեռք բերել. ճամբու վրայ որչափ որ կարելի էր խօսեցանք այս մասին, և տեղեկացայ թէ Պատ. Տուայդի քաջալերութիւնով և ձեռնտու թեամբ յաջողած է երթալ և աստուածաբանութեան վարժարան մտնալ, և քիչ օրէն ճամբայ ելլելու պատրաստութիւն տեսնելու վրայ է. բարի յաջողութիւն մաղթեցի ու բաժնուեցանք: Սա զնաց քիչ օրէն Ամերիկա և արդարև զարմանալի յաջողակութիւնով ոչ թէ միայն իբրև քաջ ուստուածաբան առաջին կարգի վկայական ստացած, այլև հոմալսարանական զանազան ուսմանց և գիտութիւններու ճօխ ու առաջին մրցանակներով և ապա վկայականներով հարստացած կը պատրաստուի հայրենիքը վերադառնալ, յայնժամ ըստ իր նախնական փափաքանաց ինչպէս խօսած է, կը մօտենայ Պօրտ ընկերութեան առաջին գրագիր կամ գործակատար Մր. Կլասսոզընի Միսիօնարութիւն ստանձնել ուզելով, որ ասին Կլասսոզընեան խորական և գայթակղեցուցիչ պատնէչն իր առջև կանգնած կը գտնէ, և կը պարտաւորի լոկ իբրև բժիշկ մը վերադառնալ:

Ահա այս է այն Գրիօտափոր էֆ. Սերովրէեան, որ երեւցաւ Կոստանդնուպոլսի մէջ, 1850 թուականէն առգին, և իր տաղանդով գիտութիւնով Օսմանեան տէրութենէն գնահատուած թնդանօթարանի բարձր պաշտօններուն արժանաւորապէս կոչուեցաւ ի պարձանս ազգին: Եւ վերջապէս բարեկիշատակ Տօքթ. Սայրըս Համլինի ձեռքը միջոց մը գտնուեցաւ, Շեյխալիք կոչուած այն

բարձր լերան վրայ որ թրքաց համար սրբավայր ըլլալ ճանչցուած է մեծաւ յաղթանակաւ Րոպերդեան Վարժա-
բանը կառուցուելուն :

1843 թուականի Օգոստոս ամսոյն մէջ հայ Յովակիմ
անուն տանն և ութ կամ քսան տարու պատանի մը կը
գլխատուի Կոստանդնուպոլսոյ Էմին Էօնի ըսուած վայրը,
և ըստ սովորութեան գլխարկը ազդերացը մէջ դրուած
երեք օր ի ցոյց կը ձգուի փողոցին մէջ : Պատանոյն յան-
ցանքը կըլլայ կրօնափոխութիւն որ երկիւղի մը առթիւ
մուհամմէտականութիւն կը դաւանի յետոյ զեղջի գալով
Յունաստանու Սիրա ըսուած կղզին կը փախչի և հոն
բաւական ատեն պանդխտանալէ ետք կը վերադառնայ
ուխակով որ կթէ ճանչցուի և վերստին ձերբակալուի ու
իրբև կրօնափոխ տանջանաց ու մինչև սնդամ մահու
դատապարտուելու ըլլայ՝ նահատակուի իրբև հայ Քրիս-
տոնեայ : Ժամանակ մը Կոստանդնուպոլսոյ մէջ չճանչ-
ցուած այսպէս ապրելէն յետոյ դժբախտաբար կը ճանչ-
ցուի և ձերբակալուելով նախ զանողան խոստմունքներով
տաճկութիւնն ընդունելու ստիպումներով երբ չհամոզ-
ուիր, յայնժամ կսկսին սոսկալի տանջանաց ենթարկել,
բայց նա իր հաւատքին և ուխտին մէջ հաստատ և հա-
ւատարիմ մնալով վերջապէս ամենաբարբարոսական կիր-
պերով կը գլխատեն իրր կրօնափոխ Պալք բազար կամ
Էմին Էօնի ըսուած վայրը, մարմինը երեք օր ի ցոյց
փողոցին մէջ կը ձգեն :

Օտար դեպքանք յետոյ միանալով Անգղիականին
ձեռներէջութեամբ ձեւական պահանջ կրնեն Բ. դրան
կրօնափոխութեան պատճառաւ մահու պատիժն իսպառ
ջնջուելու համար. մանաւանդ Անգղիոյ դեպքանին և Բ.
դրան միջև երկար և ստիպողական թղթակցութիւնք կը
փոխանակուին, մինչև որ Սուլթանը 1844 թուականի

Մարտին մէջ անձնականապէս հրաշխաւորութիւն կը խոստանայ դեպքանին, որ այլևս իր տէրութեան մէջ Քրիստոնէութիւնը չպիտի նախատուի, ոչ ալ քրիստոնեայք պիտի հալածուին ու է կերպիւ իրենց կրօնքին համար: Ահա Սուլթանի այդ երաշխաւորութեան հետեւութիւնն է այլ և այլ ժամանակ դանազան խնդիրներու պոթիւ հրպատակ ազգերու տրուած պայրուլթուններ և մանաւանդ կիւրճանէական թանգիմաթ, ու ասոնց ամենէն ետք՝ 1856 թուականին «Հադդը Հիւմայուն» որ բացարձակարար կրօնական ազատութիւն կուտայ, մինչև իսկ թրքաց:



Գ Լ Ո Ի Խ Ժ Գ .

Պէպէ՛քի Ամերիկեան վարժարանը.— Աստուածաճուր
պատհարք.— Նրե՛կ Հարագասներ.— Ընթերցասի-
րութիւն կանանց:

Խասգիւղի ճէզայիրկեան Մկրտիչ Ամիրապի խնամքին
յանձնուած վարժարանին խափանուելէն ետք՝ Պէպէքի
Ամերիկեան վարժարանը բացուեցաւ ընդ անօրէնութեամբ
հայասէր և բազմերախտ Տօք. Կիւրոս Համլինի 1840
թուականին, թէև յիշեալ թուականէն առաջ Արնատու
գիւղի ծովեզերեայ ընդարձակ տան մը մէջ գործը սկս-
ուած էր, բայց օրինաւոր և յատկապէս Հայոց համար
սկսիլը Պէպէքի մէջ եղաւ: Գիւղին տգէտ բնակչութեան
կողմէ սկիզբը իրաւ մ'ի՞ծ դժկամակութիւն ցուցուեցաւ
այս վարժարանը հոն բացուելուն, բայց երթալով վար-
ժուեցաւ, և գործը ամենայն յաջողութիւնով կը յառա-
ջանար: Սակայն ազգիս բարեկարգութեան հակառակ
կուսակցութիւնը հնարքներ կը խորհէր զանկա խափա-
նելու և ժամանակին չէզ Ստեփաննոս պատրիարքը ան-
հանգիստ կընէր շարունակ զանգատելով:

Սակայն վարժարանին հանգիստ յաջողութիւնը շու-
տով կը վրդովի միայն քանի ժը ամիս հաղիւ անցնելով:
Տօնի մը շաբաթ օր ուշ ատեն լուր կ'երթայ վարժարա-
նին անօրէնութեանը Ստեփաննոս պատրիարքին կողմէն
որ իր աշակերտաց ճնողք հրաւէր ընդունած են հետեւ-
եալ կիրակի օրուան համար անպատճառ երթալ պատ-
րիարքարան, ուր խիստ պատուէր պիտի արուի անոնց,
որպէսզի զաւակնին հոնն ձեր վարժարանէն, նաև կը-
սէ թէ ինչ ընելիքնիդ ձեր խոհեմութեան կը յանձնէ
Արքազանը և այսչափ միայն կը խօսի ու «մնաք բարով»
կըսէ և կը մեկնի լրարեբը:

Տնօրէնն Տօք. Կ. Համլին առանց վայրկեան մը կորսնցնելու ժամանակն՝ ուչ ըլլալով՝ կը հնչեցնէ զանգակն, ուսանողք կը համախմբուին, յայնժամ կը խրատէ զանոնք առանց վրդովելու առնել հանդերձի ծրարնին ու սուհերնին երթալ, Եւ հետեւեալ օրը իրենց ծնողացը հետ երթալ պատրիարքարան, մատուցանել իր յարգանքն Պատրիարքին և ըսել. «Տօք. Համլին կ'ուզէ բարիք ընել և օգնել Հայ ազգին մանաւանդ ազգին պատանիներուն. և քանի որ ազգային իշխանութիւնն կը մերժէ անոր բարիքն ու օգնութիւնը, նա ետ կը քաշուի: Ուսանողք լսելով այս խօսքերն կսկսին արտասուել ու ընդդիմանալ, բայց նա կը յորդորէ զանոնք ածապարել ուչ չմնալու համար, «Գնացէք և ազաւինեցէ՛ք» կըսէ ու կը մեկնի անոնցմէ:

Ուսանողք կը համակերպին, և հետեւեալ օրը կ'երթան իրենց ծնողացը հետ Պատրիարքարան, կը ներկայանան ա. ու որ անկ էր ներկայանալ, Պատրիարքն տեսնելով ծնողք և զաւակունք միասին գացած շատ կ'ուրախանայ, մանաւանդ լսելով ինչ որ պատուիրուած էր անոնց ըսել: Յայնժամ ի լուր ներկայ եղողներու կ'ըսէ, Տօք. Համլինին բարի և խոհեմ մարդ ըլլալը, և հիմա ձեզ հօս տեսնելուս կըզմայլիմ անոր իմաստութեանը, և ուրիշ ըսելիք չէ մնացած քանի որ եկած էք. գացէք տուներնիդ որդեակք և տէր Աստուած ամենակալն պիտի յագեցնէ ձեր ուսման փափաքը իրեն հաճելի եղած կերպովը:

Կանխագոյն քան զայս իրողութիւն կամ եղելութիւն, Ստեփաննոս Պատրիարք զգուշացուցած էր Միսիոնարութիւնն իր և Միսիոնարաց միանգամայն մտերիմ բարեկամը եղող Մինէճի Անդրանիկ Էֆ.ի միջոցով՝ որպէսզի ինքը չհարկադրուի հակառակ քայլ առնել ի վնաս

բարեկարգութեան գործին, վասնորոյ թէ վարժարանք թէ իրենց ուրիշ գործողութիւնները զգուշութիւնով վարեն: Արդէն հէք պատրիարքն սկսեւ էին ամբաստանել իբրև պաշտպան բարեկարգութեան գաղափարին:

1840 թուականին մեծ պայքար մը տեղի կունենայ ազգային վարչութեան ընթացքին մէջ. այն է, սեղանաւորներու և արհեստաւորներու պայքարն. զլիսաւորապէս Իւսկիււտարի ձեռնարանին զրամական կամ անասական գործքերուն անկարգութենէն ծագումն առած, որ բովանդակ հայ հասարակութիւնը գրգռման և յուզման վիճակի մէջ ամիսներէ իվեր կը գտնուէր: Այս առթիւ բարեպաշտութեան միարանութիւնը ազատաբար գործելու ասպարէզ ունէր և իր գործը առաջ կը տանէր թէ մայրաքաղաքին մէջ և թէ գաւառներու մէջ:

Ստեփաննոս պատրիարք թէև բարեսէր սակայն զուրկ գործ տեսնելու կորովէ՝ յիշեալ պայքարին մէջ կիյնայ սեղանաւորներու կամ ամիրաններու ազդեցութեան ներքև: Արհեստաւորք կը ջանան վարչական գործերու զէկը կորզել անոնց ձեռքէն և յանձնել օրինաւոր կերպով ընտրուած ժողովքի մը ձեռք, որպէսզի այն ժողովք ընդ նախագահութեամբ պատրիարքի տնօրինէ ազգային ամէն գործերն: Այս առթիւ մայրաքաղաքին մէջ ազգը երկու մեծ կուսակցութիւններու կը բաժնուի, սեղանաւորական կամ ամիրայական կուսակցութիւնը զօրաւոր իր հարստութիւնով, ազդեցութիւնով ու հացկատակներու բազմութիւնով. իսկ միւսը զօրաւոր մեծամասնութիւնով և իր մէջ ունենալով զարգացեալ իմացականութեան տարրը՝ չէր կրնար այլևս գլուխ խոնարհեցնել դատարկագլուխ հարուստներու: Հէք պատրիարքն ալ ըստ հնագոյն սովորութեան ինկած էր այն դատարկագլուխ ամիրաններու ազդեցութեան ներքև ընականաբար:

Արդ, այդ երկու կուսակցութիւններուն մէջ տեղ բացուած պայքարն այն աստիճանին կը հասնի, որ կրակսին մին միւսին դէմ Բարձրագոյն Դրան անհաճոյ դիմումներ և բոլոքներ ընել, որոց մասին խօսիլ դուրս է մեր նպատակէն։ Ստեփաննոս պատրիարք՝ որ մինչև այն ատեն ազաւնի վերկասացուէր, այնուհետև յաշտ հասարակութեան ազուաւի կը վերածուի և կիյնայ պաշտօնէն։ Յայնժամ ազգը որ տէրութեան առջև առանց ներկայացուցչի չէր կրնար ըլլալ, և որովհետև երկու կուսակցութիւնները չէին կրնար միաբանիլ գործունեայ Եկեղեցականի մը ընտրութեան, դիտմամբ կը միաբանին ընտրել աննշան ծերուկ մը, այն էր Իւսկիւտարի Ս. Կարապետ եկեղեցւոյ քարոզիչ Աստուածատուր Եպիսկոպոսն, որ ծանօթ է ժամանակակիցներու իր արտաքոյ կարգի ցասկոտ բնաւորութիւնով։

Դառնալով Պէպէքի Միսիոնարական վարժարանի խնդրոյն զորմէ խօսուեցաւ ի վերև՝ յիշեալ տագնապալից օրերու մէջ ոչ ոք կը խորհէր կամ կը խօսէր անոր վրայ, և վարժարանը իր գործունեայ տնօրէնին Տօք. Կ. Համլինի խնամքով արդիւնաւորաբար կը շարունակուէր։ Նոյն ատեն բազում այցելուներ կունենար որոնք յոյժ կը ներգործուէին հիւրասէր տնօրէնին քաղցր մարդասիրութենէն։

Աստուածատուր պատրիարք՝ թէպէտ բնաւորութիւնով ցասկոտ, սակայն արթուն և խաղաղասէր փոխանորդ մը ունենալով կը կառավարէր անոր խորհուրդներով։ Այն էր Կոստանդնուպոլսեցի Յովհաննէս վարդապետ երբևիմն առաջնորդ Տրապիզոնի, որ Յակովբոս պատրիարքի օրով Չորրու աքսորուած էր Արժրունի Տէր Գէորգին հետ իրբև բարեկարգութեան գաղափարովը խմորեալ ոք։ Այս վարդապետը բաւական ատեն կը մնար իր պաշտօնի մէջ իբրև կարող փոխանորդ և օգնական ցասկոտ ծերունոյն,

և չէր թողուր զայն ազգայինս քայլ առնել անստիպ ուրիշներու խօսքին: Երբ Աստուածատուր պատրիարք կը զրգուռէր Բարեպաշտութեան Միաբանութիւնն անուանեալ խումբին դէմ հալածանք հանել, փոխանորդն կարգիւ լէր ըսելով՝ ի՞նչ շահեցաւ Կարապետ պատրիարքը լատինականութեան հարողները հարուածելովը և ի՞նչ շահեցուց ազգին: Նոյնպէս կը խօսէր նաև Յակովբոս պատրիարքի բրածններուն համար, և ծերունին կանաք իր փոխանորդին խօսքերուն և կը բաւականանար սա պատուական անէձքն արտասանելով՝ «Եւրդէր եաշըքան եէաի օրկա իպրիչիմ պոյու եէրէ կ'չսիւլ'ը»:

Յովսէփն էս վարդապետին կոչումը փոխանորդութեան կարեւոր պաշտօնին այնպիսի ժամանակ մը անակնկալելի էր թէ իրեն և թէ Բարեպաշտութեան Միաբանութեանը և միայն Նախախնամութեան մասնաւոր անօրէնութիւնը կը նկատուէր:

Աւետարանը կը քարոզուէր համարձակաբար ամէն տեղ, այս բարի սերմին սերմանուելովը հաստատապէս արմատացած բարոյական տունկեր երևան կուգային Տէրոջն այգիին մէջ, և ճշմարտութիւնը սիրողներու մէջ հոգեկան կեանքի զգալի զարգացում իսկապէս կը տեսնուէր: Աղօթքի հոգին մանաւանդ եղբայր եղբոր համար և ամենուն համար այդ ժամանակի նշանաւոր հանգումանքներէն մէկն էր: «Աղօթս արարէք ի վերայ միմիանց՝ որպէսզի բժշկես՛ք» (1) սուաքեկական բանին զօրութիւնը՝ ամանք իրենց մարմնոյ կողմանէ եղբայրներու և ազգականներու և բարեկամներու կեանքին ու բարութեան մէջ կատարուած փոփոխութիւններով դէպի բարին որպէս զգացած բլլալին արդէն ըսուեցաւ, նաև յայտնի կը տեսնուի հետեւեալ ծանօթ իրողութիւնէն:

(1) Յակոբոս, Ե. 16:

Կոստանդնուպոլսոյ մէջ այն ատեն կային Երեք Հարազատք Տիրացու Գամաղիէլեան՝ Պօղոս, Պետրոս և Յովսէփ որոնք իրենց հօր պէս համբաւաւոր էին Մայր եկեղեցիին մէջ իրենց քաղցրաձայն դպրութիւնով: Կրտսերն ու կրտսերագոյնը Պօղոս և Յովսէփ արհեստով մետաքսագործ էին, իսկ Պետրոս ի մանկութենէ վանական կեանքի նուիրուած միաբանութեան հայրերու խոնարձաւայ մը եղած էր: Յետոյ իր երիտասարդութեան հասակին որոշեր էր բոլորովին բաժնուիլ ընկերութենէ և անապատական կեանք վարել՝ համարելով թէ այսպիսեաւ պիտի կարենար սրտի ու խղճի այնպիսի խաղաղութիւն մը վայելել որ ունենալ կը փափաքէր: Բայց փորձառարար կը տեսնէ որ ո՛չ վանական ո՛չ ալ անապատական կենաց մէջ կը գտնուի իր փնտռածը, և կ'որոշէ իր ծննդավայրը Կոստանդնուպոլիս վերադառնալ: Կընէ այսպէս և հոն կը խորճի լատինականութեան դիմել, կարծելով որ հոն պարբերաբար վաճառուած թուղթերու միջոցով թերեւս կարենայ օգտուիլ և իր ալետանջ սրտին ու խղճին խաղաղութիւնը դանկ. սակայն այնպէս ընելով ևս չհասնիր իր բաղձացած կէտին, մանաւանդ առաւել յուսահատութեան մէջ կը գտնէ ինքզինքը այս փրկութիւն փնտռող Պետրոսը: Սակայն ինքը ազօթասէր ըլլալով՝ մատուցած ջերմեռանդ ազօթքնիրը կը լսէ Աստուած և կ'առաջնորդէ Աստուածաշունչ մատենին և զայն առաջին անգամ բանալուն նախաինամարար Եսայիայ մարգարէութեան ԾԵ. գլուխը կը բացուի որ կ'ըսէ. «Ո՛վ ամէն ծարուածներ՝ ջուրերուն եկէք, և ստակ չունեցողներ՝ եկէ՛ք ծախու առէք, ու կերէ՛ք. եկէ՛ք առանց ստակի ու առանց գնոյ գինի ու կաթ ծախու առէք. ինչո՞ւ ձեր ստակը կը վատնէք չէ թէ հայի համար և ձեր վաստակը անանկ բանի համար

որ չկշտացնէր, ուշադրութեամբ ինձի մտիկ բրէ՛ք, որ բարիքներ ուսէ՛ք, ու ձեր հոգին պարարտութեամբ լեցուի» : (1)

« Պետրոս այն նոյն բողոքին կը գտնէ Աստուծոյ կենարար խօսքին մէջ ինչ որ պարագ աեզը փնտուեր էր վանքերու, անտպասներու և ներողութեան թուղթերու մէջ : Մարդ կարող չէ նկարագրել այն հոգեկան արտփանքն ու մխիթարութիւնը որ Պետրոս կզգար ու կը վայելէր մինչեւ իր վերջին շունչը, որովհետեւ արդարութեան համար իր անօթի ու ծարաւ հոգին գտեր էր իր կարօտ եղածը Յիսուս Քրիստոսի մէջ : Եւ անկէ ետք ան կրնա՞ր անտարբեր մնալ և չհաղորդել իր վայելած մխիթարութիւնը ուրիշներու մանաւանդ իր հարազատներուն : Մեծ եղբայրը Պօղոս, շատ պարզ և հեղահոգի ոմն, շուտով կ'անսայ և կը հնազանդի ճշմարտութեան ինչպէս յայտնի է ժամանակակիցներու, իսկ Յովսէփ շատերու նմոն ինքզինքը մատնած ու գերի բրած ըլլալով արքեպիսկոսան ու մեղաց անփոյթ ծաղրածու մըն էր մեծ եղբայրներուն իրեն համար զգացած ցաւերնուն : Այդ պատճառաւ Պետրոսի ջանքն ու աշխատութիւնը զարմանալի էր իր այդ եզրօր զգաստանալուն համար : Կ'ողորար երբ կ'իմանար որ իր եղբայրը մեղսալից խընճոյքներու մէջ շատ կը մեծարուէր հեշտասէր հարուստներէ իր յիմարական զուարճախօսութիւններուն ու անվայել խաղերուն պատճառաւ, և քիչ կը պատահէր սաստիկ գինովցած չրլալը : Երբեմն ալ դատարկաբանութեան և պիղծ հայհոյութիւններու գարշկի արկմերու մէջ երկար ատեն շաղխուելէ ետք ամբողջ գիշերներ կը պատահէր որ առաւօտուն Աստուծոյ տունը երթալով գոհարանութիւն կ'երգէր դպիր լինելով :

(1) Եսայ. ԽԵ. 1-2

Բայց Պետրոս կ'ազօթէր իր այդ եզրօրն համար, «այն՝» հառաչելով կ'ազօթէր և ուրիշներէ ևս կը խնդրէր միանալ իր հետ և յատուկ ծոմասպահութիւնով ազօթել: Քանի՛ քանի անդամ ըրած է այսպէս որպէսզի հարազատը յաղթահարուի Աստուծոյ շնորհքէն: Ժամանակակիցներէ ոմանք լաւ կը յիշեն, որ գիշեր մը Պօլիսի Լանկա Պօստանը ըսուած թաղը տան մը մէջ քանի մը անձ միացած էին յատուկ ազօթքի համար Պետրոսին խնդիրքով: Յովսէփ կ'իմանայ զայս՝ և ճիշտ մերձակայ տան պատուհանին առջիւ գացած նստած կը ծաղրէր ազօթողները իր սլիզ ու գարշելի խաղերովն և լուտանքներով: Նոյն ատեն Պետրոս քովի տանը մէջ գառն արտասուքով կը պազատէր իր լնկերներովը շնորհաց Աստուծոյն մեղք չհամարել իւր եզրօր ըրածը, քանզի նա չէր գիտէր ինչ լնկը:

Բայց ո՞վ կարող է նկարագրել Պետրոսի ցնծութիւնն ու ուրախութիւնը յիշեալ գէպքէն քանի մը օր ետք՝ երբ կ'աւետէր իր ազօթակիցներուն և բարեկամներուն և կ'ըսէր. «Ուրախ եղէք ինձի հետ, ինչու որ իմ կորսուած եղբայրս գտայ»: Այո՛, Աստուծոյ անհասանելի շնորհքովն Յովսէփ սլ յաղթահարուած էր, գայլը գառնուկի փոխուած էր: Այն փրկարար շնորհքը սր սրտաբաստ է երեւնալ ամէն մարդոց, Յովսէփին երեւցիր էր, որ կը խրատէ ամբարշտութիւնն ու աշխարհային ցանկութիւնները ուրանալ, և զգաստութեամբ ու բարեպաշտութեամբ սպրիլ աշխարհի մէջ: (1)

Արդարեւ պարզութիւն, հաւատարմութիւն, անկեղծութիւն և ճշմարիտ բարեպաշտութիւն այլևս գեղեցիկ իմն կը փայլէր անոր ամէն վարմունքին մէջ: Պարկեշտութեան, խոնարհութեան, եղբայրսիրութեան և ընդ-

(1) Տիմոթի Բ. 11, 12:

հանուր մարդասիրութեան հեղահամբոյր բնաւորութիւնովը սիրելի էր ամենուն որք գիտէին առաքինութեան յարգն ու արժէքը : Կը սիրէր զմարդիկ , որպէս Քրիստոս սիրեց զինքն , կապրէր առ հասարակ ամենուն քարիք ընկելով թէ բարեկամներուն թէ թշնամիներուն : Բաւ է հոս այսչափ խօսիլ երանելիին վրայ , որովհետեւ առիթ պիտի ունենանք յետոյ խօսիլ սնոր մահը պատմած ատեննիս :

Առաջին դարուն մէջ մինչ՝ առաքեալներն կը քարոզէին արքայութեան Աւետարանը՝ կռապաշտ և հեթանոս ժողովուրդներ կը տեսնէին որ կար այն քարոզութեան մէջ գերբնական զօրութիւն որով կը տապալուէին անոնց միհեաններն ու անոնց գոռոյ ու ամբարտաւան սրտերու մէջ տիրող շար կիրքեր ու զանազան մոլութիւններ : Եւ խոնարհեցնելով զիրենք կ'երկրպագանէին խաչկալ Յիսուսի ստաքին տակ զոր երբեմն ծաղրեր էին :

Ասոր ապացոյցը ակներև է , և հետզհետեւ աւելցած , ու պիտի աւելնայ մինչև զլրումն հեթանոսաց : Աւետարանը միշտ ունի և կը յայտնէ նոյն սքանչելի զօրութիւնը ուր որ հաւատքով կը քարո լուի , բայց աւանդ , որ տգիտութեան ու մոլորութեան սե ամպեր յաճախ կը ծածկեն անոր յտակ ու վճիտ լոյսը ու անկէ ըզխած Աստուածային զօրութիւնը :

Ստեփաննոս Եպիսկոպոս՝ որ պատրիսրքութենէ հրաժարելէն ետք նիկոմիդիոյ առաջնորդութեանը վերագարծեր էր , Արմաշու միարաններէն մի , Չէնկիլէրցի Միքայէլ վարդապետը Ատաբազարի Եկեղեցիներուն քարոզիչ կը կարգէ . սա արդէն գաղափարակից իր մեծաւորին քիչ օրերու մէջ յարարերութիւն կուեննայ տեղւոյն բարեպաշտութեան միարանութեան անդամներուն

հետ, և մանաւանդ կը քաջայերէ՛ զանոնք : Հակառակորդներ տեսնելով վարդապետին վարժունքն՝ բնակունապէս կը գայթակղին անոր վրայ, սակայն ժամանակ մը համբերել կորոշեն մինչև առաջնորդ Ստեփաննոս Եպիսկոպոսին թէժական ալցելութիւնը : Այն ատեն կը գանգատին վարդապետին համար ամբաստանելով որ հոն երթալէն ի վեր քաջայերած է այն խումբը զոր իրենք հերետիկոս կը համարեն :

Ստեփաննոս Եպիսկոպոս խոնկութիւնով ականջ դրնելով անոնց բսածնիրուն, տպա կը նշոնակէ ամբաստանուածնիրուն անունը, և որոց մէկ յամին կը հրաւիրէ : Անոնք անվեհեր կերթան և իրենց ուղղուած հարցերուն կը պատասխանեն, տպա կը յաւելուն որ իրենք Եկեղեցիին հնազանդ և հաւտարիմ որդիներն են, մանաւանդ իրենց լուսաշաւիղ հայերու խրատներուն համեմատ Աստուծոյ խօսքին գերագոյն իշխանութեան հակառակ բան չեն ընդունիր, զի այն է միայն անոխալ ու կատարեալ կանոն հաւատոյ և վարուց : Կը ջանան Տէրունական օրերը ըստ արժանոյն սուրբ պահել, վասնորոյ փոխանակ ասդին անդին պարապ ժամանակ անցունելու՝ տան մէջ մէկ տեղ կուգան՝ Աստուծոյ պատուէրներովը իրար խրատելու, հրահանգելու և ազօթք աղաչանք ընելու առ Աստուած :

Ստեփաննոս Եպիսկոպոս՝ հաւանութիւն ցուցնելով անոնց այս անկեղծ խոստովանութեան կըսէ. «Ո՛րդեակներ ինչ որ ջանացեր էք ընել, շատ բարի և Աստուածահաճոյ է, զացէք խաղաղութիւնով, յարատեկցէք նոյնը :

Յաջորդ օրը կարգ մը ուրիշ մարդիկ կը ներկայանան Ստեփաննոսին միևնոյն ամբաստանութիւնն բերաննին ունենալով՝ և կը հարցնէ սասնց թէ ի՞նչ չար բան

կայ անոնց բրածից մէջ որ կամբաստանէք՝ Անոնք մէկ
 բերան կը պատասխանեն թէ, «Սուրբ գիրք կարգալէ և
 բերնուց ազօթքներ ըսելէ զատ ուրիշ արարողութիւններ
 չեն ընդունիր. ասիկա հերետիկոսութիւն չէ» : Յայնժամ
 Եպիսկոպոսն զարեանքով կը նայի վրանին և կը յայտ-
 կանչէ . Սուրբ Գիրք կարգալ ազօթք ընել հերետիկոսու-
 թիւն չէ . չէ՞ որ եկեղեցոյ անխափան պատուէրն իսկ
 այս է . որպէս ասէ սուրբ Գրիգոր Լուսաւորիչ, «Պիտոյ
 է միշտ դաստիարակութիւն Աւետարանին ի հրահանգել
 զմեզ ի լաւութեան կարգս . զի յանձանցեալք ի շնորհաց
 Սուրբ Հոգւոյն ճշմարտութեան, աճեացուք զվաստակա
 արդարութեան սուրբ սրտիւ և ուղղափառ հաւատով
 յԱստուած» : [Յանախապատում]

Ամբաստանողներն ամօթով եղած կը մեկնին, և ամ-
 բաստանեալք իմանալով զայս ուրախ կըլլան և կը յա-
 բատեն իրենց ընթացը :

Այդ թուականին յիշատակութեան արժանի երևոյթ-
 ներէն մէկն ալ՝ հայ իգական սեռին մէջ ընթերցանու-
 թեան փափաք և սէր արթննալն է : Ծանօթ է շատերու
 որ քառասունչն մինչև եօթանասուն տարեկան կիներ
 ըջիկ դասատուներու միջոցով ընթերցանութեան սկսած
 և յաջողած են թէ Պոլսոյ մէջ և թէ զաւաններու մէջ :



Եզնակ Տէր Վերանէսի փիլոնագրկութիւն.— Անոր այցելութիւնն Փոփուն Ասիայ կողմեր.— Պետրոս Վարդապետ ճիզմէնեան.— Հրաժարեցումն Ասասուր
 • Պատրիարքի — Ընտրութիւն Մասրէոս Եպիսկոպոս Չուհանեանի

Ինչպէս ի վերև Գլ. ԺԱ. ըսուեցաւ Եզնակ Տէր Վրթանէս Նոր Գիւղի եկեղեցիին պաշտօնաւարութենէն հրաժարելով՝ Պոլսոյ հայաշատ թաղի մը մէջ մանկավարժութեան սկսած էր ապրուստը հոգալու համար և նոյն ատեն պատրիարքական Մայր եկեղեցւոյ ժամասացութիւններուն ևս ձրիարար մասնակից կրկար :

Ասատուր Պատրիարքի վերջին տարւոյն, որ մը երբ յիշեալ քահանայն ըստ սովորութեան դասի մէջ կայնած էր քահանաներուն կարգը, կը կանչուի բալը եղող քահանաներու խուցէն ուր կը զանուէին Աւագերէցն, աթոռակալն և ուրիշ քահանայ ժը : Երբ կերթայ Տէր Վրթանէս աւագերէցն խտոյն հարցում կուզէ անոր ըսելով՝ ունի՞ս դուն տեղւոյս թաղերուն մէջ ծուխ կամ բաժին : Նա չունի՞մ պատասխանելուն, միւսը կը յաւելու. «Ուրեմն շնորհակալ ենք այսչափ ժամանակ մեզի ձրիարար օգնելուդ : Բայց այսուհետև արգիլուած էք վրանիդ փիլոն աւանի և դասը քահանաներու կարգին մէջ կայնիլ» : Եզնակ Տէր Վրթանէս միայն շնորհակալ եմ կըսէ ու կը մեկնի :

Յետոյ իմանալով Բարեպաշտութեան Միաբանութիւնն այս եղելութիւն, պատշաճ կը համարէ ժամանակ մը իրրև չըջիկ քարոզիչ առաքեալ Փոքուն Ասիոյ կողմերը, որ նա յանձն կառնու ամենայն յօժարութեամբ և սիրով :

Այն ատեն հանգանակութիւն կրղայ հարկաւոր եղած ծախքը կը հայթայթուի: Նոյն ատեն Փէշտմալճեան ուսումնարանի ընթացաւարտ երիտասարդ, Սրապիոնեան Մահտէսի Յովհաննէս փափաք կը յայտնէ իւր իսկ անձնական ծախքովն ընկերանալ քարոզիչ քահանային:

Երբ ուղեւորներն կը վերադառնան, 1843 թուականի վերջերն, Ասիայի կողմերէն եկող վարդապետ մը կերևնայ Պոլսոյ մէջ, ծանօթ չըջիկ քարոզիչներուն, որ լուսաւոր և օժտեալ էր Աւետարանական յատուկ գաղափարներով և կը կոչուէր Պեարոս Վարդապետ Ճիզմէճեան, բնիկ Պոլսեցի և քիչ ժամանակ անցնելով կանդամակցի Բարեպաշտութեան Միաբանութեանը: Սա իր պարագաները պատմած պահուն ըրած է հետեւեալ խոստովանութիւնն: Այն վայր՝ որ Տէր Յիսուս կարգացած է հրէից օրինականներուն համար, առաւել կը պատգանի ինձ, և իրաւամբ այո՛ վա՛յ ինձ որ երկնից արքայութեան գուռը կը փակէի մարդոց առջև, ես չէի մաներ և մանողներն ալ կարգիլէի: Այդ վարդապետը թէպէտ գաւառներու մէջ իբրև առաջնորդ պաշտօնավարած, բայց ահա ըստ իր խոստովանութեան առանց պարտաճանաչութեան. իսկ բարինախախնամութիւնը անոր զբթացած, և անոր եկեղեցւոյն փիլոնաղուրկ մէկ քահանային միջոցաւը զարթուցեր էր անոր հոգին պարտաճանաչութեան, որ կը զղջար կորսնցուցած պատենութիւններուն համար: Ահա այսպէս եկեղեցական հայրերէ ու մանց կենացն ու վարուց մէջ Աւետարանին փրկարար զօրութիւնով կը տեսնուի ճշմարիտ խոնարհութեան և պարտաճանաչութեան փոփոխութիւն, որ պերճ ու շողշողուն քարոզներէ շատ առաւել ազդու ներգործութիւն կունենայ մշակկի մտաց ու սրտից վրայ:

Ընդիր մըն է թէ, քահանային ուղեւորութենէ վերադառնալուն ինչ պատահած է, պարբարքաւորներ կը

խորհէր զանիկա տարագրել, սակայն պատմաճի Մահտեսի Սրապիոն՝ որուն Լանկայի բաղնիքի կից տաւը կը բնակէր Տէր Վրթանէս՝ և որուն որդին Մահտեսի Յովհաննէս ընկերացած ուղեւորութեանը՝ ամենայն զգուշութեամբ կը պահպանէր զայն բարապաններէ որ կը հարցնէին ու կը փնտռէին զայն, այսու ամենայնիւ խափուսիկ հնարքով մը ձերբակալելով կը զրկուի Արմաշու վանքը յոպաշխարութիւն: Սակայն՝ նախկին պատրիարք Ստեփաննոս Եպիսկոպով Նիկոմիդիոյ առաջնորդ և Արմաշու վանուց վանահայր գտնուելով այն ժամանակ՝ Տէր Վրթանէս կընդունուի վանքին մէջ ո՛չ թէ իբրև ապաշխարութեան արժանի յանցաւոր տարագիր, այլ իբրև համոզին վանականներու յոյժ սիրեցեալ և բազմալի հիւր մը, որչափ ժամանակ որ կը մնայ հոն, և մանաւանդ կաշխատի ամենայն յաջողութիւնով ի տարածումն բարեկարգութեան գաղափարին:

Իսկ Ասատուր պատրիարք արդէն զրկուած ըլլալով զինքը կառավարելու կարող փոխանորդէն, և իր անգուշակ ու ցասկոտ բնաւորութիւնովն ամենուն ասելի եղած կը հրաժարեցուի, և որուն կը յաջորդէ ի պատրիարքութիւն Մատթէոս Եպիսկոպոս Չուհաճեան որու ընտրութեան մասին՝ Աւետարանական խումբը մեծ հաճոյք կը դրայ, և յետ հաստատմանն ալ մասնաւոր պատգամաւորութիւնով մը կը շնորհաւորէ նորա ընտրութիւնն: Պատգամաւորութեան սիրտիւր մեծարանք կը ցուցնէ, և ի անսակցութեան ի մէջ այլոց խորհուրդ կու տայ կարգ զգուշութիւնով վարուիլ իրենց լինթացից մէջ որպէսզի գայթակղութեան անգի չարուի: Կը յորդորէ մանաւանդ, որ չխօսին ու չքարոզեն այլոց և դիտացածին իրենք միայն զխանան:

Պատգամաւորաց համարումն անոր վրայ թէև կարուի իր վերջին յորդորական խօսքերովն, սակայն պաշտօնապէս պատասխանելով և մեծաւ խոնարհութեամբ և սիրով կը մեկնին:

ԳԼՈՒԽ ԺԵ.

Համերաժխութեան ցոյցեր. — Պատ. Ա. Իւրիւնեան ան-
դրդուելի. — Ռոճում վիճարանութեան. — Լուծիչ
սարակուսանացը. — Երեւ ամուսնութիւններ

Մատթէոս պատրիարք Չուհաճեան, ինչպէս բտուե-
ցաւ ի վերեւ, ի սկզբան յոյժ քաղցրութեամբ տեսնուե-
ցաւ, և այսպիսեալ կուղէր շահիլ Աւետարանական ե-
ղօղներն՝ հակառակ Յակովբոսի ժամանակ եղած խտու-
թեան: Սա համերաժխութիւն ցոյց կուտայ բարեկարգու-
թեան գաղափարին, որուն աշխատողներէ ոմանք՝
յաճախ կերթային պատրիարքարան տեսութեան համար:
Պատ. Արքիսոզում Խ. Իւթիւճեան որ նոյն ատեն բարե-
պաշտութեան Միաբանութեան թէ քարոզիչը և թէ
քարտուղարն էր, երբեք չէր վարանէր ամեն անգամ
երթալուն համարձակ խօսելու նորին Արքազանութեան
ունեցած պարտաւորութիւններու մասին: Մինչ այսպէս
բարեկամութիւն կը շարունակուէր ընդ մէջ նորահաստատ
պատրիարքին և բարեպաշտութեան միաբանութեան՝
դաւաճանութիւն մը եկաւ ի տես:

1845 թուականի Մարտ ամսոյն մէջ, Արքունի ճար-
տարապետ և վառօդապետ երկու հարուստ անձերու
կողմէ առաջարկութիւն կրկայ Պատ. Արքիսոզումի՝ Իգ-
միր երթալ, հոն որպէս թէ մեծ կարօտութիւն ըլլայ
ձայնագրութեան (նօթա) կարող դասատուի մը, ինքը
ամենայարմար ըլլալով մեծագումար թոշակ կը խոստա-
ցուի իրենց իսկ երաշխաւորութիւնով: Իսկ նա՝ շնոր-
հակալութիւն յայտնելով հանդերձ բացարձակապէս կը
մերժէ իր պատճառները ունենալով՝ ու ամէն ստիպում-
ներու առջև անդրդուելի կենալով՝ կը խոստանայ միայն
ամենայն սիրով յանձն առնուլ իրեն մայրաքաղաքիս մէջ

ցոյց արուած որ և է կրթարանի մէջ երթալ և ձրխապէս կատարել այդ պաշտօնը օրը ժամ մը : Սակայն շուտով կ'իմացուի, որ Պատ. Արխտղոմ մայրաքաղաքին մէջ մեծ ազդեցութիւն ունենալով և բարեկարգութեան գաղափարին տարածմանը իրրև քաջայարմար աշխատաւոր իր սազանդովն ու քարոզութիւններովը, հակառակորդք յօրինելու և կարգի դրելու են այդ գաւաճանութիւն մայրաքաղաքէն հեռացնելու համար միայն :

Արդ, Մատթէոս պատրիարք վերջապէս իր գոյնը դուրս կուտայ իրրև երկզիմի կամ կեղծաւոր, և տեսնելով որ դրամի հրապոյրներով կարելի պիտի չլլայ իր նսլատակին հասնիլ, ուրիշ հնարք մը կը խորհի. այն է խտրանել կամ աւրել Պատ. Ա. Իւթիւճեանի ազդեցութիւնը : Ուստի իր կամակիցներուն հետ միաբան կորոշեն վիճարանութեան ժողովներ հաստատել կրօնական նիւթերու վրայ խօսելու համար, և որոց առաջինը կը գումարի Պոյսոյ թաղերէն միօյն մէջ Մեհենտիղեան արքայու Յովհաննէսի բնակարանը ուր կը հրաւիրուի Պատ. Արխտղոմ Իւթիւճեան և ուրիշներ : Հանդիսականք կորոշեն որ բարեպաշտութեան Միաբանութեան կողմէն խօսող միայն Պատ. Արխտղոմ և պատրիարքին կողմէ խօսող Տէրոյեանց Չամուրճեան Յովհաննէս պատուելին լլլայ :

Յայնժամ Տէրոյեանց հետեւեալ հարցումները կ'ընէ. նախ, թէ ի՞նչ փաստով կրնայ հաստատուի Պատ. Արխտղոմ Սուրբ գրոց աստուածային յաննութիւն լլլալը. թէ ի՞նչ կամ ս'յք են եկեղեցւոյ խորհուրդները. թէ ի՞նչպէս պարտաւոր կրլլայ իւրաքանչիւր քրիստոնեայ սուրբ գիրքը առանձին կարգալ ու հասկնալ. հուսկ յետոյ թէ թէ ի՞նչ է Մկրտութիւն և ինչ է Հաղորդութիւն, ևն :

Տարակոյս չկայ որ նոյն գիշեր որչափ որ կրնար պատասխանուիլ յիշեալ խնդիրներու վրայ, յազթութիւնը

ճշմարտութեան կողմը կրղայ, և ունկնդիրներ կը հաստատեն որ պատասխանները գոհացուցիչ էին եղած:

Այս առաջին ժողովը ինն ժամ տեւելով առանց հակառակութեան և սրբով կաւարտի, իսկ վանատուր ազնուասիրտ Միւհէնտիզեանի յաջորդ օրը վկայածը ամենուն, ճշմարտութեան փառքն է:

Երկրորդ ժողովը կրղայ Սասգիւղ, Նեվրուզեան Նիկողոս ամիրայի բնակարանը ուր կը գտնուին գիւղի ընտրեկագոյն դասակարգէն քառասունէն աւելի անձինք երկու սեռէ, որովհետեւ այդ ժամանակներ ճշմարտասէր ազգայինք փափաք ունէին լսելու կրօնային խնդիրներու վրայ եղած վէճերը: Այդ անգամ Պատ. Արիսողոմ վիճարանութեան սկսելէ առաջ կուղէր պայման դնել որ Հին և Նոր Կտակարանները իբրև աստուածային պատգամ դատաւեր ճանչցուին, և սորբ գրոց վկայութիւնով հաստատուած որ և է խնդիր վերջնականապէս վճռուած և ընդունուած համարուի: Տէրոյեանց պատուէլին չէր ընդուներ այսպիսի պայման և կը յանդգնէր ըսել, «Ինչո՞ւ այդպէս միշտ յառաջ կը քչէք Աստուածաշունչ կամ Սուրբ Գիրք. չէ՞ք գիտեր որ կան շատ իմաստուն մարդիկ որ համոզուած չեն այդ գրոց ճշմարտ ըլլալուն»: Պատ. Արիսողոմ կը պատասխանէ. «Ստիպեցիր զիս հիմա բացագանչել սաղմոսերգուի հետ՝ «Տրամութիւն կալաւ զիս ի մեղաւորաց, ոյք թողին զօրէնս քս»: Ա՛հ: Աստուածաշունչը ճիշտ ինչ նման տգէտներու համար է որ ոտքերնուս ճրագ և շաւիղներնուս լոյս կուտայ, և կը յաւելու, Սուրբ Գիրքը երբեք անո՞ց համար չէ, որ կը ջանան սուտ հանել զայն, որպէսզի իրենցը հաստատեն»: »

Շատ երկար կը տեւէր թեր ու դէմ խօսիլը այս շահեկան խնդրոյն վրայ, աւելորդ կրղայ ըսել որ հանդիսա-

կանաց համոզումը դարձեալ ճշմարտութեան կողմը կրլլայ, Այսպիսի ժողովներ տեղի կունենան 1845 թուականի Ապրիլ ամիսէն սկսուած մինչև Յունիս միշտ խօսող ընտրուած բլլայով յիշեալ երկու անձերն, գումարումները այլ և այլ ծանօթ ազգայիններու բնակարանները կրլան ամենքն ալ Սասգիւղի մէջ բացի առաջին գումարումէն, և գրեթէ գիւղի առաջնակարգ ընտանիքներէն բաղկացեալ բազմութեան ներկայութեանը: Վերջին գումարման մէջ՝ որ վեցերորդն է, Տէրոյեանց կը պնդէր թէ Քրիստոնեայք պարտին իրենց հաւատքն ու հաւատոյ վարդապետութիւններ Եկեղեցիէն սովորին, իսկ Պատ. Արխտղում կը հաստատէր, որ ըստ առաքելական բանի, «Հաւատք ի լսելոյ են, և լուր ի բանէն Քրիստոսի»: Ապա Մկրտութեան և Հաղորդութեան խորհուրդները մէջ կը բերուի ու աշխարհի կերկարի որ առտու կրլլայ, և հանդիսականք միաբան մեծ հետաքրքրութիւնով կատարակեն որ երկու կողմն ալ գրութիւնով և տպագրութիւնով ի լոյս բերին այս կարևոր նիւթերու վրայ ըսելիքն և խնդիրը ընդհանրութեան գատնողութեանը ենթարկուի: Պատ. Արխտղում ամենայն հաճութիւնով յանձնառու կրլլայ այսպէս ընել, և այսու կարգադրութիւնով է որ ցարդ կը գտնուին հրապարակի վրայ, «Ճառ Մկրտութեան և Ճառ Հաղորդութեան» մակագրով տեարակներ:

Մատթէոս պատրիարք Չուհաճեան և իր համախոհներ տեսնելով որ այդ տեսակ ժողովներն ևս իրենց նպատակին չծառայելով հանդերձ հակառակ արդիւնք կունենան՝ կարգիլեն անոնց շարունակութիւնն ու կը կազմեց «Լուծիչ տարակուսանացը»:

Սոյն վերջին կազմութիւն ըստինքեան կրնար բարի և օգտակար բլլալ, եթէ բարեմտաբար ի փառս Աստուծոյ, յօգուտ ազգին և իշխանութիւն եկեղեցւոյ կազմուէր

և տեական ըլլար ձեռնհաս, անկեղծ, ողջամիտ և բարեպաշտ անձերու խնամքին ու արամադրութեան տակ ըլլար: Որովհետև ժողովարարն որոշուած վայրը շատ պատշաճ էր գործին ուր երբեմն բարեյիշատակ փեշամալճեան Գրիգոր պատուելի Սուրբ Գրոց մեկնութեան դասախօսութիւն կրնէր իր սաներու:

Սահմանուած օրն էր կիրակի յետ միջօրէի որ յարմար ժամանակ է օգտակար ժամանցի մտավարժ հասարակութեան հոմար, միայն թէ արգիլուած էր աւետարանական ճանչցուածնելու ներկայութիւնը, բայց ոչ բունի: Եւ Պրուսացի Տէրոյնց Չամուրճեան Յովհաննէս պատուելին դասախօս կարգուած էր:

1845 թուականի Յունիսին մէջ առաջին անգամն եղած հաւաքումին մասին չունինք տեղեկութիւն, բայց երկրորդին ոմանց կողմէ ստիպում ըլլալով կերթան այդ ժողովին երեք հարիւր հոգի: Յայնժամ լուծուելու երկու խնդիր յառաջ կր բերուի. նախ հաւատք և գործք երկրորդ անսխալութիւն եկեղեցւոյ: Այս խնդիրներու վրայ Տէրոյնց պատուելին երկարօրէն խօսելէ և ըստ իր գաղափարին հաստատելու ջանալէն զկնի, արտօնութիւն կուտայ ուրիշներ ալ խօսելու: Այն ատեն ներկայ եղող երեք աւետարանականներէն մին, Սերոբեան Ստեփան էֆէնտին, որ հարազատն է նախկին պատրիարք Յակոբոս եպիսկոպոսի, խօսք կուզէ և հրամայուելով կը հաստատէ, որ Աւետարանին վարդապետութիւնը կուսուցանէ թէ փրկութիւնը հաւատքով է, թէ փրկութիւն ձրի շնորհք մըն է որ կուգայ մեղաւոր Քրիստոնէակային՝ Քրիստոսի վրայ ունեցած կինդանի և ճշմարիտ հաւատքովը ու այսպէս հաւատքը իր մէջ ազրիւր կրլայ բարի գործքերու ու այնպէս բարի գործքեր արդիւնք կրլան հաւատքի ու ոչ փրկութեան պատճառ:

«Պատճառի և արդիւնքի փոփոխութիւնը ինչպէս դուք Զանաքիք հաստատել կորստական սխալներ են» Այս կարևոր խնդրոյն վրայ երկար կը խօսուի Ս. Գրոց վկայութիւններով, մինչև որ Տէրոյինց պատուելին անպատասխան կը մնայ: Միւս խնդրոյ՝ եկեղեցւոյ անսխալականութեանը վրայ ևս երկար կը խօսուի զոր Տէրոյինց պատուելին հաստատել կաշխատէր ըստ Հռովմայական եկեղեցւոյ դաւանութեան, յայնժամ ներկայ բազմութիւնը գրեթէ միաբերան չենք ընդունիր այդպիսի օտարօտի վարդապետութիւն կազազակեն: Եւ ներկայ եզոզ Աւետարանականներէն միւսը, Պէպէքի Ամբիկեան վարժարանի հայկաբանութեան դասատու, Աւետիս վարժապետ Հիւսեան, խօսք կ'առնու և կրսէ. «անսխալութիւն միմիայն Աստուծոյ կը վերաբերի, և որովհետեւ եկեղեցին սխալական մարդոցմէ բազկացեալ մարմին մըն է, վասնորոյ պարտի Աստուծոյ անսխալ խօսքովը առաջնորդելի որ ապահով ըլլայ, եթէ ոչ կրնայ իյնալ շատ սխալանաց մէջ» Բազմութիւնը միաբերան իրաւունք կուտայ այս ըսուածին, և ժամանակն անցած ըլլալով կաւարտի ժողովը:

Այսպէս Լուծիչ Տարակուսանաց կոչեցեալ կազմութիւնն ևս երեք անգամ գումարում կունենայ. և Տէրոյինց պատուելին առաջին երկու գումարումներուն մէջ անյաջողութիւն տեսնելով իր նպատակը յառաջ տանելու՝ երրորդին մէջ բացակայութեամբ կը փայլի, մինչ խուսներամ ճշմարտախնդիրներ ի նանիր կըսպասեն երկար ժամանակ և յուսախար լինելով կը մեկնին. ահա այսպիսեալ կը վերջանայ Լուծիչ Տարակուսանացն ևս: Ընթերցողք չպիտի զարմանան այս վերջին եղելութեան, եթէ գիտեն կամ գիտնան՝ Պրուսացի Տէրոյինց Չամուրճեան Յովնանէս պատուելի ըսուած անձին ո՞վ և ինչ նկարագրի աէք ըլլալը: Կը թողունք որ այդ ծանօթութիւնը տայ Հայաստանեայց եկեղեցւոյ հարազատ

և հանրաժանօթ ոմն հրապարակագիր, որ բսեր է, «Ով էր Չամուրճեան. լատինական կրթութիւն առած, անոնց աստուածաբանական գրքերովը հրահանդուած հայ անուն կրող իսկ լատինաց հացովը ասորոզ գաղա՛խ ունիդոր մը» : (1) Որքան ցուտի է, որ Չուհաճեան Մատթէոս պատրիարք այդ ունիդոր բռւած անձին հետ գլուխ գլխու առած այլանդակ գրուածներ հրատարակիր է ի վեաս ազգին և Հոյ եկեղեցւոյ : Ըստ Տէր Մելքիսեղէկ Մուրատեանցի («Մատթէոսի գրուածոց մէջ (անտարակոյտ Չամուրճեանի մասներով) շատ հակասութիւններ կան . . . և մանաւանդ որ կամելով Հարոսատտեայց եկեղեցին պաշտօնական թուղթակումուժեան գէ՛մ՝ տեղ տեղ բոլորովին անգլխարար խորատու դած է Պապականութեան մէջ ») (2)

Այս միջոցին, այսինքն 154) թուականին, ուստաբանականք Պոլսոյ մէջ ամուսնութիւններ ունեցան պատկիարարազութիւնների պատրիարքարանի արտօնութեամբ և ի ձեռն միայն ասներէջ քահանաներու սովնայն պարզութիւնով և որին սկիզբ վայելչութիւնով կատարելով ի մեծ գոհունակութիւն թէ ամուսնացողներու և թէ հանդիսականներու : Մասնաւոր թողաւութիւնով չգործածուեցաւ հարա՛փ, նարոս և մամ : Յետ պատկի վայելուչ իսկ պարզ հիւրամեծարութիւն մը կատարուած առանց որ և է սգիկից բժպելիի, քահանայ և հանդիսական իրենց բարեմազութիւնն կրկնելով կր մեկնին : Եւ զարմանալի չէ որ հասարակութեան մէջ այս եղելութիւն կը խօսուէր ամէն բնտանեաց մէջ իրրև կրօնական խիստ վայելուչ բարեկարգութիւն : Ամուսնութիւնք միօրինակաբար երեք էին յիշեալ թուականին : Ս . Մկրտիչ շ . Ծիլաճեան, Պատ . Հ . Ա . Ս . Իւթիւճեան և Փամգործ Եփրեմ Տ . Միքայէլեան :

(1) Բիւզանդիոն, Փ. սարի, Թիւ, 1131:

(2) Պատմ. եկեղ. Կլ. Գ. 4. 616:

Ամիրաներու զրկուած գրեւր.— Մեծ յուզմունք պատրիարքարանի մէջ.— Քարոզութիւն ընդ դէմ Աւետարանականաց— Չարիք եւ աղիւնք հալածանաց:

Պոսոյ Միսիոնարութիւնն լաւ կը համարէ իր այլ և այլ հոգեչան հրատարակութիւններէն իր կողմէ զրկել ամիրաներէ ոմանց, որոնք բարեկարգութեան գաղափարին հակառակ կուսակցութեան գլխաւորներ կը ճանչցուէին:

Ամիրաներ՝ յոյժ կը լսարանան սոյն եղելութեան մասին և ծրարները միաբան պատրիարքարան կը զրկեն, իրենք ևս միատեղ կերթան և կը բողոքեն պատրիարքին, և կըսեն որ այս օրինակ գործողութիւններուն առջևը առնելու համար ինչ որ պէտք է ընել ընելու է, և թէ ոչ հրաժարելու է անմիջապէս: Պատրիարքն որ արդէն Աւետարանականութեան ազգին մէջ ծաւալումն արգիլելու համար ի գործ դրած միջոցներուն յուսախարութիւնովը կամ անյաջող ելլելով կը առնջուէր, պաշտօնականութեան այս վերջին սպառնալիքն վերջին ծայր դայրացուց զինքը, և այլեւ սկսեց եկեղեցւոյ տակաւնէն ընդ դէմ Աւետարանականներու անձանք քարոզներ խօսիլ:

Այդ քարոզներէ միոյն ներկայ գտնուող ծանօթ անձ մը կը պատմէր որ մինչ կզգուշացնէր ժողովուրդը ժամանակին երևոյթն եղող կրօնային շարժումէն՝ Պօղոսի առ Կոզոսացիս գրած սա պարբերութիւնը յառաջ կը բերէ. «Զգուշ լերուք, մի ոք իցէ՝ որ զյեզ կոզոպտիցէ ճարտարամտութեամբ և մտախիտաբէութեամբ՝ որք ըստ մարդկան աւանդութեան՝ և ըստ տարից աշխարհիս, և ո՛չ ըստ Յիսուսի Քրիստոսի:»

Այս պարբերութիւնը իբրև վկայութիւն իր ըսածներուն մէջ բերած ատենը Ս. Քրքէն՝ յիշեալ ուշազիր և

ճշմարտասէր ունկնդիրը կը զխտէ որ բերած վկայութեանը մեջէն «որք ըստ մարդկան աւանդութեան» երկու թառերը պակսեցուցած է. որովհետեւ քարոզին մէջ Աւետարանէն դուրս կամ հակառակ մարդկան աւանդութիւններ մտնողներն իրրեւ մոլորեալ և հերետիկոս կը զրպարտէր, և ժողովուրդը անհնգմէ զգուշացնել կաշխատէր, Յաւայի է կրտսէ այդ քարոզը լսողը՝ որ եպիսկոպոս մը նոյն ատեն պատրիարք իսկ լինելով՝ կրնայ եղեր այոց առիթ տալ իր նկատմամբ խորհելու, որ ճարտարամտութիւնով և սնտոի խարէութիւնով խօսքեր պակսեցնելով Աստուծոյ խօսքէն սատանային կամ հոգւոց թշնամիին որինակին հետեող ճանչցնել տայ ինքզինք: Այնպէս է. քանզի երբ որ Մատթէոսի Աւետարանին Գ. գլ. 6 ըրդ. համարը կը բաղդատենք Սաղմոսի 2Ա. 11, 12 համարներուն հետ՝ սատանային սեպհական գործն լինել կը գտնենք Սուրբ Գրքէն վկայութեան բերուած համարէ մը ճարտարամտութիւնով և սնտոի խարէութիւնով խօսք կամ խօսքեր պակսեցնելու հնարամտութիւնը զոր ցուցուց սատանան երբոր կը փորձէր զՅիսուս:

Չենք զարմանար երբոր այդ հոգւոյ տէր եղող անձ ըլլայ պապ, կաթողիկոս, պատրիարք, եպիսկոպոս, վարդապետ, քահանայ և կամ թագաւոր, իշխան, դատաւոր և մինչև իսկ ժողովրդեան դատուն վերաբերեալ աննշան ոք, կրնայ անմեղներ զրպարտել, նախատել, հալածել, չարչարել և ճշմարտապէս ամենասուրբն և ամենէն տրդարն իսկ ի խոսչ հանել:

Ո՛չ ապաքէն երկրի վրայ եղածն ու տեսնուածը խկզրանէ անտի այս եղած է, ու այսպէս տեսնուած է:

Եզնակ տէր Վրթմանէս որ նախորդ պատրիարքի օրէն հետէ կը մնար Արմաշու վանքն աքսորուած, թէև իրապէս իրրեւ Աւետարանիչ կը գործէր այն խաղա-

դիկ վայրի մէջ և Միտրանք առ հասարակ համարած էին այդ աքսորեալն խնայուածն հայր մը որ կը դաստիարակէր զիրենք Աւետարանական ճշմարտութիւններով : Բայց գաւառին քաջաձանձօթ Մելգոն չորրորդի մեծ ազայ, իմանալով յիշակ քահանային կացութիւնն ու զօրժքերը կամրատանէ զայն Մատթէոս պատրիարքին լսելով «Եթէ Տէր Վրթանէս աւելի երկար տանն մնայ Արմաշու մէջ, բոլոր վանականներն ձեռքէ պիտի կլինն» :

Մատթէոս որ մաագիր կը գտնուէր բարեպաշտութեան միաբանութիւնը նուաճելու, թերեւս անոր երկիրը մը ազդելու դիտուորութիւնով իր կարողութիւնը նախապէս հէք քահանային վրայ փորձել կակսի և կը ձեռնարկէ զայն հետաւոր վայր մը փոխադրել, սակայն որովհետև կառավարութեան նորոգ հաստատուած օրէնսդրութիւնը (թանգլիմաղ) չէր ներեր-կրօնական համոզումի պատճառաւ հալածանք կամ աքսոր, վանորոյ կը զըրպարտէ կառավարութեան առջև հէք քահանայն իրրև սոսկալի շարագործ ոք իր հօտին մէջ, և կը յաջողի այսպիսեալ ստանալ կրկին աքսորանաց հրամանագիր որով նոյն թուականի փետրուարի մէջ Արմաշէն Կեսարիոյ Սուրբ Կարապետի վանքը կը փոխադրուի աքսորեալն ձմրան սաստիկ օդերուն, մանաւանդ ցամաքի համրով : Իսկ նա երբեք բանի տեղ չդնիր իր կրած ձմրու տառապանքն ու նեղութիւնները, մանաւանդ նախախնամական անօրէնութիւն մը ըլլալ կրնդունի այդ եղածները, որովհետև իր եռանդն ու նախանձը աստուածային այն մեծ ճշմարտութիւնը քարոզելու համար այնպէ՛ս էր, որ կապանք, աքսոր և այլ նեղութիւնք կարող չէին մարել : Միտքը ազատ էր խորհելու և լեզուն ազատ էր խօսելու այն ճշմարտութիւնը, որով ինքը այնքան ազադուած ու ներգործուած էր. շնորհով ձրի փրկութիւն արդեամբն Յիսուսի :

Առաջին ամերիկացի Միսիոնարը որ հաստատուած է Կեսարիոյ մէջ 1852 թուականին՝ ըսած է իրաւամբ որ իր գալն առաջ հոն աքսորուած տէր Վրթանէս անուն քահանայի մը աշխատութեան արդիւնքները տեսած է, և կը յուսայ ալ աւելին տեսնել: Այո, կան հիմայ թէ հոն և թէ անկէ տաք ու անդ ցրուեալ կամ գաղթեալ շատ ազնիւ Աւետարանական գերդաստաններ, որոնք կը խոստովանին թէ իրենց հայրերն յիշեալ քահանային քարոզութիւնովը ծնած են Աւետարանէն:

Եւ նաև յառաջագոյն Սերովլեան Յակովբոս Պատրիարքին ժամանակ կատարուած հալածանաց մէջ նոյն վանքը տարագրուած Ֆիզիգա Պօղոս և Յովհաննէս Տէր Սահակեան ուսուցչաց քարոզութիւններով: Այս յիշեալ ուսուցչաց առաջինին Ֆիզիգա տիտղոսը սրուած է այն ատեն բնագիտութեան մէջ իր ունեցած տարօրինակ հանճարին համար:

Քահանային ազատութեանը համար իզուր կաշխատուէր իր ազգականաց և բարեկամներուն կողմանէ, քանզի պատրիարքն կը կրկնէր իր զրպարտութիւնն ու չարախօսութիւնը թէ պաշտօնին հակառակ վատ և չարագործ մարդ ըլլալուն համար աքսորուած է: Իսկ Նէք բնտանիքին թախտանձաքը հրե երթալով կաւելնար, այդ ատեն պատրիարքն կտախտուի բերել, միայն պայմանով որ կամ բոլորովին ձգէ քահանայութիւնը և կամ երթայ Նիկովիդիա բնակի, մայրաքաղաքէն հեռանալով: Այս պայմանները կը գրուի, իսկ քահանան բաց նամակով կը պատասխանէ, նորին Սրբազանութեան, բակով ի մէջ այլոց. «Եթէ հաճութիւն չունիք որ Եկեղեցւոյս մէջ քարոզեմ իմ Աւետարանական համոզումներս իբրև քահանայ, պատրաստ եմ հանել վրայէս քահանայական սքեմս ու պատիւս, բայց ո՛չ աշակերտութիւնս

ու պաշտօնէութիւնս Տէր Յիսուս Քրիստոսի» : Սակայն նոյն թուականի Յուլիսի երկրորդ օրն օսմանեան վեհաժողովայնի Սուլթան Ապաիւլ Մէճիաի գահակալութենն տարեդարձն լինելով՝ շատ աքսորուածներու ներում կը շնորհուի, որոնց մին ալ կըլլայ Տէր Վրթանէս որ ողջամբ կը վերադառնայ :

Մելգոն Չորպաճի, Նիկոմիդիոյ գաւառի մեծ աղան, քահանային մասին ունեցած վաղանցուկ յաջողութենէն խրախուսուած և իբր թէ Մասթէոսի հետ զաշնակից եղած՝ կը համարէ թէ ալ իրեն համար բան մը չէ չորցնել ու ոչնչացնել գաւառէն այն ամէն բարոյական բնձիւղներ՝ որ թէ աքսորուածին և թէ ուրիշներու սերմանած Աւետարանական սերմերով յառաջ եկեր և ուռճացեր են, մանաւանդ Ատարազար ուր մինչև իսկ ոմանք անդամակցեր էին Կոստանդնուպոլսոյ մէջ արդէն կազմուած Բարեպաշտութեան Միաբանութիւն ընկերութեան : Արդ 1845 անպակեմբերի մէջ յիշեալ Աւետարանականներու մէկ քանին Արմաշ կը բերուին Չորպաճիին հետազննութեամբ և հոն կը բանտարկուին որոնցմէ մէկն ըլլալով Տէր Աթանաս անուն քահանայ մը, որուն հետ խիստ հակակրութիւնով կը վարուի Չորպաճին թերևս կարծելով որ նա է Միաբաններն քաջաբերող : Խաչվերացի տօնին, որ տարւոյն այդ եզանակին կըլլայ, ուխտաւորներու մեծ բազմութիւն կը գլմէ Արմաշ՝ դաւառին ամէն կողմերէն, յայնժամ Մելգոն Չորպաճի՝ ընդհանուր գաւառական ժողով մը կազմել կը ձեռնարկէ և իր իշխանութեան գործութիւնը ամենուն ցոյց տալու խրոխտանքով բերել կուտայ բանտարկեալներէն մէկը Տէր Աթանաս Աթանասեանն և առանց հարցափորձի կանխաւ պատրաստուած ստիբիլին առջև նստիլ կը հրամայէ հէք քահանային որուն մօրուքն ու զլուխը թողորովին ամիլել կուտայ ու այնպէս

բանտ կը դրկէ դարձեալ : Միւս բանտարկեալք տեսնելով հէք քահանան այնքան այլակիրպած ու նախատուած , յոյժ կզգացունին իրենց ալ ինչ պատահիլիքը չգիտնալով , և միաբան աղօթքի կը կայնին և ինքզինքնին Աստուծոյ պաշտպանութեանը կը յանձնեն : Այս եղելութիւնը վանքին միաբաններուն սրտին մեծ սարսափ եւ ահ ու դող կազդէ . իսկ անոնցմէ մին Չէնկիլերցի Միքայէլ վարդապետ ծածկարար բանտ կը դիմէ , և խռովեալ լալագին մեղմ ձայնով Փրկչին մերոյ Յիսուսի հետեալ խօսքերը կարասանէ բանտարկեալներուն ի մխիթարութիւն . «Յրանի է ձեզ՝ յորժամ նախատիցեն զձեզ և հալածեսցեն , և ասիցին զամենայն բան չար զձեռն՝ սուտ վասն իմ , ցնծացէ՛ք և ուրախ լիբուք զի վարձք ձեր բազում են յերկինս , զի այսպէս հալածեցին զմարգարէսն որ յառաջ քան զձեզ էին» : Մատթ . Ե . 11 :

Աշխարհական անձի մը կամքով Եկեղեցականի մը այդպէս հալածուիլն ու նախատուիլը արդարեւ տարօրինակ բան է , սակայն դորձադիրն Մատթէոս Պատրիարքի դաշնակիցն ըլլալը կրնայ խնդիրը պարզել : Գաւառակոն ժողովոյ այդ նիստը կաւարտի միայն եղածովը , և որչում կըլլայ յաջորդ նիստին մէջ դատել միւս բանտարկեալներն ի ներկայութեան Նիկոմիդիոյ թեմական առաջնորդին , որ տօնին առթիւ քիչ օրէն ներկայ պիտի գանուի Առաջնորդ , նախկին Սահփաննոս պատրիարք , կը ժամանէ հօն , և տօնի երրորդ օրն նիստը կը բացուի ընդ նախագահութեամբ առաջնորդին . բանտարկեալները կը ներկայանան առանց նախատուած քահանային : Յայնժամ նախագահ սրբազանն ինչ ինչ հարցումներ կուզէ բանտարկեալներուն ամենայն քաղցրութիւնով , իսկ Մելգոն անճանքեր անոնց պատասխանին սպասելու՝ կսկսի անվայել ու անպատշաճ խօսքեր բարբանջել խրոխտ կեր-

պով յաւելլով թէ, «որչափ ատեն որ այս գաւառի մեծն
 եմ, կործանեմ պիտի ամէն այն օջախները որ ասոնց
 խումբին կը վերարերին:» Ասանկ կը խօսէր թրքերէն, և
 անտարակոյս յետին ծայր տգիտութիւնն էր ասանկ խօսե-
 ցնող ինչպէս յայտնի կերելի սա պարագայէն: Նախագահ
 սրբազանն երբ իր մեզմ և յանկուցիչ կերպով վերստին
 կը հարցնէ բանտարկեալներուն. «Չէ՞ որ դուք ամէնքդ
 մեր ճանչցած Հայաստանեայց եկեղեցւոյ զաւակներն էք
 ևն. ևն, որոնց մին կարապետ վարժապետ կը պատաս-
 խանէ ամենուն կողմէ, «այո՛»: Չորպաճին յանկարծ կը-
 րակ կը կտրի «այո՛» բառը լսելով հէք վարժապետին բեր-
 նէն, որովհետև այն ժամանակներ այո և ոչ բառեր խօ-
 սակցութեան մէջ գործածողն իսկ Աւետարանական կամ
 Էոզոքական կը համարուէր: Նախագահ սրբազանն ի զուր
 կաշխատի հասկցնել որ, «այո՛» հայերէն բառ մըն է և դը-
 րական պատասխան էր իր հարցումը. բայց Մելգոն
 կատրած կը բարբանջէ կը կենայ: Այս գէպքը պարզ կը
 ցուցնէ թէ այդ ժամանակներ ազգին զեկը ձեռքերնին
 ունեցող մարդիկ քիչ բացառութիւնով ո՛ր աստիճան տը-
 գէտ մոլեռանդ և նախասպաշարեալ էին: Վանականներէ
 մէկը, Յակոբ վարդապետ, խօսք կառնէ և իրր մօտէն
 ճանչցող բանտարկեալներուն ամէնքը՝ կը գովէ լանոնց
 կենացն ու վարուչը մէջ իր տեսած քրիստոնէալպայել
 բարի յատկութիւնները և այլն: Վերջապէս ժողովն միա-
 բանութիւնով կորոչէ զբաւոր խոստմամբ որ հնազանդ
 պիտի ըլլան եկեղեցւոյն այնպէս ազատ արձակուին:
 Բանտարկեալներն ամանայն պատրաստակամութիւնով կը
 խոստանան ըսելով՝ «Մենք ամէն կերպով հնազանդ ևնք
 Եկեղեցւոյ և գէպի այն ունեցած պարտաւորութիւննիս
 ու ձեռքերնուս եկամ ծառայութիւնը կատարել ի վառս
 Աստուծոյ, և ի լուսաւորութիւն մեր սիրեցեալ ազգին՝

քաղելով Սուրբ Աւետարանին մեր առջև բացած շաւղին մէջ : Ուստի ազատ կարճակուլին ու տեղերնին կերթան . բայց Տէր Աթանաս ժամանակ մը կը հիւրնկալուի վանքը ամինայն սիրով՝ մինչև մօրուացի գալը , զի ամօթ կը համարէր ամիլուած մօրուքով Ատարազար մօնել :

Արդ , բարեկարգութեան գաղափարը յաւելտ կը տարածուէր ի հեճուկս հակառակօրդաց թէ մայրաքաղաքիս թէ գաւառներու մէջ . Ատարազարէն կանցնի Կէյ-վէ , Գրնճրլար , Թամիրք . Գուրապէլէն և ուրիշ գիւղեր և որոյ մէջ կրօնական շարժու՛ր կը զօրանայ : Սակայն ցաւալի է չոս յիշատակել ա՛ռելի արկածն , որ այն Արմաշու մէջ , բանասարկուածներու ազատութենէն իրր ամսոյ մը չափ ետք՝ տեղի կունենայ Գուրապէլէն գիւղի զառիվայրին վրայ , ուր Մելգոն Չօրսաճի ձիւն ինչալով չարաչար կզրուուի կեանքէն : Թէպէտ մեր նրպատակէն դուրս է այն ցաւալի ախուր օրերու ամէն մէկ դէպքերու մտնրամասնութիւններուն մանկ , որ առիթ տուեր են սիրելի ազգիս երկրորդ անգամ պառակտելուն , ինչու որ գիտենք թէ հիմա չկայ ողջամիտ ազգային մը արդարացնող ազխտութեան ժամանակի գործիչներուն ազգամիտս արարքներս . բայց ի գխտութիւն և ի զարմացումն գալու սերունդին կայ պէտք յիշելու ինչ ինչ իրողութիւններ ու դէպքեր :

Բարեպաշտութեան Միաբանութիւն անուանեալ խումբին անդամակցիլ սկսեր էին այս միջոցին այլ և այլ գաւառներէ Աւետարանին աշակերտողք , և որոնք նուազ նեղութիւն կամ հալածանք չէին կրիր իրենց ազգակիցներէն քան որչափ կը կրէին Պոլսերնակք և Ատարազարցիք ևն : Տրապիզոնի մէջ հանգուցեալ աիկնոջ մը անկենդան մարմինը անթաղ կը մնայ իր այրը մահուսի Պետրոս Պալեան՝ Բարեպաշտութեան Միաբանութեան

վերաբերելուն համար, հանգուցեալին առն և բարեկամ-
ներուն ազերսը անլսելի կրկայ տեղւոյն առաջնորդին, ու
վերջապէս թուրք հայրենակիցք գթալով թողել կուտան
իրենց գերեզմանատան կից արտի մը մէջ: Առաջնորդին
մնուեալի մը հետ ունեցած այդ վարմունքը շատ տխուր
ազդեցութիւն կուեննայ տեղւոյն ազգայիններուն և
խնդրագիր կը դրկուի պատրիարքարան սրպէսզի այդ
կարգի տխրազգեցիկ գործքերու առաջքն առնուի: Մա-
կայն Մատթէոս պատրիարք խնդրագիրն աչքէ անցունելով
յետին ծայր պաղարիւնութիւնով կրսէ գիրը ներկայա-
ցնողներուն. «Նոյն կարգի բաներ հոս ալ պիտի ըլլայ»: Քանի
մը օր ետք ուրիշ նամակով մը լուր կուգայ մայ-
րաքաղաք ծանուցանող թէ՛ տեղւոյն դերձակապետ Թա-
ղէոս անուն անձը յանկարծ կորսուած ըլլալով բնաւ տե-
ղեկութիւն մը չունենալին, մանաւանդ թէ՛ բնատանիքին
ու բարեկամներուն թախծագին ազաղակնուն սիրտ չդի-
մանայր:

Բարեպաշտութեան Միարանութիւնն Տրապիզոնէն
առնուած այս սրտաճմկիկ լուրին վրայ ինչ կրնար խոր-
հիլ և ինչ կրնար յնել, միայն կը խօսուէր ամէն տեղ
կորսուած անձին վրայ և ցաւ կը յայանուէր: Օր մը մինչ
երկու եղբայր կը խօսէին փողոցի մէջ այս խնդրոյն վր-
այ, ձերուկ ոմն լսելով ատոնց շշուէշը՝ կրսէ. «Այս եր-
կուշարթի առտու արչայութեն առաջ մուտ առնն երբ և-
կեզեցի կերթաի, Մայր եկեղեցւոյ բարապաններէն մէկը,
ճիւղը լսել անցուած մարդ մը կը տանէր դէպի Եէնի Գա-
փու, մարդը կաղաչէր բարապանին որ գոնէ Տրապիզոն
բնատանիքին լուր գրկելու պատահութիւն չնորհուէր իրեն
թէ՛ ողջ է և Փրկիչ կը տարուի»: Մերուկին ամենայն
պարգութիւնով այս ըսածը կը ծանուցուի Բարեպաշտու-
թեան Միարանութեանն և մինչ նոքա կը խորհէին, գոր-

ծոյս հեղինակը չկրնալով հանդուրժել և արգէն տեղեակ
 ըլլալովը որ այնպէս գաղանարար կամ գողունի կերպով
 Ս. Փկչեան հիւանդանոց տարուածները ո՛ր կողմ և ո՛ւր
 կը դրուին, առանց ուրիշի մը յայտնելու ուղղակի ձի մը
 հեծնալով շունչը Եէտի Գուլէ կառնէ: Եւ անդ հիւան-
 դանոցին մէջ որպէսզի արգելքի մը չհանդիպի ուղղակի
 անկեկանոցի կողմը կերթայ և այն տեղ առաջին ծայրէն
 սկսած անկեալ ձերեր որ պառկած են միոյն և միւսին
 հետ խօսելով մխիթարելով կը յաջողի բուն իր կարծած
 և գիտցած խշտին մէջ գանկ զկապեալն ճիտէն անու-
 բով (լալէ) պատին տմուր պրկուած և հէք կապեալին
 երկու ձեռներն իր ձեռացը մէջ առած՝ հագիւ կրնայ ը-
 սիլ: Քաջսիրուէ՛ եղբայր, բաւական է հոս այս վիճա-
 կին մէջ զքեզ տեսնելս. մի երկնչիր: Յայնժամ բանտա-
 պահն իսկոյն գալով և աղաչանօք կը խնդրէ որ դուրս
 ելլէ այցելուն քանզի իրեն սաստիկ պատուիրուած ըլլա-
 լով սամէն զգուշութիւնով պահել բանտարկեալն՝ հիմա
 պատասխանատու պիտի ըլլայ և հաւանականորար հացէն
 զրկուելով պիտի արտաքսուի: Այցելուն խոստանալով
 հիւանդանոցին մէջ բնաւ մէկուն չյայտնել կապեալն իր
 տեսած և հետը խօսած ըլլալը դուրս կելլէ, և ուղղակի
 տեսուչին կերթայ, ու կը խնդրէ որ Տրապիզոնցի Թա-
 դէոս անուն հոն բանտարկուած անձը ցուցուի իրեն. նա
 կուրանայ հիւանդանոցին մէջ այդ անունով մարդ զբա-
 նուիրը, և կայի չկայի բաւական խօսք ըլլալէն հօք երբ
 այցելուն տակաւին կը պնդէ կայ ըլլալը, յայնժամ միւսը
 կը բարեհաճի ըսել եկուր մէկտեղ երթանք որոնենք ամէն
 կողմ, եթէ կայ ես այ տեսնեմ:

Արդ, այցելու և տեսուչ կեղևն սենեակէն, առաջինը
 կուգէ այն կողմը յառաջանալ ուր տեսեր էր բանտարկ-
 եալն իսկ տեսուչն հակառակ կողմը և երբ այս կողմ սր

այն կողմ ըսելով խօսքը կերպարի, տեսուչն բարձր ձայնով «ես իրրե հաստատութեան տեսուչ՝ հոս Տրապիզոնցի թագէտս անունով մարդ չեմ գիտեր, և չկայ կրսեմ կը գոչէ ու ես գէպի իր սկնեակը կսկսի դառնայ: Նոյն պահուն սակաւամիտ մտղմը որ երկու դոյնով ջուր կը տանէր գէպի խոհանոց՝ լսելով տեսուչին յարձր ձայնով ըսածը, քրթմնջմանիւ և ծիծաղով կրսէ թրքերէն. «Պէնի աէլի տիյերէք պուրոյա քոմու շար, նազըրմը պէնսէն աէլի օլմար քի կէչէն երկու շարթիաէն պէրու անկարդար գօլուչունըն արքա աէլիինտէ պողլամըչ օլուղը թագէտու ունութմըչ»: Տեսուչն լսելով այս քրթմնջիւն կը գոչէ բարկութիւնով. «այս յիմարը ով քակեր է տեղէն շուտ թող իր տեղը տարուի»: Խեղճ մարդը կը տանին անմիջապէս իսկ այցելու և տեսուչ դարձեալ կը շարունակեն որպէս թէ խուղարկութիւննին ու վերջապէս կը հասնին հոն՝ որ կապուած էր թագէտս իրր կէս ժամ առաջ. բայց աւանդ հիմա համարձած էր:

Այցելուն դարձեալ չյայտնելով իր որոնածն կէս ժամ առաջ հոն տեսած ըլլալը, որպէսզի բանտապահին յետս չըլլայ և իր խոստանըր գէմ գործած չըլլայ, քաղցրութեամբ քանի մը խօսք կը խօսի տեսուչին անոր առ տնի սխալ գաղտնապահութեանը համար ու կը մեկնի: Ապա քանի մը ժամ անցնելով Բարեպաշտութեան Միարանութեան կարգադրութիւնով երկու անձ կը ժամանեն հիւանդանոց և պարագ կը դառնան նոյն ուրացումն ըլլալով տեսուչին կողմէ անոնց ևս: Իսկ իմացուելով հէք կորուածին ողորմելի կացութիւնը նախորդ այցելուին ի գործ դրած կերպովը, բնականապէս խնդիրը ծանր կերպարանք կառնու թէ օտարներուն և թէ՛ Բ. դրան առջև. հետեաբար Մատթէոս պատրիարք կատիպուի սնձամբ երթով հիւանդանոց արձակել բանտարկեալը խօսելով ա-

նոր նա ամենայն քաղցրութեամբ նոյն ատեն մտիթարելով որ կրած տառապանքը Յիսուսի համար լինելով պէտք է համբերութեան վարժութիւն մը եղած համարի : Թէ եղածը առանց իր գիտութեանն ու կամքին կտտարուած սխալանք մըն է , են . են . ըսելով կը թողու երթալ : Նոյն օրն Բարեպաշտութեան Միարանութիւնը ծոմապահութեամբ աղօթք ընել կարգադրած ըլլալով որ մէկտեղ եկած էր՝ կսրոտեալն յանկարծ կուգայ կը մտնայ անոնց մէջ , և ազատութեանն համար մատուցանելի աղօթքը գոհարանութեան կը վերածուի :

Կրօնական համոզումներու համար հալածանք , աքսոր որչափ որ ախիլուած էր տէրութեան նոր օրէնագրութիւնով՝ տակաւին եկեղեցական պատժոյ պատրուակաւ անխնայ կը կատարուէր . մանաւանդ Գաւառները : Իսկ Բարեպաշտութեան Միարանութեան բեկերակցողք կաւելնային օր քան զօր , և որոնցմէ ոմանք առաւել ջերմաւորութիւնով կը յաճախէին եկեղեցի հակառակ իրենց ազիտութեան ատենի սովորութեան երեսնին երիցս խաչակնքած դուրս ելնելու՝ կը սիրէին մնալ . մանաւանդ Տէրունական օրեր կը մնային մինչև վերջ : Եւ պաշտամանց ա՛յն մասերուն կը մանակցէին միայն , զորս Աստուածահաճոյ և սուրբ գրոց համաձայն կը համարէին : Եւ որչափ սիրելի է լսել ժամարար քահանային արտասանած այն վերջին մաղթանքները , «Որ օրնես զայնստիկ՝ որք օրհնեն զքեզ Տէր , և սուրբ առնեն զյուսացեալս ի քեզ : են , են » :

«Կեցո՛՛ զժողովորդս քո , և օրհնեա՛ զժառանգութիւնս , զլրումն եկեղեցւոյ քո , պահեա՛ » :

«Սրբեա՛ զսոսա որք ողջունեցին սիրով զվայելութիւն տան քո » :

«Դու զմեզ փառաւորեա՛ Աստուածային զօրութեամբ քով, և մի թողուր զյուսացեալս ի քեզ:»

«Զխաղաղութիւն պարգևեա՛ ամենայն աշխարհի- եկեղեցեաց, քահանայից, թագաւորաց քրիստոնէից և զինուորեալ մանկանց նոցա և ամենայն ժողովրդեանս:»

«Զի ամենայն տուրք, և ամենայն պարգևք կա- տարեալք, ի վերուստ են իջեալք առ ի քէն. որ ես Հայր լուսոյ՝ և քեզ վայելէ փառք, իշխանութիւն և պա- տիւ, այժմ և միշտ և յաւիտեանս. Ամէն:»

Ի՛նչ աստուածահաճոյ գործ կատարած պիտի ըլլային պատրիարքն ու իր համախոհք, եթէ Հայաստանեայց եկե- ղեցւոյ այդ մտաւարժ զաւակունքն փոխանակ հալածելու և արտաքօսելու, հայրական գգուանքով ընդգրկէին և միանային անոնց հետ ի խնդիր բարեկարգութեան, որոյ հարկաւորութիւնն ու պէտքը ոչ ոք կուրանայ և Աւե- տարանական աննախապաշար մաքուր և ողջամիտ հայե- ցողութիւնով վերածէին զՍիրոն տունն Աստուծոյ իր նախ- կին առաքելական անխառն և անպղտոր շաւղին. ո՛չ ա- պաքէն Ս. Աւետարանը ձեռքերնին ունէին և ունին:

Գ Լ Ո Ւ Խ Ժ Է .

**Սկիզբ Ս. Հաղորդութեան — Մաթէոս եւ Նորա վերջին
խումբ — Անաբէմա եւ հետեւութիւն — Յայտա-
բարութիւն Աւետարանականաց — Նոյնն
հակառակորդ կողմէ :**

Բարեպաշտութեան Միաբանութեան կողմէն ոմանք 1845 Մարտի սկիզբն իրենց Քրիստոնէական կոչմանն ու պարտուցը վրայ խորհրդակցած ատեննին ի մէջ այլոց կը խորհին նաեւ, թէ ինչպէս պարտաւոր են ըստ սահմանադրութեան Տեառն և ըստ օրինակի նախկին հաւատացեալներու որպէս գրուած է, «Հանապազորդեայք վարդապետութեան առաքելոյն և հաղորդութեան, և բեկանելոյ հացին, և աղօթից»⁽¹⁾ : Հանապազորդի առաքելոց վարդապետութեան և աղօթից կարելի է իրենց՝ բայց հաղորդութիւն և բեկանել հացին դժուար. զի չէին կրնար կատարել այս պարտաւորութիւն մայրենի եկեղեցւոյն մէջ ճշտիւ ըստ սահմանադրութեանն : Հետեւաբար պատշաճ էր կատարել զայս ի ձեռն Պատ. Միսիոնարներու. և կորոշեն նոյն ամսոյ մէջ վայելի այս Ս. Հաղորդութեան փափաքնին առաջին Միսիոնար Պատ. Ո. Կուտիլի տան մէջ՝ ի ձեռն Պատ. Հ. Ծ. Օ. Տուայտի, որ և կը կատարուի ի Մարտ 4 :

Մատթէոս պատրիարք թերևս իմացած ըլլալով զայս՝ մի քանի օր ետք Բարեպաշտութեան Միաբանութեան ընկերութենէն մէկ քանին անգամ մը ևս կը հրաւիրէ և քաղցրութեամբ ու մտերմաբար յորդորել կը ջանայ որպէս զի ետ կենան Միսիոնարներու հետ յարաբերութիւն ունենալէ և կտրեն հաղորդակցութիւննին : «Մի ընդունիք

(1) Մատթ. ԻԶ. 26—28, Կորն. Բ. 42 :

կ'ըսէ ինչ բաներ որ խիղճերնուդ դէմ կը համարէք եկեղեցւոյ մէջ, չեմ ստիպեր ձեզ որ խոստովանանք, հաղորդութիւն և ուրիշ ձեր համոզումներուն հակառակ եղող բաներ ընէք, միայն թէ գիտցածնիդ դուք գիտցէք և մի տարածէք, մի քարոզէք ուրիշներուն:»

Հրաւիրեալք խոնարհութեամբ կը պատասխանեն որ ճշմարտութեան սէրն կ'ստիպէ զիրենք խօսիլ և քարոզել ինչ որ գիտեն թէ փրկարար և աստուածային ճշմարտութիւն է: Եւ կը յաւելուն Յակովբու առաքելոյն ըրած յորդորը որ կ'ըսէ, «Եղբարք իմ, եթէ ոք ի ձէնջ մոլորիցի ի ճշմարտութեան ճանապարհէն և դարձուցէ ոք զնա, գիտացէ զի որ դարձուցանէ զմեղաւոր ի մոլորութեան ճանապարհէն իւրմէ, փրկեցէ զճոգի իւր ի մահուանէ՝ և ծածկեցէ զբազմութիւն մեղացի»⁽¹⁾ Եւ կը հարցնեն, Սրբազան դուք չէ՞ք գիտեր որ մտեր են եկեղեցւոյ մէջ զեղծմունք և մոլորութիւնք օտարոտիք ժամանակ ժամանակ: Նա կը դաւանի որ գիտէ: Հրաւիրեալք կը յաւելուն, ուրեմն մի խրատէք զմեզ լուսկինալ և մեր եզրայրներուն փրկութեան հոգատար չըլլալ, մանաւանդ քսջալերեցէք զմեզ յարատեւել նոյնին մէջ են. ևն. և սիրով կը մեկնին:

Կրնանք վստահորար ըսել որ Մատթէոս որչափ որ ճանչցեր ենք մօտէն, եթէ գիտնար աղբն իր հետ ունենալ իր աստիճաններէ պատէն, փառքէն ու ցանկացեալ յաջողութենէն (կաթողիկոսութիւն), տարակոյս չունինք որ կողմնակից ըլլալ պիտի ընտրէր Բարեպաշտութեան Միաբանութեանն: Բայց չենք սխալիր նկատելով զինք փառասիրութեան մարմնացում, և արդէն մօտեցած լինելով իր ցանկացած փառաց գագաթնակէտին՝ չէր կրնար զոհել այն ամենը, ուստի առանց այլևս վա-

(1) Յակովբու. Կլուխ Ե. 19:

բանկու կ'որոշէ քայարձակաբար ճշմարտութեան հակառակորդի ընթացք բանկ, միանգամայն ձեռք առնելով միջնադարեան խստագոյն միջոցներ ընդ դէմ Բարեպաշտութեան Միաբանութեան :

Արդ, 1845 Դեկտ. 25ին կը հրամայէ վերստին ձերբակալել Տէր Արթուրէս քանանայն, բայց նա այս անգամ իր տան ախրջ Մանասի Սրապիոնի հնարագետ ճարտարութիւնովն կը պրծի իր հակառակորդին ձեռքն իյնալէ, ու այլեւս քոյորովին զերծ կ'ըլլայ այդ վտանգէն : 1846 Յունուար 13 կիրակի ժամերգութեան ժամանակ մայր եկեղեցւոյ բովանդակ լոյսերը յանկարծ կը մարին որ խաւարում կ'ըլլայ, որ ասնն ստեղծելի պատշուժով կը ներկայացուի Տէք քանանային անունը ի լուր ժողովրդեան իրրե «որդի սատանայի և մասնիչ Բրիտոսի» : յետոյ խրատ կը արուի ժողովուրդին՝ համարել զքանանայն իրրե «դե մերժեալ և արտաքսեալ եկեղեցիէն» : Եւ խրատ կը արուի ժողովուրդին թէ «Ով որ ունի զաւակ, կըրայր, ազգական, գործի ընկեր, բարեկամ ևն, ևն, և գիտէ անոնց յիշեալի համ. խո՛ս և գազափարակից լինելն՝ եթէ անոր հաց կամ ջուր տայ և բարե տայ առնէ՝ թող գիտնայ այնպիսին որ իր հոգին պիտի կորսընցընէ մատուած ըլլալով սատանային :»

Դժուար չէ հասկնայ որ ռամբկ և մանաւանդ գուհիկ հասարակութիւնն այն ազիտութեան օրերու մէջ իր մեծաւորէ խրատուած ու զրգուած ինչ չարիքներ պիտի չկրնար բերել Աւետարականներուն գլխուն, որոնք Մատթէոսի և անոր խորհրդակից Տէրոյնցի քմահաճոյքով նոր աղանդ բուռեցան այդ ժամանակ : Յայտնի է որ Հրէաստանի մէջ առաքելոց այսպէս ազանդ մը կար : Եւ այն ժամանակն ալ հալածիչ Հրեայք և հեթանոսք ծաղրութեամբ «նոր վարդապետութիւն», ներձուած կամ

աղանդ և ամեն բան սուտ հաւողներ և մինչև իսկ աշխարհք տակն ու վրայ ընողներ կանուանէին զանոնք: (1) Բայց զարմանալի է տեսնել որ այնչափ տարիներ բաւական եղած չեն այս նորութիւնը հինցընելու այդ երկու գիտունի առջև:

Յոյժ սրտաճմլիկ իրողութիւն մըն է, որ տգէտ և պարզ ծնողք, խնամակալք են, այդ միջնադարեան եպերելի անէծքներու երկիւղէն ակամայ կստիպուէին արտաքսել տուներնէն, գործերնէն իրենց սիրասուններ և պաշտպանեալներ, քանզի Նորին Արքազնութիւն իր անեծքներ և հալածանք Քրիստոսաւանդ երկսայրի սուր անուանել յանդգնած էր: Եւ այսչափով գոհ չըլլալով՝ իր կնիքը կրող թղթեր յանձնած էր տաներէց քահանաներու, որ տանին ստորագրել տան այն ծնողաց որ ոչ միայն պիտի արտաքսեն, այլև զրկեալ պիտի հռչակեն զաւակնին իրենց ժառանգութենէն: Աւելորդ չէ յիշել հոս որդեակէր և գորովալից ծանօթ մօր մը պատասխանը այդ թուղթն իրեն ներկայացնող քահանային, տհաւասիկ. «Դու իբրև տան երէց քահանաս գիտես մինչև հիմա ինչպէս եկեղեցի յաճախած, խոստովանած, և հաղորդուած ըլլալս, և գիտես զաւակասիրութեան ինչ ըլլալը, զի դու ալ զաւկի տէր ես, բայց այդ թուղթը ձեռքդ տուող անզաւակ և անխիղճ մեծաւորդ և թուղթն առնել բերելդ զիս այն աստիճան գայթակղեցուց, որ այսուհետև իմ զաւակներս ուր որ են՝ ես ալ հոն եմ, բաժին չունիմ ձեր հետ, զնա այսպէս բո՛ւ այդ թուղթը քեզի տուող անզգայ և ամբարիշտ մարդուն»: Եւ իրօք իբրև բարի Աւետարանական Քրիստոնեայ մայր ապրած է իր

(1) Գործ. Բ. 42: Մարկ. Ա. 27.—Գործ. ԺԷ 19.—ԻԳ 14.—ԻԸ 22—ԺԳ 18.

զաւակաց հետ, և ի ծերութեան հասակի ննջած է ի Քրիստոս:

Որչափ ցաւալի եղելութիւններ տեղի կունենային, երկար ժամանակեայ սիրելի ամուսինք, բազմաժամանակեայ առևտրական ընկերութիւնք կամայ ակամայ կը բաժնուէին, արհեստաւորական փոխադարձ երաշխաւորութիւնք առաջի կառավարութեան և այլ առնչութիւններ կը քայքայուէին և առանց երաշխաւորութեան մնացողներ ու խանութները փակուելով և անոնց տէրերը առաջի կառավարութեան կասկածելի երեցնելով բանտի կը մատնուէին: Եւ զարմանալի չէ որ այդ հալածուածներէն ոմանք անկարող լինելով դիմանալու՝ ակամայ կ'երթային պատրիարքին հնազանդութիւն խոստանալ և ստորագրել այն գիր որ իրենց կը ներկայացուէր, ահաւասիկ.

«Ամենապատիւ Սրբազան հոգևոր հայր մեր:

«Աստուծոյ յատուկ նախախնամութեամբը Քրիստոնէութեան սուրբ և անարատ կրօնքին մէջ ծնած, և մասնաւորապէս Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյն ուղղափառ վարդապետութեամբը սնած ըլլալով, որչափ պատուով և սիրով նոյն Ս. եկեղեցւոյն որդիական հնազանդութիւն ընէինք ալ նէ, այն անզուգական երախտեաց փոխարէն հատուցում մը չէր կրնար ըլլալ, այս յայտնի է: Բայց ափսո՛ս, որ սատանային չար թելադրութեամբը խաբուելով՝ մեր պարտականութենէն պակաս գտնուելէ զատ, նոյն Ս. եկեղեցիին անարատ ծոցէն բաժնուեցանք, անոր առաքելական ողջախոհ և փրկարար վարդապետութիւնը մերժելով՝ նոր ազանդից անխրտրական և ոգեկորոյս մոլորութիւններուն բռնուեցանք: Եւ ասանկով չէ թէ միայն մեր անարատ Ս. եկեղեցին անարգող եղանք որ մեզ Աստուծոյ որդի ըլ-

լալու նորէն ծնաւ Ս. աւաղանէն. այլ և Յիսուսի անսուտ հրամանին դէմ մաքառող գանուեցանք որ իր Ս. եկեղեցին՝ դժոխքի դռներէն չյաղթուելու կարողութիւն արուած է: Հոգւոյն Սրբոյ կարողութեանն ալ մեզանչեցինք, որ Քրիստոսի եկեղեցին միշտ անսխալ ճշմարտութեան մէջ մնալով կառաջնորդէ, և վերջապէս Հօր Աստուծոյ մեզի սարգեւած ձրի շնորհքը ոչինչ սեպեցինք որ մեզ իրեն փառացը ժառանգ ըլլալու մէկ հատիկ միջոցը եղող Ս. կրօնքին մէջ ստեղծել կամեցաւ:

«Ահա այս ամբարշտութեան աղանդին սիրով յարեր էինք և մինչև հիմա կամակորութեամբ այս մոլութեան մէջ յամառած մնացեր էինք, բայց երբ որ Ս. եկեղեցին ձեր քահանայապետութեան Աստուածադիր իշխանութեան ձեռք քանի քանի անգամ մեզ զգաստացնելու խրատ և հարկաւոր միջոցները ընելէն ետքը՝ իրեն Քրիստոսաւանդ երկսայրի սուրը շարժեց, որ մինչև ցորոշումն չնչոյ և հոգւոյ և յօդից և ուղղոյ կը ներգործէ, իսկոյն մեր հոգիին կապ՛րը կտրեցան. սրտերնուս արած թմբութիւնը փարատեցաւ, և կամքեր՛իս բռնող յամառութիւնը թուլցաւ, զգաստացանք մեր անասնական անմտութենէն նարուզողոնոսորի նման, և ճանչցանք որ Աստուածային կարողութեան դէմ է բրածնիս, և այն նորաղանդ խարերայից մոլար քարողութիւնները որ սիրով ընդուներ էինք ուրիշ բան չէ՝ բայց եթէ ամբարտաւանութեան գիւտ, սատանայի թակարգ, անխարութեան աղանդ, լայնարձակ ճանապարհ, որ կորուստը կը տանի:

«Ուստի հիմա այն ամբարշտութեան գործերնուս վրայ զղջալով մեր կամօքը և յօժարութեամբը դիմեցինք նորէն մեր անարատ Հայաստանեայց Ս. եկեղեցւոյն գիրկը, և անոր շնորհական գթութիւնը մեր վրայ նորէն շարժելու համար ձեր հոգւոր քրիստոս-

նէութեան իշխանութիւնը միջնորդ բռնելով կաղա-
 շենք, Հա՛յր մեղայ յերկինս և առաջի քո, որ-
 պէս զի այն առաջին անառակ վարքերնուս անյիշաչար
 ներողութեամբ թողութիւն շնորհէ և ինչ ապաշխար-
 հանք որ զնէ մեր վրայ յօժար կամօք կը վճարենք և կը
 խոստովանինք որ Ս. Եկեղեցւոյն հաւատքը անարատ,
 խորհուրդները Աստուածային, արարողութիւնները առա-
 քելաւանդ, ծէսերը բարեպաշտական, և ինչ որ կրն-
 դունի նոյն Ս. եկեղեցին թէ ի հաւատս թէ ի ծէսս, մենք
 ալ սիրով կ'ընդունինք, և ինչ վարդապետութիւն որ կը
 մերժէ մենք ալ համաձայն նզովիւք կը մերժենք: Եւ
 այս մեր բանիւ և գրով յայանած ճշմարտութիւնը՝ ա-
 ռաջի սրտագէտին Աստուծոյ ալ սրտիւ և մտք կը խօս-
 տովանինք, և թէ որ լեզունիս այլ և սրտնիս այլ ըլ-
 լով, Քրիստոսի Ս. եկեղեցին խաբելու կամ կեղծուո-
 րութիւն ընելու միտք ունինք՝ ճշմարտութեան ազրիւր
 Հոգւոյն Սրբոյ զէմ ստողներուն Անանիային ու Սափի-
 րային մեղացը հաղորդ և պատժոցը պարտական ըլլանք:
 Եւ թէ որ վախնալիւս կամ մարմնուոր չանու մը հա-
 մար կամ անձնական վարկումնիս չի կորսնցնելու մտքով
 հիմա այս կերպ խոստովանելով՝ յետ ժամանակի նորէն
 մեր առաջի ամբարտաւանական ճանապարհը բռնենք, և
 սոյն նզովեալ նոր ազանդից մոլորութեանը և անոնց ու-
 իրենց նմաններուն հետ տեսնուինք, և ինչև իցէ պատ-
 ճառով հաղորդակցութիւն ընենք նէ՛ այն ատենը թէ և
 զեղջի գանք ալ նէ, թէ ըստ հոգւոյ և թէ ըստ մարմնոյ
 պատիժնիս անյապաղ թող զորձադրուի: Եւ ահա այս
 ամեն խոստացածնիս անպակաս սրտիւ ընդունելիս
 հաւատարմացնելու համար իւրաքանչիւրս իր ձեռօք
 ստորագրելով կը կնքենք, երբեմն ատեցող, բայց այժմ
 շնորհքն Աստուծոյ զղջացող որդիք Հայաստանեայց սուր
 և ուղղափառ եկեղեցւոյ:»

«Մեք խոստովանայր քահանայքս կրաչխաւոր գոյով պարտաւոր եմք, զի եթէ յետ ժամանակի վերադարձին՝ ազգ արասցուք Սրբազնութեան ձերում ո՛րք և իցէ խոստովանորդւոց մերոց ։»

Եւ եթէ գտնուէր երբեք մէկը, որ կարենար ստորագրել վերոյիշեալ ամենաստգիւտ խոստովանագիրն, ապա պիտի մտտուցուէր նմա արտագոյ կարքի դաւանագիր մը ևս ի ստորագրութիւն որուն նաեւ ճիշդ պատճէնն է հետեւեալն ։ Մինք այս երկու գրութիւններն ընդօրինակած ենք ըստ բառական և ըստ տառական նոյնութեանց ։

1. Կր խոստովանի՞ս և կ'ընդունի՞ս որ միայն հաւատքը մարդս չկրնար փրկել, այլ հաւատքին հետ յարեգործութիւն ալ պիտի պէտք ըլլայ, և քրիստոնէի մը ուրիշ հաւատք ունենալուն նշան՝ բարի գործերը չեն, այլ ընդհանուր եկեղեցւոց հաւատացածին համաձայն դաւանութիւն տալն է ։

2. Կր խոստովանի՞ս և կ'ընդունի՞ս որ Քրիստոսի եկեղեցին այս աշխարհիս մէջ իրենց հաւատքը յայանի դաւանող և չծածկող հաւատացելոց տեսանելի միութիւնն է՝ որ զինուորեալ եկեղեցի կ'ըսուի, և այն Ս. եկեղեցւոյն գլուխը Քրիստոս է, և Հոգւոյն Սրբոյ առաջնորդութեամբը կ'առաջնորդուի և մինչև ցկատարած պիտի չդադրի և չպիտի պակսի և ամենեւին սխալած չի և հնար չէ որ սխալի, և ամենեւին անանկ ճշմարտութիւն մը չկայ՝ որ Ս. Դրոց մէջ գրուած ըլլայ ու Ս. եկեղեցին գիտցած չըլլայ ։

3. Խոստովանի՞ս և ընդունի՞ս եկեղեցւոց եօթն խորհուրդները՝ որք են Մկրտութիւն, Դրոշմ, Ապաշխարհութիւն, Հաղորդութիւն, Չեւնազբութիւն, Պսակ և վերջին Օծում ։ Եւ եթէ այս խորհուրդները որ և իցէ

Քրիստոնէայ չկրնար տալ, այլ օրինաւոր ձեռնադրութեամբ կաթողիկոս, եպիսկոպոս և քահանայ ըլլալու է որ անոնք միայն իշխանութիւն ունին տալու, և այն իշխանութիւնը Քրիստոսէ առած են իրենց ձեռնադրողին միջնորդութեամբը:

4. Խոստովանի՞ս և ընդունի՞ս, որ մարդ մը յաւիտենական փրկութիւն ժառանգելու համար մկրտուելու է, և չմկրտուողը եկեղեցիէն դուրս է, և փրկութիւն չունի. թէեւ ամենեւին մեղք մը գործած չըլլայ, նոյնպէս մինչև որ իր գործած մեղքերը քահանային առջեւ ամէն մէկ պարագաներովը և կատարեալ զղջումով չխոստովանի և քահանային դրած ապաշխարանքին յանձնառու չըլլայ նէ. ամենեւին մեղացը թողութիւն և արձակում չկրնար ունենալ, և յաւիտենական փառաց արժանի չըլլար: Չէ՛ թէ որ խոստովանած ըլլայ և ապաշխարանքը չկատարած իջէն կամ յետ խոստովանութեան թեթեւ և ակամայ մնղքով մը մեռնի ալ նէ, անանկներուն հոգին՝ Ս. Եկեղեցւոյ աղօթքովն ու անմահ պատարագաւ և յատուկ ողորմութիւնով կը մաքրուի, և յաւիտենական փառաց արժանի կ'ըլլայ:

5. Խոստովանի՞ս և ընդունի՞ս, որ Ս. Հաղորդութեան Խորհուրդը՝ Յիսուս Քրիստոսի ճշմարիտ մարմինն ու արիւննն է, և ո՛վ որ այս հաւատքով չհաղորդուի նէ՝ անիկա յաւիտենական դատապարտութեան մէջ է:

6. Խոստովանի՞ս և ընդունի՞ս, որ Ս. Կոյս Մարիամ, Քրիստոս Աստուած ծնանելով՝ Աստուածածին է, և թէ՛ ծնանելու ատենը թէ՛ ծնանելէն ետքը կուսու թիւնը անխախտ մնաց, միշտ կոյս է, և ամէն սուրբերէն վեր պատուելու արժանի է: Նոյնպէս Քրիստոսի Աստուածային արեամբը ներկուած Ս. Խաչափայտը և սրիչ Ս. և օծեալ խաչերն

ալ անոր պատկերն ըլլալով երկրպագելի են: Նոյնպէս սրբոց բարեխօսութիւնը Աստուծոյ առջեւ ընդունելի է, և անոնց մասունքները և օձեալ պատկերները յարգութեան արժանաւոր են: Եւ Աստուած՝ թէ՛ Ս. Խաչին և թէ՛ Սրբոց մասունքներուն միջնորդութեամբը միշտ հրաշքներ կը գործէ:

7. Խոստովանի՞ս և ընդունի՞ս որ եկեղեցի՛ի հաւատալ ըսելը՝ Քրիստոսի ընդհանրական Ս. եկեղեցւոյն միաբան հաւատացած քաներուն և անոր հաւատացածին պէս հաւատալ ըսել է, և զուն ալ նոյն մաքրով Ս. եկեղեցւոյն կը հաւատա՞ս և եկեղեցւոյ Աստուածաշտուբեան արտաքին արարողութիւնները և Քրիստոնէական ծէսերը և բոլոր պատուիրանքները՝ Ս. առաքեալներէն և անոնց հետեւող Ս. Հայրապետներէն աւանդուած ըլլալով՝ կը յարգե՞ս և կատարելու ու պահելու յանձնառու կ'ըլլաս:

8. Խոստովանի՞ս և ընդունի՞ս որ Ս. Եկեղեցւոյ մէջ իրարմէ տարբեր պաշտօնէի և իրարմէ վեր իշխանութեան կարգեր կան. դպրութիւն, սարկաւազութիւն, քահանայութիւն, եպիսկոպոսութիւն, պատրիարքութիւն և կաթողիկոսութիւն, և ամէն ազգի պատրիարքներն ու կաթողիկոսները Քրիստոսի փոխանորդներ են Ս. եկեղեցին հովուելու և բարեկարգութեան մէջ կառավարելու. բայց այս հովիւներուն մէկուն վարքը թէ որ գէշ ալ ըլլայ, անոր կառավարած եկեղեցին հաւատոյ մէջ սխալած չըլլար ամենեւին և ընդհանուր եկեղեցւոյ արատ մը չգար:

9. Կը նշովե՞ս և կը հրաժարի՞ս այն մօրոյէն և այն ընկերութենէն, որ կը քարոզէ թէ ընդհանուր եկեղեցւոյ միաբան ընդունած հաւատքին մէջ մտրուութիւն մտած է, և Ս. Հոգին ինծի այսպէս հասկը-

ցուց ըսելով Ս. Գրոց միտքը եկեղեցւոյն ստրուեցուցածէն օտար կերպով կը բացատրէ, և իրեն թելադրող մուլտիթեան հոգին իրրեւ Ս. Հոգին Աստուած կը խոստովանի և անոր հաւատալով՝ Ս. Աստուածածնի Քրիստոսոսածին կ'ըսէ, և միշտ կոյս ըլլալը կ'ուրանայ, և Ս. Խաչին երկրպագութիւն բնելը և Սրբոց մասունքներն ու օծուած պատկերները յարկելը և սուրբերը աւ Աստուած բորեխօս բունելը կ'ապաշտութիւն համարելով՝ Քրիստոսի Ս. եկեղեցին կ'ապաշտ կը համարէ, և անոր Աստուածապաշտութեան արարողութիւնները և պատուիրանքները բոլորը իրրեւ աւելորդապաշտութիւն կը մերժէ, Աստուծոյ հրաշք գործելը չընդունելով՝ Անոր անհուն զօրութեանը չափ կը դնէ, Ասանկ մոլորութեան հետեւողները իրեւ ամբարիշտ և Հոգւոյն Սրբոց հայհոյիչ և թշնամի Աստուծոյ և ամենայն սրբոց նորա կը մօրժե՛ս և կը նզովե՛ս և կը հրաժարի՛ս բոլորովին:»

Սրդ, Աւետարանականներուն մէջ գտնուած տկարահաւատ ոմանք՝ որ հալածանաց և նեղութեան չկրնալով հանդուրժել՝ կ'երթային Պատրիարքարան հնազանդութիւն ցուցնելու մտքով՝ սակայն վերը դրուած խոստովանութեան և սարօրինակ դաւանագիրներն իրենց մատուցած պահուն սոսկումով կը մերժէին: Եւ ոմանք ալ անզգուշութեամբ կամ երկիւղիւ ստորագրելնէն ետք խիղճերնէն յանդիմանուելով ու տանջուելով կէս ճամբէն ետ դարձած և ստորագրութիւննին ետ տռած կամ ժխտած են. լաւ համարելով իրենց եղբարց հետ չարչարուիլ քան յանդիմանուիլ իրենց խղճէն: Իսկ Բարեպաշտութեան Միաբանութիւնն, իրաց այս ողբալի կացութեան մէջ առաւել հաստատ և անխախտ կեցած իր աւետարանական ուղղամտութեանն ու դաւանութեանը

վրայ՝ հետեւեալ գրութիւնը կ'ուզէ առ Մատթէոս Պատրիարք.

«Ամենապատիւ և Վեհափառ Տէր,

«Այս օրերս մեզի պատահած հալածանք, գրկողութիւն, զրպարտութիւն և եղած վնասներ կը պարտաւորեն զմեզ Ձերդ տէրութեանը բողոքել, քանզի մենք որի՞ պիտի երթանք, եթէ ոչ մեր սիրելի Ազգին, որ իբրեւ թշնամի համարելով իրեն՝ կը մերժէ զմեզ եկեղեցիէն և իր անդամներն ըլլալու արտօնութիւննուս կը զրկէ, և որովհետեւ մենք հիմա Ազգին մէջ իբրեւ անհաւատ կամ հերետիկոս կ'ամբաստանուինք և որ իրաւունք կը սեպէք նզովել զմեզ ու բանադրել, մենք ալ պարտաւոր կ'ըլլանք մեր ճշմարիտ հաւատացեալներ և ճշմարիտ Քրիստոսի եկեղեցիին անդամները ըլլալնիս խոստովանիլ՝ Քրիստոնէական ուղղափառ դաւադրութիւննիս ցուցնելով:

«Մենք կը հաւատանք և կը խոստովանինք Ամենասուրբ Երրորդութեան և միոյ Աստուածութեան Հօր և Որդւոյ և Հոգոյն Սրբոյ, մի տէրութիւն՝ մի կամք՝ մի իշխանութիւն:

«Կը հաւատանք մեր Տէր Յիսուս Քրիստոսի՝ որ է կատարեալ Աստուած և կատարեալ մարդ, և կը դաւանինք զանիկայ մի միայն փրկիչ աշխարհի և ճշմարիտ Քահանայապետ և միջնորդ ու բարեխօս հաւատացելոց և գլուխ եկեղեցիին, որ և ինքը պիտի գայ դատելու կենդանիները և մեռեալները, և արդարութեամբ հատուցանելու՝ արդարոց կեանք յաւիտենական և մեղաւորաց տանջանք յաւիտենական:

«Մենք կը հաւատանք Հոգւոյն Սրբոյ՝ որ է անեղծ և կատարեալ Աստուած և ազբիր ճշմարտութեան, որ խօսեցաւ օրէնքներով, Մարգարէներով և սուրբ Աւետարանով, որ և ինքն է առաջնորդ և մխիթարիչ Քրիստոնէից:

«Կը հաւատանք Աստուածաշունչ սուրբ գրոց Հին և Նոր Կտակարաններուն՝ որ է կատարեալ կանոն եկեղեցւոյ, և անոր մէջ պարունակուած ամեն վարդապետութիւններ, կանոններ և խորհուրդներ կ'ընդունինք բոլորով սրտիւ և անկէ սորված պարտաւորութիւննիս ամենայն հաւատարմութեամբ կատարելու միշտ կը ջանանք, որպէս զի մաքուր խղճմտանք ունենանք Աստուծոյ առջև և մարդոց առջև: (1)

«Կը դաւանինք թէ մեզի համար թէ բոլոր ճշմարիտ հաւատացեալներու համար Քրիստոսազիր պարտաւորութիւն մըն է մկրտութիւնը յանուն Հօր՝ և Որդւոյ և Հոգոյն Սրբոյ: Ինչպէս նաև հաղորդութիւնը ըստ սահմանադրութեան Փրկչին մերոյ իր կենարար մահը յիշատակելու համար: Որպէս պատուիրեց, «Զայս արասջիք առ իմոյ յիշատակի: (2)

«Եւ թէ որ աւելի քննել կուզէք մեր դաւանութիւնը, կը խոստովանինք որ մեր հաւատքը՝ եկեղեցւոյն ընդունած Ս. Աւետարանին ուսուցած հաւատքն է (3), ինչպէս Նիկիական հանգանակն ալ Աւետարանին համաձայն ըլլալով՝ անիկա ընդունելովնիս ալ մեր հաւատքին ուղղափառութիւնը կը յայտնենք Քրիստոնէական ընդհանուր եկեղեցւոյն դաւանութեանն համեմատ:

«Եւ արդ՝ որ մեք կը խոստովանինք պատշաճապէս թէ մեր հաւատքը Ս. Գիրքին սորվեցուցածն է, ինչպէս որ այնպէս ըլլալ արժան է և իրաւ. ինչպէս կրնանք ընդունիլ այն պահանջմունքները, որ Ս. Գրոց կանոնին հակառակ են, և բացարձակապէս արգիլուած են նզով-

(1) Գործ. ԻԳ 16.

(2) Առկ. Ի՝ 19.

(3) Հռովմ. ժ. 17.

քով: (1) Եւ այսպէս Աստուածաշունչ Ա. Գ. բռն յայտ-
նապէս չվկայուած մանուկներ արգիլուած բաներ չըն-
դունենին յամսութիւն և ապստամբութիւն համարելու՝
զմեղ Ազգին թշնամի և եկեղեցիին քակտիչ կանուանէին
ալ նէ, մենք այդ գրգարաութիւնը ժխտելով մէկտեղ կը
հաստատենք, որ մեր Ազգն ու եկեղեցին այնչափ կը սի-
րենք, որ Հայազգի անուանուիլը մեզի պարծանք կը
համարինք Պօղոս առաքեալ իրեն բաժին պէս: (2)

«Մենք Ազգաւ Հայ և հաւատքով կամ կրօնքով
Քրիստոնեայ, և Օսմանեան աէրութեան հաւատարիմ
հպատակներ ենք և այսուամենայնիւ եթէ կրօնական կամ
քաղաքական իրերու մէջ սխալմունք ինչ ունինք, քան-
զի ինքզինքնիս անսխալ չենք ճանչցած բնաւ, նոյն սք-
խալմունքնիս թէ որ հաճիք կ'ընդունինք յօժարութեամբ:
Եւ լաւ գիտէք, որ մարդկային բնութեան համոզումները
ճշմարտութեան վկայութիւնովը կ'ըլլայ միայն և ո՛չ թէ
բանութիւնով, և մենք չենք կրնար մեր լուղճատանքին
դէմ գործել երկիւղիւն Աստուծոյ:

«Եւ արդ կողաչենք որ մեր այս յայտարարագիրը
ձեր տէրութեան առջև ընդունելի ըլլայ, և բարեհաճիք
այս նեղութիւններէն ու տառապանքէն զմեզ ազատելու
չնոր՞ք ու ողորմութիւն ընել:

Մնամք Ամենապատիւ Տէրութեանդ
բարեմաղթու ծառայք՝
Հալածեալ Քրիստոնեայքս»

1846 Յունուար 22

Մատթէոս պատրիարք բնաւ կտրեորութիւն չէր
տար Բարեպաշտութեան Միաբանութեան սոյն ազաչանաց

(1) Գաղատ. 8, 9 Ա. զլուխ

(2) Հռովմ. Թ. 3.

յայտարարութեանը, վասն որոյ սա՛ կը պարտաւորուէր նոյնէն քանի մը օրինակ գալիկրաֆով հանել և զրկել ազգին մեծերէն ոմանց ևս ու կ'ընէ այսպէս: Բայց նոյն շարժու կիրակի օր կը կրկնուին բանադրանաց պոսչիւններ և կեղեցեաց բեմերէն դարձեալ: Թուի թէ ճշմարտութեան պաշտպան հանդիսացող քաջ և յանդուգն մէկ խմբին համարձակութիւնը՝ առաւել զայրացուցեր էր Նորին Սրբազնութեան դառն կիրքերը իրենց դէմ քան մեղմացուցեր: Ուրեմն անոնք ուրիշ ի՛նչ կրնային ընել, եթէ ոչ իրենց ազնւոր հանել առ Աստուած, և կ'որոշեն ծոմապահութեան և աղօթքի օր մը սահմանել թէ հայածեալներու թէ հալածողներու համար մանաւանդ, վերջիններուն համար որ չէին գիտէր ինչ ընելին և յաւէտ ազգին համար որ այն ցաւալի կեղեցութիւններ գորութեամբ և ճորճով Սուրբ Հոգւոյն ի բարին ծառայեն ընդհանուրին:

Սակայն 1846 Փետրուարի մէջ իբր ամիս մը անցած Աւետարանական խումբին բրած բողոքին վրայ, կիրակի օր մը Մատթէոս իր սովորական քարոզին մէջ կը ծանուցանէ ժողովուրդին թէ Հալածեալ Գրիստոնեայքս ստորագրութիւնով ազգիս մէջ տարածուած գրութեան մը դէմ՝ պատասխանած և տպել տուած է, «Յայտարարութիւն ընդ դէմ նոր ազանդից անունով:

Այդ յայտարարութեամբ Բարեպաշտութեան Միաբանութիւնը կը զրպարտուի նախ, թէ իրեն բան ընող չեղած ինքզինքն հալածեալ Գրիստոնեայք կը կոչէ: Երկրորդ, կը զրպարտուի, որպէս թէ Նիկիական Հանգանակէն բան պակսեցուցած և անօր վրայ մոլորական յաւելումներ բրած ըլլայ: (1)

Բարեպաշտութեան Միաբանութիւնն ասոնք տեսնե-

(1) Յայտ. Երես Ը 38—47 ԺԱ. 28—29—38

չով հեղինակին անկեղծութենէ և արդարութենէ ամենայնիւ զուրկ ըլլալուն՝ յաւէտ կը ցաւի անոր բարոյական վիճակին վրայ, քանզի մարդս իր թշնամիին հետ անգամ պէտք է արդարութիւնով վարուի, և անոր վրայ որչափ իրեն անհաճոյ գաղափար ալ ունենայ, եղածէն աւելի կամ տարբեր ցուցնելու ջանք պէտք չէ ունենայ: Մանաւանդ կրօնական խնդիրներու մէջ երբ որ մէկը դիմացինին վրայ զրպարտութիւններ կ'ընէ և իմաստակ հնարքներ ձեռք կառնէ, անով իր քով ճշմարտութիւն չըլլալը կը յայտնէ:

Թիշեալ յայտարարութեան պարունակած զրպարտական զրուցուածներու վրայ միայն այսչափ մը խօսիլ բաւական համարելով՝ դառնանք Բարեպաշտութեան Միաբանութեան առաջադրած էական կէտին, որ է կրօնական վերանորոգութիւն. աղօթել, աշխատիլ և ջանալ շնորհիւն Աստուծոյ վերածել Հայաստանեայց եկեղեցին իր նախնական պարզ, մաքուր և առաքելական վիճակին: Այսու ըմբռնմամբ չէր կրնար նա կեղծաւորիլ և ծածկել իր համոզումն այն յետսամուտ կորուսիչ սնապաշտութեանց մասին, որ տակաւին կը պաշտպանուէր աղգին բարձրագոյն դասին և կամրապնդուէր հոգեւոր իշխանութեան կողմէ, որպէս կ'երեւի նորահնար հանգանակէն: Թէպէտ ինչ ինչ անմեղ ձեւակերպութեանց և արտաքին ծէսերու մասին որք կարեւորութիւն չունին, կրնար միաբանութիւնն անփոյթ ըլլալ, բայց քարոզութիւնը՝ որով հաճեցաւ Աստուած ապրեցուցանել հաւատացեալները⁽¹⁾ չէր կրնար զանց առնել, թրով յառաջ կրնայ երթալ մաքուր և հոգեւոր ճշմարիտ Բրիստոնէութիւն, ներգայելով մեղաւոր մարդուն իրրեւ միմիայն միջնորդ առ Աստուած և հաստատուն խարխիւ

(1) Ա. Կորնթ. Ա. 21:

յուսոյ փրկութեան համար զՅիսուս Քրիստոս : Վասն ուրոյ Քարեպաշտութեան Միաբանութիւնն չէր կրնար յորդորներով, ստիպումներով, և մանաւանդ հալածանք և բանադրանքի սպառնալիքներով իր կրած անունին հակառակ գործել : Եւ պարտ ու պատշաճ կը համարէ ճշմարտութեան, ուղղամտութեան և Աստուծոյ սիրոյն համար ըմպիլ հալածանաց, նեղութեան, և տառապանաց դառն գաւաթը մինչեւ ցմբուր ուրախութիւնով, քան թէ ապրիլ խղճմտանքի խայթով անլուր տրամութիւնով իրրեւ քանքարաթագոյց ծոյլ և անպիտան ծառայ(1) :

Արդ, Բարեպաշտութեան Միաբանութիւնն այսպիսի ծանրակշիռ պարագայի ենթարկեալ գտնուելով, որպէս զի իր խղճին և Աստուծոյ կենարար բանին համեմատ կարենայ պաշտել զԱստուած և անարգել կատարել իր Քրիստոնէական պարտաւորութիւններն ու անոնց հետ կապուած առանձնաշնորհութիւնները ու արտօնութիւնները վայելիլ, կ'որոշէ նախ և առաջ իր դիրքը աշխարհին աւջև ապահով կացուցանել Հայաստանեայց Աւետարանական եկեղեցի մը կազմաւորելով : Եւ որովհետեւ այսպիսի մշտնջենական և ըստ փափաքուածին Քրիստոնեայ աշխարհի հետ համերաշխական կազմաւորութեան մը համար՝ օրինաւոր վարչութիւն, վարչական օրէնք և կանոն անհրաժեշտ են իրրեւ հանգոյց միութեան՝ այսու նպատակաւ դիմում կ'ըլլայ Պօրտ ընկերութեան Միսիոնարացը հետ խորհրդակցութեան, որպէս զի պարագային յարմար առժամանակեայ կարգադրութիւն մը տնօրինուի : Նոյն ատեն լաւագոյնը և առաւել պատշաճ համարուածը ապագային թողով, որպէս զի փորձառութիւնով և առաւել ընդարձակ խորհրդածութիւններով կարենայ ձեռնհաս ըլլալ փափաքուածին :

(1) Մւսք. ԻԵ. 15—28 :

Այսու տեսութիւնով կորոշուի 1846 Յուլիսի առաջին օրը (Ն . Տ .) յորում կատարելու կազմաւորութեան գործադրութիւնը , պատշաճ արարողութիւնով : Եւ սա՛ պիտի կանգնի սիրելի Հայ ազգիս մէջ իբրև յաղթանակ ճշմարտութեան , որպէս կը տեսնուի հետեւեալ գեղեցկաշար երգով :

ՅԱՂԹԱՆԱԿ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ

Պանծասցի այսօր Հայկազնեան տոհմին հայրենի գաւառ ,
 Զի անդ երկնառաք շողէ համասփիւռ լոյս հրաշափառ :
 Անդ նշմարտափայլ Արփենւոյն արդար նշոյլ անսպառ ,
 Ի բաց վտարէ կանխակալ դատմանց զաղջամուղջ յամառ :
 Անդ քառավրտակ կենսաձիր Աղբեր ջուր հոգեպարար ,
 Նորաշուք պնեկ մտավարժ մանկան զոգեկան տանար :
 Զի մի ծածկեսցեն բանին Աստուծոյ զոգեմորոգ նառ ,
 Մտացածին գիւտք էւ աւանդութեանց վարագոյր անփառ :
 Նա մի համագօր պատուեսցի երբեք ի դարուց ի դար ,
 Բանն Աստուածեղէն էւ հողածրնաց բան դիրամուլար :
 Մի զուգակշիռ փառքս բնկայցի մահացուաց կանառ ,
 Ընդ ամենաստեղծ անմահն Աստուծոյ որ է լոյս աննառ :
 Եւ մի պարծեսցի մարմին հողանիւթ յարդիւնս անկատար ,
 Զի Քրիստոս եղէ մեզ արդարութիւն միջնորդ ղեկավար :
 Եկ այսուհետեւ Յիսուս լիցի մեզ Հովիւ հանրական ,
 Կանոն լիցի մեզ նորին անսխալ բան նշմարտութեան :
 Թող քարոզեսցի մինչ ի ծագս երկրի սուրբ Աւետարան ,
 Եւ ծաւալեսցի սուրբ Եկեղեցին համաշխարհական :
 Զի սա հաստատի անյողողող հիմամբ ի վեմն անկեան ,
 Յորմէ փշրեսցի ոգի աշխարհիս էւ կրքից արձան :
 Զօրասցի ի սմա Հոգին Քրիստոսի գերդ գէն յաղթութեան ,
 Զի յազթո՛ղ լիցի աստուածամարտից թշնամեաց համայն :
 Սովաւ տեսցո՛ւք մեք զանման քաղցրութիւն դասուն
 րնտրական ,
 Եւ մշտագլուարն ցնծասցուք յերկնից սուրբ արքայութեան :

Մ Ա Ս Ն Բ .

Գ Լ Ո Ւ Խ Ա .

Նազմութիւն Հայաստանեայց Աւետ. Յկեղեցւոյ. — Ընտրութիւն եկեղեցւոյ պատշտութեանց. — Յայտարարութիւն առ համօրէն Ազգն. — Կճնութիւն եւ ձեռնադրութիւն երկու :

Բարեպաշտութեան Միարանութիւն անուանեալ Հայկազնեան խումբն Կ. Պոլիս մայրաքաղաքին մէջ՝ 1846 թուականին կը բազմանար միայն յատուան անձերէ 37 սյր եւ 3 կին լնդ ամենն՝ առնք ըստ յատաճագոյն որոշման յիշեալ թուականի նոր աստար Յուլիս 1 կէս օրէն շորս ժամ առաջ կը հասարութիւն այն պատմական մատուռին մէջ որ էր ի Բերա անդլիական դեսպանատան փողոց, Վեր. Հ. Ճ. Օ. Տուայթի բնակարանին մէջ ուր պիտի կատարուէր կազմաւորութեան սրբադուլթիւնը : Ներկայ կը գտնուին եօթն Ամերիկացի եւ երկու Սկոտլանդացի պաշտօնեաներ, որք պաշտօնը սկսուած պահուն նախ սա հարցը կ'ընեն : «Ինք որ կը փափաքիք եկեղեցական կազմաւորութիւն առնուլ սյժմ, ի՞նչ յարանուանութիւն ընտրած էք կամ ո՞ր յարանուանութեան յարիլ որոշած էք :»

Միարանութիւնը կը պատասխանէ. պէտք չունինք մանաւոր նոր յարանուանութիւն մը որոշելու կամ որ եւ է օտար դուլթիւն կէտ առ կէտ որդեգրելու : Մենք Մ. Աւետարանին աշակերտած եւ անոր հոգեկեցոյց սկզբունքները արդէն որդեգրած ըլլալով՝ կը փափաքինք մեր մայրենի եկեղեցին իր նախկին առաքելական ուղղափառութեանն ու մաքուր պարզութեանը վերածիլ, վասն որոյ որոշած ենք Հայաստանեայց Աւետարանական եկեղեցի կազմուիլ եւ ո՛չ ուրիշ բան : Եւ եղբայրներ մանաւանդ անոնց ծիրերը սյս պատասխան տուած պահուն

արտմախառն ուրախութեան արտասուք կը թափէին։ Ներկայ օտար պաշտօնեայք կամ Միսիոնարք ևս տեսարանին ահաւորութենէն զգածուած հաւանութիւն ցոյց կուտային, և որոց ձերունագոյնն Վեր. Ռ. Գուաէլ սկսաւ պարագային յարմար սրտաբուղիս աղօթքը արտասանել, յետոյ Վեր. Հ. Ճ. Օ. Տուայթ Սուրբ Գրոցընթերցումով պատշաճ քարոզը խօսելով վերջին աղօթքը կարտասանէ. ապա հետեւեալ գեղեցիկ երգը միաբանութիւնով կ'երգուի։

«Եկեղեցիդ ընդհանրական, որ Քու սիրոյդ է առարկայ,
«Տէր իմ շնորհիդ հայրական, ցըցուր այսօր անոր վրայ,
ևն. ևն.

Յուսկ ապա առաքելական օրհնութիւնով կաւարտի եկեղեցւոյ կազմութեան արարողութիւնը, և որով Բարեպաշտութեան Միաբանութիւնը, յետայսու կանուանի Հայաստանեայց Աւետրանական Եկեղեցի։ Յայնժամ նորահաստատ եկեղեցւոյ անդամներէն մին ձերունափայլ Ոսկան աղա Մանուկեան, ձեռներն առ Աստուած բարձրացուցած արտասուածոք ուրախութիւնով կաղաղակէ,
«Արդ, արձակեա՛ զձառայն Քո Տէ՛ր ըստ բանի Քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն Քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդեան։» Եւ 20 վայրկեան դադար ըլլալով եկեղեցական առաջին գործի ժողով կը գումարուի, յորում կը կատարուի պաշտօնէութեան ընտրութիւնը և գաղանի միասնական քուէով նախ երէց կամ հովիւ կ'ընտրուի Պատ. Արիստոզում Խ. Իւթիւճեան, յետոյ նոյնպէս երկու սարկաւազաց և երկու հոգաբարձուաց ընտրութիւն ևս կատարելով՝ եկեղեցւոյ պաշտօնէութիւնը այսչափով կը լրանայ ժամանակի մը համար, իսկ Երիցու և Սարկաւագնեբու ձեռնադրութեան արարողութիւնը չարաթ մը ետք կատարել կ'որոշուի։

Արդ, նորապսակ եկեղեցին յայնժամ վայելուչ մի-
անգամայն պատշաճ կը տեսնէ նոյն օրուան եղելութիւնը
մասնաւոր յայտարարութիւնով ծանուցանել իր սիրելի
ազգին լրութեանը, որուն պատճէնը կարտատպենք ի
ստորիւ ճշտութիւնովը, աւասիկ.

«Սիրելի Ազգայինք մեր, մենք կը հաւատանք՝ որ
Քրիստոնէական եկեղեցին հոգեւոր միաբանութիւն մըն է
բուն իսկ ի Քրիստոսէ հաստատեալ այն նպատակաւ, որ
իր մէջ Աստուծոյ վրայ գիտութիւն աւելցնէ և Աստուած-
պաշտութիւնը կենդանի պահէ անոր հրապարակաւ եր-
կրրպագութիւն մատուցանելով, Անոր սուրբ օրը պահե-
լով, և առ հասարակ քարոզէ Աւետարանը և ուսուցանէ
մարդոց ամեն Քրիստոնէական առաքինութեանց գոր-
ծածղութիւնը, և ընդհանրապէս խօսելով՝ օգնէ անոնց
հոգին երկնից համար պատրաստելու:

Կը հաւատանք որ Սուրբ Գիրք՝ այսինքն Հին և
Նոր Կտակարաններն են եկեղեցւոյ մի միայն անսխալ և
կատարեալ կանոնը, և ամեն Քրիստոնեայի պարտաւոր-
ութիւնն է զանոնք իբրև իրենց հաւատոյ և վարուց
առաջնորդը ընդունիլ: Ուստի մենք Հայ ազգի Աւետա-
րանական Քրիստոնեաներս՝ Աստուծմէ վախճալով և ա-
նոր Աւետարանին հնազանգելով մերժեցինք և մէկզի
ձգեցինք այն ամեն մարգկային մտաշածին աւանդութիւն-
ներ, ծէսեր ու արարողութիւններ, որք հակառակ են Ա-
ւետարանին և Քրիստոնէական եկեղեցւոյ մաքրութեանն
ու բարեկարգութեանը զոր մեր ազգին պատրիարքը կը
պահանջէ՝ մեզմէ ընդունփլ: Մենք բնու միտք շունենա-
լով զասուելու այն եկեղեցիէն որուն անգամներն էինք
կեցեր էինք անոր մէջ, Քրիստոսի, մարգարէներու և
առաքելոց ուսուցած ուղղափառ նախկին հաւատքէն
անոր մոլորած ըլլալուն վրայ ոգբալով, և անոր սուրբ

Աւետարանով լուսաւորուելուն ու նորոգուելուն յուսովը կաշխատէինք և կը ջանայինք յայտնի այս նպատակով օգնել անոր: Եւ որովհետև կընդունինք և միշտ ընդունած ենք Նիկիտական հանգանակն ամբողջ, որն որ ամեն Քրիստոնեայք ալ կընդունին, մինչև չորրորդ դար՝ եկեղեցւոյ անդամներուն վրայ հարկ դրուած հանգանակ չկար անկէ զատ և այն ժամանակէն մինչև այս 1846 տարին մասնաւորապէս մարդկային աւանդութիւններ պարունակող հանգանակ չինուած և Հայաստանեայց եկեղեցւոյ անդամներէն պահանջուած չէր, վասն որոյ ընդհանուր Քրիստոնէից հին հանգանակը ընդունելովնիս կրնայինք նոյն եկեղեցւոյ օրինաւոր անդամներ համարուիլ: Բայց 1846 թուականին Մատթէոս արքեպիսկոպոս Հայոց պատրիարք նոր հանգանակ մը հնարեց որ Քրիստոսի և առաքելոց ուսուցած հիմնական վարդապետութեանց կը հակառակի մեծապէս, և Քրիստոնէից մէջ մինչև հիմա գտնուած հանգանակներէն կը տարբերի մասնաւորապէս մարդկային աւանդութիւնները պարունակելով, որոնք որ մեր խղճմտանքը չթողուր որ ընդունինք:

«Այդ հանգանակ՝ որ ինն յօդուածներէ կը բաղկանայ՝ վերջնոյն մէջ կը պահանջէ զայն ստորագրողներէ, որ ամեն այն մարդիկ որոնք ուրիշ բաներէն զատ որ յիշուած են հանգանակին մէջ, կը քարոզեն թէ խաչեր, սրբոց մասունքներ և պատկերներ երկրպագելի չեն, նզովենք և մերժենք իբրև ամբարիշտ և հայհոյիչ Սրբոյ Հոգւոյն և իբրև թշնամի Աստուծոյ և իր ամենայն սրբոց: Այսպէսեալ կը պահանջէ որ վրանիս առնենք Գերմանիոյ, Գաղիոյ, Անգղիոյ և ուրիշ տեղեաց բոլոր Քրիստոնեաներն նզովիլ և բանադրել, նաև ամեն ուրիշ ազգեր ու անձեր, որոնք չեն ընդունիր խաչերու, մա-

սունքներու և պատկերներու երկրպագութիւն : Բայց մենք առաւել Աստուծոյ հնազանդելով քան մարդոց շնորհունեցինք այդ նոր հանգանակը , վասն որոյ հալածեց զմեզ եկեղեցիէն հրապարակաւ անէժքներ կարգալով :

«Եւ վերջապէս կարելի պիտի ըլլա՞ր կրկին երթալ միանալ մեր մայրենի եկեղեցիին առանց ընդունելու այն մոլորութիւնները , որոնք յետագոյն ժամանակներու մէջ ընդգրկած է թէ սգիտաբար , թէ բռնի : Մանաւանդ ներկայ մօտաւոր օրերուն մէջ պատրաստած և իրրև դաւանական հանգանակ ներկայացուցած մեզի ստորագրել տալու անամօթաբար յանդուզն պահանջմամբ : Ահա այս ամեն իրողութիւններ կարդարացնեն մեզ , և մեր Հայաստանեայց Աւետարնական ուրոյն Եկեղեցի կազմուիլը :

«Որովհետև Մատթէոս Պատրիարք Չուհանձեան իր բովանդակ կարողութիւնը և իշխանութիւնը գործածեց Աւետարնականութիւնը ի սպառ կործանելու համար , և ջանաց մեզ զրկել Եկեղեցիին արտօնութիւններէն և խորհուրդներէն որոնք մեր երկրաւոր բարիքներէն գերազանց կը համարենք , վասն որոյ անձերնիս պաշտպանելու , հոգիներնուս փրկութիւնն ու մերհոգեկան շինութիւնը փնտռելու ահարժեշտ պարտաւորութիւննիս և իրաւունքնիս՝ ո՛չ թէ միայն մեզ կարդարացնեն , այլ և կը պահանջեն ուրոյն եկեղեցի մը կազմուիլնիս :

«Որովհետև պարտաւոր ենք մեր ընտանիքին և զաւակներուն ուսուցանել Ենովային պատուէրներն ու Անոր մեզի յայտնած բոլոր ճշմարտութիւնները , և նկատելով որ ասոնք առանց Աւետարանին հրապարակային քարոզութեանը չկրնար կատարեալ կերպով ըլլալ՝ վասն որոյ իրաւամբ Աւետ . Եկեղեցին կազմուեցանք այս նպատակին համար :

«Որովհետև կը հաւատանք թէ Քրիստոս գլուխ է

Եկեղեցւոյ՝ և ընդունած ենք անոր սուրբ վարդապետութիւններն, սրտանց կը հնազանդինք Սուրբ Աւետարանին, ուստի Քրիստոսի մի, սուրբ Առաքելական և ընդհանրական եկեղեցիին անդամներն ենք, վասն որոյ այս անդամակցութիւննիս դաւանիլ պարտաւոր ենք ամենայն Աւետարանական կանոններով և սրտօնութիւններով իրրե ուրոյն Աւետ. Եկեցեցի :

«Որովհետեւ սուրբ Աւետարանը կը պահանջէ Քրիստոնեաներէն որ ազօթք ընեն ամեն մարդոց համար, մանաւանդ թագաւորաց և ամեն իշխանաւորաց համար, և հնազանդ լլսան անոնց իրրե Աստուծով կարգուածներու, վասն որոյ մենք իրրե կոռովարոթեան խաղաղ և հրնազանդ հպատակներ՝ պարտաւոր ենք Աստուծային կամաց համեմատ հաւաքարար ազօթք ընել Աստուծոյ մեր Թագաւորին և Անոր բոլոր պաշտօնեաններուն համար և երկրիս բնակիչներուն խաղաղութեանն ու սրդարութեանը համար : Եւ մանաւանդ մասնաւորապէս մեր սիրելի Ազգին պատրիարքին և բոլոր իշխանաւորներուն համար, որ Աստուած պարգևէ անոնց ամեն իմաստութիւն և հոգեկան օրհնութիւններ ի ձեռն Յիսուսի Քրիստոսի լուսաւորելով մտքերնին, և սրտերնին նորոգէ ու լեցնէ արգարութեան, եղբայրսիրութեան, մարդասիրութեան, մանաւանդ իր սիրոյն ոգիովը : Ամէն :»

Աստանոր պատշաճ և միանգամայն շահեկան կը համարինք ցուցնել ամենուն որ երբ մայրաքաղաքին մէջ եղածին նման կազմաւորութիւնք ի գաւառս ևս սկսան կատարուիլ՝ յայնժամ հետեւեալ յայտարարութիւնը եզած է Քրիստոնեայ աշխարհին Միսիոնարութեան կողմէ :

«Այս եկեղեցիներ մերը չեն այլ իրենցն են, մենք անոնց վրայ իշխանութիւն չունինք, անոնք Ամերիկայի մէջ մեր ունեցած եկեղեցիներուն ու է մէկուն մօտելին :

կամ օրինակին պէս չ'կազմուեցան : Մենք գիմեցինք ուղղակի նոր կտակարանին իբրև օրինակ մեղի : Բոլոր ասոնք Բողոքական եկեղեցիներ են, և իրենց հաւատոյ դաւանութիւնք այնպէս են որպէս կը խոստովանին Ամբիկայի, Անգլիոյ և Եւրոպայի կիսազունդին մեջ եզոզ բովանդակ Բողոքական մեծ եկեղեցիներու ճիւղերը : Եւ այժմ այս եկեղեցիները մենք կը ներկայացնենք իբրև անդամներ, և յուսամ գովութեան արժանի անդամներ, մեծ Բողոքական ընտանիքին : (1)

Գանք որ եկեղեցւոյ կազմաւորութենէն շարաթ մը ետք՝ Լնդհանուր ժողով կը գումարուի, յորում օտար հոգևոր պաշտօնէութիւնն ևս որ գործադիրն էր կազմաւորութեան արարողութեանը՝ ներկայ կըլլայ որոնք կը քննեն նորընծային յարմարութիւնը իր ստանձնելու պաշտօնին, այն է անձնական բարեպաշտութիւն՝ շարժառիթ Աւետարանի պաշտօնէութեան՝ հմտութիւն Սուրբ Գրոց վարդապետութիւններուն՝ ևն. ևն : Նորընծայն թէպէտ Աստուածարանութեան բարձր հաստատութիւններու և համալսարաններու մէջ ուսում առած մէկը չէր, սակայն ի մանկութենէ բարեպաշտութեան սիրահար և մանաւանդ յետ լուսաւորութեանն ի ձեռն իր խոստովանահօր Եզնակ Տէր Վրթանէս քահանայի, Սուրբ Գրոց ուսմանն անձնուէր հետևող մըն էր, «որ կարող են իմաստուն առնել զմարդ ի փրկութիւն հաւատոցն որ ի Քրիստոս Յիսուս ևն :» (2)

Ուստի քննութեան ատեն եղած հարցումներուն՝ նորընծային տուած պատասխանները այնպէս էին, որ թէ քննիչները, թէ ունկնդիրները ուրախութեան արտասու-

(1) Տես, ժողովի Էրոթին ճիի թրքիւ Էմիլայր, Կոստէ: Երես 322 զլ. ժէ:

(2) Բ. Տիմոթ. Գ. 15.

քով իրենց գոհունակութիւնը կը յայտնէին : Ապա կը կատարուի նորընծային ձեռնադրութիւնը այսպէս : Արարողութիւնն այս ձևով՝ Թուրքիոյ մէջ ամենուէն նոր ըլլալով արանց և կանանց մեծ բազմութիւն համախմբեալ էր նոյն պատմական մատուռին մէջ ի Բերա, ուր եկեղեցւոյն կ'սգմութիւնը կատարուած էր. և նախ Վեր. Ո. Կուտէլը ծերագոյնն և առաջին միսիոնարն ի մայրաքաղաքիս, բժժը կ'եղէ և Սուրբ Հոգւոյն ներկայութիւնն ու երկնային օրհնութիւնը կը հայցէ, ապա քննիչ մարմնոյն գրագիրը Վեր. Վանկէնը կը կարդայ տեղեկագիրն եղած քննութեան : Յետոյ Վեր. Էվէրէտ բեմ կ'եղէ Սուրբ Գրքէն կը կարդայ Ա. Տիմոթ. Գ. գլուխ և աղօթք կարտասանէ, և «Եկեղեցիդ ընդհանրական, ևն.» երգը կառաջարկէ որ միասնութիւնով կերգուի, ապա Վեր. Հ. Ճ. Օ. Տուայթ կ'եղէ բեմ, կաղօթէ և կը քարոզէ բնարան ունենալով Ս. Գրքէն կարդացուած գլխոյն առաջին տուեք, «Հաւատարիմ է բանս եթէ ոք եպիսկոպոսութեան ցանկայ՝ բարւոյ գործոյ ցանկայ :» Յաւարա քարոզին նորընծայն բեմին առջև ի ծուներ կը կենայ, և ներկայ ինն ձեռնադրեալ պաշտօնեայք կը շրջապատեն զայն խրաքանչիւրն աջ ձեռքը անոր գլխոյն զնկով՝ որ ատեն անոնցմէ ձերագոյնը Վեր. Ո. Կուտէլ ձեռնադրութեան օրհնութիւնն ու աղօթքը կարտասանէ սրտաբուզիս առ Աստուած : Փամանակակիցք որ դեռ կենդանի են, չեն կրնար չ'յիշել այն նոյն պահուն նորընծային այն երկիւղած կայութիւնը, որ իր յանակնկալս ունեցած կուռմին ահաւոր պատասխանատուութեան ճանաչումովը ծանրաբեռնեալ և իր անբաւականութեան խորհուրդով արտասուածոր աչիրով գլուխն աջ ուսին հակած կը կենար ի ծուներ, քանզի կը պատրաստուէր ըլլալ, «Ոմանց մահուան հոս դէպ ի մահ, ոմանց կեն-

զանութեան հողադէպի կեանք, և աս բաներուն ո՞վ բաւական է:» (1) Աղօթքը շիննալուն նորընծայն ոտքի վրայ կ'ելլէ և ծերունի Վեր. Շաֆլլը, Հրեաներու Միսիոնար, անոր աջ ձեռքը իր աջ ձեռքին մէջ առած երկար բարեմաղթութիւններ կ'ընէ, ապա Վեր. Կ. Համլին, կը խօսի հոլուական պաշտօնին մեծութեանն վրայ, և խրատ կը խօսի, թէ ինչպէս պէտք է զգոյշ լլլալ պաշտօնեայ մը իր անձին և ըստի հօտին, որուն վրայ Հոգին Սուրբ զանիկա Տեսուչ կը դնէ հովուելու Աստուծոյ եկեղեցին, որն որ իր արիւնովը ստացաւ:» (2)

Ապա Վեր. Ո. Կուաէլ վերստին բեմ կ'ելլէ և խրատ կ'ուղղէ եկեղեցւոյն, որ ինչպէս իւրաքանչիւրն պարտի յիշել իր սիրելի Հովիւը, և աջակցիլ անոր իր ծանր պաշտօնին մէջ աղօթքով և ամենայն կարեկցութիւնով: Հուսկ յետոյ փառաբանութեան երգը կ'երգուի յոսնկոյս, որ ատեն Վեր. Հ. Արիստղոս Խ. Իւթիւճեան կ'երեւի բեմին վրայ, և առաքելական օրհնութիւնն կ'արտասանէ «Շնորհք Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի, և սէրն Աստուծոյ և Հաղորդութիւն Հոգւոյն Սրբոյ եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեսինս. ամէն»:

Յաջորդ կիրակին երկու սարկուազներուն ձեռնադրութեան արարողութիւնը կը կատարուի, և ըստ փրկչական կտակին Ս. Հաղորդութեան խորհուրդը կը մատակարարուի ի ձեռն եկեղեցւոյ Վեր. Հովուին, և նոյն առթիւ բաւական թուով անձինք հրապարակային ուխտով կ'աւելնան եկեղեցւոյն վրայ:

Ահա այսպէս մինչ մէկ կողմէն հալածանք կը շարունակուէր, միւս կողմէ Աւետարանական պարզ և մաքուր Քրիստոնէութիւն իր փրկարար ազդեցութիւնով

(1) Բ. Կորնթ, Բ 16

(2) Գործք. Ի. 28

անվթար կը պահէր սա ուղիղ ճանաչումը իր հետեւողներուն սրաերու մէջ թէ, մարմնական ազատութենէ անհունապէս գեր ի վերոյ է հոգեկան և խղճմտանաց ազատութիւնն, զոր ձեռք բերել առաջագրած էին Աւետարանական հայեր, եկեղեցական ուրոյն կազմաւորութիւնով: Ապաքէն յայտնի է որ Աւետարանական սուրբ կրօնի աւետարանութիւնն և սերունդէ սերունդ խորամատ հաստատութիւնը ճշմարտութեան և Աստուծոյ բանին անխարզախ քարոզութենէն կախումն ունի՝ այժմ այս եկեղեցի շնորհիւն Աստուծոյ ուրախ ևնք որ պիտի կարենայ անվեհեր և համարձակ կատարել իր այս մեծ պարսաւորութիւն և Աստուածապարգև սրտօնութիւն ըստ բանին, «Մարգարէն յորում երազն իցէ՝ պատմեսցէ գերազն իւր, և յորում բանն իմ իցէ՝ պատմեսցէ զբանն իմ ճշմարտութեամբ, զի՞նչ է յարդ, առ ցօրենաւ, ասէ Տէր: Ո՞չ ապաքէն բանք իմ իբրեւ զհուր են, ասէ Տէր, և իբրեւ զմուրճ որ հատանէ զվէմ»⁽¹⁾

Արդ, պարտք կը համարենք այս եկեղեցւոյ ապագայ սերունդին ազգարարել՝ որ լաւ միտք առնեն յիշեալ հալածեալ հայրերնուն ճանաչումն ու հաւատքը՝ որ երբ եկեղեցի անուն որդեգրեցին, մերժուած գտնուելով իրենց մայրենի եկեղեցւոյն արտօնութիւններէն, ուղեցին ի սէր եղբայրութեան և ի սէր մարդկութեան ճանչցնել ամենուն թէ մեղաւոր մարդուն փրկութիւնը միմիայն Աստուծոյ ձրի շնորհքովն է, և այն՝ միջնորդութեամբ միայն Յիսուսի⁽²⁾

Եկեղեցին տուն Աստուծոյ կ'անուանուի, վասն որոյ կ'ըսէ Առաքեալն Պօղոս, «ըստ շնորհացն Աստուծոյ՝ ոչ տուեալ են ինձ, իբրեւ իմաստուն ճարտարապետ հիմն

(1) Երեմիա. ԻԳ. 28:

(2) Տիմոթ. Բ. 11. Ա. Տիմոթ. Բ. 5:

եզի . բայց այլ է՝ որ շինեն . այլ իւրաքանչիւր ոք զգոյշ լիցի՝ թէ որպէս շինիցէ» ևն :⁽¹⁾

Աւետարանական հայրերն ևս աւաստիկ այս նոյն հիմը ունին , որպէս ցուցինք ի վերեւ . ահա վաղեմի ժամանակներէն խոստում ունինք այս հիման դրուելուն . «Ահա ես սիւնի մէջ վէմ կլ զնեմ իբրեւ հիմ , պատուական անկիւն հաստատուն հիմ»⁽²⁾ . Հայածեալ հայրերն ո՛չ ժամանակ ոչ ալ պատենութիւն ունէին այս եկեղեցւոյ մշտնջենական վարչութեանը պատշաճ կանոններով ամէն պէտք եղածը ընել հապա ժամանակաւոր կերպով է ըրածնին այդ մասին ինչ որ ըրած են . Ուստի այլք են որ շինելոց են , «այլ իւրաքանչիւր ոք զգոյշ լիցի՝ թէ որպէս շինիցէ : Զի հիմն այլ ոք ո՛չ կարէ դնել քան զեղեալն՝ որ է Յիսուս Քրիստոս : Եթէ ոք շինէ ի վերայ հիմանս այսորիկ ոսկի՝ արծաթ՝ ականս պատուականս՝ փայտ՝ խոտ՝ եղեգն , իւրաքանչիւր գործն յայտնելոյ է , զի օրն ընտրեսցէ , զի հրով յայտնելոց է» :



(1) Ա. Կորնթ. Գ. 10—15 :

(2) Եսայ. ԻԸ. 16 :

ԳԼՈՒԽ Բ.

Պատշին ննջեցեալի մը յուղարկաւորութիւնը — Պատրիարքին աղերսագիրը Աւետարանականաց դէմ — Սպարհասական պուչրուչքու առ հաղափապետութիւն — Գամաղիկեան Յովսէփի երկիւղն ու մտաւր — Վեր. 2. Արիստոգոմ Իւրիւնեան կը ննջէ:

Հայազգի Աւետարանականք մինչ կրօնի մասին սկսեր էին վայելիլ իրենց հոգեկան արտօնութիւններն ու մտիթարութիւնները, կը համարէին թէ կրնային սնրածան մնալ քաղաքականապէս իրենց սիրկի ազգէն՝ մինչ պատրաստ և յօժար էին դէպի այն ունեցած բոլոր պարտուորութիւններն թէ ազգային թէ քաղաքական տեսակէտով անձանձրոյթ կատարել Պատրիարքարանին իրաւասութեան տակ: Իսկ միւս կողմէն հալածանք երթալով կը սաստկանար, անձա՛ղութիւն աղկաներ յառաջ բերելով, քաղաքական այն բոլոր արտօնութիւններ և իրաւունք՝ որ չէին կրնար ձեռք բերուիլ առանց Պատրիարքարանի և արհեստապետներու երաշխատորութեան, կը զլացուէր: Երեսունէ աւելի կրպակներ գոցուած էին և անոնց տէրերն իրրիւ ո՛չ երաշխաւորեալ կատարելի մարդիկ ոտիկանութեան զուր բանտարկուած կը մնային. ժամագործներ՝ ոսկերիչներ՝ մետաքսագործներ՝ ևն. որոնք ընտանեաց պարկիշտ հայրեր էին: Ուղեւթեան անցագիր ստանալու և կալուածական փոխանցումներու իմուխապէրներ կը զլացուէր Պատրիարքարանէն. ննջեցեալի յուղարկաւորութեան և թաղման սովորական կարիքն անգամ զլացուելով՝ զանոնք նախատանաց և զգուանքի առարկայ ընել կ'ուզուէր: Միայն օրինակ մը հոս յառաջ բերել բաւական կ'ըլլայ:

Մերուհի Ոսկան ազա Մանուկեան . ազնուական
 և պարկեշտ անձը , զորմէ ակնարկ եղած է եկեղեցւոյ
 կազմաւորութեան աւուր պատմութեան մէջ , մեռնելով ,
 որդին Խաչատուր Էֆէնտի , պաշտօնով հիւպատոս Մի-
 ացեալ Նահանգաց մէջ Օսմանեան տէրութեան , այդ մի-
 ջոցին այցելած լինելով իր հայրենիքը , կ'երթայ կը խընդ-
 րէ Պատրիարքէն որ իր հանգուցեալ հօր յուղարկաւո-
 րութիւնը սովորական չքով կատարուի : Իսկ Նորին
 Սրբազնութիւն չհաճիր մէկ քահանայէն աւելի տալ , և
 այն ալ լռիկ մնչիկ դագաղին առջեւէն երթալու պայ-
 մանով : Արդէն Խաչատուր այդ պայմանին չհամակերպիր ,
 հետեւաբախ այդ պաշտօնը կատարելն Աւետարանական
 եկեղեցւոյ կը մնայ , որ ամենայն սիրով յանձն կ'առնու ,
 թէեւ ընդհանուր բողոքական աշխարհի սովորութեան
 պէս գոց սնտուկի մ.յ դրուած , և այսպէս Տաճկաստա-
 նի մէջ առաջին բարեկարգ Բրիտանեայ Ինջեղեալի
 յուղարկաւորութիւնը կը տեսնուի Հայոցս մէջ , որովհե-
 տեւ մինչեւ այն ատեն յուղարկաւորութիւնք Յունա-
 կանին պէս բաց դագաղով կ'ըլլային ի հնճուկս քաղա-
 քակրթութեան : Թաղման արարողութիւնն ու թաղումը
 կ'ըլլայ Բերա Անգղիացւոց գերեզմանատունը որ արդի
 Ժարտէնին և Թագսիմ կոչուած փառաւոր պարտէզին
 տեղն էր այն ժամանակ :

Աւետ . եկեղեցւոյ հովիւք , Վեր. Ա. Խ. Իւթիւճեան ,
 անդանոր շատ ազդու և օգտակար քարոզ մը կը խօսի ,
 « Կայ մնայ մարդկան մի անգամ մեռանիլ և յետ այնու-
 րիկ դատաստան » (1) առաքելական խօսքը բնարան
 առնելով , և այս նորատեսիլ թաղման արարողութեան
 հետաքրքիր մեծ բազմութիւն հաւաքուած ըլլալով ամեն
 ազգերէ , շատերէ կը գնահատուէր : Բայց այս առթիւ

(1) երթ. Թ. 27

ցաւայի է որ պատրիարքարանի կողմէն ուղղակի աղեր-
սագիր կը տրուի Մուլթան Մէճիտ կայսեր Էրմէնի միւ-
լէթ ստորագրութիւնը կրող, որով կամրաստանուի Աւե-
տարանական ժողովուրդն իրր հակառակ կառավարական
օրինաց՝ և առանց հրամանի սովորականէն տարբեր կեր-
պով յուզարկաւորութիւն և թաղման արարողութիւն
կատարող, ևն. ևն. Այդ աղերսագիր տրուելէն քանի
մը օր ետք մեծ Եպարզոս Բէշիտ փաշա կը գանգատի
Ճէզաիրլեան Մկրտիչ ամիրայի ըսելով որ քու մարդդ
(ակնարկելով զՀովիւ եկեղեցւոյ) քու գիտնալովդ. քու
համարձակութիւն տալովդ այսինչ այսինչ գործքերը կը-
նէ եղեր, ևն. ևն. Բէշիտ փաշային այսպէս հասկցնողը
Մատթէոսն է որ աղերսագրին պատասխանը ստանալ
զացած օրն հասկցուցած է անոր, որովհետև Ճեզաիրլեան
իր պատասխանը տալէն ետև կիմանայ Եպարզոսէն որ
Նորին Սրբազնութեան 1846 Նոյեմբեր 28 աղերսագրին
պատասխանը առնելու զացած օրն, յանդիմանուեր է
Եպարզոսէն իրրև նոր օրէնսգրութեան կանոնին հակա-
ռակ բանութիւններ ընող:

Վեր. Ա. Իւթիւճեան անգիտակից յիշեալ եղելու-
թիւններուն գիշեր մը հիւր կ'երթայ ամիրային և երկար
խօսակցութիւն կ'ըլլայ օրուան խնդիրներուն վրայ ի ներ-
կայութեան Արծրունի Տէր Գէորգ քահանայի և Նէվ-
րուզեան Նիկողոսի օրք հոն կը գտնուէին ամիրային
քով. Արծրունին ամենայն եռանդեամբ կը միանայ Վեր.
Հովիւին ի պաշտպանութիւն Աւետ. Հայոց և անոնց
ընդգրկած փաստին, և Ճէզաիրլեան իր հիւրին խօսած-
ներէն այնքան կ'ըզգածուի որ արդէն Եպարզոսին ըսած-
ներէն ևս զրգուուած՝ խնդրոյն իրօք միջամտել կ'որոշէ:
Ուստի անոր միջնորդութիւնով Եպարզոսական պայքու-
ղու կը զրկուի քաղաքապետութեան, որպէսզի Աւետա-

րանականներու քաղաքական ընթացիկ գործքերուն դիւ-
րութիւն մը ըլլայ :

Արդ , ըստ եպարզոսական հրամանագրին Աւետարա-
նական ժողովուրդը կունենայ յարմար մէկը իր մէջէն
ընտրուած իբրև գործակատար և բարձրագոյն դրան կը
ներկայէ , այդ էր Դարբինեան Սարգիս որով սկսաւ կա-
տարուիլ ամեն արտաքին կամ քաղաքական գործառնու-
թիւններ ընդ մէջ կառավարութեան և պատրիարքա-
րանին : Յայնժամ անցազիրնիր և ուրիշ իլմիխապերններ
կրնային պատրիարքարանէն առնուիլ և գործառնութիւն-
ներ կախ չէին մնար , նոյնպէս երաշխաւորութենէ զըրկ-
ուած խանութպաններ որ բանտի մէջ էին . իրենք մէկ
զմէկ երաշխաւորելով իսկոյն ազատ արձակուեցան , ո-
րովհետև ամենքն ալ պառկեշտ ու պատուաւոր ընտա-
նիքներու հայրեր էին :

Եկեղեցին իր հոգևոր պէտքերն ու քարոզութիւնը
անարգել կը կատարէր մայրաքաղաքին ամեն կողմը ,
Բերա՝ Պօլիս՝ Սասգիւղ՝ և այլուր , և Պէպէքի ամերիկ-
եան Վարժարանն որ հայասէր և բազմբախտ Տօքթ-
Կիւրոս Համլինի տնօրէնութեամբ կը կառավարուէր մե-
ծաւ յաջողութեամբ և արդիւնաւորութեամբ կը յառա-
ջանար այս 1847 թուականին , քանզի հալածանաց հե-
տեանքով առևտրական գործերէ կտրուած բարեպաշտ
մտավարժ պատանիներ շունչերնին հոն առած էին , և
մեծ եռանդով կուսանէին և կը պատրաստուէին թէ նո-
րահաստատ Աւետարանական Եկեղեցւոյ թէ իրենց սիրելի
ազգի ընդհանրութեան օգտակար հանգիսանալու ուխտով :
Ո՛չ ապաքէն այդ պատանիներու բարի և գովելի դիտա-
ւորութիւնը կատարուած է ի բարին շնորհիւ Աստուծոյ ,
քանզի այս ազգատիկ ժողովուրդին պէտքերն ի վերջոյ
ասոնք լեցուցին ըստ իրենց կարեաց ու կարողութեան :

Եկեղեցին ու ժողովուրդը կաճէր և կը բաղմանար օր քան զօր, թէ ի մայրաքաղաքիս և թէ ի գաւառս, պէտք ու կարօտութիւն կաւելնար այդ ոգւով աշխատաւորներու: Վասն որոյ յիշեալ թուականի շրջանին մէջ ուսանող այդ պատանեաց միայն անուաններն ու ի վերջոյ աշխատութեան ասպարէզնին ստորիւ նշանակել աւելորդ չենք սեպեր:

Սիմէոն Խ. Իւթիւճեան	Երկրորդ Հովիւ Կ. Պոլսոյ
Ստեփան Խ. Իւթիւճեան	Առաջին Հովիւ Պրուսայի
Սիմէոն Դաւիթեան	Ուսուցիչ Նիկոմիդիոյ և առաջին Հովիւ Խնուզի
Սարգիս Մինասեան	Անուանի վաճառական
Ստեփան Շմաւոնեան	Առաջին Հովիւ Հայնիի
Զենոր Վարժապետեան	Առաջին ուսուցիչ Այնթապ
Մկրտիչ Քիրէչճեան	Առաջին Հովիւ Տրապիզոնի
Յարութիւն Վեհապետեան	Պատրիարք Կ. պոլսոյ և Երուսաղէմի

Այս յիշուածները միևնոյն թուականի սանուց դասի կը վերաբերին և ուրիշ շատեր ալ կան որոնք շատ տեղեր ցրուած և ընդհանուր ազգին օգտակար եղած են բայց հոս չեն յիշատակուած:

Բայց Պէպէքի այս պատմական գիշերօթիկ վարժարանը որ ինչպէս ըսեր ենք 1840 թուականին բացուած է բարեյիշատակ Տօքթ. Սայրբս Համլինի տնօրէնութեամբ՝ իբր տասն տարիի մը կամ քիչ աւելի ժամանակամիջոցէ մը յետոյ այնքան սաներ ընթացաւարտ ըրած և այլ և այլ պաշտօններու բարձրացուցած է, որ 1854 թուականին նորանոր գիւմրահներէ շատեր ետ մնացեր են վարժարանին մէջ տեղ չգտնուելուն համար ամենքը ընդունելու:

Այդ ժամանակի ուսանողներուն մէջ էին, Վեր. Մարտիրոս Շմաւոնեան Հայնեցի, Վեր. Թօվմաս Պօ-

յաճեան Տիգրանակերտցի և իր եղբայր Յակոբ էֆ. Պոյաճեան՝ արդի ազգապետը, Բրոֆ. Ալեքսան Պեղճեան, Վեր. Արրահամ Պուղտանեան, Հովիւ Ռօտօսթօյի, Վեր. Աղեքսանդր Ճէճիզեան, Վեր. Յովհաննէս Տէր Ստեփանեան եւ. ևն. :

Յիշատակն սրղարոց, օրհնութեամբ եղիցի :

1855 թուականին պահ մը դասերը դադրեցան, որովհետեւ Խրիմի պատերազմին առթիւ ուսանողներուս մեծամասնութիւնը Անգլիացիներու թարգման եղան : Տօքթ. Ս. Համլին շատ զբաղեալ էր. հացի փուռ մը, լուացարան, մը և ջերմոցի գործարան մը կը բանեցնէր, և ապրուստի շատ միջոցներ կը գտնէր իր աշակերաններուն համար : Մինչ մեծ ազդեցութիւն կը գործէր անոնց նկարագիրը ձեւացնելու, պատշաճ կը համարենք աստանոր զետեղել կենսագրութեան ամիսփուռն, ազգիս Մեծ Բարերարին, Տօքթ. Սայրրս Համլինի, որ խօսեցաւ իր ծանօթ ազգակիցներէն մէկը, Բօպրդ գոլէճի մէջ, հանգուցեալին ծննդեան հարիւրամեակի յիշատակին առթիւ :

Ս Ա Յ Բ Ը Ս Հ Ա Մ Է Ի Ն

1811 Յունվար 5—1900 Օգոստոս 8

«Անցեալ չաթնու բոլորեցաւ Սայրրս Համլինի ծննդեան հարիւրամեակը, այդ առիթով ամբրիկեան դրոշակն օրն ի բուն ծածանեցաւ Բօպրթի գոլէճի վրայ և մեծ մարդուն կեանքն ու արարքները յիշատակուեցան նոյն հաստատութեան մէջ : Վայելուչ է որ այդ յիշատակի թուականը մեր պատմութեան մէջ ևս չյիշուի :

Սայրրս Համլինի կեանքը ուսումնասիրութեան արժանի է աստուածային առաջնորդութեան բաղմամբիւ ու որոշ ապացոյցներուն համար. զորոնք կը պարունակէ և գործունէութեան այլազան ճիւղերուն համար, որոնց մէջ

Թաղուեցաւ ինք բոլոր իր արտասովոր կորովով : Երկրագործի զաւակ էր ան և կը սիրէր երկրագործ մնալու գաղափարը : Սակայն տասնեւվեց տարեկան հասակին մէջ սկսաւ արծաթագործութիւն սորվիլ . իր այրիացեալ մօրը որոշումով : Երկու տարի աշխատելէ ետեւ , արծաթագործի խանութին մէջ՝ բարի սարկաւազի մը կրկնակի խնդրանքով որոշեց այդ դօրծը թողուլ և Աւետարանի պաշտօնէութեան համար պատրաստուիլ : Քօլէճ մտնելէ քիչ ետքը , որոշեց օտար երկրի միսիոնար ըլլալ և իր ապագայ աշխատութեան իրրեւ դաշտ ընտրեց զԱփրիկէ : Աստուածաբանական ճեմարանը մտնելէ ետեւ աւելի հակամէտեցաւ Չին երթալ . և իրօք երբ 1836ին արտասահման ղրկուելու համար Ամերիկեան Պօրտի դիմում լրաւ , պաշտօնեայ մը անոր ըսաւ որ , տարակոյս չունի թէ՛ Չին պիտի ըլլայ անոր դաշտը : Սակայն , քանի մը ամիսէն որոշուեցաւ որ , Սայրըս Համլին կ . Պօլիս գայ և դպրոց մը բանայ : Բոլոր այս անակնկալ փոփոխութիւններուն մէջ , Աստուած որոշապէս առաջնորդեց երիտասարդին և իր կեանքի մեծ ասպարէզին պատրաստեց զայն , քանզի յաջորդ տարիներուն մէջ պատեհութիւն ունեցաւ գործնականապէս շահագործելու մէն մի դաս զոր սորված էր ագարակին մէջ ու արծաթագործին քով :

Սայրըս Համլին , այս մայրաքաղաքին մէջ բազմաթիւ գործեր վարեց , որոնք միսիոնարական աշխատութեան ճիւղեր չեն համարուիր սովորաբար : Ստէպ «Մեծ Սատանայ» կը կոչուէր ճարտարութեանն համար զոր ի յայտ կը բերէր այլազան կերպերով : Անդադար յաւելումներ կ'ընէր իր դպրոցին ելեքտրական և բնագիտական ուրիշ գործիքներուն վրայ : Ամենաճարտար կերպով կը նորոգէր նաւավարի կոտրած թիակներ : Անձամբ նո-

րոգեց Պէպէքի այն շէնքը . ուր ճեմարանը հաստատուեցաւ և ուր Բօպըրթ գօլէճ իր սկզբնաւորութիւնն ունեցաւ : Վառարանի խողովակ, սաճէ վառարան, թիթեղէ և երկաթէ թի, մոխրակալ ևն . շինել սորվեցուց իր աշակերտներուն, Մուկի թակարդ շինեց և վաճառման հասոյթով ընտանիք մը փրկեց կործանումէ : Օգնելու համար այն աւետարանականներուն, որոնց հետ ամէն յարաբերութիւն արգիլուած էր, ալիւրի շոգեշարժ ազօրիք մը հաստատեց և հաց շինեց, որով անմիջապէս վերցաւ յարաբերութեան արգելքը : Ինքը եղաւ Կ . Պօլսոյ մէջ գարեջրի խմորով հաց եփող առաջին մարդը : Եւ որովհետեւ խմորը գերման գարեջրագործէ մը կ'առնէր, հացն ալ «գարեջրի հաց» կոչուեցաւ, և գեռ նոյնպէս կը կոչուէ : Մր . Սէյրըս Համլինի փուռը, զուարճալի միջադէպի մը առիթ տուաւ Խրիմի պատերազմին ժամանակ : Սկիւտարի Սէլիմիէ զօրանոցին անգղիական հիւանդանոցի վիրաբոյժը այդ ընտիր հացին լուրն ստանալով իր քովն հրաւիրեց զՄր . Սէյրըս Համլին : Երբ նագնաց, վիրաբոյժը նայեցաւ անոր և առանց բարեւ տալու հարցուց . «Ի ո՞ք էք հացագործ Համլինը» : «Ո՛չ տէ՛ր, ես Պատ . Մր . Համլին եմ, ամերիկացի միսիոնար մը» : Միւսը պատասխանեց . «Ահաւասիկ բան մը ևս այնչափ ուղիղ որչափ կրնայ ըլլալ այս երկրին մէջ : Հացագործ մը կ'ուզեմ, միսիոնար մը կը գտնեմ : Փառք Աստուծոյ, ես հեթանոս չեմ որ միսիոնար մը ուզէի» : Սակայն կարգադրութիւն մը եղաւ վերջապէս և քիչ ժամանակէն Մր . Ս . Համլին սկսաւ օրը 2,000 քաչէ աւելի հաց հայթայթել, նոյն հիւանդանոցի վիրաւոր զինուորներուն :

Շահեկան է գիտնալ թէ՛ գարեջրի հացը այն ժամանակ քաչը չորս դոնեկան էր : Պրուսայի այժմու Ա-

ւետ. Տաճարը այդ փռան հասոյթով շինուեցաւ Տօքթ. Ս. Համլինի ձեռամբ: Հաստատեց նաեւ անգղիացի զինուորներու լաթերը լուալու համար լուացարան մը, որով ոչ միայն գործ հայթայթուեցաւ Պէպէքի բազմաթիւ աղքատ կիներուն, այլ և բազմաթիւ զինուորներու կեանքը փրկուեցաւ, որոնք հարկաւ պիտի մեռնէին անմաքրութեան պատճառով: Պարտիզակի եկեղեցին այդ լուացարանին շահով շինուեցաւ: Այս երկու շէնքերէն զատ, Սասգիւղի և Ռօտօսթօյի աղօթատուններն ալ, Տօքթ. Ս. Համլին կառոյց իր ձեռնարկներուն հասոյթով: Ուրիշ տասը տասներկու եկեղեցիներ և դպրոցներ ևս նպատտ ստացան այս միեւնոյն տղրիւրէն:

1865ի ահաւոր հնտախտին ժամանակ Տօքթ. Ս. Համլին անխոնջ ծառայեց հիւանդներուն և մահամերձներուն: Նշանաւոր «Համլինեան դեղ»ը, գոր յաջողապէս գործածեց հարիւրաւոր եթէ ոչ հազարաւոր անգամներ, մինչեւ ցարդ մեծ յարգ կը վայելէ իբրեւ հնտախտի դարման: Բացարձակ անվսիսութիւնով կ'այցելէր վարակեալները, քաղաքին ամէն կողմը:

Երբ 1860ին հրաժարեցաւ Պօրտի միսիոնարութենէն որպէսզի Բօպրդ գօլէճի հիմնարկութեան ձեռնարկէր, իր նոր գործին մէջ աւետարանչական նոյն ոգին դրաւ զոր 21 տարիէ ի վեր կը ցուցնէր իբրեւ միսիոնար: Պէպէքի ձեմարանին աշակերտներով շարաթը երկու անգամ աղօթաժողով գումարելով կը հրճուէր ու կ'ըսփոփուէր: Թէպէտ անդադար դպրոցական գործով ըզբաղեալ էր, կ'ուրախանար երբ անձնական հոգեւոր խօսակցութեան ու քարոզութեան պատենութիւն մը ներկայանար, և շատ կը սիրէր մերթ ընդ մերթ նիկոմիդիա, Պրուսա և ուրիշ քաղաքներ այցելել աւետարանչական գործով: Նմանապէս, Բումէլի Հիսարի գօլէճին շինու-

թեան ժամանակ, ամէն երեկոյ գործաւորներուն մէջ, թուրքերէն լեզուով քիչ շատ Սուրբ գրոց ընթերցում տեղի կ'ունենար վրաններու տակ, ուր յոյներ, մօնթէնէկրօցիներ, քուրդեր ու հայեր մտիկ կ'ընէին ու կը սորվէին:

Գուէճի ձեռնարկին մէջ, ամէն տեսակ ընդդիմութիւններու հակառակ, Տօքթ. Ս. Համլինի յարատեւութիւնը լաւ կը լուսարանէ անոր բացարձակապէս աներկիւղ վստահութիւնը Աստուծոյ վրայ, նաև իբրև մարդկային ու է ոյժէ վեր զօրութեան մը վրայ, նաև անոր հաստատ որոշումը անոր հետեւելու: Նուազ վսեմ հաւատք ունեցող ոչ ոք պիտի կրնար յայտնել այդքան զժուարութիւններու դէմ: Վերջին տարիներուն մէջ ալ նոյն ազնիւ ու յանկուցիչ յատկութիւնները ցոյց տուաւ իբրև դասախօս Պէնկորի Աստուածաբանական վարժարանին, և իբրև նախագահ Միտըլպէրկի գուէճին: Եւ երբ 70 տարեկան քաջուեցաւ հրապարակային կեանքէ, սիրով ձեռնարկեց աստուածաբանութիւններու վրայ խօսիլ եկեղեցիներուն, և հարիւրաւորներ զգածուեցան պատմութիւններէն զորս կրնէր Աստուծոյ շնորհաց գործին վրայ ի թուրքիս: Անոր սիրտը միշտ հոս էր, իր որդեգրած երկրին մէջ, մինչև որ 1900 Սեպտեմբեր 8ին՝ 90 տարեկան հասակին մէջ այս աշխարհէն փոխադրուեցաւ իր յաւիտենական բնակարանը:

Տօքթ. Սայրուս Համլինի ազդեցութեան յիշատակը միշտ քաղցր պիտի ըլլայ այս երկրի ժողովուրդներուն և մանաւանդ Հայոց, իր կրթական գործը շատեր մարզեց որոնք նշանաւոր դեր ունեցան ազգին հոգեւոր ու իմացական կեանքին մէջ: Անոր քարոզները և ուղերձները իրենց բացորոշ, հանդարտ և համոզիչ զօրութեան հաւար ընդ երկար պիտի յիշուին լսողներու կողմէ: Ամէն

ազգայնութենէ թէ՛ հարուստ թէ՛ աղքատ, ամէն տա-
ռապեալներու և նեղեալներու հանդէպ անոր խանդա-
ղատալից համակրանքը սիրոյ ամուր կապերով անոր կը
կապէր ամենը, որոնց օգնել կրցած էր ու է է կերպով :
Եւ բաղձաթիւ հայ բարեկամներ իրենց բարերարին հան-
դէպ իրենց երախտագիտութիւնը և սէրը ի յայտ բերին
հարիւր ոսկիէ աւելի ծախքով արժանավայել յիշատակա-
րան մը կանգնելով անոր գերեզմանին վրայ : Անշուշտ
կը վայլէ որ անոր ծննդեան հարիւրամեակին առիթով
միասնարար գոհանանք Աստուծմէ՝ այսքան սուրբ նկա-
րագրի մը և ծառայութեան այսքան անձնուրաց կեան-
քի մը յիշատակին համար :

Չարլզ Րիկզ

Գալով վերոյիշեալ եպարքոսական Պուլքուլթուին,
տեղական, այսինքն Պօլսոյ վերաբերութիւն ունենայով
գաւառները ազգեցութիւն չէր ունենար, մանաւանդ
Պօլսոյ մէջ իսկ շատ անկատար կը մնար ստացուած դիւ-
րութիւնը, ինչպէս կ'երեւի հետեւեալ իրողութիւններէն :
Գամաղիէլեան Յովսէփ, զորմէ ակնարկութիւն եղած
է, (1) իբրեւ պարկեշտ մետաքսագործ ըստ Պուլքուլ-
թուի կարգադրութեան երաշխաւորուելէն ետք անկա-
րող կըլլայ շատ տարիներէ ի վեր վարձու բռնած կըր-
պակը վերստին ձեռք բերել և իր գործին զբաղիլ, և
կ'երթայ իր բանտի ընկեր երաշխաւորին հետ կ'ընկերա-
նայ անոր կրպակին մէջ : Նոյն թուականի Օդոստոս ամ-
սոյ վերջերը, սա երբ իր գործովը կ'զբաղէր, երեք ըս-
տահակ ջրհանակիր հայեր կ'երեւին կրպակին առջեւ, և
կատաղի դէմքով հէգ մարդուն վրայ կը նային ու իրա-
րու կը մուտան անոր վնաս մը հասցնելու երեւոյթով :
Յովսէփ յանկարծ նստած տեղը կը ցնցուի, բայց առանց
վախը յայտնելու, իր սովորական քաղցրութիւնով կը

(1) Մասն Ա. գլ. ԺԲ.

յաղթէ անոնց կատաղութեանը, անանկ որ իրարու «Աս լաւ մարդ է եղեր, մեղի խօսուածին պէս չէ եղեր» ըսելով՝ կ'անցնին կ'երթան: Բայց Յովսէփին այնպէս յանկարծ ցնցուիլն ու վախնալը շատ ցաւալի հետեւանք կ'ունենայ, քանզի ջրհանկիրներուն ձգել երթալէն անմիջապէս ետք՝ բերնէն արիւն կըսկսի գալ և նստելու անկարող վիճակի մէջ կ'ելլէ տունը կ'երթայ անկողին կը մտնէ, որ անոր մահուան անկողինը նղած է:

Հիւանդին քոյրը, որ իր հղբօրը վրայ մեծ սէր ունէր, իսկ հալածանաց և անէծքներու երկիւղին տոթիւ երկար ատենէ ի վեր տեսած չէր զանիկա, անոր այս վտանգաւոր հիւանդութեան լուրը առնելով, գացեր էր իր եղբայրը տեսնել: Յովսէփ ևս իր քոյրը շատ կարօտցած ըլլալով մեծ ուրախութիւնով կը լեցուի ու անոր այսպէս կը խօսի, որպէս կը պատմէ իր եղբայրը՝ Պետրոս: «Սիրելի քոյր իմ, դուն աղէկ գիտես իմ անառակութեան օրերս, եթէ այն վիճակիս մէջ մեռնէի, տարակոյս չկար թէ պիտի կորսուէի. բայց հիմա գոհութիւն Աստուծոյ, որ զիս մեղաւորս գտաւ, և յանձնեց Քրիստոսի, գտած եմ փրկիչս, անոր սուրբ արիւնովը իմ մեղքերէս սրբուած ու փրկուած ըլլալս կը հաւատամ և մեծ յոյսով կըսպասեմ անոր գալուն, և ուրախութեամբ պիտի մերկանամ այս հողերէն մարմինէս: Կուզեմ որ երբէք չտրտմիս իմ մահուանս վրայ. ինչ մխիթարութիւն է այս որ տէրս ինծի պէս մեղաւորին շնորհեց, շնորհակալ եմ իրմէն»: Բովը եղողներ կը վկայեն թէ՛ մահուան յաղթութիւնն ու գերեզմանին խայթոցը երբէք զօրութիւն ունեցած չեն այս մեռնողին վրայ. այն հաստատուն յոյսն ու անփրկով ապահովութիւնը որ Քրիստոսի այս խոնարհ աշակերտին վրայ մինչև վերջին շունչը կ'երեւնար, անտարակոյս արդիւնքն էր այն կեն-

դանի հաւատքին՝ որով կը հոսէր անոր հոգւոյն վրայ Յիսուսի վէրքերէն մեղաւորներու համար հեղուած արիւնը : (1)

Այս հալածոնաց զոհին յուզարկաւորութիւնն ու թաղումը ևս նոյն կերպիւ կը կատարուի , բայց ո՛չ նը-
ւազ քարկոծմամբ ևն :

Ուրիշ ցաւալի եղելութիւն մը Աւետարանական Ե-
կեղեցւոյ առաջին Հովիւին Վեր . Հ . Աբիսողոմ Խ . Իւ-
թիւճեանի անակնկալ մահն եղած է , զոր պարսպայիւքն
յառաջ բերել պատշաճ կը համարենք :

Վեր . Հովիւը 1847 թուականի սկիզբներն Նիկո-
միդիա կը հրաւիրուի տեղւոյն Աւետարանական Եկե-
ղեցւոյն Սուրբ Հաղորդութեան խորհուրդը յիշատակելու
առթիւ , և իւր այցելութիւն կը տեւէ իբր շաբաթ մը :
Նոյն միջոցին հոն ալ ննջեցեալ մը կը պատահի , որոյ
յուզարկաւորութիւնը բնականապէս այցելու հովիւին
նախագահութեամբ կրլլայ , հակառակորդաց խաժամուժ
ամբոխը անպատմելի ազաղակնիրով մեծ անկարգութիւն
կը յարուցանէ , թէպէտ գիրեղմունատան մէջ թաղման
արարողութիւնը ուշադրութիւննին կը գրաւէ և լու-
թեամբ ունկնդրութիւն կընեն , մանաւանդ քարոզին որ
մեղաց , մահուան , դատաստանի և յարութեան վրայ կը
խօսուի , յայնժամ մեծապէս կը ներգործուին աղմկա-
յոյզք և ետ դատնալնին իրաւ խաղաղութեամբ կրլլայ ,
բայց յառաջագոյն կասարուած սոսկալի անպատեհու-
թիւնք ցաւալի ներգործութիւն մը կը թողուն Աւետա-
րանի պաշտօնեային փափուկ կազմութեանը մէջ անոր
առողջութեան մասին : Եւ երբ կը վերադառնայ Կ . Պօ-
լիս , հոն ալ քանի մը օրէն ննջեցեալ կը պատահի Ա-
յաղմա Սօքաք ըսուած թաղին մէջ որ նշանաւոր է իր-

(1) Տես գրոյկ Գամաղ Եփեսոսիին երջանիկ մանր , երես 141

բնւ տիպար անկրթութեան, ուր սոսկալի ազմուկ, ազազակ և քարրնկէցութիւնք տեղի կունենան թէ՛ նընջեցեային և թէ յուղարկաւորներուն վրայ, Ասոնցմէ ոմանք անհամբեր և անխոհեմ գտնուելով, նոյն պահուն Մովսէսի ձեռքով Եգիպտոսէն ելլող Իսրայելացւոց պէս կը տրանջան հէք Վերապատուելոյն երեսին բսկով. «Մեզ այսպէս սրիկաներու քարերու տակ մեռցնելու համար այս վիճակին բերիք.»)

Արդ, հէք հովիւն արդէն անձամբ փափկասուն և բնաւորութեամբ ալ յոյժ զգայուն, Նիկոմիդիոյ դէպքէն ալ իր առողջութեանը աննպաստ ներգործութիւն մը ըստացած՝ լնթերցողք կրնան երեւակայել որ, նորակազմ անփորձ ժողովուրդ մը այսպիսի վիճակներու ենթակայ եղած, ո՛րպիսի մտահոգութիւն և տառապանք կրնային պատճառել անոր, և այդ անվարժ հօտին հոգը ի՛նչ աստիճան կը ծանրանար անոր վրայ, Զարմանալի չէ որ այնչափ բնուան տակ ընկճեալ և այնչափ հակառակութեանց առջեւ իւր կազմութիւնը կարող եղած չէ տուկալ, և այնքան կանուխ կ'առնուի իր հօտէն մահուամբ, ժանտատենդի հիւանդութիւնը կը տիրէ անոր փափուկ կազմութեանը մէջ, իւր սաստիկ ցաւերու պահուն տակաւին սրտին եռանդն ու փափաքի առարկան Յիսուսի Աւետարանին յաղթանակն ըլլալով՝ մեռնելէն օր մը առաջ յանկարծ կը ցատկէ անկողնէն դէպի պատուհան, կը բանայ փեղկերը, մինչ քովն եղողները հագիւ կը հասնին դինքր բռնել, վախնալով թէ, վար պիտի նետուի, բայց հակառակ անոնց ամեն ընդդիմութեան, գըլուխը պատուհանէն դուրս կ'երկնցնէ և թրքերէն լեզուով կ'աղաղակէ. «Ո՛վ ամենայն սղգք և լեզուք, ապաշխարեցէ՛ք, ինչու որ Աստուծոյ թագաւորութիւնը մօտեցած է. ան որ կը հաւատայ անոր չպիտի դատա-

պարտուի, և ան որ չհաւատար՝ արդէն դատապարտուած է, ևն. ևն.» : Իւր ձայնը ա՛յնքան յստակ և զօրաւոր և իւր արտասանութիւնն ա՛յնքան որոշ կրկայ որ, թաղին մէկ ծայրէն մինչեւ միւսը կը լսուի, և բարեկամք շնչասպառ վազելով կ'երթան տեսնելու թէ՛ ի՛նչ եղած է : Նոյն օր արեւմուտքի տտեն, Պատ. Հ. Ծ. Օ. Տուայթ կ'այցելէ հիւանդին երբ մահամերձ վիճակի մէջ կը գտնուէր, և ահաւասիկ նոյն ինքն իր վերջին այցելութեան մասին ըրած նկարագրութենէն քաղուած քանի մը տողեր ի ստորեւ :

«Յայտնի կը տեսնուէր որ փոփոխութիւն մը եկած էր անոր վրայ, և թէ վախճանը շատ մօտ էր : Անմիջապէս ջանացի որ իւր մտազրութիւնը արթնցնեմ, որ եթէ կարելի ըլլար՝ բուն իւր բերնէն ստուգէի մտքին վիճակը որով քիչ ժամանակէն յախտնականութեան մէջ պիտի մտնէր : Առաջին անգամ ջանքս անյաջող ելաւ, բայց քիչ անցաւ ներկայ գտնուողներուն ուրախութեանն ու սփոփանքին համար խորունկ քունէ մը արթնցածի պէս եղաւ, ու ես շատ երկար և շատ օղտակար խօսակցութիւն մը ունեցայ հետը իւր վիճակին վրայ, և յաւիտենականութեան վրայ ունեցած գաղափարին և յոյսին նկատմամբ : Եւ գտայ որ Քրիստոսի վրայ հաստատուն հաւատքով՝ իրբև իւր մի միայն և ամենաբաւական Փրկիչը, ուրախ էր անով՝ անպատմելի ու փառաւորեալ խնդութիւնով : Հարցուցի թէ, կուզէ՞ր այս մարմնէն ելլել ու Քրիստոսի քով երթալ, այս հարցումիս իւր բնական առողջանութեամբը պատասխանեց ամենայն ճշտութեամբ Առաքելոյն Պօղոսի խօսքերն, ի գարմացումն ներկայ եղողներուն : «Ինձ կեանք Քրիստոս է, և մեռնիլը շահ : Հապա եթէ մարմնոյ մէջ ապրելս իմ գործոցս պտուղ կը բերէ, ալ չեմ գիտեր որը ընտրեմ :»

«Յետոյ յիշեցուցի իրեն որ ինքը Քրիստոսի պաշտօնեայ մը ըլլալու կանչուած էր, և թէ շատ աշխատած էր Անոր թագաւորութիւնը տարածելու, և հոգիներ ապաշխարութեամբ փրկութեան առաջնորդելու, արդ՝ խնդրեցի որ պրուցէ ինձ, թէ արդեօք կը խորհի՞ որ իւր բազում աշխատութեանցն ու Քրիստոսի համար կրած շարչարանքներուն իբրև փոխարէն փրկութիւն ընդունելու արժանաւորութիւն պիտի ունենայ: Պատրաստ սրտով («Ինչաւ ամենեին») պատասխանեց, և քիչ մը դադար առնելէն ետև Առաքելոյն Պօղոսի սա խօսքերը ամբողջովին արտասանեց գրեթէ ամեն բառի գլուխ կայնելով շնչաւորութեան համար, «Վասնզի Աստուած անիկայ՝ որ մեզք չէր գիտեր, մեզի համար մեղաւոր սեպեց, որ մինք անոր ձեռքովը Աստուծոյ արդարները եղած ըլլանք:» Վերջը իբրև իմ հարցումներու պատասխան, ամենակատարեալ վստահութեամբ իւր սիրելի կիներն ու մէկ հատիկ զաւակը, և իւր խնամոց յանձնուած Աստուծոյ եկեղեցին ու ժողովուրդը, որոցմէ պիտի բաժնուէր՝ Աստուծոյ յանձնեց: Մահուան շատ անկողիններու քով գտնուած էի, բայց ճշմարիտը խօսելով այսպիսի խորին ազգուութիւն ունեցող մահուան անկողին պառկող տեսած չէի: Ապա աղօթք մը ըրի, և մեր հրաժարելու մօտ եղբայրն ամեն մէկ իմաստի գլուխ, և աղօթքին վերջը երկար ամէն մը կ'ըսէր:

«Աղօթքէս վերջ եկեղեցւոյ անդամներէն մին Մահտեսի Պօղոս Յովհաննէսեան հիւանդին անկողնոյն քով գնաց, և խղճալի ձայնիւ ու փղձկացեալ սրտիւ աղաղակեց. «Վեր. Արիստղոս սիրելի՛ս, ո՛վ պիտի քարոզէ մեզի և ո՛վ յորդորենք և խրատ ու մխիթարութիւններ պիտի խօսի:»

«Քրիստոսի սիրելի պաշտօնեայն այլևս մարդու ձայն-

լսելու սահմանէն անդին անցեր էր, որ ասուն հոն ներկայ գտնուող բոլոր եղբայրներ ու քոյրեր սկսան իրենց զգացումները արաատուաց հեղեղներով դուրս թափել :»

Հ. Ճ. Ս. Տուայթ

Ահա այսպէս կը վերջանայ Աստուծոյ հաւատարիմ ծառային երկրի վրայ կատարած աշխատութիւնը, 1847 Մարտ 12ին, և յուղարկաւորութիւնը կը կատարուի մեծ բազմութիւնով հետեւեալ օրը որ էր կիրակի: Հանգուցեալին հայրը որ մինչև իր անդրանիկ որդւոյն մահը անտարբեր կ'ապրէր Աւետարանին աշակերտելու մասին՝ այնուհետև որդւոյն մահը օրհնութիւն մը բլլալով կ'արթննայ իր հոգևոր քունէն, կը մանկ իր սարտաւորութեան ճամբուն մէջ, կ'արհամարէ ամեն աշխարհային մեծութիւն, սլատիւ, նմանապէս երկիւղ, և կ'ապրի իրը խոնարհ և հաւատարիմ հետևող մը Քրիստոսի: յինչև իր վերջին շունչը:

Հայաստանեայց Աւետարանական եկեղեցւոյ առաջին Հովիւը, Վեր. Արիստղոմ Խ. Իւթիւճեան ննջիլէն ետք՝ հանգուցեալին կրտսեր հարազատը որ Պէպէքի Ամերիկեան վարժարանին Աստուածաբանութեան ճիւղին լնթացաւարտը լինելով կոչում ունէր Նիկումիդիոյ եկեղեցիին Հովիւ երթալու, նախաինամական իմաստութիւնը մայրաքաղաքիս Աւետ. եկեղեցւոյն միասնական ձայնին արգիլուելով Նիկումիդիա երթալէ իր հանգուցեալ եղբոր տեղն անցնիլ կը կոչուի, և հանդիսաւոր ձեռնադրութեամբ հանգոյն իր մեծ եղբոր կ'ըլլայ Վեր. Հ. Սիմէոն Խ. Իւթիւճեան, երկրորդ Հովիւ Հայաստանեայց Աւետարանական եկեղեցւոյ ի մեծ ուրախութիւն:

Գ Լ Ո Ւ Խ Գ .

Հայոց սահմային յատկութիւններէն մին. — Կայսերական
հրովարտակ առ ոստիկանութիւն. — Պատգամաւո-
րութիւն առ Սրբ Սղրասճօրդ. — Աւետա-
րանականք ուրոյն ժողովրդակա-
նութիւն:

Հայ տոհմին գովելի յատկութիւններէն մին է ,
անոր կրօնասիրութիւնը և ալ սկիզբէն ի վեր ճանչցուած
է իբրև կրօնական ազգ որ իր կրօնքի սիրոյն համար
պատրաստ գտնուած է զոհել ոչ միայն իր ստացուածքն՝
այլ ի հարկին կեանք իսկ : Այս ազգին այս յատկու-
թիւնն ունենալը ցոյց տալու համար հարկ չկայ վկայու-
թիւններ յառաջ բերելու , միայն իր նախահայրերու եր-
կայն շարքը առաջին դարէն մինչև ներկայն բուսական է
դիտել որ ի՛նչպէս հօր , սուր , և ամեն տեսակ մահա-
ցու տանջանք՝ կարող չեն եղած բաժնել անիկա իր
կրօնքէն : Եւ ալ հաւատքին վրայ ու ճշմարտութեան
պաշտպան կանգնած՝ մեռնիլը բանի տեղ զրած չէ , սա-
կայն զարմանալի չէ որ բացառութիւններ ալ պակաս
չեն եղած . մանաւանդ տեսնուած են վասակներ , կեղ-
ծաւորներ և գիտնալով հակառակողներ ընդ դէմ ճշմար-
տութեան :

Աւետարանական այս մեծ յեղափոխութիւն ևս որ
ներկայ դարուս մէջ երեցաւ , ուրիշ բան չէ , այլ միայն
նոյն տոհմական գովելի յատկութեան նոր մէկ ապացոյցը :
Քանի մը հայեր ներկոյ դարոյն մէջ հանգոյն այն հին
Բերիացիներուն գործեցին , զորս ներշնչութիւնն գոված
է բսկով՝ «Զի նոքա էին ազնուագոյնք՝ քան որ իթե-
սազոնիկէ էին , որք ընկալան զբանն ամենայն յօժարու-
թեանը , հանապազ քննէին զգիրս , եթէ իցէ այս այս-
պէս : (Գործ . ԺԷ . 11) : Գործոյս առաջին մասին մէջ

յիշուած են եկեղեցական բազում բարեջան և ողջախոհ հայրերէ, ուսուցիչներէ և ընդհանուր ժողովուրդէն ոմանք, որք սէր և եռանդ ունէին սրտերնուն մէջ Հայաստանեայց եկեղեցւոյ և հայ տոհմի բարեկարգութեանն ու ապնուացմանը համար: Այդ դասակարգէն ոմանք որ պարագաներու բերմամբ ստիպուեր էին առանձին կազմաւորութիւնով եկեղեցի անուանուիլ, տակաւին միևնոյն սէրն ու եռանդը անշէջ կը տածեն մէջերնին՝ դէպի մայրենի եկեղեցին և առ բովանդակ տոհմն: Չինք վարանիր ի դիմաց համայն ուղղախոհ Աւետարանականներու ըսել ըստ Առաքելոյն Պօղոսի՝ «Ստուգութեամբ ասեմ ի Քրիստոս և ոչ ստեմ, վկայեն ինձ միտք իմ ի Հոգին սուրբ, զի տրտմութիւն է ինձ յոյժ՝ և անպակաս ցաւք սրտի իմոյ: Զի ուխտիւք խնդրէի ես իսկ ինքնին նզովեալ լինել ի Քրիստոսէ վասն եզրարց իմոց և ազգականաց»⁽¹⁾

Բայց այն ցաւալի պարագաներ որ պատճառ եղեր էին եկեղեցւոյ անջատմանն, նոյնը ըլլալ կը խրոխտային ևս առաւել սաստկութիւնով ազգայինն ևս, մանաւանդ գաւառները, որովհետև գաւառաբնակ ազգայնոց մէջ, ինչպէս կը տեսնուի, լուսաւորութիւնը առաւել կը յառաջանար, և այն յիշեալ Նպարգոսական պուլթուլութիւն տնօրինութիւններ ամուլ կը մնային գաւառներու համար: Եւ որովհետև Աւետարանական եկեղեցին արդէն իր ճիւղերն արձակեր էր Նիկոմիդիոյ՝ Ատապաղարի՝ Պրուսայի՝ Տրապիզոնի՝ Կարնոյ և ուրիշ տեղերու մէջ, բնականապէս պաշտպանութեան պէտքերն ևս աւելցեր էին, հետզհետէ թախանձանք կ'ըլլար բարձրագոյն Գուար: Ուստի նորին վեհափառութիւն, Սուլթան Ապտիւլ Մէճիտ, միջնորդութեամբ Անգղիոյ դեսպանին, Սըր Սդրատֆօրդ Բէտքլիֆ Քառնիկի

(1) Հռովմ. Թ. 1—5

կայսերական մասնաւոր հրովարտակով Աւետարանական ժողովուրդին պաշտպանութիւնը կը յանձնէ ոստիկանութեան նախարարին և այս կարգադրութեամբ նոյն պաշտօնատան մէջ սենեակ մը կ'ընտրուի իբրև փոխանորդարան Բողոքական հասարակութեան, ուր կը բազմի Ստեփան էֆ. Սերովբէեան և այդու գործերը առ առաւել դիւրութիւնով կրնային տեսնուիլ :

Իրերու այս նոր կարգադրութիւնը կրնար բաւական նպաստաւոր ըլլալ Աւետարանականներու խաղաղութեանն ու հանգիստ վայելիլնուն, հալածանքին զօրութիւնը առ առաւել կը տկարանար քան որչափ եպարզօսական պույրուղուի մը ազդեցութիւնովը : Եւ ինչպէս մայրաքաղաքին նոյնպէս ալ գաւառներու տեղական կառավարութիւններ անոր կարևորութիւն տալերնուն համեմատ, Աւետարանականներ առաւել համարձակութիւն կրնային ունենալ գաւառներու մէջ : Այնթապու մէջ Ճիզմէճեան Պետրոս վարդապետի աշխատութիւնով սկսուած լուսաւորութիւնը շատ տեղեր կը տարածուէր հոգևորապէս խաւարի մէջ գտնուող խեղճ ժողովուրդներու վրայ, որոնք անօթի և ծարաւ էին արդարութեան, և Քիլիսէ, Պէլէրինէ, Մարաշէ, Ուրֆայէ, Տիգրանակերտէ, Մալաթիայէ և ուրիշ վայրերէ թախանձանք կը տեղար մայրաքաղաք և ստիպողական կոչումներ կ'ըլլար երթալ քարոզելու անոնց կենաց բանը Աւետարանը : Արտորաներ արդարև ճերմկցած և հունձքի համար հասունցեր էին :

Այդ միջոցին Ատօբաղարու Աւետարանական եկեղեցւոյ առաջին Հովիւն ու Նիկոմիդիոյ վարժարանի ուսուցիչը Խնուզցի Սիմէոն Դաւիթեան՝ յանձնառու կ'ըլլան երթալ պտոյտներ ընել վերոյիշեալ այդ խաւար վայրերն և քարոզել անօթի ու ծարաւ հոգիներու կենաց բանն և այդ

գացող աշխատողներուն քիչ ժամանակէն կեդրոնին ուղղուած տեղեկագիրէն հետեւեալը կը քաղենք ի ստորեւ:

«Ոչ ոք կարող է առանց ականատես ըլլալու ըստ բաւականի տեղեկութիւն ունենալ այս զարմանալի արթնութեան մասին զոր կը տեսնենք մեր սիրելի ազգայնոց մէջ այս կողմեր: Մենք մեր ուղևորութենէն առաջ չէինք կրնար երեւակայել այս փառաւոր գործը, որ յառաջ կը տանի Աստուած: Գրիչնիս շատ սկար է կենդանի գոյներով նկարագրելու այս գործին մեծութիւնը և ընդարձակութիւնը: Գիտէ՞ք որ այլ է բան մը լսել և այլ է անոր ականատես ըլլալ, միայն անձնականապէս տեսնելով կրնայ ունենալ մարդս գիտութիւն Աստուծոյ մեր մէջ յառաջ տանելու վրայ եղած զարմանալի գործին վրայ:» Կրնայ ըսուիլ թէ 1847—1841 թուականներն Աւետարանական եկեղեցւոյ տարեգրութեանց մէջ ամենէն նշանաւորներն եղած են այս իրողութեան յայտնի ապացոյցներ կան: Թուրքիոյ ներսի կողմերը հիմա տեսնուած հազարաւոր ժողովուրդներու Աւետարանին աշակերտած ըլլալը փոքր ապացոյց է:

Երանի՛ թէ վանքերու մէջ կեցած, և մայրաքաղաքին փողոցները թափառող հայ եկեղեցական վեղարաւորներ գոնէ հիմա սթափին իրենց հոգևորապէս ինկած խոր քունէն և սկսին պարտաճանաչութեան և Քրիստոնէական սուրբ ճշմարտ կրօնի էական մասը ուշադրութեան առնել, այն է ողջամիտ անխարդախ քարոզութիւն սուրբ Աւետարանի: Քարոզութիւն՝ որ է անձնական խղճամիտ զգացումներ և խորհուրդներ հաղորդել օգուտ հոգևորապէս սովատանջ իսկ կենդանի հայ ժողովուրդներու, որ ցրուեալ են ի սփիւռս աշխարհի: Ծրշտութիւնով և ուղղութիւնով սրտէ ի սիրտ խոսողներ

տարակոյս չկայ որ յազթող հանդիսանան : Կրօնական ամեն արարողութիւն և ծէս ու պաշտամունք որչափ փառաւոր և շքեղ ալ ըլլան մարդոց աչքերուն առանց Աստուծոյ կենտրար բանին մտքուր և սարգ ու անխարզախ քարողութեանը՝ նման են այն զարդարուն շքեղ սեղանին որուն վրայ սննդարար կերակուր չըլլար : Ո՛րչափ ճշմարիտ և իմաստալից է Սարգիս շնորհալին խօսքը որ կ'ըսէ , «Որպէս ի պակասել կերակրոյ թարչամին մարմին և մեռանի , նոյն դունակի պակասիլ կաթին վարդապետութեանն Քրիստոսի որ է կերակուր հոգւոց , հոգին զկենդանութիւնն՝ որ ըստ Աստուծոյ է , կենդանանալ ս'չ կարէ :»⁽¹⁾

Այս համոզումով և ճանաչումով մինչ Աւետարանական եզրարք կ'աշխատէին և կը ջանային քարոզել և ուսուցանել Քրիստոսի վարդապետութիւնը ըստ օրինակի սրբազան առաքելոց և իրենց նախկին ներշնչեալ սուրբ հայերու , որպէս վերոյիշեալն , միւս կողմէն դատարկապորտ , տգէտ , չաճամով և անզգայ կղերներ հալածանքը հոգևոր պատիժ անուանելով կը շարունակէին մտնաւանդ ի գաւառս : Որովհետեւ եպարգոսական պայրութիւնն ետքը կայսերական առաջին հրովարտակը Աւետարանական հայոց պաշտպանութեանն համար իր հրամանները ոստիկանութեան նախարարին կ'ուղղէր , և նահանգային ու գաւառային իշխանութիւններէ ոմանք անփոյթ կ'ըլլային և թերևս չէին գիտեր ալ այնպիսի հրամաններու գոյութիւնը , և կեղրոնական բարձր իշխանութեան թախանձանքներ կը շարունակուէին և մինչև իսկ Անգղիական դեսպանէն միջամտութիւն կը պահանջուէր :

Վերջապէս կ'ելլէ առաւել ազդու և վերջին կայսերական հրովարտակը որ կը զրկուի նահանգներու և քա-

(1) Մեկնութիւն Կարող, Սար. Շնոհա, Երես 75 :

դաքներու իշխանութեանց և մանաւանդ մանաւորաբար հրովարտակ մը կը շնորհուի Աւետարանական հայոց փոխանորդին, այսպէս :

«Ուշադրութիւն տրուի այն անփոփոխ, կայուն և մշտնջենական հրամաններուն գործադրութեանը, որ կը բովանդակեն իմ բարձր հրովարտակիս մէջ, և հոգ տարուի զանոնք չանսաստել :

«Առ Ստեփան, ընտրեալ և պատուեալ փոխանորդ Բրոդիստանդ Քրիստոնեայ ժողովրդեանն, պատիւդ շատնայ :»

«Երբ ժամանէ քեզ իմ այս բարձր հրովարտակ, գիտնաս որ ամենաարդար Բարձեայն Աստուած շնորհատուն բարեաց ըստ իր աստուածային գերազանց և անսահման բարութեան բերելով իմ կայսերական օգոստափառ անձս թագաւորական փառքով թագաւորել՝ և բարձրացնելով խալիֆայութեան վեհագոյն կարգին, շնորհակալութիւն և փառք անոր, որ այնքան երկիրներ և տարբեր դասակարգերու հպատակներ, ազգեր և ծառայներ յանձնած է խալիֆայութեան ձեռք : Վասն որոյ իմ քաղաքային և հոգեկան իշխանութեանս պատշաճ բարեսիրութեան համաձայն և նաև Սուլթանութեան գերագոյն սովորութեանն համեմատ աստուածային օգնականութիւնով մինչև հիմա կայսերական գահուն յաջորդելէս հետէ ամեն հոգածութիւն ի գործ գրի կատարեալ պաշտպանութիւն և ապահովութիւն տալու համար կայսրութեանս բոլոր հպատակներուն իւրաքանչիւր դասակարգին : Եւ մանաւորապէս նախորդ ժամանակաց մէջ եղածին պէս հիմա ալ, վայելին անոնք կատարեալ անդորրութիւնով իրենց արտօնութիւնները, կատարեն իրենց կրօնական արարողութիւններն և պաշտամունքն ին անխափր իմ կայսերական ճշմարիտ նպատակիս և

բարեացականութեանս համեմատ և շարունակաբար նոյնին մէջ յարատևութիւն ունենան ։»

«Եւ քանի որ այս կանոններու բարի և օգտակար արդիւնքներ կան ու կերեւնան սկիզբէն ի վեր, իմ կայսերական փափաքս է՝ որ Բրոդիստանդ հաւատքէ եղող իմ հաւատարիմ Քրիստոնեայ հպատակներուս կայսերական կառավարութենէս շնորհուած բոլոր արտօնութիւններն կրօնքի մասին ամենայն նկատմամբ մշտնջենապէս պաշտպանուած ըլլայ ամեն կերպ մնասէ ։ Եւ որովհետեւ այս է իմ կայսերական կամք՝ որ երբեք հարստահարութիւն կրել չտրուի անոնց ու է պատրուակաւ, վասն որոյ գրուեցաւ սոյն կայսերական հրովարտակ, որպէս զի անոնք որ հակառակը գործելու ըլլան, գիտնան որ իմ կայսերական սրտմտութեանս կենթարկեն ինքզինքնին և և պիտի պատժուին ։ Յատկապէս ծանուցանուեցաւ նահանգներու իշխանութիւններու, սյնպէս որ եթէ որ և է պատրուակով այս անօրինութեան զանցառութիւն պատահելու ըլլայ, անդի չի տրուի չքմեղութեան ։

«Եւ այս իմ հաստատուն հրովարտակս կը տրուի արքունի դիւանէս ի գիտութիւն և ի հաստատութիւն իմ կայսերական նպատակիս, որ այս բան լի ու լի և կատարեալ գործառնութեան դրուի ։ Վասն որոյ դուն որ վերոյիշեալ փոխանորդն ես, զայս հասկցածիդ պէս պարտիս շարժիլ և միշտ գործել ։ Եւ եթէ պատահելու ըլլայ այս իմ որոշ հրամանիս հակառակ որ և է բան, դուն անմիջապէս պիտի ծանուցանես բարձրագոյն դրան, գիտցիր այս այսպէս ըլլալ, և հաւատա իմ կայսերական խօսքիս ։»

«Գրուեցաւ Շապան ամսոյ վերջ 1779 ։»

Արդ, յատկապէս Աւետարանական Հայոց կամ իրենց փոխանորդ կարգուած անձին ուղղուած յոյժ ազ-

դեցիկ հրովարտակին շնորհուիլը մասնաւորաբար Աւետարանականք Անգղիական դեսպան, Սըր Ստարդֆօրդ Քանինկ մեծահոգի անձին կը պարտին. անոր միջամտութեանն, և հրովարտակին ստացուիլը հեռեեալ կերպովն եղած է: Այդ առթիւ դեսպանատուն կը հրաւիրուին ժողովուրդէն քանի մը անձ, և իրրե պատգամաւորութիւն ընդունելով տասն և մէկ անձ՝ ընկերանալով փոխանորդին կերթան դեսպանատուն և կը ներկայանան նորին վսեմութեան որ հրովարտակն ի ձեռին կը կանգնի անոնց առջև և յետ սովորական ձեւերու առաջին հարցն առ պատգամաւորս սա կ'ըլլայ: «Դուք որ հիմա ուրոյն եկեղեցի մը ճանչցուած էք, և քաղաքականապէս ևս առանձին իրաւասութիւնով ազատութիւն ունենալ կը բաղձաք, դուք ձեզի համար ի՞նչ յարանուանութիւն ընտրած կամ ո՞ր յարանուանութեան յարած էք?»

Պատգամաւորութիւնն անշփոթ և միասնութիւնով պատասխանեց թէ, մենք յարանուանութեանց վրայ տեղեկութիւն չունինք և եղած յարանուանութեանց ո՛չ միոյն յարելու պէտք ունինք. մենք աղքատ հայ ենք, և սուրբ Աւետարանը մեզի հաւատոյ և վարուց կանոն ընտրած ըլլալով՝ միայն Հայ Աւետարանական կանուանինք, և մեր եկեղեցին ալ Հայաստանեայց Աւետարանական եկեղեցի անուանուած է. ուրիշ յարանուանութիւն ընդունած չենք և չենք ուզեր ընդունիլ: Աղօթող ենք մեր օգոստափառ վեհապետին արեւաշատութեանն ու Օսմանեան մեծադօր տէրութեան բարօրութեանն ու խաղաղութեանը համար, նաև մեր սիրելի Հայ ազգին բարօրութեանն ու խաղաղութեանը համար աղօթող ենք միշտ ակնկալելով՝ որ թէ կանուխ և թէ ուշ մեր Աւետարանական սիրելի անունով ու հանգամանքներով միանանք վերստին շնորհիւն Աստուծոյ որ

այժմ որչափ որ պարագաներու բերմամբ մեր կամքին հակառակ բաժնուած ենք :

Նորին վսեմութիւն իր հարցման տրուած այս պատասխանին գոհունակութիւն կը յայտնէ և կը մօտենայ կը յանձնէ կայսերական հրովարտակն փոխանորդ Ստեփան էֆ. Սերովբէեանին ձեռքը :⁽¹⁾ Յետոյ պատգամաւորներէն իւրաքանչիւրին մօտենալով կը թոթուէ անոնց ձեռքն ու կ'ըսէ , «Մի ձգէք բնաւ ձեր այդ գերազանց բարի Աւետարանական անունը , այլ ջանացէք հանապաղ առաւել համակերպիլ անոր , և երկինք պիտի օրհնէ ձեզ :»

Պատգամաւորութիւնը խորին շնորհակալութիւն յայտնելով կը մեկնի : Աւասիկ 1853 Ապրիլ ամսոյն մեզ շընորհուած Սուլթան Ապտիւլ Մէճիտ կայսեր այս բարձր հրովարտակ' կը հաստատէ Աւետարանական հայերն իրենց ընտրած փոխանորդին իրաւասութեանն տակ կատարեալ արտօնութիւնով վայելել այն ամեն առանձնաշնորհմունք , զորս կը վայելեն ուրիշ հպատակ ժողովուրդներ : Եւ այսպիսեաւ Աւետարանականք ամենուրեք իբրև ուրոյն ժողովուրդ հաստատուած և ճանչցուած ըլլալէն ետք՝ իւրաքանչիւր գաւառի Աւետարանական ժողովուրդ իր կողմէ կ'ընտրէ երեսփոխան մը , որոց թիւը այն ժամանակ քսանի կը հասնէր , և որոց միջոցով փոխանորդական տուրք յը կառնուէր ամեն կողմերէ մարդ գլուխ տարին վաթսուն փարա : Եւ երեսփոխանական ժողով կ'ըլլար սահմանուած ժամանակներ ընդ նախագահութեամբ փոխանորդին ժողովուրդին ամեն գործերը տեսնելու և տնօրինելու : Նոյնպէս իւրաքանչիւր քաղաք իր տեղական ժողովրդապետը կունե-

(1) Ստեփան էֆ. Աւետարան է նախորդ հալածիչ Յակոբոս պատրիարքի :

նար կեդրոնի փոխանորդին միջոցով կառավարութիւնէն վաւերացուած և անոնց նախագահութիւնով ամենուրեք տեղական արտաքին ժողովներ կը հաստատուէր: Երկ-ցունք ժողովրդական կամ արտաքին գործերու չէին մասնակցեր, այլ միայն եկեղեցական կամ հոգևոր էր անոնց գործը, ահա այսպէս կատարուած է Աւետարա-նական հայոց իրրե ուրոյն ժողովուրդ պատրիարքարանի իրաւասութիւնէն վերջնական անջատումը:

Աւետարանական հայոց քաղաքային կամ ժողովրդ-աշային գործերուն յաջողութեանն համար ասանկ կազ-մաւորութիւն մը ևս բացի եկեղեցականէն անհրաժեշտ էր պարագաներու բերմամբ, երանի թէ անդի տլուած չըլլար, բայց տրուած է: Տարակոյս չկայ թէ արտաքին կազմակերպութեան մը անդգուշարար պէտք եղածէն առաւել կարեւորութիւն կրնայ տրուիլ շատ անգամ, որով ներքինը զանցառութեան մասնուի, ինչպէս ամեն օգտակար և կարեւոր միջոց կրնայ սխալ գործածուիլ և վնասաբեր ըլլալ: Ասոր օրինակներ ունինք աչքերնուս առջև, վասն որոյ պէտք չէ ներքին զօրութիւնը արտա-քինին հետ փոխանակել և այնպիսեալ մեծամեծ վտանգ-ներ սպառնալ անհատային և ժողովրդական ներքին ճշմարիտ զօրութեան: «Հոգին է կենդանի ընողը, մարմինը շահ մը չընէր», ըսաւ մեր Տէրը:



Գ Լ Ո Ւ Խ Գ .

Ա.Լ.Ե. երէցներու անդամիկ ժողով. — Պատշտօնէական ժողով եւ մասնաւոր բարոզ. — Գաղիական նորութիւն մը եւ անոր դարման. — Սկիզբցի եւ անոր նկարագրութիւնը. — Վախճանումն Եզնակ տէր Վ. քրթաւնէսի:

Հայաստանեայց Ա.Լ.Ե. եկեղեցին Կ. Պոլսոյ Բերաարուարձանին մէջ կազմաւորուած օրէն մինչև 1850, չորս տարիներու միջոցին օրինաւորապէս ձեռնադրուած սակաւաթիւ երէցներու անդրանիկ ժողովը կունենայ սոյն թուականի Մայիս ամսոյն մէջ, և կը աւել 5 օր: Եւ որովհետև դեռ օրինաւոր կազմաւորութիւնով և իւրաքանչիւր տեղական եկեղեցիներու նուիրակներու ևս ներկայութիւնով եղած չէին ժողովին նիստերը, անոր համար միայն եղբայրական ժողով մը կը համարուի մէկ զմէկ քաջալերելու և իրենց աշխատած դաշտերու հոգևոր գործերու և յաղթութիւններու նկատումով իրարու տեղեկութիւններ հաղորդելու և օգտակար խորհուրդներ փոխանակելու և ազօթքներ մատուցանելու առ Աստուած: Հոգևոր պաշտօնեաներու սոյն ժողովին կողմէ շրջաբերական գրութիւն մը դրկուած ըլլալով այդ ժամանակի տեղական եկեղեցիներու, Ատարազարու եկեղեցւոյ թանգարանին մէջ պահուած բնագրէն նոյնութիւնով ընդօրինակած ենք ի ստորիւ:

«Սիրելի եղբարք ի Քրիստոս»,

«Օրհնութիւն և անբաւ շնորհակալութիւն կը մատուցանենք մեր ամենաբարի Աստուծոյն իւր առ մեզ ցոյց տուած առատ մարդասիրութեանը համար, որ իր առատ ողորմութիւնովն զմեզ խաւարէն Սուրբ Աւետարան

րանին սքանչելի լոյսին կանչեց, որով ամենապարզ մաքուր ճշմարտութեանց աղբիւրէն կենդանութեան ջուր խմցուց հոգեւոր պապակնիս անով անցունելու շնորհն ընելով, որ և յաւիտենական հետնք ստացանք իւր սիրելի որդւոյն մեր միակ Փրկչին Յիսուսի Քրիստոսի ձեռքովը:

«Արդ, մենք երէցներս այս միջոցին մէկտեղ գալով շատ խորհեցանք մեր փոխադարձ պարտաւորութեանց վրայ, և յուսալով որ ձեզ այ հաճելի պիտի ըլլայ յիշեալ քրիստոնէական պարտաւորութեանց մէկ քանին լսել, այս ճանաչմամբ մեր սրտին գութովն ու սիրով փութացինք ձեզի գրել:

«Առաջին այս եղաւ մեր խորհուրդը և ժողովուս մէջ մեր խորհրդակցութեան առարկան թէ՞ քրիստոնեաներն պարտին օր քան զօր աճիլ շնորհքի և ճշմարտութեան գիտութեանը մէջ...: Երկրորդ, թէ՞ քրիստոնեաներն կանչուած են, ու պարտաւոր են ճշմարիտ, հաստատուն և յառաջդիմական բարեպաշտութեան կեանք ունենալ կամ վաբել այս անցաւոր կենցաղոյս մէջ...: Կը հաւատանք, սիրելի եղբայրներ, որ ճշմարիտ հաւատով ու անկեղծ սրտիւ յաբաժ էք դուք փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, պարզ և միամիտ սրտիւ աշակերտած էք անոր: Բայց որովհետեւ մեր ուրախութիւնը այն ժամանակ կատարեալ կըլլայ, երբ որ դուք սմէն քրիստոնէական առաքինութիւններով ու բարի գործքերով զարդարուած էք, և ձեր կենաց բոլոր ընթացքը կը վալէ և կը վկայէ ձեր սուրբ հաւատքին՝ վասն որոյ այսու գրութիւնով կը փափաքինք ձեզի յիշեցնել, որ այս սուրբ հաւատքին մեր վրայ դրած պարտաւորութիւններն ի՛նչ են, կամ թէ ի՛նչ է այս սուրբ Քրիստոնէութեան արդիւնքը: 1. Սիրելի զԱստուած ի բոլոր սրտէ, և ապ-

րիլ միայն անոր փառացն համար : 2 . Ճշմարիտ բարեպաշտութիւնը կը կայանայ ներքին սրբութեան և խըղճմըտանաց մաքրութեան մէջ : 3 . Ճշմարիտ բարեպաշտութիւնը հոգիին ազօթասիրութիւնովը յայտնի կըլլայ : և Ս . ճշմարիտ բարեպաշտութիւնը՝ քրիստոնէական եղբայրսիրութեան, ճշմարիտ մարդասիրութեան, և խաղաղութեան ետեւէ ըլլալու մէջ կը կայանայ :

«Վերջապէս քրիստոնեայն առանձին չկրնար Աստուծոյ թագաւորութեան համար այնպիսի օգտակար գործեր կատարիլ, որ պարտաւոր է և միայն եկեղեցւոյ ընկերակցութիւնով կարող կըլլայ : Քրիստոնեային առաջին գործն է քարոզել Աւետարանը . բայց ամէն ժամանակ պատեհութիւն չունենար իր այս պարտաւորութիւնը բերանացի կատարելու . ուստի ձեր սուրբ վարքովը միշտ և անդադար կրնաք կատարիլ ամէն ժամանակ ու ամէն տեղ եւ ասիկա առաւել օգտակար պիտի ըլլայ, քանզի աւետարանական կրօնքն վարքով աւելի կը փայլի ու կը փառաւորուի, քան ճարտասանական քարոզներով :

«Ազօթող ենք ձեզի համար, սիրելի եղբարք, որ ձեր կոչումն ու ընտրութիւնը լաւ ճանչցուի ու անոր համեմատ ի՛նչ որ ճշմարտութիւնով է, ի՛նչ որ պարկեշտութիւնով, ի՛նչ որ արդարութիւնով, ի՛նչ որ մաքրութիւնով, ի՛նչ որ բարի համբաւով, ի՛նչ առաքինութիւն . և ի՛նչ գովութիւն որ կայ այն բաները խորհեցէք : Ի՛նչ որ լսեցիք, սորվեցաք ու առիք մեր Տէր Յիսուս Քրիստոսի Աւետարանէն . անիկա ըրէ՛ք : Եւ Ի՛նքը՝ սիրոյ և խաղաղութեան Աստուածը ձեր հետն ըլլայ մինչեւ վերջը : Ամէն :»

Իրաւ վերոյիշեալ կըրայրական ըսուած երեցներու հաւտքումէն ետք մինչեւ 1857 թուականի վերջը ժամանակ ժամանակ կըլլային նոյն տեսակ երիցանց հաւաքումներ՝ սակայն զառաջինն Կ. Պոլսոյ կայանի Միսիոնարութեան կողմէ հրաւեր կըլլայ և մասնաւորապէս կը գրուի Պրուսայի Աւետարանական եկեղեցւոյ Վեր. Հովիւին այսպէս. «Բիւթանիոյ սահմանին մէջ եղած եկեղեցիներու երիցունք հրաւիրուած են Միսիոնարաց տարեկան ժողովին ատեն ներկայ ըլլալ, որպէսզի հետեւին տեսակցութիւն ըլլայ և միատեղ աղօթեն: Ժողովը պիտի սկսի 28 Մայիս, 1858 որոյ հետեւալ կիրակի օրն ընդհանուր հոգևոր պաշտօնի ժողով պիտի ըլլայ: Ուստի կառաջարկուի որ նոյն ժողովին մէջ դուք քարոզէք՝ ընտրելով պարագային յարմար նիւթ մը:»

Հովիւն Վեր. Ստեփան Խ. Իւթիւճեան կերթայ Մայիս 19 և մեծ գոհունակութիւն և հաճոյք կըզգայ ու կը վայելէ յիշեալ ժողովի տեսակցութեանց ատեն, և սահմանուած օրն, Մայիս 30 կիրակի օր Սէփէթճի փողոցի պատմական աղօթատան մէջ բնարան առնելով Ղուկ. Ը. 12 կը քարոզէ ի ներկայութեան երկսեռ խումն բազմութեան և բազում Միսիոնարներու և Բիւթանիոյ սահմանին մէջ եղող Աւետ. Հովուաց և քարոզչաց: Ներկայ բազմութեան մէջ կը նշմարուէր Մ. Հ. Ն. Պարնըմ որ իբրև Ամերիկացի հիւր մը ներկայ կը գտնուէր որ կատարուած պաշտօնի լիզուն թէև օտար էր իրեն, բայց զգացած ուրախութիւնն ու հրճուանքը կը փայլէր գէժքին վրայ: Յետ քարոզութեան ընդհանուր Ս. Հաղորդութեան խորհուրդը ևս կը կատարուի, որ արդարև ամենուն համար հոգևոր մեծ ուրախութեան և միսիթարութեան պատճառ մը կը հանդիսանար նոյն օրն: Աստանոր պատշաճ կը համարենք ծանօթացնել ընթեր-

ցողաց, որ յիշեալ Ամերիկացի հիւրը նոյն պաշտօնէն կրած ազդեցութենէն զգածուած Միսիոնարական պաշտօնի նուիրուիլ կուխատէ, և դեռ ամուրի և երիտասարդ վիճակի մէջ գտնուելով՝ կը յաջողի և քանի մը ամիս անցնելով կամ ժամանակէ մը վերջ կ'երթայ Պրուսա, և Պօրտինկի դրութիւնով կը բնակի նոյն հովիւին տան մէջ և անոր խնամատարութիւնովը թրքերէն կ'ուսանի և չափով մը ուսումը լրացնելով 5 կամ 8 ամիսէն կը մեկնի Պօլիս, հոն կ'ամուսնանայ, և ապա կ'երթայ Խարբերդ ուր անոր աշխատութիւնն ու օգտակար ծառայութիւնը Աստուծոյ և Հայ ժողովուրդին ծանօթ է ամենուն: Սա կ'անուանի, Հրրմէն, Նորթըն, Պօրնըմ, Վ. Ա.:

Կարդալ օրուան քարոզը յօգուտ ամենուն:

«Սերմը Աստուծոյ խօսքն է»: (Ղուկ. Ը. 11):

Երբ բնութեան սքանչելի տեսարանը կը զննենք համայն տիեզերքին մէջ, կը տեսնենք որ անոր ամենիմաստ ճարտարագետը միշտ հաստատուն և ընդհանուր օրէնքներով ու անփոփոխ սկզբունքներով գործած է և կը գործէ: Իմաստութեամբ սահմանուած պատճառներ միջոցներով ի գործ կը դրուին, և զօրութիւններու ներգործութեամբ արդիւնաւոր կ'լլան:

Օրինակ առնենք սերմը, որն Տէրն մեր բնաբանին մէջ Աստուծոյ փրկարար խօսքին օրինակ բրած է այլաբանօրէն, բնութեան մէջ բուսական օրհնութիւններու ծննդեանցն համար սահմանուած պատճառ մ'ըն է. մարդս անոր սերմանուելու հողը կամ երկիրը մշակելու սահմանուած և զանիկա սերմանելու միջոց մ'ըն է, և անձրեւին զովարար զօրութեանն ու Արեգակին ջերմութեան ներգործութիւններն ալ զանիկա արդիւնաւորելու:

Արդ երկրիս վրայ բնական կենդանութեան անունդ և երջանկութիւն տուող որ և է բուսական օրհնութիւն

պիտի չզտնուէր. եթէ պատճառ՝ միջոց և ներգործող զօրութիւնները չըլլային կամ փոփոխակի չգործէին :

Օւհնութիւններն տուողը Ամենակալն Աստուած է, բայց հաստատուն և անխոփոխ օրինաց կառավարութեամբ և ընդհանուր սկզբունքներով :

Գարձեալ, բնութեան մէջ իրերուն արժէքը իրենց որպիսութենէն և որոնցմով յառաջ եկած արդիւնքներէն կը հասկնանք : Ի՛նչպէս, ցորենի հատ մը ունի սննդաբար զօրութիւն իր մէջ, տրուած համայնից սկզբնապատճառին, զոր արդեամբ կը տեսնենք երբ միջոցներ և զօրութիւնք կը կատարեն իրենց ընկիւքը փոփոխակի :

Արդ, այս դիտողութիւննիս վերածենք բարոյական աշխարհին. ա՛ն՝ յախտեան ապրելու համար արարչագործեալ անմահ հոգի ունեցող մարդկային սեռ մը կայ, որ ինկած ու աւերուած վիճակի մը մէջ կը տեսնուի, մեղաց գերի եղած և ամէն տեսակ մոլութեանց մատնուած և յաւիտենական թշուառութեան և կորուստի ենթարկուած : Ասիկա իրողութիւն մըն է, որ ապացուցուած է ո՛չ թէ միայն Աստուածային բանին վկայութեամբ, որ կ'ըսէ. «Ամէնքը խոտորեցան, մէկտեղ անպիտան եղան, ևն.» այլ իւրաքանչիւր անձ բուն իր փորձառութիւնով, ազգաց պատմութիւններով և անոնց հնարած կրօնքներով :

Ահա այսպիսի անկեալ աշխարհ մը վեր առնելու, նորոգելու բարեկարգելու, սատանայի և մեղաց գիրութենէն Աստուծոյ երջանիկ ծառայութեանը բերելու և աստուածային սրբութեան հաղորդ ընելու, փրկելու և անոր որդեգրութեան վիճակի բարձրացնելու օրհնեալ կամք մը ու նպատակ մը կայ որուն նկատմամբ Պօղոս առաքեալ ըսած է թէ՛ «Որ մեր վրայ աւելցուց բոլոր իմաստութեամբ ու գիտութեամբ, մեզի յայտնելով իր

կամքին խորհուրդը իր հաճութեանը պէս, որն որ անով աշխինքն Քրիստոսի ձեռքովը նախասահմաներ էր» : (Եփես . Ա . 8,9) :

Այս օրհնեալ կամքին խորհուրդը որուն համար առաքեալը կ'ըսէ թէ՛ Աստուծոյ հաճութեանը պէս մեզի յայանուեցաւ, համօրէն աշխարհի վերաբերեալ խորհուրդ մըն է և նոյն Աստուածային հաճութիւնն այն է որ, բոլոր մարդկային արարածներուն յայանուի՝ . այո՛ Քրիստոսի ձեռքովը երկրին բոլոր ազգերը պիտի օրհնուին : Ամենակալն Աստուած այս սուրբ և օրհնեալ կամքին ու նպատակին մէջ անփոփոխ է, ու պիտի անիկա առաջ տանի և արդիւնաւոր ընէ բուն իր անհուն իմաստութեամբն սահմանուած պատճառին, միջոցներուն ու զօրութեանց հաստատուն սկզբունքներովն ու գործողութիւններովը :

Նախ քննենք այս օրհնեալ կամքն ու նպատակը աշխարհի յայանելու և զայն կատարելու սահմանուած պատճառը : Երկրորդ, միջոցը և երրորդ, զայն արդիւնաւորող զօրութիւնը :

Նախ, յայանի է թէ Աստուծոյ կամքը Աստուծոյ խօսքովը կրնայ յայտնուիլ, և իրրեւ գործնական պատճառ մը կատարեալ յարմարութիւն ունի իր արդիւնքներն յառաջ բերելու :

Ո՛րպէս պարզ և հասկնալի կերպով կը բացատրէ Տէրն մեր Յիսուս Քրիստոս այս սկզբունքը Սերմնացանին առակովը : Սերմը որ կը սերմանուի երկրին վրայ, ըստ տեսակին հակամիտութիւն ունի տունկ մը յառաջ բերելու, միայն թէ իրօք այդ արդիւնքն ունենալու համար պէտք է յարմար հողի մէջ սերմանուի և անձան պատշաճ պարագաներուն հոգ տարուի : Եթէ ապառաժուտ հողի վրայ կամ փուշերու մէջ և կամ ճամբու

վրայ սերմանուելու ըլլայ, ընդհանրապէս յարմար արդիւնքը չտեսնուիր: Նոյնպէս ալ Աստուծոյ խօսքը, այս երկնառաք պատգամը երբ կը ներկայացուի մարդոց մտքերու, անոնց բարոյական վիճակը կրնայ այն աստիճան վատթարացած ըլլալ որ յարմար արդիւնքը արգիւտուի: Բայց եթէ ճշմարտութիւնը անկեղծ մտքերու և կակղացեալ սրտերու հանդիպի, և արգելքներն ու խոչընդոսներն բառնալու հող տարուի՝ խօսքին փրկարար արդիւնքին վերերևուծը ամենաստոյգ է: Քանզի անոր բնութիւնն ու հակամիտութիւնը զայն զրկողին կամացն ու նպատակին պէս պտուղ յառաջ բերելու անփոփոխ և միօրինակ է: Տէրը այսպէս կ'ըսէ.

«Ինչպէս որ անձրևը ու ձիւնը երկինքէն կ'իջնէ, և հոն չվերադառնար, հապա երկիրը կ'ոռոգէ, ու զանիկա պտղաբեր ու արգասաւոր կ'ընէ, ու ցանողին հունա՛ և ուտողին հաց կուտայ, իմ բերնէս ելած խօսքն ալ այնպէս պիտի ըլլայ. ինծի պարապ պիտի չդառնայ, հապա իմ կամքս պիտի կատարէ, ու յաջողութեամբ ի գործ գնէ ան բանը՝ որուն համար գաճիկա զրկեցի»:
(Եսայ. ԾԵ. 11.)

Ան թէպէտ մարդու սիրտը բնականապէս այն աստիճան կարծրացած է, որ բոլորովին անզգայ կ'երեւի Աստուծոյ ձայնին՝ սակայն անոր կենարար խօսքը մինչև անգամ ապառաժները փշրելու և հալեցնելու ու լաւ ու պարարտ հողի պէս ընելու ոյժ և զօրութիւն ունի:

«Միթէ իմ խօսքս կրակի պէս չէ՞, կըսէ տէրը, ու ապառաժը կոտորող մուրճի պէս չէ՞»: Երեմ. ԻԳ. 29:

Այո՛, ըստ առաքելոյն բանի, «Ինչու որ Աստուծոյ խօսքը կենդանի է ու զօրեղ՝ և ամէն երկասյրի սուրէ կտրուկ, որ կը թափանցէ մինչև շունչը և հողին, և յօղուածները ու ծուծը բաժնելու, և կը քննէ սրտին խորհուրդները և մտածմունքները»: Երբ. Դ. 12:

Աւասիկ Աստուծոյ խօսքին բնական հակամիտութիւնները : Եւ սաղմոսերգուն և ս գովելով տէրօջը վրակայութիւնը՝ անոր հակամիտութիւններուն վրայ շատ վսեմ նկարագրութիւններ կրնէ ըսելով . «Տէրօջը օրէնքը կատարեալ է , հոգին կը նորոգէ , Տէրօջը վկայութիւնը ճշմարիտ է , տգէտը իմաստուն կ'ընէ : Տէրօջը կանոնները շիտակ են , սիրտը կ'ուրախացնեն , Տէրօջը պատուիրանքերը պայծառ են , աչքերուն լոյս կուտան» , Սաղմ . ԺԺ . 7 , 8 :

Դարձեալ քննենք Աստուծոյ խօսքին կամ ճշմարտութեան արդիւնքներն ալ : Տէրն մեր Յիսուս Քրիստոս իր մատնուելէն քիչ մը առաջ մինչ կ'աղօթէր իւր հաւատացելոց սրբացուցմանն համար , այսպէս ըսաւ . «Սըրբէ անոնք քու ճշմարտութիւնովդ , քու խօսքդ ճշմարտութիւն է» : Յովհ . ԺԷ . 17 ևն . :

Եւ ներշնչեալ առաքեալ մը պատշաճապէս կրնար ըսել , «Իր ուղեկովը մեզ ծնաւ ճշմարտութեան խօսքովը , որ մենք իր ստեղծուածներուն կրախայրի մը ըլլանք» : Յակ . Ա . 18 :

Սրտի սրբութիւն՝ կենաց մաքրութիւն՝ սիրոյ անկեղծութիւն և այսպիսեալ մեղաւորին աստուածային կենաց հաղորդ լինելը միայն Աստուծոյ խօսքին , այն բարի սերմին արդիւնքն է , վասն որոյ առաքեալն Պետրոս իր ընդհանրական թուղթին մէջ՝ այս պատուական յատկութիւններն ունենալ յորդորած առեւնը զքրիստոնեայս՝ իրրեւ պատճառ մէջ բերելով կ'ըսէ . «Նորէն ծնած ըլլալով՝ չէ թէ ազականացու սերմէն , հապա անապա . կանացուէն Աստուծոյ կենդանի ու յաւիտենական խօսքովը» : Ա . Պետ . Ա . 23 : Ահա կը տեսնենք , թէ Աստուծոյ կենարար խօսքը բարոյական աշխարհի կամ համօրէն մարդկային արարածներու հետ ի՞նչ առնչութիւն ունի :

Ամենակալ բարեշնորհն Աստուած՝ կամք և նպատակ ունի անկեալ մարդկային ազգը իր սիրելիին Յիսուսի Քրիստոսի ձեռքով վերականգնեցնելու, սուրբ ընելու, փրկելու և օրհնելու, և այս կամքն ու նպատակը արդեամբ կատարելու իրրեւ գործիական պատճառ՝ իր սուրբ խօսքը սահմանած է: «Սերմը Աստուծոյ խօսքն է»:

Երկրորդ, յայտնի է թէ այս օրհնեալ և փրկաւէտ արդիւնքներն ունեցող սերմը սերմանելու գործը եկեղեցիին կ'իյնայ և սահմանուած միջոցը աւետարանն է և անոր քարոզութիւնը:

Ասիկա կը սորվինք Փրկչին մերոյ իր եկեղեցիին ըրած վերջին կտակէն և տուած պատուէրէն թէ՛ «Գնացէք բոլոր աշխարհ և քարոզեցէք Աւետարանը բոլոր ստեղծւածներուն»: Մարկ. ԺԶ. 15:

Անա՛ բարի սերմը կը յանձնուի եկեղեցիին, և անոր սերմանուելու տեղը կը գծուի ու կը սահմանուի Քրիստոսի գերադոյն իշխանութեամբ, և աստուածային կոչմամբ եկեղեցին և միայն եկեղեցին կը կարգուի այս փառաւոր պաշտօնը յառաջ տանելու և կատարելու իրրեւ իր անհրաժեշտ և սրբազան արտօնութիւնը՝ կամ պարտաւորութիւնը:

Թէ քարոզելու կամ սերմանելու առարկայն աւետարանն է, մաքուր աւետարանը, Փրկչին մերոյ Յիսուս Քրիստոսի աւետարանը և սահմանուած միջոցը եկեղեցին է:

Թէ եկեղեցին սահմանուած չէ ուրիշ բան քարոզել, և իրաւունք կամ իշխանութիւն չունի այսպէս ընելու, այլ միայն Տէրոջմէն իրեն աւանդուածը:

«Երազ ունեցող մարգարէն՝ թող իր երազը պատմէ, իսկ իմ խօսքս ունեցողը՝ ճշմարտութեամբ թող իմ խօսքս խօսի, յարդը՝ ցորենին քովը ի՞նչ է, կրսէ Տէրը: Երեմ. ԻԳ. 28:

Այս պատուէրն եկեղեցիին վերաբերիլը՝ առաքելոց

ժամանակէն սկսեալ մինչև աշխարհի վերջը անոր շարունակութեան միջոցին երևաք գիտողութիւններով կը հաստատուի : Ա. Պարտաւորիչ պատուէրը այն է , որ ենթակայն բոլոր աշխարհին կը դրկուի . բոլոր արարածներու , մարդկային սեռի ամբողջ ընտանիքին : Եւ յայտնի է որ միայն առաքելոց օրով չկատարուեցաւ այս գործը և չէր կրնար կատարուիլ : Բ. Քրիստոսի խոստմունքը այս պատուէրին մէջ՝ այն է թէ մինչև աշխարհին վերջը անոնց հետ պիտի ըլլայ : Յայտնի է թէ առաքեալք մինչև աշխարհին վերջը շապրեցան սոսկ պաշտօնը կատարելու , բայց անոնց հիման վրայ հաստատուած եկեղեցին մնաց և պիտի մնայ , և ասոր ձևաքովը Աստուծոյ բազմատեսակ իմաստութիւնը յայտնի պիտի ըլլայ , ո՛չ թէ միայն երկինքը եզոյ իշխանութիւններուն ու պետութիւններուն , այլ համօրէն աշխարհի բոլոր մարդկային արարածներուն : Եփես. Կ. 6 , և 9 . : Այնպիսի աստուածային մեծ ու պատուական խոստմունքներ ունինք , որ ճշմարիտ եկեղեցին այս մեծ պտրտաւորութիւն կատարելով ամենայն հաւատարմութեամբ այնպէս պիտի ընդարձակի , օճում առնէ , մինչև երկրին բոլոր ազգերը անոր մէջ՝ ամփոփուին :

Յետոյն արմատէն ելած ընձիւղին , Քրիստոսի խաղաղ թագաւորութիւնը այնպէս յազթանակներ պիտի ունենայ երկրի ազգերուն վրայ՝ որ երկիրը Տէրջը գիտութեամբ պիտի լեցուի : «Քանզի երկիրը Տէրջը փառացը գիտութեամբ պիտի լեցուի , ինչպէս որ Չուրերը կը ծածկեն ծովը» : Ամբակ . Բ . 14 :

Անշուշտ աշխարհս Ա.և.ա . շնորհաց գիտութեամբ պիտի լեցուի օրհնեալ քարոզութեան միջոցովը . և այս ուրախարար խոստումն ինչպէս կատարուիլը ցուցուած է սուրբ չուրերու տեսիլքովը Եղեկիէլ մարգարէին :

«Ու զիս նորէն տանը գրանը առջիւր բերաւ , և

անա արեւելեան կողմէն տանը սեմին տակէն ջուրեր կ'ելլէին, քանզի տանը երեսը դէպի արեւելք էր, ու ջուրերը աջ կողմին տակէն, սեղանին հարաւային կողմէն կ'իջնէին: Եւ զիս հիւսիսային դրանը ճամբայէն հանեց, ու զիս դուրսի ճամբան՝ դուրսի դրանը արեւելք նայող ճամբան պտտցուց, և անա աջ կողմէն ջուրեր կը վազէին: Այն մարդը որ իր ձեռքը լար ունէր, դէպի արեւելք ելաւ, ու հազար կանգուն չափեց, և զիս ջուրերէն անցուց, ու անա՛ ջուրերը մինչեւ գարշապարներս կ'ելլէին: Հազար ևս չափեց, ու զիս ջուրերուն մէջէն անցուց, ու ջուրերը մինչեւ ծունկերս կ'ելլէին, հազար ևս չափեց ու զիս ջուրերէն անցուց, և ջուրերը մինչեւ մէջքս կ'ելլէին: Նորէն հազար ալ չափեց, ու անանկ գետ մը եղած էր, որ չէի կրնար անցնիլ, վասնզի ջուրերը յորդեր էին, ու անանկ գետ մը եղեր էին, ուսկից որ մարդ չէր կրնար անցնիլ՝ բայց միայն լողալով: Են. ևն. :» Եզեկ. Խէ. 1—3 :

Այս ջուրերուն բղխած տեղը, անոնց յառաջ երթալու ճամբան, և վերջին աճումը, անոնց առողջացուցիչ բնութիւնը որ ուր որ կը տարածուին հոն գանուող ամէն շարժուն կենդանիներ պիտի սպրին, ու փրկաւէտ արդիւնքներ պիտի յառաջ գան՝ հարկաւորապէս խորհրդաւոր իմաստ մը կը պարունակեն: Եւ անտարակոյս Քրիստոսի տեսան մերոյ Աւետարանն և անոր փրկաւէտ գիտութիւնը կը նշանակեն, որ Երուսաղեմէն սկսուած բոլոր աշխարհի մէջ պիտի տարածուի քարոզուելով ու պիտի լեցնէ աշխարհս՝ ինչպէս ծովը ջուրերով ծածկուած է:

Ահ, այս խոստումներ տակաւին չեն կատարուէր, բայց պիտի կատարուին. Մեծ Պէնտէկոստէի օրէն սկսուած Երուսաղէմէն Մեծ Պէնտէկոստէի օրէն ի վեր բրդախելու վրայ եղող Սուրբ ջուրերը՝ տակաւին լողալու

չափ չեն եղած, աշխարհ տակաւին լեցուած չէ Ս.Մ.Ն.Ն.ա-
կային գիտութիւնովը՝ և մարդկային ազգին մեծ մասը
տակաւին տգիտութեան խաւարի մէջ է . . . :

Եկեղեցիին յորելեան հանգիստը դու հասած չէ՝ և
Սիօնի զաւակաց յանձնուած գործը կատարուած ու լը-
մընցած չէ. և որոյմէն հանգիստ բնակողներուն վայը
դու չէ անցած . . .

Եկեղեցիին մշակութեանը յանձնուած սա ընդարձակ
դաշտին խիստ մեծ մասը տակաւին խոպան ու ամայի
կը մնայ, որ պէտք է մշակուի, պէտք է սերմանուի,
տակաւին վարուցանի շատ տեղ կայ . . .

Ս.Ն. պէտք է որ քրիստոնեայ աշխարհն ու անոր
խրաքանչիւր անհատ անդամք՝ իրենց սեպհական պաշ-
տօնը ընեն դրկել կամ տանիլ օրհնեալ Աւետարանը հա-
մայն աշխարհ՝ բոլոր մարդկային սանդուածներու . . .

Պէտք է որ ամէն քրիստոնեայ հոռանդով աշխատի
լեցնելու բովանդակ աշխարհն Գրիստոսի աւետարանին
ուսուցած փրկութեան սքանչելի աւետօքը :

Այո՛, եկեղեցին պիտի կատարէ այս պաշտօնը, ինքն
է պատասխանատուն :

Արդարեւ պաշտօնը և կատարուելու գործը՝ թէպէտ
մեծ և դժուարին է, բայց տեսնենք թէ ինչ մեծ ու քա-
ջալիբրական պատրաստութիւններ եղած են արդէն մեր
առջեւ այս գործն յառաջ երթալուն ի նպաստ :

Թէպէտ մարդկային ազգին խիստ մեծ մասը այսօր
անդարձ և անզգայ կ'երեւի իր հեթանոսական կապերուն
մէջ, սակայն պատճառ ունինք ըսելու, թէ անոր երկու
երրորդ մասը իրենց նախապաշարմանց կարծր շղթանե-
րէն արձակուած են : Եւ թէ այս օրուան օրս Աստուա-
ծաշունչ սուրբ գիրքը այնքան լեզուներու թարգման-
ուած ու տարածուած է՝ որ վեց հարիւր միլիոնէն շատ
աւելին կրնան զանիկա կարդալ : Եւ ի՞նչ արագաշարժ

մամուլներ արևը ծագելէն մինչև մարը մտնելը կը դառնան ու կը դառնան այս մեծ գործին պատրաստութեանը համար :

Անցեալ և ներկայ դարուս մէջ գտնուած ու երևան ելած բնութեան զարմանալի գաղանիքներ՝ որոնք հեռուոր երկիրներ իրարու մօտեցուցին և ազգաց ու ժողովուրդներու միջև յարաբերութիւններ ու հաղորդակցութիւններ հաստատեցին՝ սկսած են որդէն փրկութեան մեծ աւետիսը ազգաց աւնելու մեծ գործին դժուարութեանց խափանմանը ծառայելու :

Տէրութեանց իրարու հեռւր բաժնազրութեանց մէջ իրենց հպատակներուն խղճի ազատութիւն տալու պայմանը առաջին տեղ մը կը բռնէ :

Նաև Աստուծոյ որդիք իրենց ստացուածքի մէկ մեծ մասը այս բարեպաշտական գործին բաժին հանելու առաւել պատրաստ կը գտնուին : Եւ այս մեծ գործին նախանձովը վառուած քրիստոնեաներ ձեռք ձեռքի կուտան , բազմապատկեալ զօրութեամբ միաբան գործելու : Բայց ինչ է կամ որն է այն զօրութիւնը , որ պիտի ներգործէ այս ամէն պատրաստութեանց ու աշխատութեանց և արդիւնաւորէ զանոնք :

Այն է , մեր գիտնալու և հասկանալու երրօրդ բանը երկնառաք՝ իմանալի սուձրելին , Հոգւոյն Սրբոյ զօրութիւնը :

Ո՛րչափ պատշաճութեամբ շարագրուած է , բանաստեղծին սա հետեւեալ երգը , զոր կ'առաջարկեմ եզել .

Պատշտօնեաներդ պարապ կ'ելլեն ,

Մեռած մարդոց կը քարոզեն ,

Հոգիդ չիջած՝ անոնց վրայ ,

Անոնք զուր տեղը կը պուան :

Բայց Սուրբ Հոգւոյն՝ զօրութիւնը ,

Կեանք կը բերէ՝ մահուան մէջը ,

• Չոր ոսկորներ՝ ձայնէդ կ'ելլեն,
Նոր յարութեամբ կ'ուրախանան:

Եղեկիէլ մարգարէին չոր ոսկորներով լեցուն դաշտին տեսիլը, որ հրէից ազգին հոգեւոր մեռելութեան մէկ օրինակն էր, կը կարգանք՝ որ Աստուծոյ հոգին աւնոնց վրայ փչելով՝ անոնք կեանք կ'առնէին:

Աւետարանին քարոզութեամբը դրուած առաջին հիմը, իբրիւ պայման փրկութեան՝ դէպ ի Աստուած ապաշխարութիւն և մեր տէր Յիսուս Քրիստոսի հաւատք է: Գործ. Ի. 20, 21:

Բայց մեղաւորին՝ ապաշխարութեան և Քրիստոսով եղած փրկութեան կարօտ ըլլալը զգացնող՝ Հոգին Սուրբ է. «Եւ ինքք երբ որ զայ՝ աշխարհը պիտի յանդիմանէ մեղքի համար», ըսաւ մեր Տէրը: Յովհ. Ժ. 2. 8:

Ի՞նչ պատուական խոստումներ ունինք, այս եաքի օրերուն մէջ անոր գալուն ու մեղաւորները իր յանդիմութեամբն արթնցնելուն, և հիմակուան սերմանուած ճոխ սերմերը արգիւնաւորելուն համար:

«Եւ պիտի ըլլայ որ վերջին օրերը, կ'ըսէ Աստուած, իմ Հոգիս ամէն մարմնոյ վրայ պիտի թափեմ» այո՛ աղսոյց վրայ, աղջկանց վրայ, երիտասարդաց և ծերոց վրայ, ծառաներու և աղախիններու վրայ: Յովել. Բ, 28:

Եւ թէ «ծարաւին վրայ ջուր պիտի թափեմ ու անջուր երկրին վրայ հեղեղներ, քու սերունդիդ վրայ իմ հագիս պիտի թափեմ, և քու որդւոյդ վրայ իմ օրհնութիւնս, ու անոնք իբր թէ խոտերու մէջ ջուրի վտակներու քով կըող ուռիներու պէս պիտի բուսնին»:
Եսայ. Խդ. 3—5:

Ա՛հ ինչ օրհնեալ ու պատուական խոստումներ են ասոնք, և ո՛րպիսի եռանդուն փափաքով սպասելու ենք այն օրերու գալուն:

Սակայն տեսնենք Հոգւոյն Սրբոյ սոյն հիանալի ներ-

գործութեան նկատմամբ Աստուծոյ Նախախնամութեան ընթացքն ալ վերջին օրերուն մէջ :

Ճիշդ նոյնպէս է շնորհաց թագաւորութեան մէջ ալ Նախախնամութեան ընթացքը զոր դիտեցինք բուսականին մէջ . . .

Ուրիշ միջոցներու գործադրութեամբ միայն կրնանք յուսալ և ակնկալել Հոգւոյն Սրբոյ գորութեան ներգործութիւնները :

Պենտեկոստէի օրը այնքան հաղարար մարդիկ Հոգւոյն Սրբոյ յանդիմանութիւններովն ներգործուած սրտերնուն մէջ զարնուելնէն՝ և մարդիկ եղբայրներ, ինչ ընենք որ փրկուինք աղաղակելնէն առաջ՝ առաքելոց ձեռքով խաչեալ փրկչին քարոզութիւնը պէտք էր կատարուիլ :

Ծիրանավաճառ Լիդիային սիրտը երկնային ներգործութեամբ բացուելէն առաջ Պօղոս պէտք էր քարոզէր անոր . . .

Առանց սերմանելու և Տէրոջ ճամբան պատրաստելու երկնատաք օրհնութեան և Հոգւոյն Սրբոյ ներգործութեանը յուսալ օգուտ չընիր :

Եղեկիէլ մարգարէի եղած պատգամն այն էր, որ առաջ խօսի Աստուծոյ խօսքը գաշտին մէջ տարածուած չոր ոսկորներուն, ու հաքը կանչէ հողին փչելու անոնց վրայ. Եղեկ. Լէ. 1—10 :

Ա՛հ, երբ քրիստոնեաները կամ եկեղեցին Աստուծոյ նախանձովը վառուած՝ իրենց սեպհական գործը ընեն՝ զրկել տանել խաչեալ Փրկչին աւետար համայն աշխարհ՝ բոլոր ստեղծուածներուն, երբ պէտք եղած անձնութեան յանձնառու ըլլան և հռանդուն ճիգն ունենան լեցնել աշխարհն կեանքին սերմովը. և կը պատրաստեն իրենք զիրենք տեսնելու և վայելելու Հոգւոյն Սրբոյ կենարար ներկայութիւնը, և այսպիսեալ

կը հրաւիրեն ու կը կանչեն զայն որ գայ հիւսիսէն և հարաւէն ու փչէ Տէրոջն այգիին վրայ՝ փչէ բովանդակ իրենց աշխատած դաշտին մէջ տարածուած անշարժ կեցող անզգայ մարդաց վրայ, որ կենդանանան՝ . . .

Անշուշտ և անտարակոյս արցունքով եղած վարուցաններէն ետք՝ վնասեցուցիչ բազում խոչընդոտներէ անցնելէ ետք՝ և յուսահատութեամբ շատ վատասիրտներու ետ քաշուելէն ետք՝ բանը երեւցածին պէս չըլլալով, յանկարծ պիտի տեսնուի թէ, ձմեռնային ախուր և երկար գիշերները անցեր են, զարնան զուարթագին արշալոյսը ծագեր է, արեւը սկսեր է բարձրանալ և կը տարածէ իր սկիւթիկ շառաւիղներն ու ճառագայթները երկրի ընդարձակ դաշտերուն վրայ: Սերմանուած սերմերը ապարդիուն չեն եղած, տունկերը բողբոջեր են, երկնային քաղցրանուագ երգերը կը լսուին, և փառաւորեալ Աստուծոյ օրհնեալ Աւետարանն արագ յառաջ գիմութեան մէջ է, և անդիմադրելի զօրութիւնով կը տարածուի աշխարհի մէկ ծայրէն մինչև միւսը:

Այո՛, մէկ ազգ մը պիտի ծնի մէկ օրուան մէջ արեւու ծագելէն մինչև անոր մարը մտնելը:

Գաղղիական նորութիւնք մեր ազգին մէջ մուտք գտնելէն հետէ անոնց թէ նիւթական թէ ֆիզիքական բազում վնասներուն հետ միատեղ՝ բարոյական և հոգեկան վնասն ու վտանգը ևս սկսած էր ընծիւղիլ: Հոն յառաջ եկած անհաւատութեան ցաւալի որոմներ հայ երիտասարդներէ ոմանց, մանաւանդ քիչ կամ շատ գաղիերէն գիտցողներէ ոմանց աստանդական մտաց ու վաբուցը մէջ ունեցեր էր իր սրդիւնքն իբրև հետեւանք այն սնասպաշտական դրութեան, զոր ապիկար կղերը կը ճգնէր և կը ճգնի դեռ ամրապնդել և հաստատուն պահել զանիկա՝ մինչ ժամանակի ոգին կարելի չէ որ հան-

դուրժէ այնպիսի բաներու աչեւս : Ասկայն ողջախոն ազգայինք ումանք սրտի ցաւով կը տեսնէին իրենց նոր սերունդին մէջ ըողըտնելու վրայ երեւցող այդ ոգեկործան վտանգն , և Արժրունի Տէր Գէորգ Հօր թելադրութիւնով կ'աջակցին Աւետարանաշահաններու բաւական մեծկակ դրամական գումար մը հայթայթել , որով կը պատրաստուի «Անհաւատութեան դէմ» վերոյշեալ ծանօթ գրքոյկը ի ձեռն բազմերախտ և հայասէր Տօքթ. Կ. Համլինի : Աւելորդ չենք համարիր աստանոր ըսել , որ այդ հանգանակութեան մասնակցող ազգայինք ինչ մեծ փափաք ունեցեր են նոր սերունդը փրկելու յիշեալ բարոյական ու հոգեկան կործանում սպառնացող դժոխային ախտէն : Իսկ դժբախտութիւն մըն է , որ այն օգտաշատ աշխատասիրութիւն սպառելէն ետք կրկին սպազրուիլ անհոգութեան կը թողուի ցայսօր մինչ կ'արժէր շատ աւելի սպազրուիլ :

Արժրունի Տէր Գէորգ հայրիկ՝ զօրմէ ակնարկութիւններ եղաւ գործոյս մէջ , արդարեւ հայ կղերական դասուց մէջ կրկին պատուոյ արժանի համարուելու արժանաւոր անձնաւորութեանց մին էր իր բարեսիրութիւնով , հոգեսիրութիւնով , և մանաւանդ պարտաճանաչութեամբ : Պարզ օրինակ մը բաւական է անոր հոգեշահական բնաւորութեան զինչութիւնը ցուցնելու համար : 1850 թուականի Փետրուար ամսոյն վերջերը՝ ցրտաշունչ և ձիւնաբեր հողմով ամէն սարսափ ազդող գիշեր մը կ'այցելէ իր մէկ Աւետ . բարեկամին որ վառարանին քով միայնակ նստած անգղիերէն գրքոյկ մը կը կարդար : Այցելուն իր բնական հետաքրքրութիւնով կը հարցնէ բարեկամին կարդացած գրքոյկին անունն ու պարունակութեան ինչ ըլլալը , և երբ կ'ըմանայ գրքոյկին անունը որ էր սրտի պահպանութիւն , և պարունակութեան շատ օգտակար խորհրդածութիւններ ըլլալը , կըզմայլի լսածներուն

վրայ, կ'ուզէ գրքոյկը և ծոցը կը դնէ մէկ ժամէն կը բերեմ
 բսելով կ'երթայ ձիւնն ու բուքը հոգ չընելով, Եւ իրաւ
 ժամ մը չանցած մեծ ուրախութիւնով կը վերադառնայ,
 և կ'ըսէ որ «կը վախնայի գրքոյկին պարունակութեանը
 նկատմամբ լսածներէս, որոցմով շատ ազգուած եմ մինչեւ
 վաղը պիտի չը կարենայի յիշել, ուստի որոշեցի անմե-
 ջապէս երթալ և պատմել մէկ ծուխիս, այն է Գարա-
 Բէհեա Գէորգ ամիրայի մայրը: Հիմա այդ ընթերցասէր
 բարեպաշտ տիկինը լսելով այս գրքոյկին վրայ ձեզմէ
 առած տեղեկութիւններս, կը փափաքի հայերէնի թարգ-
 մանուած և տպագրուած տեսնել այս հոգեչա՛ն գիրքը
 թէ ինք կարդալու թէ այլոց ալ օգտակար ըլլալուն հա-
 մար, ինչ ծախք որ պէտք է թարգմանութեանը՝ կը
 խոստանայ վճարել իմ ձեռքովս:»

Գրքոյկը կը թարգմանուի նոյն բարեպետ Տիկնոջ
 լիուրի վճարքովը և լոյս կը տեսնէ իր հոգեչա՛ն բովան-
 դակութիւնով, որոյ ի պահպանութիւն սրաի ազգիս
 մէջ ունեցած ծառայութիւնն ի՛նչ ըլլալը միայն յաւի-
 տենականութեան մէջ պիտի յայտնի ըլլայ:

Աւետարանական Հայեր իբրև կրօնական ժողովուրդ
 սկիզբէն գիտակից լինելով այն փառաւոր իրաւունքուն
 զոր ունէին իրենց ազգին հոգեկան մեծահարուստ ժա-
 ոանգութիւններուն, որ պահուած կային Հայաստանեայց
 եկեղեցւոյ ծոցին մէջ, և կը ճգնէին զայնս ի լոյս բերել:
 Անոնք կ'աշխատէին իրենց սիրելի ազգի լուսաւորու-
 թեանն և կը փափաքէին որ աւետարտնի մաքուր քարո-
 ղութիւնով և քրիստոնէական ուղիղ դաստիարակութեամբ
 ճշմարիտ աստուածապաշտութիւնն ընդհանրանայ: Մեր
 այս աշխատասիրութեան ընթացքին մէջ ուշիմ ընթեր-
 ցողներ անշուշտ կը տեսնեն որ Հայաստանեայց եկեղեցին
 անընդհատ և անխափան ունեցեր է իր մէջ լուսամիտ
 տարրեր նախանձախնդիր անոր լուսաւորութեանն ու ա-

նարատութեանը : Տարրեր՝ որք կը բաղկանան ժողովրդեան դասերէ և կղերական ողջամիտ հայրերէ իրրեւ ախոյեան երեւցած Աստուծոյ կենարար խօսքը բերաննին դարէ վար քարոզեր են ընդդէմ այնպիսի հոգեկորոյս զեղծումներու , որք դիմակաւոր թշնամիներու սանձգութիւնով սպրդուած կամ յայանի մտած են եկեղեցւոյն մէջ : Մեծ մարդոյ կենսագրութիւնն որպէս ընդհանուր պատմութեան աղնուագոյն մասը կը կազմէ կրթել , ազնուացուցիչ և բարձրացուցիչ դեր կատարելով նոյնպէս են բարեպաշտ , հոգեսէր և եռանդոտ մարդոց ճանաչողութիւն և զգացողութիւնք եկեղեցւոյ պատմութեան մէջ՝ զոր ուսումնասիրելով կը կարողանանք մեր հոգեկան բարուց նկարագրին նոր և յաւագոյն ձեւ և ուղղութիւն տալ :


Քրիստոնէական եկեղեցի կ'անուանի հաւատացկալներու հաւաքական մարմինն որ մի է և ընդհանրական մէկ միտքով տեսանելի և ուրիշ միտքով անտեսանելի : Սուրբ Գրոց մէջ նմանցուած կը տեսնենք արաի , սյգիի են . : Արտ մըն է , ուր վնասակար և բարի տունկեր խառն են , քանզի թշնամին կրնայ անոր մէջ ցանկ իր սրմներ , հեանւապէս ոմանք բարի և ոմանք չար սլըտուղ յառաջ կը բերեն : Հօտ մըն է , որուն վրայ հովիւներ դրուած՝ որոնցմէ կրնան այնպիսի մարդիկ ելնել որ ծուռ բաներ խօսին (1) : Արդ , այս մի և ընդհանրական մարմին որ զինուորեալ եկեղեցի ևս կ'անուանուի երկրի վրայ , յիշեալ հանգամանքներ կը ցուցնեն թէ վաանգներու ենթակայ է . ոմանք անոնցմէ կրնան ընկծիլ ուխնալ , և ուրիշներ քաջութիւնով պատրեազմիլ անոնց դէմ և յաղթող հանգիստանալ և կենաց պսակն առնուլ . այս է տեսանելի եկեղեցին : Իսկ անտեսանելին , կամ ի վերեւ նկարագրուած զինուորեալին հետ խառն եզող

(1) Գարժ. Ի. 28—30 :

յաղթականը՝ այն է, զոր Յովհաննէս Աւետարանիչ Յայտնութեան տեսիլքով տեսած և նկարագրած է, այսպէս. » Եւ յիս այսորիկ տեսի՛ և անա ժողովուրդ բազում ևն. » ևն. (2) :

Հայաստանեայց Աւետ. եկեղեցին՝ այս ճանաչումով հաստատուած է յուսալով որ Աստուծոյ խօսքէն իր ընդունած լոյսն ու գիտութիւնը երկրի վրայ ցոլացնող միջոց մը պիտի ըլլայ Աստուծոյ շնորհքովն. տեսարան մը, որ իբրեւ մաքուր հայելի անդրադարձնէ տիեզերքի Եհովային իմաստութիւնը, բարութիւնը և ամէն կատարելութիւնքը ըստ առաքելական բանին թէ՛ « Զի յայտնեսցի արդ իշխանութեանց և պետութեանց որ յերկինս են, ի ձեռն եկեղեցւոյ՝ բազմատեսակ իմաստութիւնն Աստուծոյ (3) :

Կ'աւարտենք մեր այս աշխատասիրութեան երկրորդ մասն յաւելուածով մը՝ որ կրնայ շահեկանութիւն ունենայ գալու Աւետ. սերունդին համար :



(2) Յայտն. է. 9—17 :

(3) Եփես. Գ. 10 :

Յ Ա Ի Ե Լ Ո Ւ Ա Ս

Եղևակ Տէր Վրթանէս Գրիգորեան՝ զորմէ քանիցս ակնարկութիւն ըրինք աշխատասիրութեանս ընթացքին մէջ, մին է այն հաշածեալ նախկին Աւետարանականներէն, որք անշահախնդիր և անձնուրաց ոգւով առ իրենց սիրելի Ազգն ու մայրենի եկեղեցին ունեցած սէրէն ըստիպուած աշխատած են բարեկարգութեան նախանձելի նպատակին համար: Սա՛ որչափ որ Աւետ. եկեղեցւոյ յոյժ ջերմեռանդ, գործունեայ և հաւատարիմ մէկ անդամն եղած է, նոյն ատեն իր մայրենի հնադարեան եկեղեցւոյն բարեկարգութեանն ու յուսաւորութեանը նախանձէն դաղրած չէ: Իր կեանքի վերջին տարեաց մէջ մանաւանդ այդ նախանձն իրակամացած տեսնելու յոյսով արտաքոյ կարգի ջանքեր ունեցած և այդ աւթիւ յետին աստիճան նեղութեանց կամաւ. հնթարկուած ըլլալով՝ յուսահատութիւն կամ արտունջ բնաւ տեսնուած չէ իր մէջ. միակ վիշտը ըլլալով իր ազգին վիշտը, և իր փաստն ըլլալով ճշմարտութեան փաստը: Իր ժամանակակիցներէ ոմանք կը յիշեն, թէ ինչպէս վերջին հիւանդութենէն երկու օր առաջ մինչ Բիւթանական Միութեան ժողով գումարուած էր Լանկայի ազօթարանը, ինք կարծելով որ նոյն ժողովը Բերա կ'ըլլայ, Խասգիւղէն քայելով Բերա կ'երթայ խօսելու իր վերջին կտակը նոյն պաշտօնէից ժողովին: Բայց ժողովն հոն չգտնելով և կարողութիւն չունենալով անկէ Լանկա երթալու, հոն բնակող մը կը գտնայ, և թախանձանօք կ'աղաչէ անոր և կը յանձնարարէ որ երթայ խօսի ժողովին իր կողմէ ու ըսէ. «Թերեւս պիտի մոռնիմ. զի օրերս ա՛լ իրիկուն եղած են, խօսէ՛ այդ սիրելի պաշտօնեաներուն, որ մեր նախկին փառաւոր որոշումէն չխախտին, չլնտանն գոր-

ծին, թող խնային Ազգին, թող խնային անմահ հոգիներուն: Ի սկզբան մեր սրտին ամենաջերմ բաղձանքն էր որ մեր Եկեղեցին, մերը, Աւետարանով բարեկարգըւի և անոր մէջ կրօնքն ու աստուածապաշտութիւնը վերակենդանանայ: Այդ պատուական նպատակէն չչեղինք, որ մեր արդար պարծանքն է:

Եզնակ Տէր Վրթանէս Գրիգորեան ի Տէր կը ննջէ ՏՂամեայ խոր ծերութեամբ, վերոյիշեալ կտակը ընելէ երեք օր ետք ու այսպէս իբ աշխատութենէն կը հանդչի:


Վերջին վայրկեաններուն իր շուրջը գտնուողներ անոր մահը այսպէս նկարագրած են: «Մենք ասանկ անոյշ մահ չէինք տեսած. կարծես պանդխտութենէ հայրենիք ուղեւորող ճամբորդ մ'էր. ուրախ, զուարթ, անկողնոյն մէջ նստած, Ս. Գիրք ի ձեռին կը կարգար և անմահական կենաց վրայ կը խօսէր ուրախ և հանդարտ: Պահ մը յոգնած զգալով քիչ մը ջուր կ'ուզէ, և խմելէն ետք կռնակը բարձին տալով աչքերը կը փակէ, ու մշտնջենապէս կը հանդչի»:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եզիցի:



Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ի Ի Ն

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ե Ա Յ Յ Ա Ի Ե Տ • Ե Կ Ե Ղ Ե Յ Ի Ո Յ



Այս եկեղեցին թէև շատեր նորութիւն մը ըլլալ կը նկատեն, բայց իր կրած անունը զայն այնքան հնութեան կը տանի որ Քրիստոսի և առաքեալներու ժամանակին կը հասկցնէ: Նորութիւն մը՝ որ բազմադարեան լինելովն հանդերձ հինցած չէ: Ողջամիտ և անաչառ հետազոտողներ կրնան վերահատ ըլլալ այս իրողութեան, երբ բաղդատեն այս եկեղեցւոյ դաւանութիւնն Սուրբ աւետարանին ուսուցած և առաքեալներու քարոզած դաւանութիւններու հետ: (1)

Մեր նախնի սուրբ հայրերու դաւանութիւնն ևս որով անոնք իրրեւ բազմաշարժար նահատակներ միշտ կը յիշատակուին, նոյնն ըլլալ կ'երեւի այս եկեղեցւոյ դաւանութեանը հետ, զոր ներկայացուցած է մեզի Հայաստանեայց եկեղեցւոյ անաչառ և լուսամիտ պատմագիրն Մելքիսեդեկ Եպիսկոպոս, յորմէ նոյնութեամբ ընդօրինակած եմք զործոյս առաջին հատորին սկիզբը: Մեր այս հնադարեան հայրերու Աւետարանական և առաքելական անխարդախ դաւանութեան լոյսն ու պայծառութիւնը որ դեռ աստիճանով մը կը ցոլանայ պատմութեան մէջ մեր աչքերուն՝ յետագոյն ժամանակներու մէջ ո՛րչափ ալ ծածկուեցաւ մտացածին և օտարամուտ սին սովորութիւններու և անպաշտական ծէսերու անփառ վարագորի ներքեւ, որ թէ՛ բռնութիւնով և թէ՛ օտարամոլ կղերներու ազդեցութիւնով սպրդուեր են Հայաստան-

(1) Հաս. Ա. երջ. Ա. գլ. ԺԴ. Երես 260:— Յովն. Ժ. 3:— Ա. Կորնթ. Բ. 2:— Յովն. Ժ. 30:

եայց Լուսաւորչական մաքուր և սուրբ եկեղեցւոյն մէջ, տակաւին կր տեսնենք ի շարս հնազոյն յիշատակարոն- ներու որ ժամանակ ժամանակ ազգերնիս ունեցեր է իր մէջ բողոքողներ և այդ անփառ վարագուրի բարձմանն համար աշխատողներ թէ կղերական թէ աշխարհական դասուց մէջ: Բայց այսպիսիք հալածանաց միջոցով ի ձեռն մեծամասնութեան ընկճուած են:

Իսկ վերջին խումբն, այն է Բարեպաշտութեան Մի- արանութիւն անուանեալը, թէպէտ սակաւութիւ և տկա- րագոյն քան իրմէ առաջ եղածներ, բայց ժամանակի փո- փոխութենէն օգտուած և ընդ հովանեաւ Օսմանեան բու- րիխնամ տիրութեան, մանաւանդ շնորհիւն Աստուծոյ, քաջ հանդիսացաւ և իրրեւ ակոյեան ճշմարտութեան, դիմադրեց սնապաշտութեան անոր դէմ յարուցած ան- գութ հալածանքներու և յաջողեցաւ Աւետարանական պանծալի յատկանիշն իր մայրենի սիրելի եկեղեցւոյն ա- նունին բարդել և կազմաւորել «Հայաստանեայց Աւետա- րանական եկեղեցի»ն: Աւետարանական նախկին հայրեր՝ յորժամ հարկադրեցան իրրեւ ժողովուրդ Աստուծոյ սու- նուլ սոյն կազմաւորութիւն, չհետեւեցան որ և է օտար սնունդի կամ դրութեան, քանզի նպատակնին անփոփոխ կը մնար, որ էր և պիտի ըլլայ պարզապէս իրենց մայրենի եկեղեցին՝ յորում ծնած, սնոած ու մեծցած են: Աւետա- րանով բարեկարգել և վերածել իր նախկին առաքելա- կան պարզ, մաքուր և հրապուրիչ կացութեանը:

Այն տարերք՝ որ Թուրքիոյ մեծ մայրաքաղաքին մէջ կազմեց այս եկեղեցին աղքատ կամ աղքատացեալ լինելով սակս անագորոյն հալածանաց, զրկուած ազգա- յին, ընտանեկան և առեւտրական ամէն յարարերութիւն- ներէ, այսպիսի ողորմելի կացութեան մէջ գտնուելով հանդէպ իր սիրելի ազգին ու մայրենի եկեղեցւոյն՝ մի միայն կրօնային համոզումներով էր: Հետեւաբար չէին դադրեր իրենց յոյսին պատճառը համարձակ խօսելէ և

քարոզելէ, ուր և որոց առջեւ որ առիթ ներկայանար ըստ խրատու առաքելոյն թէ՛ «Պատրաստ իցէք տալ պատասխանի ամենայնի որ խնդրիցէ զբանն, որ է վասն յուսոյն ձերոյ» : (1) Մի միայն բազմանքնին ճշմարտութեան տարածումը և անով բովանդակ լուսաւորութիւնը ազգիս և տգիտութեան մռայլը բառնալ վերցնել լինելով իրենց և այլոց հոգեկան բարօրութիւնը : Թերեւս ոմանք ի պատճառս անգիտութեան անխոհեմ կերպիւ առանց հեղութեան և երկիւղածութեան խօսելով՝ յաւէտ հակառակութիւն և հալածանք յարուցած լինին :

Այս եկեղեցին ի սկզբան մայրաքաղաքին մէջ երեք տեղ թաղային աղօթատեղի ունէր, Բերա, Խասգիւղ և Լանկա, և իբր երեք տարի կառավարուեցաւ իւր մէկ հովուաւն, երկու սարկաւազներովն և երեք հոգաբարձու պաշտօնեաներովը : Իսկ յետոյ օգնական երիցու մը պէտքը ևս տեսնուելով ընտրուեցաւ, որով եկեղեցւոյ վարչութիւնը եօթը անձէ բաղկանալով, ընդ նախագահութեամբ առաջին հովուին, գործերը կը անօրինուէր ու կը կատարուէր : Յիշեալ երեք թաղերու մէջ ամէն կիրակի և լուր օրեր մէյմէկ գիշեր հրապարակային պաշտամունք և քարոզութիւն կը կատարուէր, յորս Սխիտնարութիւնն ևս ունէր իր մասը : Եւ այսպիսեաւ տկարութեամբ կազմաւորեալ այս մի եկեղեցի իրրեւ մէկ մարմին շինութիւն կ'առնէր և կը զօրանար. եղբարք հանապազ ըստ հրահանգութեան աստուածային բանին արթուն և զուարթուն իրենց քրիստոնէական պարտաւորութիւններն հաւատարմարար կատարելու ետեւէ էին :

Եւ յիրաւի, «Զի բարի կամ զի վայելուչ, զի բնական եղբարք ի միասին» (2) և ո՛րպէս ասէ սաղմոսեբգուն, «Անդ պատրաստեաց Տէր զօրհնութիւն, և զկեանս յաւիտենից» : Ծշմարտասէր հոգիներու յաւելումն կը լի-

(1) Ա. Պետ. Գ. 15 :

(2) Սաղմ. ձԼԳ. 1-3 :

նէր եզրարց վրայ, և եկեղեցին ճիւղեր կ'արձակէր աջ և աճեակ, մօտաւոր և հեռաւոր վայրեր որդէս զարդիս կը տեսնենք թէ են:

Աւետարանին հոգեկեցոյց գիտութիւնը տարածուեցաւ զսուաջինն մայրաքաղաքէս Նիկոմիդիա, սնկէ Ատարազար, յետոյ Պարտիզակ և Պրուսա, Նիկոմիդիայէն Պարտիզակ անցնիր հետաքրքրական է, որ տեղի ունեցած է աղքատիկ թիթեղնագործի մը միջոցաւ, որ թէև ըստ մարմնոյ աղքատ, բայց ըստ հոգւոյ հարուստ և երջանիկ էր Սուրբ գիրքերով և հաստաքով: Իր գացած տեղեր գործելու համար՝ երբէք ետ չէր կենար խօսելէ և քարոզելէ իր յոյսին պատճառը քրիստոնէական հեզութիւնով ու երկիւղածութիւնով: Սա՛ իր սրճեստը գործելու համար շատ անգամ Պարտիզակ կը տարուի այն տեղ չգտնուելով թիթեղնագործ: Եւ հոն այդ խեղճ արհեստաւորին քարոզելովը ճշմարտասէր ծերուկ մը կը լուսաւորուի, յառաջ կուգայ Տէրոջը շնորհիւր, Մկրեան Ամուճա անուն ծանօթ տեղւոյն քոլոր բնակիչներուն: Ատիկա գիւղին աղայոցը ծաղու և զբօսանաց առարկայ կ'ըլլայ. յաճախ չարածճի աղայք սմանք ուր որ կը տեսնեն ճէգ ծերուկը, ետեւէն քար կը նետեն: Իսկ նա՛ ինչպէս պատմած են ժամանակակիցներ, կը ժողուէր այն ետեւէն նետուած քարերը, ու համբերատար ոգիով կըսէր. «Նետեցէք, տւաքս, նետեցէք, հոս այդ քարերով պիտի կառուցուի Աւետարանական Աղօթատուն»։ Ի, աւ, կառուցուեցաւ աղօթատուն Պարտիզակի մէջ, և թեքուս կան անոր հիմին մէջ այն քարերն ալ:

Այսպէս Մայրաքաղաքիս մէջ հաստատուած Աւետ. եկեղեցին կ'աճէր, կ'ընդարձակուէր և ճիւղեր կ'արձակէր բաց ի վերոյիշեալ տեղերէն, Տրապիզոն, Կարին, Այնթապ և այլուր մինչև Ամի Տեառն 1850: Եւ ըստ Աւետ. եղբայրներու ճանաչման այն ամէն ճիւղեր փոքր թէ մեծ իրրեւ միեւնոյն մարմնոյ վերաբերեալ տեղական

եկեղեցիներ կը նկատուէին, և կը վայելէին այցելութիւնն Մայրաքաղաքիս եկեղեցւոյն Հովիւին և այդ պաշտօնեաներու ի շինութիւն և ի մխիթարութիւն: Մինչև վերոյիշեալ խուական Միսիոնարական կայաններ հաստատուած էին երեք տեղ միայն Մայրաքաղաքէս զաս՝ Պրուսա, Տրուպիզոն և Կարին:

Նոյն ատեն Պէպէքի միսիոնարական վարժարանին մէջ ընդ տնօրէնութեամբ Տօք. Սայրըս Համլինի կը պատրաստուէին՝ երկցութեան, քարոզչութեան և ուրիշ օգտակար գործառնութեանց համար ուշիմ պատանիներ և երիտասարդներ, և յիշեալ տեղերէն գէթ մէկ քանին օժտուած կը գտնուէին, իրենց Հովիւ, քարոզիչ և դաստիարակ պաշտօնեաներով, նոյն վարժարանի ընթացաւարտ սաներէն:

Գ.Ղ.ՈՒԽ Բ.

ԱՆՋԱՏՈՒՄ ԱՌԱՋԻՆ ՄԷԿ ԱԻԵՏ. ԵԿԵՂԵՅԻՈՅՆ

Նախորդ գլուխին մէջ յիշուած թուականին, 1850ին, Մայրաքաղաքիս Միսիոնարական կայանին ձեռնբերչութիւնով Հայաստանեայց Աւետ. եկեղեցին երկուքի կը բաժնուի: Ասիկա տեղի կ'ունենայ որոշումով մը, որ նախապէս քուէարկուած ըլլալով կայանի միսիոնարութեան ժողովին մէջ՝ ուր եկեղեցին ներկայացուցիչ և ձայն չունէր բնաւ ըստ Պորտ ընկերութեան անխախտ օրէնքին, որոշումը գործադրուելէն ու կատարուելէն ետքը ենթակային թեղադրութիւն կ'ըլլայ այսպէս: «Որովհետեւ այս եկեղեցին հիմայ բաւական անձամբ մեծցած է, և անոր անդամները նեղակալ աւելնալու վրայ են, որոնց բնակատեղիները այս մեծ Մայրաքաղաքին տարբեր թաղերուն մէջ ըլլալով, պէտք է որ դիւրութեան համար անջատում ըլլայ թաղային յարմարութեանը նա-

յելով :» Թելադրութիւն մը , որով անփորձ ենթականերն ո՛չ ուրիշ բան , բայց միայն տպաւորութիւն կ'առնեն որ անջատումը միայն թաղային պիտի ըլլար ինչպէս որ քնական ալ էր անանկ ըլլալ :

Արդ , 1846 Յուլիս 1ին Մայրաքաղաքիս մէջ հաստատուած Հայոստանեայց առաջին Աւետարանական եկեղեցին , 1850 թուականի նոյեմբեր ամսոյն սկիզբը երկուքի բաժնուած , և այն բաժնուած մասը կ'անուանուի Կ . Պոլսոյ երկրորդ եկեղեցի : Եւ բաժանումը ետեւէ ետեւ կրկնուելով , 1852 Փետրուարի մէջ Կ . Պոլսոյ երրորդ եկեղեցի անուանով Ասագիւղի մէջ , և յետոյ չորրորդ մը կը ծնի Պալատու մէջ : Իիտելու կէտը սակայն այն է որ սոյն բաժնուած մասերը ուրոյն պաշտօնէութիւններով և վարչական ժողովներով կը կազմաւորուին ըստ օրինակի և ըստ դրութեան Ամերիկայի ժողովական և երիցական կոչուած յարանուանութիւններու , որովհետեւ այդ առաջին միսիոնարներէն ոմանք երիցական և ոմանք ժողովական յարանուանութեան կը պատկանին եղեր : Իսկ Հայաստանեայց Աւետարանական եկեղեցին ատոնցմէ ոչ մէկին յարեցաւ , այլ միայն , Աւետարանին ինչպէս յայտնի է սկիզբէն :

Յարանուանական տարբերութիւնք որ կան Եւրոպայի և Ամերիկայի բողոքականաց մէջ դեռ անձանօթ էին Հայոց . և 1846 թուականին առաջին Հայաստանեայց Աւետարանական եկեղեցին հաստատուած ատեն՝ Միսիոնարութիւնը որ առժամանակեայ օրինատեար մը խորձած և խմբագրած էր ի կամս իւր՝ անջատմանց գործողութիւնը կատարուելէն յետոյ նոյնը աւելի ընդարձակելով իլոյս ընծայեց «Առաջնորդ Եկեղեցւոյ» անուամբ :

Ցայս վայր ամենայն պարզութեամբ , միամտութեամբ և վստահութեամբ Միսիոնարութեան ամեն խորհուրդին և բրած կարգադրութեանցը անսացող հարց մեծագոյն մասը՝ վերոյիշեալ գրքոյկին ի լոյս անուելէն յետոյ կը շփոթին տեսնելով , որ իրենց առաջի Աստուծոյ և առաջի մարդկան ուխտիւք ընդունած , ընդգրը-

կամ և սիրած զբուժենէն տարբեր և հայկական մաացան՝ անդուրժելի ու բուրբուլին օտար դբուժեան մը մէջ զբուիլ ուղուած են⁽¹⁾։ Բայց դարձեալ նոյն անսացողութեամբ կը շարունակեն այդ անջատ կացութիւնն իբր ինն տարի, թէեւ փորձով աննպաստ կը գտնեն, զայն իրենց զարգացմանն ու նպատակին։ Զարգացման՝ դի մի եկեղեցւոյ անդամք չորսի բաժնուած ուրոյն պաշտօնէութեամբ և վարչութեամբ, նիւթական գորութիւննին կը տկարանայ և առաւել կը կոպտւին օտար օգնութեան։ Նպատակին՝ զի Առաջնորդ Եկեղեցւոյ անուն օրինագիրքն այնպիսի պարբերութիւններ կը պարունակէ, որոնք պատնէչ կրնան կանգնիլ ընդ մէջ Աւետարանական Հայոց և ընդհանուր ազգին։ Իբրեւ օրինակ հետեւեալ պարբերութիւնը յառաջ բերել բաւական կը համարուի. «Երբոր մաշտոցական կամ պապական եկեղեցիներէն եկեղեցականներ կուգան Աւետարանական Հայոց եկեղեցին, չեն կրնար եկեղեցական սեպուիլ՝ մինչեւ որ Եկեղեցին զանոնք յարմար դատելով նորէն չընտրէ»⁽²⁾։

Արժրունի Տէր Գէորգ հայրիկ, Սասգիւղի Ս. Ստեփաննոս եկեղեցւոյ աւագերէց քահանայ, ծանօթ շատերու իւր բարեպաշտ և անբասիր կենօք, Աւետարանական գաղափարներով և զխաչեալ Քրիստոս քարոզելու անհուն եռանդով վառեալ, զորմէ քանիցս ակնարկուած է ներկայ աշխատասիրութեան առաջին հատորին մէջ⁽³⁾ հետեւեալ խօսակցութիւնն ունեցած է իւր նախկին ծուխերէն միոյն, որ յետոյ Աւետարանական եկեղեցւոյ առաջին անդամներէն մին եղած էր. «Բահանայազօրծել խղճիս անտանելի ցաւ կուտայ, վասն որոյ ինչ ինչ պատ-

(1) Առաջնորդ- Մասն Ա. Գլ. ԺԴ. էրես. 272:

(2) Առաջնորդ եկեղ. Գլ. Ժ. պատ. Թ. էրես. 58:

(3) Հասար Ա. գլ. է. էրես 88, 113, 125: Գլ. Ժ. էր. 142:— Մասն Բ. Գլ. Ա. էրես 201:— Գլ. Գ. 326, 327: էրես.

ճառներ հնարելով կարգս եկած ատեն փախուստ ըրած եմ . բայց շարունակ այնպէս ընել անկարելի է : Թողում բաժնուիմ եկեղեցիէս , ինչո՞վ պիտի կարենամ հոգալ իմիններս և ինձ վերաբերեալ որբերն , առաքելոյն ձայնն կուգայ ականջիս որ կըսէ . «Իսկ եթէ ոք իւրոց՝ և մանաւանդ ընտանեացն խնամ ո՛չ տանիցի , ի հաւատոցն ուրացեալ է՝ և շար ևս քան զանհաւատսն է» ի՛նչ ընելիքս չեմ գիտեր , կը տանջուիմ կը կենամ» :

Ուրիշ ձերունի քահանայ մը , Եղնակ Տէր Վրթանէս աղօթիւք և ձեռնադրութեամբ նուիրեալ պաշտօնեայ Աստուծոյ եկեղեցւոյն , կը տեսնէ իւր ուխտին և Ս . Ա . ւետարանի հակառակ սխալները , իսկոյն կը մերժէ և կը մերկանայ ամենքը , և կը յարի իւր ուխտեալ պաշտօնին սրբազան պարտաւորութեանց , փոխանակ քահանայագործութեան՝ կսկսի քարոզել յեկեղեցւոջ և ի հրապարակս լի յուսով և եռանդեամբ զՔրիստոս : Սակայն երբ այսու ազագաւ իւր մայրենի եկեղեցիէն կը հալածուի և կ'արտաքսուի , կը դիմէ Աւետարանական հալածեալ խմբակին գիրկը , որք պատսպարեալ էին այն ժամանակ ընդ հովանեաւ Միսիոնարութեան սաստիկ հալածանքներու պատճառով : Հագիւ առիթ կ'ունենայ այս տառապեալ ողորմելի անձ ուրախանալու Աստուծմէ իրեն եղած այս ողորմութեան համար , որ ազատեցաւ խղճմտանքի բռնակալութենէ և պիտի քարոզէ Աւետարանը ազատ և համարձակ , յանկարծ անակնկալ հարուած մը կայծակնահար կընէ գինքը . քանզի միսիոնարներու խորհուրդով նոր խմբագրուած եկեղեցական օրենքը պաշտօնանկ կընէր ազգային եկեղեցիէն եկող Աւետարանական եկեղեցիին յարող ձեռնադրեալ պաշտօնեաները :

«Ահ» ըսած է այս երեւելի անձնաւորութիւնը իր բարեկամներէն մէկուն . «Այս օրէնքին սրախս վրայ բացած վէրքը աւելի կսկծեցուցիչ և խոր է , քան զայն որ իմ ազգէս ընդունեցի» : (1)

(1) Արձանագիր Բիւք . Միոյր . հոգ . Սիմօզի , Ժեղ . սար . ժող . Գիս Ժ . Ա . ետս 70 :

Ձանց կրնենք այս տեղ խօսիլ նոյն օրինագրքոյկի երկրորդ գլուխին մէջ պարունակուած դաւանութեան անհամ կը հաւատաս, կը հաւատասները : Մանաւունդ իններորդ պարբերութեան մասունքներ են . մերժելու վերաբերեալները :

Ինչ թերութիւն տեսնուեցաւ այս Աւետարանական Քրիստոնեաներու նախնական դաւանութեանն մէջ . մանաւանդ այս վեհ ու զմեմ Նիկիական հանգանակին , « Հաւատամքին » մէջ , որն անտեսելով ուրիշ մը խմբագրուէր :



Գ. Լ. ՈՒ Ե Գ .

ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐԱՊԱՌՌԵԿՏՈՒՄ

Հայաստանեայց առաջին Աւետարանական եկեղեցւոյ մէկը չորսի բաժնուելու գործողութեան վրայ կանցնի իրր ինն տարի , և որպէս ըսուեցաւ ենթականերն իրենց համար բաժանումը աննպաստ գտներով , երկու թաղ , Բերա և Լանկա փոխադարձ խորհրդակցութիւնով աղօթիւ և միասնական լուրջ և եղբայրական համահաճութիւնով կորոչեն վերստին միանալ և կը միանան : Բայց այս վերադարձ գործողութիւնը հակառակ կու գայ Միսիոնարութեան գաղափարաց նպատակին կամ վախճանին և մինչև իսկ ապստամբութիւն կը համարեն իրենց դէմ , և ահա հոս կսկըսի Պորա ընկերութեան միսիոնարներուն և Հայաստանեայց առաջին Աւետ . Եկեղեցիին միջեւ տեւղի ունեցած անհամաձայնութիւնն ու պայքարը , որ սկիզբն է երկանց , Եկեղեցին արդէն ճանչցած ըլլալով օտարին հացովը անանիւր իրեն միասակար ըլլալը , երբ կը յաջողի չափով մը իր ցրուեալ զօրութիւնը վերստին ամփոփել , նախապէս կ'առաջադրէ իր հովիւին ապրուստը զլիսովին ինք հոգալ եկեղեցական ուրիշ բոլոր պէտքերու հետ մէկտեղ , և երկինք կ'օրհնէ անոր այս որոշումը և

կը յաջողի : Անանկ որ եկեղեցւոյ բոլոր անդամները զարմանալով կը խօսէին իրարու թէ ի՛նչպէս եղաւ : Յետոյ առաջադրեցին Բերայի մէջ պարզ իսկ վայելուչ աղօթատուն մը կառուցանել . եւ որչափ որ գիտենք՝ եկեղեցին իր մէջ հոնգանակութիւն կը բանայ և ուրիշ քրիստոնեայ բարեկամներէ ալ նուիրատուութիւններ ընդունելով հազար կամ անկէ քիչ մ'աւելի օսմ . լիրա գումար մը ձեռք կը բերէ և բաւական ընդարձակ երկրի մը կը տիրանայ այդ գումարով Բրուսիացւոց սաճարին կից , Այնալը Չէչմէ ըսուած թաղին մէջ , ուր բաւական թուով Աւետարանական ընտանիքներ կը բնակէին 1859 թուականին : Այս կարևոր գործը գլուխ հանելու համար կազմուած յանձնախումբին անդամներն էին՝ Վեր . Սիմոն Իւթիւճեան , Եզնակեան Տէր Վրթանէս , որդին Խաչատուր Եզնակեան , Տեարք Մկրտիչ Ճիլաճեան , Ստեփան Անտոնեան , Յակոբ Մատթէոսեան , ևն . ևն :

Այն ատեն եկեղեցին կ'որոշէ իր հովիւը վկայականով մը զրկել Բրիստոնեայ աշխարհ որպէս զի առաջադրեալ գործին կատարման պէտք եղած գումարը հայթայթէ , բայց հովիւը ետեւէն գացած սխալ լուրի մը պատճառաւ Ամբրիկայէն ձեռնունայն ետ կը դառնայ հետեւաբար գործը սկսուած կէտին վրայ կը մնայ երկար ժամանակ :

Նախ քան զմիութիւն անջատուած եկեղեցւոյ Միսիոնարութիւնն իմանալով եղած որոշումը , դէմ կ'ելլէ անոր արգիլելու համար այն որոշումը , բայց չյաջողիր : Կ'անցնի իրր երկու տարի , ինչպէս որ է կը յաջողի շահիլ իր կողմ մի քանի անձ որ դարձեալ անջատում ուզեն Լանկայի մէջ զատ եկեղեցի կազմել : Ասոնց հրաւիրել կուտան ընկերակից քոյր եկեղեցեաց Հովիւներն ու նուիրակները սոյն նպատակաւ , որոնք կուգան և ժողով կը գումարեն ի Լանկայ ուր Միսիոնարութիւնն եւս կը ներկայանայ , և անոնցմէ մին (միսիոնարներէ) կը նա-

խագահէ : Հրաւիրեալ ժողովականք, տեսնելով թէ Բերայի եկեղեցիէն ոչ Հովիւ կայ և ո՛չ նուիրակ, մանաւանդ հրաւիրուած չըլլայնուն համար բողոք կայ, կը հարցունեն թէ է՞ր չեն հրաւիրուած, մանաւանդ խընդիրն ալ անոնց վերաբերութիւն ունի : Միտինարութիւնն կը պատասպանէ՝ «Մենք անոնց հետ գործ չունինք, ինչ որ է Յունաց, Հայոց և Տաճկաց եկեղեցիները մեզի, նոյն է այդ եկեղեցին» : Իսկ ժողովականք մեծամասնութեամբ կը բողոքեն և կ'ըսեն թէ «Այդ շիտակ չէ, նա մեր ընկեր և քոյր եկեղեցեաց մին է, և մենք չենք կրնար այդ կերպիւ վարուիլ անոր հետ» : Բայց նոքա աւելի ցասմամբ դէմ կ'ելնեն և կ'ըսեն՝ «Նա չկրնար ներկայանալ հոս, ևն.» այնչափ կ'ըլլայ, որ ծերունազարդ Հովիւ մը, որ անուանի էր իւր հեղութեամբն ու պարզութեամբը, ձեռքը սրտին վրայ դրած և աչքերը լեցուած կ'ըսէ՝ «Կաղաչեմ, Պատուելիք, զմեզ բռնի կեղծաւոր մի ընէք, այս շիտակ բան չէ» : Այսու ամենայնիւ ձայներնին լսելի չըլլար, միտք դրածնին կատարել կուտան, և եօթ հոգւով եկեղեցի կը կազմեն «վերահաստատեալ» անուամբ⁽¹⁾ :

Կանցնի քանի մը ամիս, 1861 Նոյեմբերի մէջ Բերայի եկեղեցւոյն ինդրանօք երիցանց և նուիրակաց ժողով մը կը գումարի Նիկոմիդիոյ մէջ, ուր եկեղեցին բողոք կը բառնայ այդ գործողութեան դէմ, և վերաքըննութիւն կը խնդրէ : Ժողովը՝ թուով միւսէն շատ աւելի կ'ըլլայ, և միւս ժողովի անդամոց մեծազոյն մասը ներկայ կը գտնուի, լուրջ կերպով կը քննուի բանը և միասնաբար վճիռ կ'արձկուի թէ՝ «այդ գործը սխալ և անլաւեր է», և երեք երիցանց կը յանձնուի որ այս վճիռն գիւղին Միտինարութեան հաղորդեն : Պատգամաւորներն կը հաղորդեն, բայց Միտինարութիւնն ար-

(1) Տես զայս պատմութիւն նոյնութեամբ արձանագրեալ յարաւ եկեղեցւոյ :

համարհունքով կը պատասխանէ ըսելով, Անիկա կատարուած գործ մըն է, դուք իրաւունք չունիք անոր միջամտելու» :

Արդ, Վերահաստատեալ անուանուած այդ եկեղեցիին ժամանակ մը բոլորովին Մխիթնարութեան խնամքին տակ մնայէ յետոյ՝ անոնց յարմար երեւցած անձ մը, Կեսարայի Բարսեղ Վարդանեան անուն, կը բերուի իրրեւ քարոզիչ և ապու ժամանակէ մը ետք նաեւ Հովիւ կամ Երէց կը ձեռնադրեն 1866 Մայիսի մէջ, Այդ անձին ձեռնադրուելուն դէմ կար նաեւ թանաւոր ընդդիմութիւն Հայ Աւետարանական պաշտօնէութենէն, բայց անլսելի եղաւ, որովհետեւ Մխիթնարական շահերուն, այն է ժողովական յարանուանութեան հաւատարիմ աւանդապահ կը համարուէր, Իսկ սա՝ իրր տարի մը կամ տարի ու կէս պաշտօնավարելէ յետոյ ինքնին կը հեռանայ և նոյն եկեղեցին միասնական համահաճութիւնով կը հրաւիրէ արդէն ձեռնադրեալ Հովիւ մը իր պաշտօնավարութեան Դեկտեմբեր ամսոյն մէջ 1868 թուականին :

Սակայն Մխիթնարութիւնն կասկած ունենալով հրաւիրեալ պաշտօնեային վրայ իրրեւ եկեղեցւոյն միութեանը կողմնակից և փափաքող՝ շատ կը ճգնի անոր ընտրութեանը սրգիլուելուն, երեք անգամ պաշտօնէից ժողովներ կը հրաւիրէ գաւառներէն բազում ծախքեր ընելով, բայց ամենուն մէջ եկեղեցւոյ արարքը ուղիղ և արդար կը նկատուի և վաւերական ըլլալ կը վճռուի : Սակայն հէգ հովիւն վերջապէս չկարենալով հանդուրժել ի սէր խաղաղութեան ինքնին կը հրաժարի 1871 Յունուարի վերջը :

Եկեղեցւոյ մը և մխիթնարութեան միջեւ յառաջ եկած սոյն ամօթալի պայքարի մանրամասնութեանը մըտնել մեր նպատակէն դուրս լինելով կը թողունք : Մենք քաւ լիցի որ քամահրենք որ և է տեսանելի եկեղեցի անոր այս կամ այն յարանուանութեան վիրաբերելուն հա-

մար, քանզի գիտենք թէ անսեսանելի եկեղեցին մի է
և ընդհանրական յորում ամէն յարանուանութենէ ալ
ճշմարիտ հաւատացեալներ և Յիսուսի արիւնովը փրկուած-
ներ կան և պիտի ըլան : Յայտնութեան գրքին մէջ ցուց-
ուած Յիսուսի արիւնովը փրկուածները ո՛րքան են :
Նպատակնիս միայն եղելութիւններ ճշգրտաբար պատմել,
և ո՛չ այն կամ այս դատել :

Գ. ԼՈՒԽ Դ.

Ամերիկայի Պորտ ընկերութիւնն ի սկզբան հաս-
տատուած է, խնդրանօք քանի մը դպրոցական երիտա-
սարդներու, որոնք հեթանոս և կուսպաշտ ժողովուրդ-
ներու խղճալի վիճակը ինկատ առնելով՝ որոշեր են եր-
թալ անձնուիրաբար աշխատիլ տալով քրիստոնէական
կրթութիւն և դաստիարակութիւն Աւետարանի քարո-
զութիւնով : Այդ խնդրանք ընդունելութիւն կը գտնէ
Մասաչուսէթս նահանգի ժողովական եկեղեցիներու պաշ-
տօնէից տարեկան ժողովոյն մէջ գումարեալ 1810 թուա-
կանի Յունիս ամիսն Պրատֆորտի մէջ որուն ղիմեր էին
խրատու, հրահանգութեան և նպաստի համար : Եւ
նոյն թուականին կը հաստատուի ու կը կազմուի այդ
բարեօրական հոշակաւոր ընկերութիւն հեթանոս և
կուսպաշտ ազգերու և ժողովուրդներու քարոզելու հա-
մար այնպիսի օրէնքներով և կարգադրութեամբ, որ
քնականաբար պէտք էր ըլլային սոյն հեթանոս և կու-
սպաշտ ազգերու և ժողովուրդներու վիճակին, որ ան-
տարակոյս ուղիղ և իրաւացի են : Քանզի ժողովուրդներ
որ դարաւոր վայրագ հեթանոսութեան ու կուսպաշտու-
թեան մէջ ծնած, սնած ու մեծցած են, հարկաւ անոնց
համար ամէն բան նոր և անցեալին մէջ ունեցածնէն
տարբեր ըլլալու է :

Արդ, նոյն ընկերութեան Միսիոնարութիւնն մտաւ ի Թուրքիա Հայոցս համար ևս 1831 թուականին և սկսեց գործել Սակայն Հայր Քրիստոնեայ ժողովուրդ մըն է ի վաղուց անտի, և Քրիստոնէութեան դառնալէն անմիջապէս ետքն ալ իր առաջին բաղձանքն եղած է Սուրբ Գրոց խօսքերն իր մայրենի լեզուին քաղցր և հեշտին հնչիւններով կարգալ և լսել, որ շուտով կատարուած է Սահակայ և Մեսրոպայ թարգմանութիւնով, զորմէ օտար հայագէտներ իսկ բարձր գովեստներ դրբուատած են: Հայր ունի քրիստոնէական փայլուն անցեալ մը, և ամենադառն հալածանքներու և տանջանքներու մէջ հաւատարիմ աւանդապատճ եղած է աստուածային Սուրբ գրոց: Միսիոնարութիւնը Թուրքիա եկաւ, հայոց մէջ կային արթուն և լուսաւորեալ ազգայիններ, որոնք Հայաստանեայց եկեղեցւոյ բարեկարգութեանն օւսագգիս լուսաւորութեան նախանձովը սրտերնուն մէջ վառուած էին: Առաջին միսիոնարը հայոց մէջ աչխատելու համար Թուրքիա զրկուած, Մր. Ուիլբերմ կուտէլ յիշուած է կարգաւ գործոյս առաջին հատորին մէջ թէ ի՛նչ գրած է Պէրութէն զինքը զրկող ընկերութեան:

Նոյնպէս գովասանութիւններ գրած է Վեր. Տօք. Սայրըս Համլին, իրեն հայերէն ուսուցանող դասատուին նկատմամբ: Յիշենք այն երեք օրինակելի վարքով ուսեալ և դաստիարակեալ լի հաւատով երիտասարդներն ալ որոնք ընտիր գործակիցներ եղած են առաջին Միսիոնարներուն անոնց գրական կամ հրատարակչական ճիւղին մէջ: Շտեմարան պիտանի գիտելիացը, Գերմանիոյ բարեկարգութեան երկու հատոր ստուար գիրքերու գեղեցիկ թարգմանութիւնը և ուրիշ բազմաթիւ գրական աշխատութիւնները: Բաւական է հոս այսչափ միայն ըսել, որ Միսիոնարութիւնը՝ նոր եկած պահուն պատրաստ գտաւ ազգիս մէջ լուսաւորեալ և արթուն խումբ մը որ այն սիրով ողջունեց անոր գալուստը, և միացաւ անոր

աշխատութեան և գործակցութեան մէջ՝ ազգիս մեծագոյն մասին լուսաւորութեանն ու բարեկարգութեանը համար, որ թէպէտ քրիստոնեայ, սակայն իոր քունի մէջ թաղուած և կը մնար ծիսականութեան թ'րեցուցիչ ներգործութեան ներքեւ:

Հայր քաղաքականացեալ է, և չէ վայրագ հեթանոս ժողովորդներու կտրգէն: Ունի քաղաքային և կրօնական անցեալներու բաւական ճոխ և հարազատ պատմութիւն, գիտէ աշխարհն ինչ ըլլալը: Ունի բարոյական կրօնական ճոխ ժառանգութիւն մը անհունապէս այլազան և ուրախ ենք որ զայն ուսումնասիրելու արթնցած է: Եւ ունի ազգային անմեղ, բարեկարգ և առաքինի սովորութիւններ ըստ քրիստոնէական քաղաքակրթութեան, զորս լաւատես միսիոնարներէ ոմանք իսկ ուզած են այս ազգէն սորվիլ:

Հայ ազգին մէջ իրա՛ւ կայ եկեղեցական բարեկարգութիւն և հոգեւոր արթնութիւն ու վերակենդանութիւն յստաջ բերելու անհրաժեշտ գործ մը որ կատարուելու է: Եւ այս, չնորհիւ Աստուծոյ, կրնայ կատարուիլ հաւատարիմ քարոզութեան, աւետարանական կրթութեան, դաստիարակութեան և հրահանգութեան միջոցներով, և ասոնք պէտք է ի գործ դրուին, որպէսզի սորվի իւրաքանչիւրն, թէ «ինչպէս պէտք է իրեն Աստուծոյ տանը մէջ քալել, որ կենդանի Աստուծոյ եկեղեցին է» (1):

Արդ, թէ՛ Պօրտ ընկերութիւն թէ՛ այլ ընկերութիւնք և անոնց Միսիոնարք, երբ որ կ'երթան օտար երկիրներ, կ'աշխատին հեթանոս և կուսպաշտ ժողովրդոց մէջ և կուենեան անոնցմէ դարձեր ի հաւատ քրիստոնէութեան՝ բնականաբար պիտի պարտաւորին եկեղեցիներ հաստատել որպէս ըրին առաքեալք: Եւ իւրաքանչիւրն ըստ իւր մայրենի եկեղեցւոյն զրութեան, ժո-

(1) Ա. Տիմոթ. գլ. Գ. 15:

զովական՝ երիցական՝ մկրտական՝ ևն, ևն: Գժբախտա՝
բար ակահներ բազումք են, բայց ո՛չ ի պարծանս քրիստոնէութեան:

Գարով վերոյիշեալ հանգամանքն ունեցող հայ ժողովրդեան մէջ կատարուելու գործոյն՝ ո՛րպէս ցուցուեցաւ ամենայնիւ տարբեր է հեթանոս և կռապաշտ՝ ժողովրդոց համար պէտք եղածէն, անոնք արդէն եկեղեցւոյ գիրկն են, պէտք չէ օտար յարանուանութեան կամ եկեղեցւոյ գիրկ հրաւիրել զանոնք զեղեցիկ իմն ըսուած է հետեւեալն ի ճառախօսութեան Բօրֆ. Յ. Ը. Ճէճիգեանի:

«Արարիչը իւրաքանչիւր ազգի յատուկ և զանազան կարողութիւններ տուած է, իւրաքանչիւրը իւր յատուկ ներքին զօրութիւնը ունի, վասն որոյ հարկ է որ ազգի մը կրօնական բարեկարգութեան մէջ սոյն զօրութիւնք գործելու ելլեն . . .»

«Արտաքին միջոցներ և զօրութիւններ կրնան մտնել այս գործին մէջ, բայց այսչափ միայն՝ որ այն ներքին զօրութիւնը զարթուցանեն բարոյական զօրութեամբ և ազդեցութեամբ մինչեւ որ նոր բարոյական զօրութիւն մը ի յայտ գայ, առանց որոյ երբեք հնար չէ ճշմարիտ և իրական զարգացում և կեանք յառաջ բերել: Այս անվիճելի ճշմարտութեան պատճառաւ է, որ ո՛չ ոք երբեք կարող է նախապէս որոշել կամ գծել ազգի մը բարեկարգութեան կերպը կամ նոյնին զարգացման առաիճանները: Խնդիրը այն չէ որ մասնաւոր կերպեր և ձևեր յօրինեմք, այլ խնդիրը այն է որ ճշմարտութիւնը իւր բոլոր զօրութեամբ ազգի մը մտաց և սրտին նայի, տարիներով թմրեալ զօրութիւնը արթննայ և թող այն զօրութիւնը իւր կերպովը իւր յատուկ ձևեր առնէ, զարթուցեալ բնիկ զօրութիւնը ո՛րքան ալ փոքր ըլլայ՝ թող ծաւալի, թող քաջալիրուի, մինչեւ որ բովանդակ ազգին մէջ ընդարձակի, ինչու որ միայն այդ զօրութիւնն

է հարազատ զօրութիւնը, և միմիայն այդ զօրութիւնն է որ իւր ճանապարհը կրնայ գտնել բարոյական լայնածաւալ երկնից մէջ՝ ինչպէս որ բնական երկնից անհուն գունդերը անբաւութեան մէջ կը գտնեն իրենց շաւիղը» (1)։

Թո՛ղ լսէ բովանդակ աշխարհ՝ որ հայ Աւետարանական ժողովուրդը սիրեց, կը սիրէ և պիտի սիրէ այն Քրիստոնէական և մարդասիրական բարի նպատակը, որով ի գործ դրուեցաւ Աստուծոյ անխարդախ բանին, ճշմարտութեան քարոզութիւնը, ինչպէս նաև կրթական և դաստիարակային զանազան միջոցներ որպէս զի Հայ ազգին տարիներէ ի վեր թմրեալ և անգործ մնացած զօրութիւնը արթննար։ Արթնցաւ այդ զօրութիւն շնորհիւ Ամենակային, և ի սկզբան որչափ փոքր ալ էր, պէտք էր քաջակերուիլ և բովանդակ ազգին մէջ ընդարձակել, և այնպէս կարենար գտնել իւր ճանապարհ։

Երբ մեր նախնիք ակամայ հարկադրեցան ազգային եկեղեցիէն անջատիլ, — «Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցի» պանծալի անունը ընդգրկեցին ունենալով իրեն կանոն և առաջնորդ հաւատոյ և վարոց Աստուածաշունչ մատեան, Հին և Նոր կտակարանք։ Այս որոշում սուրբ և նուիրական է ամենայն Աւետարանականաց։ Նախնի հարք չուղեցին որ և է մասնաւոր յարանուանութեան մը յարիլ... անոնց եռանդուն բաղձանքն էր այս հետքէն չչեղիլ, և բովանդակ ողջամիտ Աւետարանականներու ալ թափանցած է։ Եւ մեր մայրենի եկեղեցւոյն մէջ ամեն ինչ որ համաձայն է Աստուծոյ յայտնեալ կամքին՝ սուրբ և նուիրական է ողջամիտ Աւետարանականներու թէ ի Մայրաքաղաքիս և ի գաւառս և թէ յարտասահմանս։ Ասոնք մանաւանդ կը փափաքին կանուխ թէ ուշ երբ որ ճանապարհնին գտնեն՝ եկեղեց-

(1) Ճառ յաղագս բնիկ եւ համարիւն գործակալութեան, երես 17, 18:

ւոյ կառավարութեան և նոյեոր վարչութեան ամենէն ընտրելագոյն, ամենէն բանաւոր և ամենէն օգտակար, մանաւանդ սուրբ գրոց համաձայն ձեւն ունենալ՝ որ կը համարեն և կը դաւանին լինել սահմանադրապէս կառավարեալ երեսփոխանական դրութիւնն ընդհանուր միութեամբ հաստատեալ ըստ Աւետարանական սկզբանց (1), որ տրպար լինի Մարենի եկեղեցւոյ, և որ կարենայ լինել հանգոյց միութեան ընդ մէջ համադգային և համարիւն եղբարց:

Պ. Լ. ՈՒԽԵՆ.

**Խնդիր դաստիարակութեան. — Խափանում Պէպէր
Ամերիկեան վարժարանի, եւ Բոպէրդեան
վարժարան: —**

Պօրտ ընկերութեան միտինարութիւնն ազգիս մէջ մանկէն մինչեւ 185¹) թուական Հայ Աւետարանական ժողովուրդը գո՞ն էր անոր բացած վարժարաններէն, մանաւանդ ի խնամս Տօքթ. Կ. Համլինի, Պէպէրի այն պատմական վարժարանէն, ուր մեր ազգի բազում պատանիք ու երիտասարդք ըստ ժամանակին պահանջածին կրնային բարւոք դաստիարակութիւն ստանալ: Իսկ թուրքիոյ այլ եւ այլ հասարակութիւնք ալ ի խնամս Օսմանեան կրթասէր տէրութեան մինչ հետզհետէ մտաւորապէս կը զտրզանային՝ Աւետարանական ժողովուրդն իրրեւ անոնցմէ մին՝ պէտք կ'զգար յաջորդ սերունդին համար առաւել ընդարձակ դաստիարակութեան, մանաւանդ առաւել ճոխ գիտութեամբ, օժտեալ պաշտօնէութիւն պատրաստելու: Այսու տեսութեամբ կը յափա-

(1) Արժ. Բիւր. միտք. հոգեւ. Սիւննոյի. ժեւոյ ժոյ. նիւս. Խե. եւեւ 122:

քէր իւր պատանեաց ու երիտասարդաց մի քանին յղել Եւրոպա և Ամերիկա: Միսիոնարութիւնն թէև կարի դժկամակ կը գտնուէր ժողովրդեան այս փափաքին՝ բայց նոյն ատեն խոստովանիլ պարտինք որ ջանք և աշխատութիւն ունեցաւ, գէթ Պէպէքի վարժարանին ուսմանց ծրագիրն առաւել ընդարձակելու, մանաւանդ ժողովրդեան փափաքածին համապատասխան վիճակի վերածելու, մանաւանդ վարժարանին մեծահոգի տնօրէնութիւնն:

1855 թուականին Պօրտ ընկերութեան գլխաւոր քարաուղարը, Տօքթ. Անտրրսըն հետն ընկերով մը կուգայ Կոստանդնուպօլիս իրրև պատգամաւորութիւն որոյ գօլտտեան արդիւնքն այն կըլլայ որ յիշեալ վարժարանի նախկին ծրագիրը կը կրճատուի, դաստիարակութեան ընթացքը կը փոխուի, Անգղիերէնի ուսումն ի բաց առնել կ'որոշուի և այլն: Աստ և անդ բացուած մի քանի դպրոց կը փակուի, և այս նոր դրութեան դժկամակող ոմանք միսիոնարք կը ձգեն գործերնին ու տեղերնին կ'երթան. ըմբոստմունք իսկ տեղի կ'ունենան միսիոնար ընդ միսիոնարի, բայց աւանդեալ Անտրսընեան նոր դրութիւն ստիպողական կը լինի: Եւ նոր դրութեան հաւանութիւն չունեցողն միսիոնար լինելու անարժան կը համարուի: «Ո՛չ ոք արժանի է միսիոնար կամ ուսուցիչ ըլլալ, որ երբէք հետեւիլ կ'առաջարկէ մեղ ճէզուիդ ընկերութեանց վարժարաններու օրինակին» (1):

Պէպէքի վարժարանը քիչ ատեն իւր նախկին վիճակին մէջ շարունակուելէն ետքը իսպառ կը փակուի, նոյնպէս և աղջկանց գիշերօթիկ վարժարանը որ նախ Բերա, յետոյ Պէպէք և ապա Խասգիւղ փոխադրեալ էր, վերջապէս այն ալ կը փակուի՝ և ըստ նոր կարգադրութեան Մարսուան, Խարբերդ և ուրիշ տեղեր կը բացուին արդի եղածները: Բայց նախատեսեալ ցաւալի հետեւու-

(1) Among the Turks C. Hamlin, P. 281.

թիւնք յառաջ կուգան Կոստանդնուպոլիս մեծ մայրաքաղաքին համար . և ինդիրը կը լքուի ըտրոսովին : Տօքթ . Կ . Համլին՝ ըստ իւր խոստովանութեան (2) կատարելապէս համոզուած լինելով սոյն նոր դրութեան սկզբամար թիւր և արդեամբ ազեատի ըլլալուն , կ'որոշէ քաշուի աշխատութեան ուրիշ ճիւղի մը , թողելով նոր ծրագրին համեմատ գործին սննց՝ որ կը հաւատան անոր օգտակարութեանը , եւ նախախնամարար կը խնայուի առաւել հակառակելու հարկաւորութիւնն յառաջ տանելէ , յանակնկալս հրատէր ընդունելով կեանքին սիրելի գործը ուրիշ պարագայից մէջ շարունակելու :

Մր . Քրիստափոր Բ . Բոպէրց , Ամերիկացի վաճառական մը . 1856 թուականին թուրքիա կայցելէ ճիշդ այն միջոցին երբ Սոխմի պատերազմը կը վերջանար : Օր մը Պոսփորոսի եզերքը պտոյտ ըրած պահուն՝ ծովուն վրայ հաց քեռցած նաւակ մը կը տեսնէ . հացերուն քաղցըր բուրումն ու զխալիլ տեսքը կը գրաւեն անոր ուշադրութիւնը և կը հարցնէ անոնց ուրիշ ըլլալը : Այս դէպքը առիթ կ'ըլլայ օտարականին առաջին անգամ ծանօթանալ Տօքթ . Կ . Համլինի անուան . որովհետեւ հացերն անորն էին որ իր շինած փռան մէջ կը պատրաստէր և պատերազմի միջոցին Գուլիլի և Սէլիմիէ զօրանոցները բնակող ըրիտանական զօրքերուն կը զրկէր , և շահած զրամովր մի քանի եկեղեցի կառուցած է , զորօրինակ Պրուսայի Աւետարանականաց եկեղեցին :

Երբ որ բարեսէր վաճառականը իւր հայրենիք կը վերադառնայ , յետ սակաւ ինչ ժամանակի սա խորհուրդը կը ծագի մտքին մէջ . այն է Քրիստոնէական համալգային վարժարան (college) մը հաստատել Կոստանդնուպոլսոյ մէջ , և նախախնամարար ականջին ծանօթ եղող Տօքթ . Կ . Համլին անունը կը արուի իրեն , իրրև կա-

բող և Թուրքիոյ մէջ գործ տեսնելու յարմար և փորձառու անձնաւորութիւն: Աւասիկ աստի ծնունդ կառնու Րուսէլի Հիսարի բարձանց վրայ կառուցեալ հոյակապ և հսկայ Րոպերդ Գօլէճ անուանեալն, որոյ հիմնարկութիւնն կ'ըսկսի և անկեան քարը մեծաւ հանդիսիւ կը դրուի, 1869ի 4 Յուլիս նոր տօմար, և կաւարտի ու նուիրումն ու սկզբնաւորութիւնը տեղի կունենայ 1871, Մայիս 15:

Բարեսէր վաճառականին, Քրիստափոր Ր. Րոպերդի բաղձանքն լինելով տեսնել Թուրքիոյ մեծ մայրաքաղաքին մէջ Քրիստոնեայ հաստատութիւն մը, որ մտաւոր լաւագոյն կրթութիւնը տայ նոր Անգղիոյ հոշակաւոր դօլէճներու ճոխ և ընդարձակ ծրագրով, համապատասխան թուրքիարնակ ամեն ցեղէ և ամէն կրօնքէ: Եղող դասակարգերու բաղձանաց՝ իւր անսայթաք որոշումովը կը ծախսէ առաւել քան երկու հարիւր հազար թալէր. սլայմանաւ որ Սուրբ Գրեանք լինին հօն կրօնական և բարոյական դաստիարակութեան վճռական ազբիւր: Ս. Աւետարան իւր մաքրութեամբը հաւատարմարար քարոզուի, Աստուածաշունչ կարգացուի, առաւօտ և երեկոյ կանոնաւոր աղօթք մատուցուի, բայց խղճմտանքի իրաւունքներ նուիրական համարուին նոյն ատեն: Վերջապէս կը փափաքուի ընել զայն՝ Քրիստոնեայ Գօլէճ մը, ուր սլատարաստութիւն սլատանիք և երիտասարդք ամեն ազգէ և կրօնքէ յարմարելու կեանքի զանազան գործօն վիճակներու և կոչումներու:

Տօքթ. Ս. Համլին ապա ծերութեամբ գործէ քաշուած՝ այսպէս կը խօսի. «Սոյն ծրագրի կատարեալ համաձայնութեամբ՝ Ամերիկեան Պոքաի հետ ունեցած քսաներկու տարեաց կառուցութիւնս վերջացուցի, բայց այն գործ յարում զբաղեցայ վերջը, միայն ուրիշ ձեւ առած էր առաջինն որուն կապուած էի: Եւ հիմա ինքզինքս

առաւել թուրքիոյ Միսիոնար մը եղած կը տեսնէի քան որչափ առաջ : Առանց ցեղի, լեզուի կամ կրօնի նկատումներու՝ երկրին բովանդակ ժողովուրդներուն համար ըստ կարելոյն կաշխատէի :»

Բրօֆ. Յակովբոս Հ. Ճէճիղեան, հռչակաւոր բնագասացն ու գրագէտը սոյն հաստատութեան առաջին պատուղն է յԱզգիս :

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի :

Գառնալով ի գաւառս բացուած Միսիոնարական վարժարաններուն, թէ անոնք ի՞նչ օգտակարութիւն ունեցած և ո՞րչափ արդիւնք յառաջ բերած են, յաջորդ վերջին գլխոյն մէջ պիտի տեսնուի :

Գ Լ Ո Ւ Խ Զ .

Յայտարարութիւն ի շնորհս միսիոնարութեան և իրաց աճեցնախանձելի վիճակ :

« Գերմանիոյ նորակազմ հայոց նպաստամատոյց ընկերութեան կեդրոնական յանձնաժողովին 1897ին հրատարակած մէկ յայտարարութեան համեմատ՝ կըսէ Բրօֆ. Հ. Գեւլցեր՝ ամերիկացի միսիոնարաց ընկերութիւնն այժմ ի թուրքիա ունի երկու հարիւր քսան երեք միսիոնար և հազար իննսուն և չորս հայ երէց, քարոզիչ և ուսուցիչ : Հարիւր յիսուն և չինգ եկեղեցի և երկու հարիւր ութսուն և մէկ քարոզատեղի և տասնեւչինգ հազար չինգ հարիւր հազորդուող :

« Իրենց միսիոնարական հիմնարկութիւնքն, առանց հաշուելու եկեղեցիներն ու դպրոցները, իրր 60 միլիոն ֆրանքի արժէք ունին : Իրենց տարեկան ծախքն է, 9,500,000 ֆրանք : Բողոքականութեան սկիզբէն ի վեր (1831) ի թուրքիա առ նուազն 241 միլիոն ֆրանք ծախք

ըրած են : Կիրակնօրեայ պաշտամանց ներկայ գտնուող-
ներու միջին թիւն է 40 000, իսկ կիրակնօրեայ դպրոց-
ներու ներկայ գտնուողներունը 35,000 :

«Ամերիկեան միսիոնարք ունին ի Թուրքիա հինգ
բարձրագոյն դպրոց մանչերու և թոշակաւոր աղջկանց,
միասին 4085 աշակերաններով, ուրեմն 621 դպրոց՝ 27,400
աշակերաններով : Այս դպրոցներն ըստ մասին նաեւ
ուրիշ դաւանութեանց տղայք կը յաճախեն, բայց
միսիոնարաց գլխաւոր գործը հայոց մէջ է : Բողո-
քական հայոց թիւը 70,000 կը համրուի» (1) :

Եկեղեցեայ, քարոզատեղեաց, դպրոցներու են. են.
այնքան ստուար թիւեր հանդերձ ասոնց համար վատ-
նուած զարհուրելի ծախուց, զոր կը կարդանք ի վերեւ
երեւցած յայտարարութեան և ըստ մասին ալ ուրիշ զա-
նազան զեկուցումներու մէջ՝ թերեւս նուիրատուաց աշ-
քեր շլացունեն : Իսկ ենթակայք՝ որոց համար այդ հաս-
տատութիւնք ու ծախքեր եզեր են կ'ըսուի, նոքա որ
եւէ ազգեցութիւն չկրելէ զատ յաւէտ կը դաւին ու կը
վշտանան որ յանուն Աւետարանական Հայոց սննդան ա-
հագին գումարներ բարիսէր քրիստոնեաներու քսակը
վտանուած լլսալ ցուցուած է. իսկ վատնուածին համա-
պատասխան արդիւնք չտեսնուիր մինչեւ ցայսօր, այսին-
քն 1884 :

Թուրքիոյ մեծ մայրաքաղաքին, Կոստանդնուպոլսոյ
մէջ, Ամերիկեան Միսիոնարութեան մուտքը Հայոց հա-
մար կէս դարէ աւելի կամ լման վաթսուն և ութ տա-
րի է. բայց մինչև այսօր տեսնուած չէ հոն հաստատու-
թիւն մը իրրեւ բացարձակապէս Պորտի կամ իր Միսիո-
նարութեանը վերաբերեալ : Իրա՛ւ Հայ Աւետարանական
ժողովուրդը կրնայ կերպով մը պաաճառ եղած համարուիլ

(1) Հանդ. Ամս. 1897, մայիս 5, երես 151, Սիւն Բ. : Ըստ Բրոճ
Հ. Գէլցերի :

Բուպերտեան վարժարանի, Պայպլլ Հաւուզի և Հօւ վարժարանի՝ բայց ասոնց և ո՛չ մին Պորտ ընկերութեան կամ անոր Միսիոնարացը կը վերաբերի :

Յաւալի է տեսնել որ Հայ Աւետարանական ժողովորդք՝ կիրակնօրեայ պաշտամունքնին կը կատարեն այսօր ի Բերտ Հոլանտական Դեսպանատան մատուան մէջ, իբրև առժամանակեայ շնորհք մը իրենց եզած : Եւ մայրաքաղաքին կեդրոնին մէջ գետնի մը վրայ գիշերուան մը մը արշալոյսէն քիչ առաջ գաղանի կերպիւ յօրինուած հիւղակի մը անկղմինար ծածկոյթին ներքեւ մէկ անդ կուգան, ձմրան անձրեւին ու ձիւնին, և ամրան կիզիչ ջերմութեանը տոկալով և համբերելով ի սէր աստուածային պաշտաման և քարոզութեան : Այդ գետին մասամբ ժողովրդեան իր մէջ հանգանակած և մասամբ Պորտի նըւէրովն զնուած լինելով դեռ յաջողութիւն չէ եղած հրկրպագութեան վայելուչ չէնքի մը կատուցման : Վարժարան կամ դպրոց երբեմն վարձեալ տուներու մէջ կը անուէին, բայց զարդիս այն ալ չկայ :

Ի գաւառս բացուած Միսիոնարական վարժարաններու և ուրիշ գործողութեանց մասին ըստ բերման պարագայից չունենալով անձնական տեղեկութիւններ, իսկ անհատներէ առնուած կամ լսուած տեղեկութիւններու արժէք տալով թեր կամ դէմ գաղափար յայտնել ի պատմութեան անիրաւութիւն համարելով մինչ կը վարանինք՝ յանկարծ կը յիշենք արձանագրութիւն մը : Այն է «Արձանագրութիւնք Բիւթանական Միութեան Հոգևորական Միւնոզի հնգևասաներօրդ տարեկան ժողովոյ, 1881 թուականի» սոյսգրեալ տեսարակ մը : Ուստի կը համարձակինք նոյն ժողովոյ նիստերուն ներկայ գտնուող կեդրոնական, Պարբերդու և Կիլիկիոյ Միութեանց Արժ. միջանի երկցանց և այլ արժանահաւատ անձնաւորութեանց ներկայութեան կամ անոնցմէ տրուած տեղեկութիւններէ՝

ամենայն վստահոյ թեամբ գաղափար մը աստանոր յայտնել:

«Մեր երիցունք ի գաւառս» ըսուած է, «մեծաւ մասամբ կ'ողբան իրենց վիճակը, խեղճ են նիւթական կացութեամբ և մտաւորապէս. իրենց միակ յոյսն ու զօրութիւնը հաւատոյ Աստուածատուր ձիրքերն և շնորհքներն են, — գոնէ կ'ըսեն, քիչ մը Անգղիերէն չենք գիտեր որ անկէ օգտուինք. — իսկ Մարդուանու աստուածարանական աշակերտք ամենայնիւ յուսահատ են իրենց սպագայ յաջողութեան վրայ, և ցրուելու երես բռնած են, մանուսնդ երբ կր տեսնեն իրենցմէ առաջ ընթացաւարտ եզող աշակերտներ որ մէկ կողմանէ կը թողուն զաշտը և կը չուեն յԱմերիկա որ քիչ մը բան ուսնին»(1):

Յիշեալ պատկառելի ժողովոյ արարքներուն մէջ արձանագրեալին վրայ կրնար գործնականով շատ օրինակներ յառաջ բերուիլ, բայց այսչափը բաւ կը համարենք:

Ուրախ ենք սակայն, որ ի վերեւ նկարագրուած Անտրրարնեան նոր դրութեան թիւր և մլասակար ըլլալը փորձով տեսնուելէն ետքը՝ Պորտ ընկերութիւնն և իր Միսիսնարնիւրը սթափելով խափանեցին այն դրութիւնը: Եւ սո ստափճանով մը հետեւեցան Բողբրդեան վարժարանի դրութեանն, ինչպէս զարդիս ամենայն արդիւնաւորութիւնով կը շարունակուին, Այնթապի, Խարբերդի, Մարդուանի ևն. ևն. վայրերու մէջ:



1) Առն. Նոյս. ԺԿ. Երև. 78, 79:

Կ. ՊՈԼՍՈՅ ԱԻԵՏ. ՀԱՅՈՑ ՏԱՃԱՐԻՆ ՏԵԱՌՆԱԳՐՈՒԹԻՒՆՆ ԿԱՄ ՆԱՒԱԿԱՏԻՔԸ

Յամի Տեառն 1907, Հոկտ. 7/20, Կիրակի օրն՝
Հայ. Աւետ. համայնքին համար ընդհանուր ուրախու-
թեան և ցնծութեան օր մըն էր. քանզի այն օրը պիտի
կատարուէր Տեառնազրութիւնն կամ նուիրումը իրենց
նորակառոյց Տաճարին, զոր տեսնել կը փափաքէին
յորդւոց յորդի, վաթսուն տարիներէ ի վեր, այն օրէն
հետէ, երբ Աւետ. բանական եկեղեցին կազմաւորուած էր
քառասուն անդամներով: Վերջապէս նկաւ ժամանակը,
յորում այնքան զեղեցիկ, այնքան հոյակապ տեսեամբ
կանդնած էր՝ Բերա Այնալը Չէչմէ կոչուած թաղին մէջ,
Գերմանացոց Տաճարին ճիշդ աջակողմը:

Կէս օրէն առաջ կամ ըստ Եւրոպացոց ժամը սաս-
նին արդէն Տաճարին փողոցը երկտեւ բազմութիւնով
լցուած էր, յորժամ Ազգապետ էֆէնտին երիցատունէն
երիցանց և սոյ գաշտօնեաներու ընկերակցութիւնով ե-
լան ու եկան մտան Տաճարին սրտաքին դռնէն, ուր
ճարտարապետան Ստեփան էֆ. Իզմիրլեան ներքին դրան
բանալին մատոյց Ազգապետ էֆ. ին որ ըսաւ, Վաթսուն
տարիներէ ի վեր մեր ունեցած մէկ փափաքը՝ այսօր ու-
ղորմութեամբն Աստուծոյ և շնորհիւ մեր Վեհափառ
Կայսեր թողտուութեան և բարեակրներու առատաձեւն
նպաստներուն կը լրանայ: Ուստի ուրախութեամբ կը
բանամ դուռն այս տաճարի, որ նուիրուած է Ամենա-
սուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ,
և բանալին մատոյց Եկեղեցւոյ Վեր. Հովուին: Սա ևս ար-
տասանելով՝ «Բայ մեզ, Տէր, զի ունն ողորմութեան:

Եւ ընկալ մեզ ի սրահս Բո սրբութեան») բացաւ
զդուան որուն ճակատը կը կրէ սա վերաառութիւնն,

«Ամենասուրբ Երրորդութեան Եկեղեցի Հայ Աւետարանականաց, 1905 Դեկտ.—1907 Հոկտ.» : Երկրորդ դրան ճակատը կը կրէ Սուրբ Գրքէն, «Իմ տունս աղօթքի տուն պիտի կոչուի բոլոր ազգերուն համար» : Եսայ. ՄՁ. 7 :

Իսկ բեմին վերեւ խորանին ճակատը կը կրէ սուրբ Աւետարանէն մեծադիր և ոսկետառ սա համարը, «Բայց ձեզի կըսեմ թէ հոս տաճարէն մեծ մէկը կայ» : Մատթ. ԺԲ. 6 :

Այս միջոցին զանգակատունէն կոչնակն ազգու ձայնիւ կը գոռար և վերնատունէն երգեհանը քաղցր և հիանալի եղանակ մը կը հնչէր, ու երբ եկեղեցւոյ պաշտօնեայք, այլ և այլ հաստատութեանց ներկայացուցիչք և ժողովուրդն իրենց յատկացեալ տեղերը բազմած և խիստ շատեր ալ յոսնկայս կը կենային խոր լուսութեան մէջ, յայնժամ երևցաւ բեմին վրայ երկցանց ձերուհագոյնն, և զողողովուն ձայնիւ ընթերցաւ հարիւրերորդ տաղմուն՝ «Ազազակեցէ՛ք առ Տէր ամենայն երկիր ևն.» : Ապա պարագային յարմար մաղթանք մը արտասանեց բազկատարած, ու այսպէս բացաւ օրուան հոգեկան պաշտօնը :

Յետոյ երգիչ երկսեռ խումբը վերնատունէն երգիոնի նուագածութիւնով սկսեց երգել այն հին «Եկեղեցիդ ընհանրական՝ որ քու սիրոյդ է առարկայ ևն.» երգը, որուն ժողովուրդը ևս կը միացնէր իր մեղմ ձայնը, շատ սրտառուչ երգեցողութիւն մըն էր այս, որուն հետեւեցաւ ընթերցմունք սուրբ գրոց հին կտակարանէն զոր ընթերցաւ Վեր. Ս. Չորիկեան ընտրողութեամբ Գ. Թագաւորաց Զ. և Ը. զլուխներէն քանի մը հատուածներու, որուն հետեւեցաւ վերնատունէն դարձեալ երկսեռ երգիչ խումբին ձայնը երգիոնի նուագածութեամբ «Տէրը իմ հովիւս է, ևս բանի մը կարօտութիւն պիտի չունենամ, ևն. ԻԳրդ. Սաղմոսին հետեւողութեամբ

պատրաստուած գեղեցիկ երգը : Ապա Վեր . ներկարար-
եան Նոր կտակարանէն քանի մը հատուածներ կարդաց :

Ասոնցմէ ետքը Ազգապետ էֆ . ելաւ բեմ . ու հա-
կիրճ բանիւ շեշտեց Աւետարանական ժողովուրդին ե-
րախտագիտութեան պարտաւորութիւնը կայսերական այն
բարձր իրատէին համար , որով կառուցուած էր տաճարը
երջանկալիշատակ Սուլթան Մէճրաի օրով գնուած ճողին
վրայ : Բարեւէրներու նուէրներն ու ժողովուրդին ջան-
քերը որ և է արդիւնք չպիտի ունենային , եթէ Ն . Կ .
Վեհափառութիւնն չչնորձէր իւր Իրաւէն : Եւ թուրքե-
րէն մաղթանք մը արտասանեց կայսերական արեւշատու-
թեանը համար , որում մասնակցեցան բովանդակ ներ-
կայք յոսնկայս :

Ապա բեմ ելաւ Բրօֆ . Յակորոս Ճէճիզեան և խօ-
սեցաւ նուիրման քարոզը , նիւթ ունենալով Աստուծոյ
Վեհափառութիւնը , և բնարան Սողոմոն թագաւորին
Երուսաղէմի մէջ կառուցած Տաճարին նաւակտակաց օրը
մատուցած աղօթքէն հետեւեալը .

«Բայց միթէ Աստուած իրացընէ երկրիս վրայ պի-
տի լնակի . ահա՛ երկինքը ու երկնից երկինքը քեզ չեն
կրնար պարունակել , ո՛ր կը մնայ աս իմ շինած տունս»
Կ . Թագ . Ը . 27 :

Մեծայարգ բեմասացին քարոզը՝ որքան նպատակա-
յարմար , նոյնքան հմտալից էր կրօնական ճշմարտու-
թիւններ ապացուցուած ըլլալով գիտական տեսութեամբ
և պատմական փաստերով որ խորին ուշադրութեամբ կը
ունկնդհուէր :

Յետոյ եկեղեցւոյ Վեր . Հովին հակիրճ կերպով
տաճարին կառուցմանը նկատմամբ խօսելով՝ որ ծրագրը-
ուած էր կէս դար առաջ , երբ ինք գեռ ծնած ալ չէր ,
երկու կամ երեք հարիւր ոսկւոյ փոքրիկ պարտք մը կը
մնայ սակայն , որ պիտի հոնգանակուի . սկզբնաւորութիւն

ըլլալով այս օր պնակներով՝ զորս պիտի պատցնեն հոգարարձութեան չորս անդամներ. Տէրը իւր առատապարզ և շնորհներով վարձահատոյց ըլլայ ամենուն :

Վեր. Հովիւին հրաւէրը ունեցաւ իր ազդեցութիւն ներկայից վրայ, և պնակներն ակնկալուածէն աւելի արդիւնաւոր եղան :

Յանձնամ վերնատունէն երկսեռ երգիչ խումբն երգիւնի նուազածութեամբ սրտատուչ եղանակով մը երգեց նուիրման երգը, այնքան քաղցր, այնքան յուզիչ, այնքան տպաւորիչ որ կարելի չէ նկարագրել :

Նուիրման արարողութիւնը՝ որ եկեղեցւոյ Վեր. Հովիւին ու ժողովրդեան միջոցով կրկար փոխադարձարար հարց պատասխանի ձեւով՝ չատ վսեմ էր, որուն յաջորդեայ նուիրման աղօթքը, զոր մատոյց Վեր. Տօքթ. Ծ. Ք. Կրին մաքուր հայերէն լիզուով և սրտարուզիս խօսքերով՝ ուրով կ'աւարտէր օրուան յուզիչ պաշտօնին առաջին մասը :

Մասն Բ.

Յետ միջօրէի ժամը երկու քին բատ եւ րոպացւոց կոչնակը հնչեց և տաճարին դուռները բացուեցան ու նորէն լեցաւ երկսեռ բաղմութիւնով Տաճարը, որ արդէն վերնատունէն երկսեռ խմբերգութեան երգեհոնի նուազածութեամբ և քառաձայն յոյժ քաղցրալուր եղանակով մը սկսեցին երգել Տէրունական աղօթքն «Հայր մերը» որուն յաջորդեց Մկրտութեան սուրբ խորհուրդն ի ձեռն Եկեղեցւոյ Հովիւ վերապատուելոյն որ կատարուեցաւ երկուսասան երախայից վրայ, վեցն արու և վեցն էգ. և մեղմանուչ երգասացութենէ մը յետոյ եկեղեցւոյ Հոգարարձութեան Ատենապետ Տօքթ. Հ. Պ. Մատթէոսեան սկսաւ Աւետ. ժողովրդեան անցեալին ու ներկային և մասնաւորաբար եկեղեցական դերձքերուն նկատմամբ ընդարձակ բանախօսութեան մը, որ յոյժ հետաքրքրական լի-

ներով՝ ամբողջութիւնով մեր պատմութեան էջերուն մէջ ուղեցինք անցունել, աւասիկ.

«Կ. Պոլսոյ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ 1859 ի Հոգաբարձութիւնը (որոյ անդամք էին Վեր. Սիմոն Խ. Իւթիւճեան Հովիւ, Վեր. Տէր Վրթանէս Եզնակեան, օգնական Հովիւ, Տնարք Մկրտիչ Ծիրաճեան, Խաչատուր Եզնակեան, Ստեփան Անտոնեան, Սարգիս Դարբինեան, Ագրիպպոս Աղամեան, Յակոբ Մատթէոսեան, համաձայն ժողովրդեան փափաքանաց ամենակարեւոր պէտք մը սեպած են Բերայի մէջ Տաճար մը ունենալ: Որոշած են այդ պէտքը լեցնելու համար հարկ եղած աշխատութիւնն յանձն առնել, և այն ատեն յաջողած են, քանի մը բարեկամաց աջակցութեամբ, ներկայ տաճարի հողը ծախու առնել այն դիտաւորութեամբ որ հոն յարկ մը բարձրացնեն դպրոցի համար, անոր վրայ Տաճարի շէնքը կառուցանեն և որոյ յարակից երիցատուն մը ունենան: Այն ժամանակ Գերմանացիք ևս քովի ընդարձակ հողը ծախու կառնէին՝ նոյնպէս իրենց ազօթարան, դպրոց և երիցատուն կառուցանելու համար: Կարգ մը պարագաներ համոզած են այն ժամանակի հոգաբարձութիւնը՝ անոնց հետ ընկերակցութեամբ առնել նոյն հողը, և այնպէս ալ բրեր են: Ասանկով այս Տաճարը կառուցանելու առաջին գործնական քայլը առնուած է թուականէս քառասուն և ութ տարի առաջ:

Այն ժամանակ եկեղեցւոյ և հետեւաբար ի պաշտօնէ Հոգաբարձութեան նախագահը Վեր. Սիմոն Իւթիւճեանն էր: Յարմար դատուած էր որ ինքը Գերմանիա և Սմերիկա երթայ դրամ հաւաքելու համար, որ դադած և աշխատած է: Սակայն այլ և այլ պատճառներով Տաճարը կառուցանելու պէտք եղած դրամը հաւաքել յաջողած չէ: Այդ անյաջողութիւնը մեծ վնասութիւն յառաջ բերած և կարգ մը նիւթական և բարոյական վնասուց պատճառ ե-

դած է, և ժամանակ մը այլևս աշխատութիւն տեղի ունեցած չէ :

1869 թուականին յանձնախումբ մը ընտրուեցաւ ընդ նախագահութեամբ այժմու Աղգապետ Էփէնսիի, տեղւոյն վրայ առ ժամանակեայ մատուց մը շինել ձեռնարկելու նպատակաւ : Այն ժամանակի աշխատութեան ձեռք բերուած դրամով հոգը պատերով պարտակուեցաւ : Եւ 1870 թուականի հրեհէն վերջը նախաձեռնութեամբ Մարտիրոս Էֆ. Մատթէոսեանի փոքր ինչ հաւաքում մը ըլլալով գեանին հարաւային արեւմտեան անկիւնին կողմը խրճիթ մը շինուեցաւ (ըստ թողտուութեան Քաղաքապետութեան ժամանակաւոր խրճիթներ շինելու Բնարայի ամէն կողմերը) : Այդ խրճիթը քանի մը տարի գործածուեցաւ իբր դպրոց, աւրտեղի կ'ունենային Սր. Դրոց Կիրակնօրեայ դասեր, ալօթաժողովներ ինչպէս նաև Հոգարարձուաց և եկեղեցական ժողովներ մինչև որ դպրոցն սղուր փոխադրուեցաւ և այդ խրճիթը յատկացաւ աղքատ ընտանիքի մը բնակութեան :

1859ի Հոգարարձութեան կարևոր սեպած պէտքը միշտ զգալի էր ժողովրդեան մէջ. հետեւարար ժամանակէ ժամանակ կարգ մը պաշտօնական և անպաշտօն աշխատութիւններ, թղթակցութիւններ և դիմումներ եղան, սակայն գործական արդիւնքի մը չյանգեցան մինչև 1890 : Այդ թուականին է որ խնդիրը դարձեալ եռանդուն խորհրդակցութեան նիւթ ըլլալէն վերջը խառն յանձնախումբ մը ընտրուեցաւ Տաճարի կառուցման համար պէտք եղած աշխատութիւնները ի գործ դնելու : Այս յանձնախումբի անդամներն էին Տիարք Տօֆթ. Հ. Պ. Մատթէոսեան, Իրօֆ. Յակոբոս Ընչիզեան, Յակոբ Էֆ. Մատթէոսեան, Վեր. Աւետիս Կոստանդեան, Վեր. Տօֆթ. Ճ. Բ. Կրին, Վեր. Ջ. Հ. Պրուքս, Վեր. Հ. Օ. Տուայթ, Յանձնախումբին առաջին նիստին մէջ հե-

տեւեալ բնորութիւններն եղան : Տօքթ . Հ . Պ . Մատթէ-
ոսեան՝ Նախագահ , Վեր . Հ . Օ . Տուայթ՝ Քարտուղար ,
Վեր . Տօքթ . Ա . Պ . Փեթրպօն՝ Գանձապետ :

Ակնարկ մը ձգելով 1859ի և 1890ի Յանձնախումբի
անուանց ցանկին վրայ միայն մէկ անուն կը գտնենք որ
2 ցանկերուն մէջ ալ կայ : Միայն Յակոբ Էֆ . Մատթէոս-
եան արտօնութիւն ունեցած է թէ՛ Հոգարարձութեան
և թէ՛ Յանձնախումբին հետ աշխատելու Տաճարին կա-
ռուցման գործին մէջ : Միայն ինք բարերախտութիւն ու-
նեցած է Տաճարին հիմնարկութիւնը և անոր կառուցուիլը
տեսնելու : Հոգարարձուաց միւս անդամները հետզհետէ
իրենց հանգիստը մտած են իրենց փափաքանաց իրակու-
նացած ըլլալը չտեսած : Թէ՛ և իրենք չտեսան , սակայն ,
իրենց մեծ փափաքը , որուն համար եռանդեամբ կառու-
թէին և որուն համար անձնուիրարար կաշխատէին , իրա-
կանացաւ : Տաճարը իր յարակից շէնքերով գոյութեան
մէջ է այսօր և 1858ի Հոգարարձութեան մեծագոյն մա-
սին զաւակները , թոռները , հարսներն ու փեսաները հոս
են այսօր պատկառելի խումբ մազմութեան հետ՝ փառք
տալու Աստուծոյ իր պարգեներուն համար , օրհնելու ի-
րենց նախնեաց յիշատակը և անոնց օրինակէն աս դասը
անգամ մը ևս առնելու որ բարեգործական հաստատու-
թեանց համար , զոր օրինակ հիւանդանոցի , սրբանոցի ,
անկեղանոցի և ոչ նուազ Աստուծոյ երկրպագութեան
նուիրեալ սուրբ տեղեաց համար անձնուիրարար աշխա-
տելու ենք ո՛չ միայն մեզի և ներկայ սերունդին համար ,
այլ բազմաց և ապագայ սերունդին համար ևս :

1859ի Հոգարարձութիւնը զրամ հաւաքած և հողը
ծախու առած էր : Դժբախտարար այն ատենի նուիրա-
տուաց անունները և իրենց տուած գումարին ցանկը
չունինք , միայն սաչափը գիտենք որ հանգուցեալ Վեր .
Տօքթ . Համլին և Սարգիս Էֆ . Մ . Մինասեան մէկ մէկ
պատկառելի գումար նուիրած են : Այսօր Տօքթ . Համլի-

նի ողջ զաւակունք և երկու փեսաները հոս են, և Տկն, Ս. Մ. Մինասեան առատաձեռն նուէր զրկեց, և օր մը այցելելու փափաք յայանեց:

1890ի Յանձնախումբին պաշտօնը պիտի ըլլար, կառուցման համար հարկ եղած միջոցները գտնել և պէտք եղած աշխատութիւնները ի գործ դնել: Առաջին նիստին մէջ առաջին գործն եղաւ նուիրատուութեան սկսիլու նախ Յանձնախումբի անդամները իրենց անուններու դիմացը գրեցին այն գումարը զոր կը խոստանային վըճարել: Յետոյ որոշեցին անմիջապէս ձեռք զարնել նուիրատուներու դիմելու գործին, և բաղդատարար կարծ ժամանակի մէջ խոստացուած նուէրները լաւ գումարի մը հասան: Միւս կողմէ Ամերիկայի Պօրա ընկերութեան հաւանութեամբ, Վեր. Տօք. Համլին մասնաւոր աշխատութիւն տուաւ Ամերիկայի մէջ նուէր ժողովելու և յաջողեցաւ բաւական լաւ գումար մը հաւաքել: Թերեւս հոս և հոն ժողովուած գումարներով կարենայինք համարձակիլ կառուցման գործին ձեռք զարնելու, ինչպէս որ Յանձնախումբէն փոքրամասնութիւն մը և ժողովուրդէն քանի մը անհատներ պահանջեցին որ կառուցումն սկսի եղած տեղին վրայ: Սակայն Յանձնախումբին մտադրութիւնն ու փափաքը այն էր, որ աւելի կեդրոնական տեղ մը կառուցուի սաճարը: Եւ յաջողութիւն յուսալով այնպիսի տեղ մը գտնելու և թէ ունեցած դրամինն նետըզնեակ գալիք դրամներով օգտէ թէ՛ նոր հող գնելու և թէ՛ շէնքը շինելու, հաւաքած դրամնիս ապահով կերպիւ չահեցունել ձեռնարկեցինք: Հետեւանքն այն եղաւ որ բաւական գումար մը աւելցաւ նուիրատուութեանց գումարին վրայ: Եւ անոնք որ կանուխ վճարեցին իրենց խոստացած գումարները՝ կրնան ուրախ ըլլալ խորհելով որ իրենց տուած նուէրին քանակը աճած է հարիւրին 5էն մինչեւ 90՝ վճարմանց ուշ կամ կանուխ ըլլալուն

համեմատ : Որչափ որ հետամուտ եղանք Բերայի մէկ կեդրոնական վայրը վայելուչ հող մը գտնել կառուցման յարմար պայմաններով, նաև պայմանով որ ունեցած դըրամնիս օգտէ թէ՛ նոր հող գնելու և թէ՛ կառուցման ծախքերուն, չյաջողեցանք : Նկատելով որ նուիրատու թիւնները դադրած են և երթալով արամադրելի ծախու հողերը կը պակսին և եղածները կը բարձրանան գնով, մինչ միւս կողմանէ համբերութիւնները կը հասնէին, ժամ առաջ տաճար կ'ուզուէր, և ոմանք անպատճառ պատրաստ եղած հողին վրայ կառուցանել կ'ուզէին : Ինքզինքնիս ստիպուած զգացինք պատրաստ եղած հողին վրայ կառուցանել փափաքողներուն տեղի տալ : Հետեւապէս որոշուեցու որ ժամ առաջ պէտք եղած աշխատութիւններն սկսուին : Ատոնց սկսելէ առաջ Յանձնախումբը վերակազմուեցաւ : Հանգուցեալներուն և բացականերուն տեղ ուրիշներ ընտրուեցան . Վեր . Տօքթ . Պօէն և Մր . Փիթ նաև Յարութիւն էֆ . Կոստիկեան . Միրիճան էֆ . Գալիաքճեան և յետոյ եկեղեցւոյ նոր Հովիւը Վեր . Արսէն Շմաւոնեան : Վեր . Տօքթ . Կրին քարտուղարութիւնն ստանձնեց և Մր . Փիթ գանձապետ ընտրուեցաւ իր նախորդին տեղ :

Յանձնախումբիս առաջին գործն եղաւ շինութեան սկսելու կարգադրութիւններ ընել կառուցման Ֆէրմանը ձեռք բերելու համար, և այս կարգադրութիւնք յաջողապէս պսակուեցան : Նորին Կայսերական Վեհափառութիւն բարեհաճեցաւ զայն պարգևել ի ՚չ ճէճազիւլ էվ-վէլ 1888 որ կը պատասխանէ 9 Օգոստ (Ն . Տ .) 1904ի :

Կառուցման նախնական գործողութիւններն սկսան 1905 թուականի վերջին կիսուն և տաճարին հիմնաքարը դրուեցաւ նոյն տարուոյ Գեկտ . 27ին պաշտօնավարութեամբ եկեղեցւոյ Վեր . Հովիւին և ի ներկայութեան երկուս բազմութեան մը : Այնուհետև գործը տակաւ

յառաջ գնաց մինչեւ որ այս օրուան կատարութեանը հասաւ 1))

Յետոյ Րօպէրթ գօլէճի նախորդ անօրէնը Տօք. Վօշ-պըրն խօսեցաւ յոյժ իմաստալից և շահեկան բանախօսութիւն մը Անգղիերէն լեզուաւ որուն հայերէն թարգմանութիւնը աւասիկ .

«Վստահ եմ թէ ամէն ազգէ և կրօնքէ հոս հաւաքուած բոլոր բարեկամներու ղգացումը կը յայտնեմ , ելք ըսեմ թէ ի սրտէ կը շնորհաւորենք այս ժողովուրդը որ այնչափ տարիներ սպասելէ ետքը կըրցաւ վերջապէս իրեն սեպհական տուն մը ունենալ Աստուծոյ երկրպագութեան և մեր Տէր Յիսուս Քրիստոսի ծառայութեան նուիրուած , տուն մը աղօթքի , կեդրոն մը ազգեցութեան՝ տարածելու համար Աստուծոյ թագաւորութիւնը այս մայրաքաղաքին մէջ :

«Առաջին դարէն ի վեր ամեն քրիստոնեաներ անհրաժեշտ դատած են հաստատուն տեղ մը ունենալ , ուր կարենան հաւաքուիլ զԱստուած պաշտելու , զիրար իւրրախոսեցելու , ճշմարտութիւնը սորվելու , իւրբու հաւատքն ու սէրը արծարծելու համար : Եւ հրե մասնաւոր շէնքեր չունէին , փոքրիկ խումբերով , զորոնք եկեղեցի կոչեցին , անհատական տուներու մէջ կը հաւաքուէին : Հռովմէական կառավարութեան տակ սկսան անոնք առաջին պատենութեամբ , տաճարներ կանգնել որոնք հանդիսապէս Աստուծոյ ծառայութեան նուիրուեցան և զորոնք աշխատեցան արժանի ընել անոր զոր կը պաշտէին : Քրիստոնեաներու ոչ մէկ խումբ կրնայ գոհ ըլլալ իր վիճակէն առանց ունենալու երկրպագութեան նուիրակն վայր մը : Կրնայ այն ըլլալ շատ խոնարհ շէնք մը , կրնայ ալ ըլլալ փառաւոր մայր եկեղեցի մը , բայց ըլլալու է Աստուծոյ ծառայութեան նուիրուած տուն , հրապարակային պաշտամունքի վայր :

«Աստուծոյ երկրպագութեան յատկացուած տանաբ մը ունենալու այս փափաքը մաս կը կազմէ բարոյական այն բնութեան զոր Աստուած տուած է մեզի, և երբ այսպիսի տեղեր կը լքուին և թափուր կը մնան, կըրնանք աներկբայ ըսել թէ կրօնքը պատճառով մը կորսընցուցած է իր ազդեցութիւնը ժողովուրդին վրայ: Ասոր յանցանքը կրնայ բոլորովին այն մարդոց չպատկանիլ որոնք երկրպագութեան տուներ չեն երթար: Գրնայ մասամբ պատկանիլ զացողներուն, վասն զի պէտք չէ բնաւ մտնայ թէ կրօնքի զօրութիւնը եկեղեցիներու քարէ պատերուն մէջ չէ, որչափ ալ զարդարուն ու գեղեցիկ ըլլան անոնք. ոչ ալ կարդայուած դաւանանքներուն և կատարուած արարողութիւններուն մէջ: Աողման անգամ երբ Աստուծոյ նուիրեց հոյակապ այն տաճարը զոր երուսաղէմի մէջ կառուցած էր, սեղսնէն ծանոց թէ Աստուած ձեռագործ տաճարներու մէջ չընակիր: «Ահա երկինքը ու երկնից երկինքը Քեզ չեն կրնար պարունակել, ո՞ր կը մնայ այս իմ յինած տունս»:

«Շրջակայ մարդոց վրայ Քրիստոնեայ հասարակութեան մը ազդեցութիւնը իր դաւանութենէն կախեալ չէ, այլ իր կեանքով Քրիստոսի կեանքն ու վարդապետութիւնը ցոյցանելու աստիճանէն: Անբանտ որ չէ այս, վասն զի Քրիստոնէութիւնը կեանք է կամ գեանքով պիտի ցուցուի և մարդիկ իրատունք ունին կրօնք մը իր պըտուղէն դատելու: Այս էր ինչ որ Քրիստոս ալ ըսաւ լեռան վրայի քարոզին մէջ:

«Մարդիկ Քրիստոնէութիւն դաւանողներու մէջ տիրող խաղաղութեան, համաձայնութեան և եղբայրսիրութեան հոգիէն խոր տպաւորութիւններ կրելու են: Եւ թէ մղուելու են ըսել. «Տես, ինչպէս զիրար կը սիրեն այս եղբայրները,» այնպիսի հասարակութիւն մը կը տեսնեն, ու յարիլ պիտի ուղեն: Եթէ շուկային մէջ միշտ

արդար, հաւատարիմ ու պարկեշտ տեսնեն այդ եղբայրները իրենց գործառնութիւններուն մէջ, այն ատեն կը հաւատան թէ, անոնց կրօնքը իրականութիւն է, կեանքը կառավարելու զօրութիւն, և ո՛չ լոկ անուն: Եթէ տեսնեն թէ անոնք անշահախնդիր, խոնարհ, մարդասէր են, իրենց ընկերներու ուրախութիւններուն ուրախակից և ցաւերուն ցաւակից և անոնց վշտաներուն ներող, այն ատեն կը ճանչնան թէ իրենց Տէրոջը հոգին ունին:

«Եկեղեցիներու կառուցումը, Աւետարանի քարոզութիւնը, Սորձուրդներու մատակարարութիւնը, միջոցներ են միայն և նպատակն է զմարդիկ Աստուծոյ մօտեցնել, սիրել տալ զԱստուած բոլոր սրտով, բոլոր մտքով ու բոլոր զօրութիւնով և իրենց ընկերները իրենց անձին պէս, կամ ինչպէս Երրայեցի մարգարէն սորվեցուցած է մեզի: «Իրաւունք ընել, ողորմութիւն սիրել ու խոնարհութիւնով մեր Աստուծոյն հետ քալել:» Ուր որ այս ոգին չկայ, ուր որ այսպիսի պատուներ չեն տեսնուիր, երկրպագութեան պայմանադրական ձեւերը սին ցոյց են:

«Ուստի շնորհաւորելով ձեզ երկրպագութեան այս տաճարին համար կ'ըսենք թէ մեր առաջին և լուսագոյն մաղթանքն ու աղօթքը այն է որ այս ժողովուրդը Սբ. Հոգիին զօրութեան մկրտութիւնն ընդունի, հոգ երկրպագել եկող այրերը, կիները և աղաքը Աստուծոյ կամքը կատարողներ ըլլան և ոչ միայն լսող, կենդանի օրինակներ Տէր Յիսուս Քրիստոսի Աւետարանին փոխակերպող զօրութեան և, ինչպէս կ'ըսէ Սբ. Պօղոս, կենդանի թուղթեր ճանչցուած ու կարդացուած ամէն մարդոցմէ ո՛չ թէ մեղանով զրուած, հապա կենդանի Աստուծոյ հոգիովը: Ամէն:»

Յետոյ Լսնկայի Աւետ. եկեղեցւոյ պատուիրակը Գէորգ Էֆ. Կարմիրեան խօսեցաւ, որ ըրած էր յիշեալ եկեղեցւոյ ուրախակցութիւնը, Բերայի եկեղեցւոյն ուրախութեանը:

Յետոյ խօսեցաւ Պ. Տիմիթրաքորու լօ, որ Յոյն Աւետ. եկեղեցւոյն կողմէ յունարէն լեզուաւ բաւական երկարօրէն բանախօսեց, թէպէտ մեծամասնութեան անհասկնալի, բայց յաջողեցաւ սոյլ այն տպաւորութիւնը զոր կ'ուզէր գործել:

Վերջին խօսողն եղաւ «Աւետարեր»ի խմբագրապետը, Վեր. Հ. Մ. Ալէն, նիւթն էր հայ ազգին հոգեւոր ժառանգութիւնները: Ջանաց ցոյց տալ թէ ժողովուրդի մը կրօնքը իր անցեալ պատմութեան արտադրութիւնն է, և թէ այս Աւետ. եկեղեցին նոր պատուաստ է և բնական իրաւունք ունի մտունդ և ներշնչում ընդունելու հոգեւոր այն մտատիպարներէն, որոնք տասնեւվեց դար ծառայած են պահպանել ժողովուրդի մը քրիստոնէական ժառանգութիւնը: Եւ դրուատեց հայ եկեղեցւոյ լայնմտութեան, խոհեմութեան և անխորութեան ոգին, որուն իրրե ապացոյց մէջ բերաւ անոր աղօթքներէն հետեալ զբարձր հատուածը «Յարեւելից մինչև ի մուտս արեւու ուր և կարգան զԱնուն քո սրբութեամբ, Տէր, ալօթիւք նոցա մեզ ողորմեսցիս»:

Արդ, ուղերձք վերջացած էին ու քաղցր և սրտառուչ երգով մը լրացաւ պաշտաման այս մասը, և կարճ դադարէ մը ետք՝ ժողովուրդը վերստին հաւաքեցաւ:

Ուր արդէն բեմին առջև երկու կարգի երկու առաջին նստարանները գրաւած էին տասն և վեց անձինք ինքն իզ ու եօթն այր որոնք ինորոյ՝ պիտի ընդունուին ի ծոց եկեղեցւոյ: Եկեղեցւոյ Վեր. Հովիւը նախապէս ասոնց ընդունելութեան ձեւակերպութիւնը կատարեց ըստ Աւետ. Եկեղեցւոյ կանոնի դաւանութեան, ուխտադրութեան ընթերցմամբ և աղօթիւք, և շնորհաւորեց անոնց մուտքը յեկեղեցի:

Հուսկ յետոյ Հաղորդութեան Սուրբ Խորհուրդը տեղի ունեցաւ այն պարզ ու վսեմ տեսեամբ կամ եղանա-

կաւ : որ գառաջինն Տէր Յիսուս հաստատած է ի վերնա-
տան : Սեղանին կը ծառայէին Տրուպս և եկեղեցւոյն Վեր-
Հովիւր : Հուսկ յետոյ փառաբանական երգով և առա-
քելական օրհնութեամբ՝ զոր Տրուպս գրարար արտասա-
նեց : փակեցաւ օրուան հիանալի պաշտամունքը :



Յ Ա Ի Ե Լ ՈՒ Ա Ծ

Թուրքիոյ մէջ առաջին Հայ Աւետարանական Եկեղեցին հաստատուեցաւ Կոստանդնուպոլսոյ մէջ, Յուլիս 1 1846: Այն օրը Աւետ. բեմը պաշտօնապէս կանգնուեցաւ, և նոր եկեղեցին հինէն զանազանող և բաժնող հանգամանքներէն մէկը անմիջապէս զգալի եղաւ:

Հին կամ Լուսաւորչական եկեղեցիին խորհրդանշանը Սեղանն է: Սուրբ Պատարագը սրբարանին հոգեւոր պաշտամունքին կեդրոնը կը կազմէ, և պաշտամունքը՝ հիմնապէս առանց քարոզի, ամբողջութիւն մը կը համարուի: Աւետարանական եկեղեցիին պաշտամունքը հիմնապէս տարբեր է: Ասոր խորհրդանշանը բեմը կամ ամպիոնն է, իոգեւոր պաշտամունքին կեդրոնը քարոզն է, և բոլոր պաշտամունքին վերջնական նպատակը՝ Աստուծոյ խօսքը հասկնալի և մատչելի բնելուն մէջ կը կայանայ: Հետեւորաբ, խորանի տեղ բեմ զետեղուած է, խաչի կամ պատկերի տեղ Սուրբ Գիրք դրուած է, և քանանայի տեղ հովիւ կամ քարոզիչ կարգուած է Աւետարանական տաճարին մէջ:

Աւետարանական հասարակութեան ներկայ սերունդը հոգիւ կրնայ երեւակայել թէ ի՞նչ հիացում, ի՞նչ սթափում տեղի ունեցած ըլլալու է, երբ երեք քառորդ դար առաջ Աւետ. Հայր սկսաւ հասկնալի լեզուով և կենդանի շեշտով Սուրբ գիրքը կարդալ, քարոզել և երգել մեր մէջ: Այդ յուզումը կեանք մը ծնաւ, կեանք մը, որ թէպէտ իմացական կողմերն ալ ունի, էապէս կրօնական է, կեանք մը, որ թէպէտ ի սկզբան արձամարհուեցաւ սակայն վերջապէս ժողովուրդին բոլոր խաւերուն թափանցող ոյժ մը եղաւ:

Երեք քառորդ դար առաջ, աստուածարանական դաստիարակութիւն ստացած և հռետորական սրուեստին հմուտ վարժարանականներ չկային մեր համայնքին մէջ : Հետեւաբար Աւետարանականութիւնը իր հաինական քարոզիչները քաղեց այն մարդոց մէջէն, որոնք ասորական կրթութենէ վեր իմացական օժիտ մը չունէին, և սակայն միանգամայն հոգ տարաւ որ քարոզիչները Աւետարանը փորձառարար գիտցող մարդիկ ըլլան, բան մը որ այնքան անհրաժեշտ է Աւետարանի պաշտօնէին : Յետոյ կրր վարժարաններ հաստատուեցան, և քիչ չատ գիտական և դասական հմտութիւն բարդուեցաւ քրիստոնէական փորձառութեան վրայ, Աւետ. քարոզիչը չատ նկատու մներով գերազանցեց իր յուսաւորչական պաշտօնակիցը և թէ՛ բեմին վրայ թէ՛ բեմէն դուրս բաւական ակնածելի ոյժ մը եղաւ՝ բարոյական և հոգեւոր :

Բնական էր որ Աւետ. բեմը իր գոյութեան առաջին շրջանին մէջ բոտ մասին վիճարանական և զուտ աստուածարանական երեսոյթ մը առնէր : Եկեղեցիին հոգեւոր վարչութեան սկզբունքները, թէ՛ հրապարակային թէ՛ առանձինն երկրպագութեան ձևերը, անձնական փրկութեան պայմաններն ու եղանակը, և ուրիշ չատ կրօնական ու վարդապետական խնդիրներ քարոզիչին միտքը ու լեզուն գրազեցուցին : Բայց գլխաւոր և կեղրոնական պատգամը անձնական փրկութեան վարդապետութիւնն էր : Թէ խաչին պատարագը միանգամ լնդ միշտ մատուցած ու լմնցած է, թէ Քրիստոսի և մարդուն միջև միջնորդ և բարեխօս չկայ, թէ հաւատքը մեղաւորին անձնատուր ըլլայն է Քրիստոսի, թէ արդարացման և սրբացման միակ պայմանը հաւատքն է, թէ Սուրբ Հոգին հաւատացեալին իրապէս կր հաղորդուի և կր նորոգէ գանձիկա, — սյս և յարակից ճշմարտութիւններուն վրայ մեծ շեշտով ու ոճով խօսեցաւ բեմը, և ունկնդիր-

ները այսպէս զգացին որպէս թէ Աւետարանը իրենց նոր պատգամ մը բերած էր երկինքէն :

Անցեալ կէս դարուն Հայ Աւետարանական քարոզչը կատարեալ մարդ չէ : Թէ ոստնսրանը , թէ զրագէտը , թէ մեկնիչը , թէ աստուածաբանը շատ դիւրաւ իր վրայ թերութիւններ կրնան ապացուցանել : Բայց ամէն սրգարասէր մարդ կը խոստովանի որ անիկա անկեղծ կրօնական անձնաւորութիւն մըն է , և անոր մեծ բաղձանքը՝ Քրիստոսը ճանչնալ և անոր Աւետարանն հռչակել եղած է : Անոր ջանքերը թէպէտ բոլոր ակնկալուած արդիւնքները չեն տուած , ապարդիւն ալ չեն մնացած : Ամէն կիրակի հաղարաւոր հայեր և յոյներ Աւետ . բեմին շուրջը հաւաքուած կ'ունկնդրեն , կ'երգեն և կ'աղօթեն Յիսուսի անուանը : Սուրբ Գիրքը աշխարհիկ լեզուի թարգմանուած և շատ ձեւերով տպուած լլալով , մոռուլուողին բոլոր խաւերուն մէջ ասրածուած է և ճշմարտապէս ժողովուրդին գիրքը եղած է : Եթէ հայերէնը այսօր կենդանացած ու նորոգուած լեզու մըն է և կ'իլիկիոյ թուրքերէնը աստուածաբանական բառերով ճոխացած է , անշուշտ այս բարեփոխումը գոնէ մասամբ Պայպլ Հաւուսի մամուլին և բնիկ Աւետ . բեմին վերագրուելու է : Մայրենի եկեղեցին փոքր ի շատէ ազդուած է կրօնական այս նոր ոյժէն : Եթէ եկեղեցիին պատերէն շատ պատկերներ անհետացած են , եթէ կղերին և վանքերու բարեկարգութիւնը լուրջ խնդիր մը եղած է , եթէ Արմաշ և Երուսաղէմ քարոզիչ վարդապետներ հասցնելու դիտումով ծրագիրներ կը յօրինեն , անսարակոյս պատճառներէն մէկը Աւետ . բեմին բողոքող ձայնն ու լռիկ ներգործութիւնն է :

Աւետ . բեմը , խումբ մը մուցուած կրօնական ճշմարտութիւններ ի լոյս բերելէ դատ , բարեպաշտութեան նոր ձև մը ստեղծած է մեր մէջ : Հայը , որ ի բնէ կրօ-

նասէր ու բարեպաշտ ժողովուրդ մըն է, Աւետարանի պարզ քարոզութենէն ազդուելով, Աւետարանական կրօնք ու բարեպաշտութիւնը յատկանշող սովորութիւններ ստացաւ: Սուրբ գիրքը իրեն սիրական գիրքը կոչու: «Աւետարանականները Սուրբ գրքէն զատ գիրք չեն կորդար» ըսողները կը զրգարտեն: Բայց ճշմարիտ է որ Սուրբ գիրքը ժողովուրդին գիրքը եղած է Աւետարանականներուն մէջ, Կիրակին աշխարհային զբաղումներէ բաժնելով և կրօնական երկրպագութեան ու գործունէութիւններու նուիրելով Տէրունական օր ընելը Աւետարանականին օրէնք մը եղած է: Ամէն առաւօտ եկեղեցի երթալու սովորութիւնը թողուած է, անոր փոխանակ ընտանեկան ազօթքը հաստատուած է, որով ծնողքը ու զաւակները գոնէ օրը անգամ մը ի միասին կը ծնրադրեն շնորհաց աթոռին առջևը: Յաճախաբար առանձնանալ ըստ Տէրունական պատուէրին և սրտին թելադրած բառերովը ազօթել երկնաւոր Հօրը, համոզուած ըլլալով որ Անիկա կը լսէ և յատուկ խնդրածին յատուկ պատասխան կուտայ, այս ալ բարեպաշտ Աւետարանականին մէկ սրբազան առանձնաշնորհումն է: Աւետ. բեմը խրատապահանջ է ոգիւից ըմպելիքի գործածութեան դէմարտեցող քարոզիչը կարգապարկ կըլլայ: Աւետ. բեմը կը սորվեցնէ որ տալը աւելի օրհնեալ և երանելի է քան առնելը, և ճշմարիտ Աւետարանականը բարեգործութիւնը սովորութիւն ըրած է, կուտայ եկեղեցիին կուտայ աղքատին, կուտայ դրացի եկեղեցիներուն, կուտայ հեթանոս կամ կռապաշտ երկիրներու մէջ աւետարանչական գործին: Վերջապէս Աւետ. Բարեպաշտութիւնը աւետարանական ոգի կը կրէ, Անիկա քարոզող և ծաւալող ոյժ մըն է, կը քարոզէ բերանով և կը քարոզէ զրամով, կը քարոզէ իր երկրին մէջ և կը քարոզէ կռապաշտ ու հեթանոս երկիրներու մէջ, Կ'եզրակացնենք

թէ Աւետ . բեմը մեր մէջ հոգեւոր նոր ոյժ մը , նոր կեանք մը , նոր բարեպաշտութիւն մը , նոր նկարագիր մը ստեղծած է :

Ասիկա արձամարտիկ արդիւնք մը չէ , միանգամայն կը խոստովանինք որ Աւետ . բեմին յաջողութիւնը , շատ շափաւոր եղած է : և դաշտին պէտքերուն և կարելիութիւններուն համապատասխանելէ հետու է : Մեր հանդուցեալ երէցները քննադատել ուզող մէկը , անոնց աջոււածարանական կրթութեան կամ քարոզչական կարողութեան կամ հոգեւոր կեանքին մասին թերութիւններ կրնայ մասնանշել : Խոչոր թերութիւնները անոնց օգտակարութիւնը ի հարկէ շատ սահմանափակեցին , և Տէրջը զօրութիւնտ անոնց ակարութիւններուն մէջ կատարուած է : Չգինք անցեալը և ներկային անցնինք :

Եւ ներկային մասին ինչ պիտի լսենք . այսօր ինչ վիճակ ունի Աւետ . բեմը . արդեօք զօրացած է անցեալին հետ բաղդատմամբ . ներկայ երեւոյթներէն դատելով ինչ յոյս կրնանք տածել անոր կրօնական ապագային նկատմամբ : Ասոնք հետաքրքրական հարցումներ են , որոնց ամենուն սակայն մանրամասնօրէն պատասխանել անկարելի է :

Բաղդատութիւնը ձգելով ներկային կր սահմանափակենք մեր տեսութիւնը : Մենք համոզուած ենք որ բեմը , թէ քանակի թէ որակի տեսակէտով , ժամանակին հոգեւոր պահանջները լրացնելու անբաւական է : Աւետարանականութիւնը իր մեծագոյն յաջողութիւնները շահած է կիլիկիոյ ստամանին մէջ , ուր հազար , երկու հազար ժողովուրդ ունեցող եկեղեցիներ կան , Աստուածարանական վարժարան կայ , տղայոց և աղջկանց համար երկրորդական վարժարաններ կան : Այսու ամենայնիւ քարոզիչ շունեցող բեմեր պակաս չեն : Ամէն տարի եկեղեցիները քարոզչի նուազութենէն կը նեղուին . նոյն

իսկ Այնթապի, Մարաշի, Հաճըն և Քչտազի պէս կեդրոններու մէջ բեմեր երբեմն տարիներով թափուր կը մնան : Խարբերդի դաշտին մէջ հարիւրի չափ քարոզչական կեդրոններ կան, որոնց հագիւ կէսը հովիւ կամ քարոզիչ ունին : Իսկ Բիւթանիա այնքան կարօտ է հագիւ որ պաշտօնեաներու, որ իր պէտքը լեցնելու համար զրացի եկեղեցական Միութիւններուն կը դիմէ : Գալով որակի խնդրոյն այն ալ չէ առաւել փայլուն բացը առնելով մատի վրայ համրուած մէկ քանին, Ո՞ր են բեմի պաշտօնեաներ, որոնց մէջ մտքի մշակութիւնը, սրտի կրթութիւնը և հաւատքի զօրութիւնը ներդաշնակ համեմատութիւնով խառնուած են :

Բայց այս երկու պատճառներէն ո՛չ մին մեզի երկիւզ կ'ազդէ : Ամէն դարու մէջ հունձքը շատ է, իսկ մշակները քիչ, պիտոյ է որ Տէրօջր Հոգին անոնց մէջ ազդու ապէս գործէ : Տես, ի՞նչ կ'ըսէ եկեղեցիին Գլուխը ի ձեան մարգարէին Եսոյիայ. «Սակաւաւորն հազարաւոր եղիցի, և կրտսեան յազգ մեծ, զի ես Տէր բնդ ժամանակս ժամանակս ժողովեցից զնսսա» : Եսայ, Կ. 22 :

Այժմ մեր անմիջական պէտքն է գալու օրերուն վերաբերութիւնով ներկան ուսումնասիրել, և հարկ կզգանք ազգարարի որ այսօրուան մեր հոգեւոր կացութիւնը առիթ կուտայ վաղուան համար մտահոգ ըլլալու : Ուրեմն ի՞նչ գործնական միջոցներ ձեռք առնել կարելի է որպէս զի Աւետ, բեմը իր կոչմանն համապատասխանող կացութիւն մը ստանայ, և առաւել փաստաւոր ապագայի մը ևս նշոյցներ երևցնէ :

Ուսաջին պարտականութիւնը կը ծանրանայ բարերար և մեծանուն Աւետարանչական ընկերութեանն վրայ, որ աւետարանչաց նոր սերունդ մը պէտք է ճարէ՝ մեր բեմը ոգեւոր՛լու կարող : Ներկայ Աւետարանչաց ամենն ալ իւրաքանչիւրն իր կերպովը օգտակար են : Բայց,

ճշմարիտը խօսելով՝ պէտքը կ'զգանք աւետարանիչներու որոնք սահուն լեզուով և զեղուն սրտով կրնան քարոզել...

Դարձեալ Աստուածաբանական ճեմարանը կատարելիք դեր ունի մեր բեմին վերածնութեան գործին մէջ։ Մեզի նոր ճեմարան մը պէտք է կարող՝ մեր բեմական գործերուն նոր ուղղութիւն և նոր կեանք տալու։ Պէտք ունինք ճեմարանի մը, որ բոլոր Աւետ. կեդրոններուն համար կեդրոնական զիրք ունենայ, ներկայ երեք ճեմարաններուն միացեալ ոյժերը և երեքին մէջ ալ պակաս եղող նոր ոյժեր պարունակէ, և վերջապէս հոգևոր ու գործունէութեան ազբիւր մը ըլլայ։ Նոր ճեմարանը մեր եկեղեցիներուն հոգևոր պէտքերը անմիջականապէս չօգտուող սկզբունքներուն համեմատ կազմել ու վարել պէտք է։ Հաստատութեանը մեծ նպատակը քարոզիչ, ձեռնհաս ու հոգևոր քարոզիչ ընծայել ըլլալու է։ Հին եկեղեցիին վարդապետական, ծիսական և վարչական հանգամանքները և Աւետ. եկեղեցին սնկէ բաժնող անբառնալի տարբերութիւնները՝ ուսանողին լաւ հասկցնել պէտք է, որպէսզի սա տեսնէ թէ ինչո՞ւ Աւետարանականութիւնն ինքզինք Աւետարանական մակդիրով կը որակէ։ Ուսանողին միտքը, միանգամայն սիրտը այնպէս մշակել պէտք է որ Սուրբ գիրքէն, եկեղեցական պատմութենէն, Աստուածաբանութենէն և ուրիշ ամէն ազբիւրէ քաղուած ծանօթութիւնները անոր մտքին մէջ հոգևոր պատգամի, քարոզի, ձեւն առնեն, և իր մէջ քարոզչական աւիւն բռնկի, քարոզելը իրեն գերիշխան կիրքն ըլլայ։ Ուսանողին մէջ առաքելական, այսինքն աւետարանչական ոգի արթնցնել պէտք է, անիկա համոզուելու է թէ Աւետարանը Աստուծոյ զօրութիւնն է ի փրկութիւն հոգւոց, թէ ամէն ճշմարիտ քարոզիչ ազգերը աշակերտելու համար առաքուած է, և թէ իր կոչումն է խօսքովը, աղօթքովը և կեանքովը Քրիստոսի

քերել մարդիկը : «Վա՛յ է ինձ, եթէ : ո՛չ աւետարանեմ»
 աղաղակելու աստիճան բռնկելու է Քրիստոսի սիրովն :
 Եւ ամէն բանէ աւելի, ուսանողին հոգևոր կեանքը ար-
 ծարձել պէտք է, անոր միտքը մշակելով չչատանալ,
 հասա հոգ ասնիլ որ անիկա Սուրբ Հոգիէն նորոգուած
 մարդ մը ըլլայ : Քրիստոս՝ անոր մէջը ապրող և զինքը
 զօրացնող փրկիչն ըլլայ : հոգևոր բաները անորձամբ
 կեանք և ուժ ըլլան :

Կուզենք պարտակոնուծիւն մը ևս նշանակել եկե-
 ղեցական Միութիւններու հաշուոյն, որոնց անկէ նորոն-
 ծաները ձևանադրելու գործը : Պաշտօնեաներու ընտրու-
 թեան և ձևանադրութեան գործին մէջ տարապայման
 աճագործանք և անզգուշութիւն ցուցուած է շատ ան-
 անգամ, և եկեղեցիներու հոգր դրուած է երբեմն սոյն
 տեսակ հոգիներու վրայ որոնց Քրիստոնէական փորձա-
 սութեանը մասին ապահով չէինք : Թող եկեղեցիները ու
 անոնց Միութիւնները համոզուին որ Հովիւները կամ
 քարոզիչները լոկ շատցնելով բեմը չզօրանար, և ա՛լ
 զգուշանան հոգևոր բաները չհասկցող գլխինե-
 րու վրայ ձեռք դնել : Ներքնծայ մը, որքան սլ
 ուսեալ կամ ճարտարախօս ըլլայ՝ և եկեղեցին որքան
 ալ փափաքի Հովիւ մը ունենայ, զանիկա ձևանադրելու
 չէ մինչև որ Աստուծակէ կոչուած ըլլալը ապացուցանէ իր
 նորոգուած կեանքով և խոնարհ ու օգտակար սպասա-
 ւորութիւնովը : Մեր պակասը պերճախօսութիւնը չէ,
 ներշնչումն է : Պէտք ունինք քարոզիչներու, որոնք ի-
 բրենց միտք, սիրտը, լեզուն զերի բրած են Տէր Յիսուսի,
 որոնց մէջ մը քարոզը զՔրիստոս կը ցուցնէ հոգիին աշ-
 քին և անոր ոտքը կը բերէ կը նետէ մեղաւորը, որոնց
 մէջ կը հիանաս ոչ քարոզին, ո՛չ քարոզիչին, հասա
 միայն Փրկիչին : Ասիկա հոգիին պերճախօսութիւնն է,
 որ կատարուի՝ ո՛չ գիրք կարդալով, ո՛չ ճեմարան յաճա-

խելով, ոչ ալ «կարգ» առնելով, այլ Քրիստոսի աշակերտելով, Քրիստոսին ըլլալով, Քրիստոսի Հոգին առնելով:

Քրիստոնէութեան առաջին դարուն մէջ Եկեղեցիին հսկայաքայլ յառաջդիմութեան պատճառը սա էր որ աւոր քարոզիչները Սուրբ Հոգիին այս օծումը ստացած էին: Տես «Եւ եղաւ որ Իկոնիոնի մէջ անոնք մէկտեղ հրեաներուն ժողովարանը մտան, և այնպէս խօսեցան որ խիստ շատ հրեաներ և յոյներ հաւատացին»: Գոր. ԺԴ. 1:

Այնպէս խօսեցան... որ շատեր հաւատացին:



ՄԻՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՆԳԱՄԱՆՔ ԵԿԵՂԵՑԻՈՅ

1) Ընդհանրական և առաքելական եկեղեցին, իր մէջ բովանդակելով ամէն ազգէ և ամէն լեզուէ եղող Յանուն Հօր և Որդւոյ՝ և Հոգւոյն սրբոյ մկրտեալ ճշմարիտ հաւատացեալներ՝ միմիայն Աստուծոյ իշխանութեամբը կը կառավարուի, և իր կառավարական օրինազիրքն է Աստուածաշունչ, օրէնքը Տաննաբանեայն, որուն նկատմամբ Տէր Յիսուս Քրիստոս որոշապէս ըսաւ «Չեկայ աւելու, հասկա կատարելու» և աս կատարեալ ընելուն քանի մը օրինակներն ալ պայծառապէս զբաւ անջնկու Տես, Մատթ. Ե. 14—37:

2) Ընդհանրական եկեղեցւոյ մասերն են այլևայլ ազգաց մէջ եղածները, որոնք հաւաքարար Արևելեան և Արևմտեան եկեղեցիներ կը կոչուին որոնք դարձեալ կը մասնաւորեն, ինչպէս, Յունական և Հայաստանեայց եկեղեցիք են:

3) Հոս միայն Հայաստանեայց եկեղեցւոյ մանաւանդ անոր Աւետարանական յորջորջուած մասին հանգամանաց ու կառավարուելու կերպին նկատմամբ է որ պիտի խօսինք:

Ասիկայ որովհետեւ իրեն իրրեւ հաւատալիք և իրրեւ հաւատոյ և վարուց կանոն, սուրբ գրքէն և անոր սորվեցուցածէն զուրս բնաւ բան մը չընդունելու ուխտով մը հաստատուած է, այսու իրաւամբ կրնայ անուանուիլ «Աստուծոյ ընտանիք՝ Առաքեալներուն ու մարգարէներուն հիմին վրայ շինուած՝ որ անոր անկիւղին զլուխը Յիսուս Քրիստոս է», Եփես. Բ. 19. 20:

Յայտնի է թէ, ընկերութիւն մը, ընտանիք մը, առանց մասնաւոր կանոններու և կարգադրութեանց, հաստատուն՝ բարեկարգ և մնայուն չկրնար լլուսլ. ուստի և ան իրրեւ մէկ ընտանիք Աստուծոյ՝ իր հաստատ-

ուած ժամանակը իրաւունք ունեցաւ կանոններ ու կարգադրութիւններ ընելու. և այնպիսիներ, որ հիմնուած ըլլային սուրբ գրոց հիմնական սկզբանց վրայ, և ասանկ ալ եղաւ: (Տես առաջնորդ Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցւոյ գրքոյկ, Երես, 13—16—23—31—32—34, 54—58 ևն): Ասոնք, նորահաստատ եկեղեցիէն Աւետարանական սկզբանց համաձայն դրութեան մը որջամիտ մասեր ըլլալ դատեց, ինչպէս իրեն, այնպէս ալ շնորհիւն Աստուծոյ հոս ու հոն արդէն արձակած և արձակելու ճիւղերովը միասին իրրեւ բարեկարգ, հաստատուն ու մնայուն մարմին մը, որպէս զի աճի, զարգանայ և յառաջ երթայ: Եւ մանաւանդ իր մայրենի եկեղեցւոյն առջեւ՝ որ այնքան կը սիրէ, բարեկարգեալ դրութեան օրինակ դրած ըլլալով անոր հրապոյր մը եղած ըլլայ:

Պարտք կը համարուի հոս յիշել, որ այն ժամանակի ներկայ եղող պաշտօնեայք թուով ինն, Եօթն ամերիկացի երկուքն սկովտացի, որոց պաշտօնէութեամբն կը կատարուէր եկեղեցւոյն կազմաւորութիւնը՝ հարցուցին ներկայից թէ, «դուք որ կը փափաքիք իրրեւ եկեղեցի կազմաւորուիլ, ի՞նչ յարանուանութիւն ընտրած էք, կամ որ յարանուանութեան յարիլ որոշած էք, ներկայք միահամուռ պատասխանեցին. «Պէտք չունինք մասնաւոր յարանուանութիւն որոշելու կամ որ և է օտար դրութիւն մը կէտ աւ կէտ ընդունելու: Մենք սուրբ Աւետարանին յարած և անոր սկզբունքներն արդէն որդեգրած ըլլալով, կը փափաքինք մեր Մայրենի եկեղեցին իր նախկին առաքելական վիճակի մաքրութեանն ու պարզութեանը վերածել. վասնորոյ կ'որոշենք Հայաստանեայց Աւետարանական եկեղեցի կազմաւորել և ո՛չ ուրիշ բան»: Յայնժամ յիշեալ պաշտօնեայք ուրախութեամբ յայտնեցին իրենց գոհունակութիւնը:

Գանք որ այս ուխտով միացեալ հարք՝ յետ սակաւ

ինչ ժամանակի ինքզինքնին անգիտակցարար և սնփոր-
ձարար դրուժեան մը մէջ գտան ըստ կարեւոր կար-
գադրութեանց, որ ամենայնիւ օտար էր իրենց նախ-
նական ըմբռնումին: Ասոր ինչպէս և ինչ միջոցներով
հանդիպուած ըլլալուն վրայ խօսիլ աւելորդ է, բայց
սթափելով ջանացին իրենց նախնական բմբռնումը վե-
րահաստատել, և այն ատեն Պորթի միսիոնարութիւնն
դէմերնին ախոյեան գտան, և ասկէ ծագեցան ցաւալի
անմիաբանութիւնք ընդ մէջ միսիոնարաց և Հայաս-
տանեայց Աւետարանական եկեղեցւոյն: որ անվերջանա-
լի պիտի ըլլայ, մինչև ի դարմանումն:

Ո՛րն է այդ դրութիւն, յայտնի է ամենուն որոյ
Արեւելեան բնութեան անյարմարութիւնը կէս դարէ ա-
ւելի է որ փորձերով տեսնուած է: Անզօր, անկարող
իրարմէ անկախ ու անջատ խումբեր աստ ու անդ խեղճ
ու կրակ վիճակի մէջ այսօր կան վաղը չկան բան մը:
Ո՞չ ապաքէն միութիւնն զօրութիւն՝ և բաժանումը
կործանում է:

Արդ, ասոր դարման ըլլալու համար բաւական ա-
տենէ ի վեր է որ Միութիւններ հաստատուեցան, ինչ-
պէս, Բիթանական, Կեղրոնական, Սարբերդի և Կի-
լիկիոյ Միութիւններ, սակայն ասոնցմով չդարմանուե-
ցաւ զործը դեռ, յայտնի է: Ընդհանուր Միութիւնն է
անհրաժեշտ եղածը:

Տրուպս, կը յանձնօրարէ ամէնուն, որ ուշադրու-
թիւն ընեն առաքելական դարու այն գեղեցիկ դրու-
թեան՝ յորում աղքատիկ եկեղեցիներն հոգայու, սփո-
փելու և զօրացնելու մեծ տառախութիւնն ալ ունէր:
Ընդհանուր Սինհոս մը ունենալ իրրեւ կեղրոն ուր որ
յարմար ու վայելուչ դատուի այդ ըլլալ, և արդէն ե-
ղած և ըլլալիք միութիւններէն համեմատական թո ու
կարող եղբայրներ՝ սահմանեալ ժամանակներ հոն միա-
նան, խորհելու և կարգադրելու ընդհանրութեան վե-

բարերեալ խնդիրներ: Առաքելական դարուն մէջ այսպիսի Սինհոտ մը կար կերելի՝ կեղրոնը Երուսաղէմ ըլլալով, Գործք Առաքելոցի ժԵ. գլուխն այս մասին կրնայ մեզի լոյս տալ, ինչպէս ուրիշ տեղերէ ալ ուղղակի վկայութիւններ կան բաւական: Տես. Ա. Կորնթ. ԺԶ. 1—4: Հռովմ. ժԵ. 26, 27: Գործ. ԺԱ. 29: Բ. Կորնթ. Ը. 1—15: Թ. 10. 17—22:

Կան ոմանք, որ այս կարգադրութիւնը ճիւղերը ոչնչացնել կը համարին, բայց ընդհակառակն աւելի ճոխացնել և պաղարեր լնել պիտի բլլայ շնորհիւն Աստուծոյ:

Տրուպս ուրախութեամբ կարդաց Աւետարների 1902 Նոյ. 15ի թուոյն մէջ հետեւեալն. «Փոխադարձ ծանօթութեամբ և յարա երու թեամբ մեր եկեղեցիները զարգացնելու համար՝ յարաբերութեան առաւել ընդարձակ չքջանակ մի, եկեղեց. մեծագոյն կեղրոնական միութիւն մը կազմելու ենք: Անհատ եկեղեցիի մը անդամներն իրարու հետ սէր և միարանութիւն անուցանելու են, յետոյ այս եկեղեցիներն ալ իրարու հետ յարաբերութիւն ունենալով եկեղեցական միութիւններ կազմելու են, և ամենէն ետքն ալ տարրեր միութիւնները իրարու հետ եկեղեցական մեծագոյն միութիւնը — կեղրոնական Միութիւն մը — կազմելու են» են: (Տես, Աւետ. 1902. Նոյեմ. 15, ի թիւ, 46, Երես 409:)



ԱՍՏՈՒԾՈՅ ԵԿԵՂԵՅԻՒՆ ԾԱԳՈՒՄՆ

ՈՒ ՅԱՌԱՋԱՆԱԼԸ ԵՐԿՐԻ ՎՐԱՅ

Սիօն՝ անուն է լիբան մր, որուն վրայ Երուսաղէմ շինուած է ըստ մասին. Սաղմոսաց և այլ մարգարէական գրութեանց մէջ Աստուծոյ եկեղեցին այս լիբան անունովն ներկայացուած է: Շատ հին ժամանակէ մը սահմանուած է Սիօն՝ Աստուածային երկրպագութեան վայրն ըլլալ: Հոն թագաւորեց Մելքիսեղեկ, Սաղէմի թագաւորն, որ «խաղաղութեան թագաւոր» ըսուած է. Քահանայ Ամենաբարձեալին, և օրինակը գալու Մեսիային: Նոր կտակարանին մէջ ևս հինգ տեղ գործածուած է Սիօն բառը նոյն իմաստով, և անգամ մը ևս Յայտնութեան գրքին մէջ: (1)

Մինք ևս, ուստի, ներկայ գրութեանս մէջ յաճախ պիտի գործածենք այս օրհնեալ անունն: Սիօն, իբրեւ հոմանիշ եկեղեցի բառին, — Աստուծոյ ճշմարիտ ժողովուրդ, — նախկին սուրբեր, և ներկայ ու գալու դարերու ճշմարիտ հաւատացեալներ իբրմէկ մարմին մինչև այն օր, «Յորում երկինքը սաստիկ շառաչիւնով պիտի օնցնի. տարերքները բռնկած պիտի լուծուին, երկիրս ալ ու ինչ գործքեր որ անոր մէջ կը գտնուին պիտի այրին: (2)

1. Մեղքով յառաջ եկած աւերմանց մէջտեղ այս սուրբ մարմինը կազմելու, և ապտամբած տիրապետութեանը մէջ խորհրդաւոր բանակ մը յատուցանելու նպատակը ի յաւիտենից էր Աստուծոյ անսահման մտքին մէջ: Պատուիրանազանցութիւնով աւերեալ աշխարհն իր գոյութենէն առաջ զբաղեցուցած է Ամենակալին խորհուրդ-

(1) Մատ. ԻԱ. 5: Յովն. ԺԲ. 15: Հոով. Թ. 33: Եբր. ԺԲ. 22: Ա. Պետ. Բ. 6: Յայտն. ԺԳ. 1:

(2) Բ. Պետ. Գ. 10:

ները : Սիօնին հիմնարկութիւնը շատ հին ատենէ մը ըսկըսուած է . ճիշդ թուականը , սակայն չենք գտներ յիշատակարանաց մէջ : «Երբ որ առաւօտեան աստղերը մէկտեղ փառարանութիւն կերպէին , ու Աստուծոյ բոլոր որդիքը զննութիւնով կազաղակէին» ի տես արարչագործեալ հիանալիաց և սքանչելիաց՝ կրբ որ աշխարհս ձեւաւորեալ պատրաստեալ ի դոյ եկած էր և մարդն ստեղծուած էր ի դրախտին՝ յայնժամ իսկոյն յառաջ եկեր էր ի բնութեան ախոր և տհաւոր տեսարաններ , զի պատահած էր անոր անկումը , որ իր Արարչին պատկերը կը կրէր : Մեղք մտաւ Եդեմայ մէջ . բայց այդ կորուսիչ դէպքին Աստուածապետական բարերարութեան գթութիւնն ու ոգորմութիւնը շուտով մըջամտեց «փրկել զկորուսեալն» : Ծննդ . Գ . 15 :

Ահա , «երկնքէն սուրբ մէկը իջաւ» կնկանր սերունդըն բլլալու յանձնառութեամբ . բերաւ Սիօնին անկեան քարը . լնտիր , պատուական , փորձուած քար մը , ապահով հիմի համար պատրաստուած : Ի տես այս սուրբին չքեղ արարողութիւններ չկատարուեցան մահկանացուաց մէջ . բայց գունդք հրեշտակաց որք երեսնին ծածկեր էին մարդուն ապտամբած բլլալուն պատճառաւ , բային ելեանին , վանեցին իրենց տխրութիւնը , և «ՂԱստուած կորնէին ու կ'ըսէին . Երկնից բարձրութեանը մէջ Աստուծոյ փառք , ու երկրի վրայ խաղաղութիւն , մարդոց մէջ հաճութիւն» : — «Փրկութիւն , և փառք , և պատիւ , և զօրութիւն մեր Տէր Աստուծոյն , Ամեն , Ալէլուիա» :

Թէ և Սիօնին հիմնարկութիւնը այնքան կանուխէն է , բայց մարդկային տեսութեամբ , շատ դարերէ ի վեր յաջող կերպով յառաջ գացած չերելիր : Սակայն անոր ճարտարապետը երբեք բարձի թողի բրած չէ իր սկսած գործը . իրաւ , նա իր ծրագրին որ և է մասը տեսլապէս պանծալի չ'ցուցուց , նոյն ատեն անոր շինութիւնը զանազան կերպով շարունակ յառաջ տարաւ : Երբեմն ջրը-

հեղեղով ընկզմաց անոր թշնամիները, երբեմն Բարեկոն-
եան աշտարակը շինողներուն լեզուն խառնակեց: Ուրիշ
քաղաքաց հիմնարկիչք կերելի թէ չունին գաղափար
թէ, երկինքին Տէրը զրած է Սիօնին հիմը, որուն համ-
բաւը իրեն պիտի ձգէ համայն տիեզերաց զմայլումը: Ի
նպաստ Սիօնի կարեւոր գործ մը եղած է այն ատեն, երբ
երկնային գահէն ձայն մը կանչեց Քաղղէացոց Ուր քա-
ղաքէն զայն՝ որ յետոյ հայր հաւատացելոց կոչուեցաւ:
Եւ քիչ ետքն ալ երկնային գահէն արտօնութիւն մը արը-
ուեցաւ անոր, որով Սիօնին կառավարութիւնը կը հաս-
տատուէր: (1)

Ենովային անհուն խորհուրդովն յաւիտենապէս ծը-
րագրուած այս եկեղեցի իրապէս մէկէն կատարեալ ըլ-
լալու չէ որոշուած, այլ յառաջդիմական տիրապէս սե-
րունդէ սերունդ տարերաց, ժամանակի և տեղեաց ըն-
դարձակ զանազանութիւնով: Երկնային ճարտարութեան
արուեստը մարդկային ընտանեաց անհաշուելի յազմու-
թիւն մը հարկ էր ուսանիլ: այո՛, բարեգործութեան սի-
րովն ու տենչովը վառուած միլիոնաւորներ որ զարուցի
դարս եկեր են ու պիտի գան, պէտք էր և պէտք է գոր-
ծակցին Աստուծոյ ի շինութիւն և յառաջդիմութիւն
Սիօնի, պէտք է մշակել անոր ամայի կեցած դաշտերը,
Գործը երբէք լմնցած պիտի չըլլայ, մինչև աշխարհի ժա-
մանակամիջոցին աւարտը մօտենայը:

Այս գործը հաւանականաբար պիտի տեսէ մինչև ե-
րևուեմն այն «զօրաւոր հրեշտակին՝ զոր տեսաւ Յովհան-
նէս, որ երկինքէն կիջնէր, ու ամպ հագած էր, և իր
գլխուն վրայ ձիածան կար, ու իր երեսը արելի պէս
էր, և իր ոտքերը՝ կրակի սիւներու պէս: Եւ իր ձեռքը
զրփոյկ մը ունէր բացուած, ու իր աջ ոտքը ծովուն վը-
րայ դրաւ, և ձախը՝ ցամաքին վրայ, — որ աջ ձեռքը
երկինքը վերցուց ու երդում ըրաւ յաւիտեանս յաւտե-

(1) Ծանօղ. ժկ. 10, 11:

նից կենդանի ժողովին վրայ, — թէ ալ ժամանակ պիտի չըլլայ» (1)

Սիօնի ամենիմասա ճարտարապետն, ինքը որոշած և բաժնած է ժամանակը յորում կատարեալ պիտի ըլլայ եկեղեցին. որոշուածէն պակաս կամ տարբեր ժամանակ չէ բաւական Անոր բոլոր խորհուրդներուն կատարմանը: Տնօրինուած գործին յառաջդիմութիւնը ծանր, բայց ստոյգ է. այն յառաջ կը տարուի Անոր ձեռքով՝ որ ամէն բան բուն իր խորհուրդին պէս կը գործէ: Թագաւորութիւնք կ'իլլին ու կ'իյնան. կայսրութիւնք կը հաստատուին ու կը կործանին. մինչ Սիօնը աստիճանաբար յառաջ կ'երթայ առանց յետկոյսի: Ընդդիմութիւնք որ կ'ըլլան բոլորը նախատեսուած և զանոնք յարթելու միջոցները պատրաստուած են: Զօրութիւնը գերազանց է՝ բան մը կարող չէ կասեցնել անոր ընթացքը, վասն զի զօրաց Տէրը նախասահմանեց, և ո՞վ կրնայ զանիկա խափանել, անոր ձեռքը երկնցած է, և ո՞վ կրնայ զանիկա ետ դարձնել»: Եսայ. ԺԴ. 27, 2. Աստուծոյ գործերն, իր կատարելութեանց հայելին են: Ժողովող կ'ըսէ, «Աստուած ամէն բան ժամանակին գեղեցիկ բրաւ»։ Թէպէտ երկրին գեղեցկութիւնը մասամբ մը արուեստաւ մեղքին պատճառաւ ու անոր տեղ անկարգութիւն մտաւ, բայց տակաւին Արարչին այս ձեռակերտն իր մէջ որչափ հրապոյրներ ունենայն յայտնի է: Դիտենք ծաղիկի տեսակները, թռչնոց քաղցր գեղգեղանքը, արչալուսոյ ծագումը. արեգական մարր մտնելը, ևն. ևն.: Այս ամէն գեղեցկութիւնք Սիօնին կը պատկանին, քանզի անոնց ստեղծողն իր ճարտարապետն է, և երբեք չը գղջար անոնց գոյութիւն տուած ըլլալուն, ո՛չ ալ կ'արգիլէ զանոնք վայելիլէ իր ժողովուրդը: Աստուծոյ պարգեւած բարիքները շնորհակալութեամբ դիտողներուն արգիւտուած չէ բնութեան գեղեցկութիւններն վայելիլը: Սա-

(1) Յայտ. Ժ. 1—6:

կայն և այնպէս, ասոնք չեն որ կը կազմեն Սիօնին հրապոյրները, ոչ այ անոնց մէկ էական մասը: Աստուծոյ վեհափառութիւնն է որ կը փայլի Սիօնի մէջ և ասիկա կը գերազանցէ ուրիշ ամէն հրապոյր. «Դուն լուսափայլ ես, յափշտակութեան լեռներէն աւելի գերազանց ես»: Սաղմ. 29. 4:

Բարոյական գեղեցկութիւն՝ երկրի վրայ եղած ուրիշ ամէն գեղեցկութիւնը կը գերազանցէ, և ասոր ո՞րչափը կայ աշխարհի մէջ, բառին ուղիղ նշանակութեամբն, որ չէ Սիօնի մէջ կամ չվերաբերիր անոր: Ո՞ր կը գտնուին այն ճշմարտապէս հեղ և սրտով խոնարհ եղողները, զորս Տէրը իր փրկութիւնովը գեղեցկացուցած է: Ուր կը գտնուին բարձր համեմատութեամբ զարգացեալ մտաւոր գեղեցկագոյն կարողութիւնը, եթէ ո՛չ Սիօնի մէջ: Հօն և միայն հօն են օրինակներ, որոնց վրայ հրեշտակք իսկ չեն սխալիր հիանալ:

Բարոյապէս մշակուած միտքը մասով մը կը վերբստանայ այն պատկերն աստուածային, զոր կրբուսած էր մեղքով, և այնպէս իր նախնական գեղեցկութեան վերաբերեալ բան մը կը ներկայէ իր մէջ:

Սրբութիւն՝ նախապատիւն է գեղեցկութեան մէջ, և Սիօն կամ եկեղեցին սուրբ ըլլալու սահմանուած է և սուրբ է: Եւ ո՞րչափ գերազանց գեղեցիկ են այս նուիրական սահմանափակին մէջ թագաւորաց թագաւորին պատգամաւորները: Մարգարէն հիացմամբ կը գոչէ, «Ի՛նչ գեղեցիկ են լեռներուն վրայ անոր ոտքերը, որ աւետիս կը բերէ. խաղաղութիւն կը քարոզէ, բարութեան աւետիս կը բերէ, փրկութիւն կը քարոզէ, ու Սիօնին կ'ըսէ, քու Աստուածդ կը թագաւորէ»: Եսայ. ԾԲ. 7:

Շատ առատ և ճոխ են Սիօնի երգերը. օրհներգութիւնք, փառաբանութիւնք, և զոհաբանութիւնք, այնքան քաղցր և ներդաշնակ՝ որոնց նմանը բացի երկնային զուարթնոց բերանն եղածէն ուրիշ տեղ չ'գտնուիր:

«Քեզի կ'սպասէ օրհնութիւնը՝ ո՛վ Աստուած, Սիօնին մէջ», ներշնչութիւն դադրած ըլլալէն ետք՝ ո՛չ մէկ քերթուածագիր կրնայ բաղդատուիլ Տէրօջը սուրբ երգերը գրողներուն հետ. բայց սրբացեալ տաղանդ, վերջին դարուց մէջ յառաջ բերու, մաքուր, փառաւորեալ ու երկնային երգասացութիւններ:

Սիօնին գեղեցկութիւնը կատարելութեան հասած չի կրնար երեւնալ, մինչ յառաջդիմութեան մէջ է. այսու ամենայնիւ իւրաքանչիւր քայլափոխ անոր յառաջանալը նշանակելով նորանոր հրապոյրներ ցոյց կուտայ: Վերջին ժամանակաց մէջ այս սուրբ քաղաքը, բոլոր ազգաց աչքերուն առջեւ լուսնին պէս պայծառ, և արեգական պէս մաքուր պիտի ըլլայ. «որ ատեն թագաւորը պիտի ցանկայ անոր գեղեցկութեանը»: Սաղմ. 116. 11:

Սիօն՝ երբ որ իր յառաջդիմութեան ու գեղեցկութեան բոլոր աստիճանին մէջ պատրաստուած ըլլայ իր Տէրօջն հետ կատարեալ և յաւիտենական միութեան մը՝ յայնժամ յերկինս ի մէջ սուրբ հրեշտակաց պիտի լսուի շատ ջուրերու և զօրաւոր սրտումներու ձայնի նման ձայն մը, (սակայն ժամանակաց ապառնի և շատ հեռու պարբերութեան մը ակնարկմամբ) որ պիտի ըսէ, խընդանք և ուրախ ըլլանք, ու փառք տանք Աստուծոյ. «ինչու որ գառնուկին հարսնիքը հասաւ, ու անոր կինը ինքզինքը պատրաստեց»: Այն ատեն կատարուած պիտի ըլլայ մարգարէութեան ի վաղուց ծանուցածը թէ, «Եւ անոր արուեցաւ՝ որ մաքուր ու լուսափայլ բնեղներ հագնի, որ ան սուրբերուն արդարութիւնն է»: Յայտ. ԺԹ, 7, 8:

3. Սիօնի կամ եկեղեցւոյ դիրքն այնպէս է, իբր թէ մօտալուտ և մշտատեւ վտանգաց ենթակայ:

Աշխարհք մը, յորում հաստատուած է եկեղեցին, ընդհանուր կերպով ապստամբած ըլլալով տէրօջ դէմ, հպատակած է Աստուծոյ և անոր եկեղեցւոյն թշնամի եղող սատանային, որ շատ զօրաւոր և ռիսկիւմ հակառա-

կորդ մըն է ճշմարտութեան, արդարութեան և սրբութեան ու ասոնց պաշտպաններուն: Այս թշնամին իր լեզէոններովը մուտք գտած է Տէրոջը ժառանգութեան վիճակին, և կը պահանջէ զայն որպէս թէ բուն իր ստացուածք, և կատարար կը պատերազմի ցրուելու համար զանկայ, և կորսնցունելու: Արթուն է և քաջ գիտէ, որ Սիօնի յաջողութիւնը իր բուն կործանումն է, վաւերորոյ անոր յառաջդրմութիւն՝ բարկութեամբ կը լինէ վինք:

Արդ, պիտի պաշտպանուի՞ Սիօն, պիտի ապահով ըլլայ եկեղեցին: Յայտնի է թէ, զօրութիւն՝ նուազ Ամենակարողութիւն, և հանճար՝ ստորնագոյն քան այն անհուն Մէկինն, բաւական չկրնար ըլլալ: Բայց օրհնեալ խոստմունք մը կայ եկեղեցին քաջալերող՝ «Բեզի դէմ շինուած գործիքը ամենեւին պիտի չյաջողի»: Նսայ. ԾԳ. 17: Սիօնի Հիմնադրին անհուն մտացը մէջ, նպատակը որոշուած և անոր հանելու ծրագիրը կարգադրուած ըլլալով՝ պիտի չպաշտպանէ՞ բուն իր փաստը: Ամենագորաւոր վստահութիւնն ու ապահովութիւնը տրուած է Սիօնի հաւատարիմ որդւոց անհատաբար, որ անոր հիմնադրին պաշտպանութեամբն ապահով պիտի ըլլան: «Բարձրելոյն ծածկոցին տակ ընակողը, Ամենակարողին հովանաւորութեանը տակ պիտի հանգչի»: Սաղմ. ԴԱ. 1: Եկեղեցին իր ամբողջութեամբն շատ աւելի սիրելի պիտի ըլլայ Անոր անտարակոյս, քանզի կը կարդանք դարձեալ թէ, «Տէրը Սիօնին դռները Յակօրին բոլոր ընակարաններէն աւելի կը սիրէ»: Սաղմ. ԶԷ. 2:

Ուրեմն կրնայ՞ կարծուիլ, որ Աստուածային սիրոյ այս աստիճան առարկայ եղող սարմին մը երբեք անպաշտպան մնայ:

4. Ո՞վ է եկեղեցւոյն օրէնսդիրը: Աւասիկ ներշնչութեան պատասխանը. «Մեր Օրէնսդիրը Տէրն է, Մեր թագաւորը Տէրն է» Նսայ. ԼԳ. 22:

Սիօն կամ եկեղեցի՞ ազատագրուած մարմին մըն է,

օրէնքով հաստատուած, և անփոփոխելի կանոնադրութեանց տակ, որոնք անօր օրէնսդրին դրածներն են: Եկեղեցին հպատակ է բացարձակ կամքին Անոր, որ կազմեց զայն, և իր իշխանութեան կիրառութեամբը այլևայլ ասացուածքներով գերազանց հռչակուած է: Զորօրինակ, «Ան թագաւոր մը արգարութեամբ պիտի թագաւորէ»: Եսայ. ԼԲ. 1: «Քու աչքերդ՝ թագաւորը պիտի տեսնեն իր վայելչութեամբը»: ԼԳ. 17: Եւ որպիսի ուրախութեամբ կր խօսուին Սիօնի մէջ անօր իրաւարարութիւնները, «Ակիգրէն իմ թագաւորս Աստուած է, որ փրկութիւններ կ'ընէ երկրին մէջ»: Սաղմ. 2Գ. 12: Այս իշխանութեան մշտնջենականութիւնը՝ Սաղմոսերգուն յափշտակեալ մտքով այսպէս կը նկարագրէ, «Զօրաց Տէրը պիտի թագաւորէ յախտեան. քու Աստուածդ ո՛վ Սիօն, ազգէ մինչեւ ազգ: Ալէլուիա»: Սաղմ. ծ'ՍԶ. 10:

Սիօնի օրէնսդրին, թագաւորաց թագաւորին, վեհափառութիւնն այնքան գերազանց է աշխարհի ամէնէն զօրաւոր իշխանաց և օրէնսդիրներու մեծափառութենէն՝ որ սուրբ գրական այլարանութեամբ սասպէս ցուցուած է: «Լուսինը պիտի ամչնայ, ու արեւը պիտի պատկասի, երբոր զօրաց Տէրը՝ Սիօն լեռանը վրայ ու Երուսաղէմի մէջ թագաւորէ»: Եսայ. ԻԴ. 23:

Արդ, կարեւոր է այժմ գիտնալ, թէ ի՞նչ է նոր տնտեսութեան մը նշանակածը:

Գրեթէ քսան դար եղաւ, որ Սիօնի արարքներուն անմիջական իշխանութիւնը Միջնօրդի մը ձեռքն է— Աստուած մարմնով յայտնուած: Սուրբ Քաղքին յիշատակարանները ի մասին այս կարգադրութեան բաւական տեղեկութիւններ պարզուած են. ասիկայ փրկագործութեան ձեռնարկութիւնն սկզբնաւորուած ատենէն խորհուրդի մէջ էր, և շարունակուելու է մինչև ցլախճան բոլոր երկրաւոր բաներու: «Ինչու էր անոր պէտք է

Թագաւորութիւն ընել՝ մինչեւ որ բոլոր թշնամիները իր ոտքերուն տակը դնէ — ու երբոր ամէնը անոր հնազանդ ըլլայ այն ստեղծ ինքն ալ պիտի հնազանդի անոր՝ որ իրեն հնազանդեցուց ամէնը, որպէս զի Աստուած ըլլայ ամէնը, ամէն բանի մէջ» : Ա. Կորնթ. ԺԵ. 25—28 :

Վերաբերութիւնով ապառնի ժամանակի մը, որն որ հիմա շատոնց եկած անցած է՝ երկրորդ Սաղմոսին մէջ Գաւթի բերանով Եհովան այսպէս կը խօսի. «Ինչո՞ւ հեթանոսները խռովութիւն կ'ընեն, ու ժողովուրդները պարապ բան կը մտածեն : Երկրի թագաւորները ինքզինքնին կը հաստատեն, ու իշխանները մէկտեղ խորհուրդ կ'ընեն Տէրոջը դէմ, որ անոր օժեպլին դէմ, բսելով կոտորենք անոնց կապերը, ու մեզմէ ձգենք անոնց լուծը» : Եւ կը յարէ, «Ես օժեցի իմ թագաւորս իմ սուրբ լեռանս վրայ» : Եւ ինքն ալ օժեպլ թագաւորն ի պաշտօնէ կը հրատարակէ բսելով. «Հրամանը պիտի պատմեմ՝ Տէրը, Եհովան, ինծի ըսաւ, դուն իմ որդիս ես, ես այսօր քեզ ծնայ. ինչդէ ինձմէ, ու հեթանոսները քեզի ժառանգութիւն պիտի տամ, ու երկրին ծայրերը քեզի ստացուածք» : Սաղմ. Բ. 1—8 :

Սուրբ տեսանողներու միջոցաւ շատ բան գրուեցաւ շօշափմամբ նոր անտեսութեան ժամանակն ու ինչպէս սկսիլը. «Անոր կը վկայեն բոլոր մարգարէները» Գործ. Ժ. 45 : Այս հաստատուելին հաք Հոգւով որբով ներշնչեալ սուրբ մարդիկ ասոր կատարեալ նկարագրութիւնն բրին, որն որ Սիօնի յիշատակարանին նոր մասը կը կազմէ, նոր կտակարան անուամբ : Պօղոս առաքեալին առ Փիլիպեցիս ուղղած թուղթին մէջ, ասոր բացայայտ մէկ բացատրութիւնը կայ. «Որ, Աստուծոյ կերպարանքը ունենալով, յափշտակութիւն մը չսեպեց Աստուծոյ հաւասար ըլլալը. հապա անձը ունայնացուց ծառայի կերպարանք առնելով՝ մարդոց նման լլլալով. և կերպարանքովը մարդու պէս գտնուելով, ինքզինքը խոնար-

հեցուց՝ մինչև մահուան հնազանդ եղաւ, ու ան ալ խաչին մահուանը: Ասոր համար Աստուած ալ զանիկա խիստ բարձրացուց, ու անոր անուն մը տուաւ՝ որ ամէն անունէ վեր է, որ Յիսուսի Քրիստոսի անունին ամէն ծունկ ծռի՝ երկնաւորներուն ու երկրաւորներուն և սանդարամետականներուն, և ամէն լեզու դաւանի թէ Յիսուս Քրիստոս Տէր է՝ Հօր Աստուծոյ փառքին համար» : Փիլիպ. Բ. 6—11 :

Այսպէս նկարագրուած թագաւորին կառավարութեանը տակ՝ Սիօնին շահերը ապահով պիտի ըլլան, և չէր կրնար առաւել արդիւնաւոր կերպով կառավարուիլ : Թէև ինչ ինչ նկատումներով ինքզինքը խօնարհեցուց Քրիստոս, սակայն և այնպէս մէկ է Հօր Աստուծոյ հետ, և ամենայն մասնաւորութեամբ ունի իր պաշտօնին նպատակայարմար կարողութիւնն ու զօրութիւնը : «Եւ բոլոր թագաւորները անոր երկրպագութիւն պիտի ընեն, բոլոր ազգերը անոր պիտի ծառայեն» : Անոր անուններէն մէկն է «Էմմանուէլ» : Աստուած մեզի հետ, «Եւ իբր պատմուճանին վրայ ու իր ազգրին վրայ գրուած գիր մը ունէր, ԹԱԳԱԽՈՐ ԹԱԳԱԽՈՐԱՅ ԵՒ ՏԷՐ ՏԷՐԱՆՅ» : Յայտն. ԺԺ. 16 : «Եւ դարձեալ՝ երբոր Անդրանիկը աշխարհք կը մտցընէ, կ'ըսէ, Աստուծոյ բոլոր հրեշտակներն ալ անոր երկրպագութիւն թող ընեն» : Եբր. Ա. 6 : Աւասիկ Ենովայ կը ցուցնէ Սիօնին միջնորդն, իբրև Որդի Աստուծոյ, և իբրև Անհուն գերագոյնը : «Դուն իմ Որդիս ես» — «Եւ Որդւոյն կ'ըսէ, Քու ամուսնու, ո՛վ Աստուած, յաւիտեանս յաւիտենից է» : Թող աշխարհին երեսը եղող բոլոր բնակիչք, և երկրից բարձրութեան մէջ եղող ամենայն հրեշտակք լսեն Սիօնի Օծեալին, — թագաւորին հրովարտակը, որ կ'ըսէ. «Ամէն իշխանութիւն ինձի տրուեցաւ երկնից ու երկրի մէջ» : Մատթ. ԻԸ. 18 : Թող հրատարակուի ամէն թագաւորութեան և ամէն իշխանութեան երկիրներու մէջ, «Որ ամէնը պիտի

պատուեն որդին, ինչպէս որ Հայրը կը պատուեն, ան՝ որ Որդին չպատուեր, զանիկա զրկող Հայրը չպատուեր» : Յովհ. Ե. 23 :

5. Սիօնի կամ եկեղեցւոյ օրէնքը : Ըսինք թէ Սիօնը օրէնքով հաստատուած և կանոնաւորուած է ուրիշ ազատագրեալ հասարակութեանց պէս : Տիեզերաց զերագոյն օրէնսդիրը, օրինաց նկատմամբ միացուց ամէնքը. և իբր բովանդակ գործողութիւնք են անոր նկատմամբ իր կամքին միութիւն : Ոչ մարդ ու ոչ հրեշտակ ունեցաւ մաս իր ստեղծման կամ ընտրութեան մէջ : «Մեր Աստուածը յերկինս է. Անիկայ իր ամէն ուղածը ըրաւ» : (1)

Թող չխորհի մարդ, թէ ո և է պահանջ կամ արգելք յօրէնս կամայական կամ անհարկաւոր է : Օրէնսդիրն չկրնար շարժիլ ուրիշ կերպ, քան ինկատ առնելով իր եկեղեցւոյն ամենարարձր բարին, հակառակ ընթացքի շարժառիթներ անրմբռնելի և անհարելի են : Ամենարարձեալին հրամայածներուն կամ արգիլածներուն մէջ չկայ բան մը որով եկեղեցիին ճշմարիտ բարելաւութիւնը ի խնդիր արնուած չըլլայ. իւրաքանչիւր կարգադրութիւն անհրաժեշտ է, և անհնազանդութիւն կրկնակ պատժով հատուցուիլ արժան է. — մին բնական հետեւութիւն, միւսը ուղղակի գործադրութիւն անհնազանդութեան համար :

Բարոյական օրինաց մէջ թէ ենթակայից պէտքերուն, թէ օրէնսդիրն իրաւունքին նկատում կայ, թէ և հաստատարար չկրնար ըսուիլ, որ օրէնքին վախճանը ենթակայից երջանկութիւնն է, սակայն, բացարձակ ճշմարտութիւնը այն է, որ Աստուծային ամէն մէկ պատուիրանի ճշմարտապէս հնազանդող կեանք մը անհուն բերկրանք կ'ունենայ իր հոգւոյն մէջ :

Սիօնի կամ եկեղեցւոյ կառավարութեանն համար ինչ օրէնքներ որ պատրաստուեցան անգամ մը, ընդհանուրին համար պատրաստուեցան և մատուցուեցան, որ ամենքը

(1) Սալմ. ձժե. 3 :

կարենան կարողալ, հասկնալ և հնազանդիլ: Մարդկային պատուիրանաց և աւանդութեանց պէտք չէ թողուած. անոնք որքան ճշմարտութեան կերպարանք ալ ունեցած ըլլան:

Օրինագիրքը իր ամտուածային հեղինակէն որոշուած է իրրեւ հոգեկան պարտուց կամ գործառնութեանց մէջ միմիայն առաջնորդ ըլլալու: «Օրէնքին ու վկայութեանը թող հարցունեն, թէ որ աս խօսքիս համեմատ չ'գրուցեն, անոնք ամենեւին լոյս չունին»: Եսայ. Ը, 20:

Յայտնի է թէ կայ զանազանութիւն մը հիմնական օրինաց և ժամանակաւոր կարգադրութեանց մէջտեղ: Տասնաբանեայ օրինաց պատուէրներն առաջին տեսակէն են. Ղեւտական գրքի անթիւ կանոնագրութիւնք երկրորդ տեսակին կը վերաբերին: Սինայական տախտակներն. — Աստուծոյ մատուլը գրուած՝ անփոփոխելի և մընայուն են. մինչ հին անտեսութեան ծիսական կանոնները գալու բարի բաներուն ստուէրներն էին և անցան. նշանը անհետացաւ նշանակուածն եկած ըլլալով: Բարոյական օրէնքը առաւել պարտաւորիչ չէր հին Իսրայէլի, քան որչափ նոր Իսրայէլի և բոլոր մարդկային ազգին: Ոչ ալ անոր հրատարկուիլը որոտումներով և կայծակներով՝ առաջին ծանօթացուիլն էր: Տասնաբանեայն Սինայի վրայ հրատարակուելէ առաւել քան երկու հազար տարի առաջ եղած էր բարոյական վարուց կանոն. բայց Աստուծոյ իմաստութիւնը նախընթաց ժամանակաց մէջ զայն ի գիր արձանագրել պատշաճ չէր սեպած: Քանի որ Սինա կը կայնի. և աչք ի գոյ են, Տասնաբանեայն հնազանդութիւն կը պահանջէ:

Ամենարարձեալ Աստուծոյ նպատակը Եկեղեցին կամ Սիօնը հաստատելուն մէջ՝ իրեն համար մասնաւոր գանձ մը ունենալ էր. այո՛, «իմ սեպհական գանձս» անուանեց զայն: Մաղաք. Գ. 17: Եւ, սաղմոսերգուն, անգամ մը գիտնալ կամ գիտցունել ուզելով Սիօնի քաղաքացիներն որոնք ըլլալը, և ինչ նշաններով ճանչցուել-

նին, հարցուց. «Տէր՝ ո՞վ պիտի կենայ քու վրանիդ մէջ, ո՞վ պիտի բնակի քու սուրբ լեռանդ (Սիօնիդ), վրայ» : Պատասխանը ասիկայ էր. «Ան՝ որ անմեղութեամբ կը քալէ, և ճշմարտութիւն կր խօսի իր սրտին մէջ : Ան՝ որ լեզուովը չզրպարտեր, բնկերին չարութիւն չըներ, և իր դրացիին վրայ նախատինք չըներ, որուն առջին անարգուած է շարագործը. բայց աստուածավախները կը պատուէ, երդում կ'ընէ իր դրացիին ու չդառնար : Իր արծաթը վարձքով չտար, ու անմեղին դէմ կաշառք չառներ, ով որ ասոնք կ'ընէ, յաւիտեան պիտի չսասանի» : (1)

Եւ Պօղոս առաքեալ եւս, ասոնց նշանակիչ յատկութիւններն այնպէս կը ցուցնէ. բայց Հոգիին պտուղը այն է. սէր, խնդութիւն, խաղաղութիւն, երկայնամտութիւն, քաղցրութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեղութիւն, ժուժկալութիւն» : (2)

Երանի այն ժողովուրդին որ այս նշանները կը կրէ իր վրայ, անիկա պայծառ հայելիի մը պէս է աշխարհի մէջ որ աստուածային նկարագրի ամբողջ լուսափայլութիւնը անդրադարձնելու սահմանուած է : Հոյակապ տեսարան մըն է, յորում Եհովային է կատարելութիւնքն ի ցոյց բերուած են տիեզերաց առջեւ :

Սիօնին եղած ամէն յայտնութիւնք՝ անոր յիշատակարանի մէջ արձանագրուած յաջորդական կարեւոր դէպքեր՝ և ի վեր քան զամենայն Յիսուս Քրիստոսի անձովը Աստուծոյ փառքին յայտնուիլը, յարգական խորհրդածութեան նոր նիւթեր կ'ընծայեն երկնային զուարթնոց իսկ, որոնք կը ցանկան ակնկառոյց նայելու այն բաներուն վրայ : (3)

(1) Սաղմ. ԺԵ :

(2) Գաղատ. Ե. 22, 23 :

(3) Ա. ՊԵՏ. Ա. 12 :

Յ Ա Ն Կ

Յառաջաբան Պատ. Ա. Շմառոնեանի	4
Յառաջաբան Հեղինակին	5
Ծագումն Աւետարանականութեան	7
Սուրբ գրեանք, Լուսաւորչ. դաւանութիւն, յորդոր	12
Առաջին Ընդհանրական ժողովը	17
Նովադեանք եւ Լեօնեանք, Պաւլիկեանք եւ Թօնդրակեցիք	21
Աստուածաշունչի քննութիւնք	36
Ամերիկեան միսիոնարք Թուրքիոյ մեջ եւ նախկին յուսամիտ հայեր	41
Սկիզբն Միսիոնարաց մուտին Կ. Պոլիս	47
Միսիոնարք Մայր եկեղեցիին մեջ. Բահանայական ձեռնադրութիւն	57
Պատմութիւն Աւետ. եկեղեցւոյ ի Պրուսա	64
Աւետարանական դաշնակցութիւն	75
Հրապարակային պաշտամունք միսիոնարաց ի Հայս. փակուած միսիոնարաց Բարձ. վարժ.ի. ձեզայիր- լեան վարժարան. Հաստատութիւն Բարեպաշտ. միաբանութեան. հաշարանք	83
Յակոբոս իբրեւ իտրիդական եւ գործունեութիւն	92
Կրօնական շարժման վիճակը. Նիկոմիդիացի Երկու Բահանանք	102
Պեպեքի Ամերիկ. վարժարանք. Աստուածատուք Պատրիարք. 3 հարազատներ. քննարկութիւն կանանց	115
Եզնակ Տ. Վրբանեսի փիլոսոփայութիւնք	126
Համերաշխութեան ցոյցեր. Լուծիչ տարակուսանաց	129
Ամերիկացիներու դրկուած գրքեր. Քարոզութիւն ընդդէմ աւետարանականաց	136

Սկիզբ Ս. Հաղորդութեան. Մատթեոս եւ Նորա վերջին խրատք. Անաբեման եւ հետեւութիւն. Յայտարարութիւն աւետարանականաց	149
Կազմութիւն Հայաստ. Աւետ. եկեղեցւոյ. Յայտարարութիւն առ համօրէն ազգն. Բնութիւն եւ ձեւնագրութիւն երիցու	167
Առաջին ննջեցեալի մը յուղարկաւորութիւնը. Պատրիարքին աղերսագիրն աւետարանականաց. Եպարհոսակ. պուշրուքու առ Բաղաբապետը.	178
Հայ տոնմ. յատկութիւններէն մին. Կայսերական հրովարտակ առ ոստիկանութիւն. պատգամաւորութիւն առ սրբ Սգրատֆորդ.	195
Աւետ. երեցներու անդրանիկ ժողով. պաշտօնակ. ժողով. գաղղ. նորութիւն մը. եկեղեցի եւ անոր նկարագրութիւն. վախճանում Տ. Եզնակ Վրբանէսի	205
Պատմութիւն Հայաստ. աւետ. եկեղեցւոյ	228
Անջատումն առաջին մէկ աւետ. եկեղեցւոյն	232
Միութիւն եւ վերնապառակտում	236
Խնդիր դաստիարակութեան. խափանում Պեպեքի ամերիկ. վարժարանի. Բոպերդեան վարժ.	245
Յայտարարութիւն ի շնորհս միսիոնարութեան եւ իրաց աննախանձելի վիճակ	249
Պոլսոյ Հայոց տանարքին տեառնագրութիւնը	253
Յաւելում	266
Միութիւն եւ հանգամանք եկեղեցւոյ	276
Աստուծոյ եկեղեցիին ծագումն ու յառաջացումը	280

ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Սխալ	Ուղիղ
51	15	Պորսեն	Պորսին
62	25	Անճեւացեայց	Անճեւացի
112	21	Կլասսիքնի	Անսքրսքնի
»	22	Կլասսիքնի	Անսքրսքնեան

